ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

90

1934-2024



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ - 90

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.48
Ե 813

*Հրապարակության է երաշխավորել*
*ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման*
*ֆակուլտետի գիտական խորհուրդը*

**Խմբագրական խորհուրդ**

| | | |
|---|---|---|
| **Նախագահ՝** | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Կառլեն Խաչատրյան |
| **Պատասխանատու քարտուղար՝** | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Հասմիկ Մարգարյան |
| **Անդամներ՝** | տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր | Վարդան Բոստանջյան |
| | տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր | Հայկ Սարգսյան |
| | տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր | Գագիկ Վարդանյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Ալվարդ Խառատյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Աննա Հակոբջանյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Գրիգոր Հայրապետյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ | Գնել Սահակյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Վարդան Ալեքսանյան |
| | տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ | Նարինե Միրզոյան |

**Կազմողներ՝**
ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
դեկան, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ Կառլեն Խաչատրյան
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ Հասմիկ Մարգարյան

Ե 813 «Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ - 90»: - Եր. ԵՊՀ հրատ. - 2024թ. – 232 էջ:

Գիրք-ալբոմում ներկայացվում են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պատմության հիշարժան էջեր՝ նրա հիմնադրումից և ԵՊՀ կազմում վերաբացումից մինչև մեր օրերը: Ժամանակագրական կարգով կարևոր տեղեկություններ են հաղորդվում ԵՊՀ կազմում տնտեսագիտական կրթության կազմակերպման, որպես առանձին ինքնուրույն ստորաբաժանում ֆակուլտետի սկզբնավորման և գործունեության տարբեր փուլերի վերաբերյալ: Ներկայացվում են ֆակուլտետի կարևոր ձեռքբերումները բանիմաց ու արհեստավարժ տնտեսագետ-մասնագետների պատրաստման գործում, ինչպես նաև գիտության և մշակույթի զարգացման ոլորտներում:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.48

ISBN 978-5-8084-2684-9
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426849

© ԵՊՀ հրատ., 2024
© Կազմողի համար, 2024

Նվիրվում է
Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի հիմնադրման 90- և
վերաբացման 40-ամյակներին

**ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ**

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

**ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ**

«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ

«Տաշիր» ընկերությունների խումբ

«ԷկոՎիլ» ՍՊԸ

«Բելլարտ» ՍՊԸ

«Արմ Կոնստրակտ» ՍՊԸ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ


ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**Հովհաննես Վահագնի Հովհաննիսյան**
*Երևանի պետական համալսարանի ռեկտոր,*
*պատմական գիտությունների դոկտոր*

Հարգելի՛ գործընկերներ,

Երևանի պետական համալսարանը՝ որպես Մայր բուհ, ստեղծման օրից եղել և մնում է հայկական համալսարանական կրթության առաջամարտիկը: Շարունակելով իր ստանձնած առաքելությունը՝ բարձրագույն կրթությամբ որակյալ և մրցունակ մասնագետներ պատրաստելու գործը, այսօր Համալսարանը շարունակում է պատվով կրել իր վաստակած համապետական և համահայկական համբավն ու հեղինակությունը:

Յուրաքանչյուր երկրի բարօրության հիմքը հզոր և ամուր տնտեսությունն է, որի կայացման և հզորացման գրավականը բանիմաց ու արհեստավարժ տնտեսագետ-մասնագետների արդյունավետ գործունեությունն է կյանքի բոլոր բնագավառներում: Թերևս հենց այս հիմնավորմամբ Համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարիներից՝ 1921 թ.-ից, Համալսարանում կազմակերպվել է տնտեսագիտական կրթություն, իսկ կարճ ժամանակ անց՝ 1934 թ., կազմավորվել Տնտեսագիտության ֆակուլտետը՝ որպես առանձին ինքնուրույն ստորաբաժանում:

Տնտեսագիտության ֆակուլտետի կայացման և զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել այնպիսի անվանի մտավորականներ, ինչպիսիք են՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Անուշավան Արզումանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հայկ Ազատյանը, պրոֆեսորներ Ներսիկ Ստեփանյանը, Զաքարե Բաշինջաղյանը, Թադևոս Ավդալբեկյանը, Ղևոնդ Շաքարյանը և ուրիշներ:

Համալսարանի կազմում Տնտեսագիտության ֆակուլտետը մշտապես մեծ հեղինակություն է վայելել, առանձնացել է իր կազմակերպվածությամբ և կարգապահությամբ:

Այսօր Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, չնայած պատկառելի տարիքին, լի է երիտասարդական ավյունով և ակտիվ գործունեություն է ծավալում, առանձնանում է գիտակրթական ոլորտում արձանագրած նշանակալի ձեռքբերումներով և գիտական բարձր մակարդակով: Ֆակուլտետը Համալսարանի կազմում միշտ էլ գնահատվել է որպես իր առաքելությանը հավատարիմ և փորձառու մասնագիտական կառույց:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից է. ունի շուրջ 1200 ուսանող և 155-ից ավելի դասախոս, որոնք 4 ամբիոններում արդյունավետ գործունեություն են ծավալում՝ որակյալ կադրեր պատրաստելով ինչպես մեր տնտեսության տարբեր ոլորտների, հիմնարկ-ձեռնարկությունների, պետական ու կառավարական բարձր օղակների, այնպես էլ ամենատարբեր միջազգային կազմակերպությունների համար:

Սրտանց շնորհավորում եմ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետին հիմնադրման 90- և վերաբացման 40-ամյակների առթիվ, մաղթում ՜լ ավելի մեծ եռանդ և հետագա արգասաբեր աշխատանք՝ հայրենի տնտեսությունը հզորացնելու կարևոր առաքելությանը կոչված բանիմաց մասնագետներ պատրաստելու շնորհակալ գործում:

Վստահ եմ, որ առաջիկայում բազմաթիվ առիթներ ենք ունենալու արձանագրել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նոր ձեռքբերումները և հպարտանալու շրջանավարտների ունեցած հաջողություններով:





**Կառլեն Գագիկի Խաչատրյան**
*ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,*
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Սիրելի՛ բարեկամներ,

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը տոնում է իր 90-ամյա տարեդարձը: Այս տարիների ընթացքում, որպես Համալսարանի կազմում գործող առանձին կառուցվածքային միավոր՝ ֆակուլտետը միշտ պատվով և բարձր մակարդակով է իրականացրել տնտեսության համար որակյալ մասնագետների պատրաստման իր առաքելությունը:

Բազմաթիվ երախտավորների շնորհիվ տասնամյակներ շարունակ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը եղել և մնում է Հայաստանում տնտեսագիտական մտքի ձևավորման, զարգացման և տարածման հիմնական կրթօջախը: Ֆակուլտետում աշխատել և աշխատում են տվյալ ժամանակաշրջանի անվանի տնտեսագետներ, գիտության դոկտորներ, թեկնածուներ, մասնավոր կազմակերպություններում և պետական կառույցներում աշխատանքի փորձառություն ունեցող՝ մասնագիտական ոլորտում ճանաչված և հեղինակավոր անձինք:

Ժամանակակից պայմաններում, երբ անընդհատ փոխվում են կրթության բովանդակությունը, մատուցման ձևերն ու մոտեցումները, ավանդական հիմնարար կրթության հաջողության գրավականը միմիայն ակադեմիական գիտելիքի և կիրառական հմտությունների ձևավորման զուգորդումն է: Հենց այս գիտակցմամբ է ֆակուլտետի ղեկավարությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը առաջնորդվում կրթության կազմակերպման բարդ, միևնույն ժամանակ շատ պատվաբեր գործում: Պատահական չէ, որ պրոֆեսորադասախոսական կազմի մի ստվար զանգված ունի պրակտիկ աշխատանքի երկարամյա փորձ: Աշխատելով տնտեսության ամենատարբեր ոլորտներում, պետական կառավարման համակարգում՝ մեր գործընկերները լսարանում տեսական նյութի հետ փոխանցում են նաև կիրառական գիտելիք, որը հնարավորություն է տալիս ֆակուլտետի շրջանավարտներին մրցունակ լինելու աշխատաշուկայում և անկախ այն բանից, թե որ օղակում են հայտնվել՝ կարողանում են կիրառական կոնկրետ խնդիրներ լուծել: Մեր շրջանավարտները ոչ միայն ֆակուլտետի հպարտությունն են, այլև այցեքարտը:

Այսօր ևս մենք հետևողական աշխատանք ենք տանում Երևանի պետական համալսարանում միջազգային լավագույն փորձին համապատասխան տնտեսագիտական կրթություն ապահովելու համար: Այդ նպատակին հասնելու համար պարբերաբար վերանայվում են կրթական ծրագրերը, ներդրվում են նոր, արդիական մագիստրոսական կրթական ծրագրեր, համակարգված աշխատանք է տարվում միջազգային կապերի ամրապնդման և ընդլայնման ուղղությամբ, առանձնակի ուշադրություն է դարձվում կադրային քաղաքականությանը՝ ձգտելով ապահովել սահուն սերնդափոխություն և նպաստել դասախոսական կազմի վերապատրաստումներին, անընդհատ բարելավվում են կրթական միջավայրն ու ենթակառուցվածքները:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետն իրավամբ անցել է երկար ու բեղուն ճանապարհ: Գործադրված ջանքերի ու նվիրումի շնորհիվ հիրավի պահպանել է առաջատարի իր դիրքը: Համոզված եմ՝ կրթական և գիտական էլ ավելի մեծ նվաճումները դեռ առջևում են:




## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Համալսարանի հիմնադրումից ի վեր տնտեսագիտական կրթությունը եղել է կարևոր ուղղություններից մեկը: Սակայն մինչև 1933 թ. այն կազմակերպվել է տարբեր ֆակուլտետների կազմում՝ Հասարակագիտական, Իրավա-տնտեսագիտական, Սոցիալ-տնտեսագիտական և այլն: Իսկ որպես առանձին ֆակուլտետ կազմավորվել է 1933-1934 ուստարում: Ու թեև ցանկացած ավանդական համալսարան անհնար է պատկերացնել առանց տնտեսագիտական ուղղության՝ 1975-1983 թթ. տնտեսագետ-մասնագետների պատրաստումը համալսարանում ընդմիջվել է՝ պայմանավորված այդ հենքի վրա Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ստեղծմամբ: Կարճատև դադարից հետո 1984 թ. համառ ջանքերի շնորհիվ ֆակուլտետը ԵՊՀ-ում վերաբացվել է՝ տնտեսագիտական կիբեռնետիկա անվամբ: Այնուհետև կրկին կոչվել է Տնտեսագիտության ֆակուլտետ, իսկ 2014 թ.-ից՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ:

Այսօր ֆակուլտետում իրականացվում է եռաս-

տիճան ուսուցում՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա: Բակալավրիատում իրականացվում է երեք կրթական ծրագիր՝ «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ»: Մագիստրատուրայում իրականացվում են առավել նեղ մասնագիտացում ապահովող յոթ կրթական ծրագրեր՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Տվյալների գիտությունը բիզնեսում», «Տնտեսական քաղաքականություն և իրավունք», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)»:

Ֆակուլտետում գործում է չորս ամբիոն՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների, Կառավարման և գործարարության, Ֆինանսահաշվային և Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման: Ամբիոնները, լինելով կրթագիտական գործընթացը կազմակերպող կառուցվածքային միավորներ, իրականացնում են ուսումնական գործընթացին առնչվող տարաբնույթ գործառույթներ և գիտական հետազոտություններ: Ամբիոնները մեծածավալ աշխատանք են կատարում՝ պարբերաբար թարմացնելով կրթական ծրագրերի ուսումնական պլանները, վերանայելով դասընթացների բովանդակությունը, կատարելով գիտական հետազոտություններ, որոնց արդյունքները հրատարակվում են գիտական հոդվածների, մենագրությունների տեսքով:

Գործունեության ողջ ընթացքում ֆակուլտետը հաջողությամբ է իրականացրել իր հանձնառությունը՝ տնտեսությանը մատակարարելով բարձրորակ մասնագետներ: Ֆակուլտետի բարձրակարգ մասնագետների անմնացորդ նվիրման ու ներդրած ջանքերի շնորհիվ սովորողն այստեղ հնարավորություն է ստանում ոչ միայն առավել համակողմանի ըմբռնելու ժամանակակից տնտեսագիտական սկզբունքները, հայեցակարգերը, գտնելու ժամանակակից տնտեսական հիմնահարցերի արդյունավետ լուծումները տեսագործնական հարթության մեջ, այլև զարգացնելու հետագա աշխատանքային գործունեության համար չափազանց կարևորվող կարողությունները և հմտությունները:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև ֆակուլտետի գիտակրթական ակտիվ համագործակցությունը արտերկրի տարբեր համալսարանների՝ ԱՊՀ Ցանցային համալսարանի, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի, Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության դպրոցի, ՄաքԳիլ համալսարանի (Կանադա), Ջորջ Վաշինգտոնի համալսարանի (ԱՄՆ), Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի, Լյուքսեմբուրգի համալսարանի, Պորտուգալիայի Եվրոպական բիզնես դպրոցի հետ: Գիտակրթական ոլորտում ֆակուլտետի շոշափելի ձեռքբերումների գրավականը դասախոսների և ասպիրանտների ակտիվ ներգրավվածությունն է տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում:

Միջազգային համագործակցության շրջանակներում ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմն է արտերկրում կատարելագործվելու հնարավորություն ստանում, այլև առաջին հերթին ուսանողներն են հնարավորություն ստանում կրթությունը շարունակելու արտերկրի համալսարաններում, շփվելու արտասահմանցի մասնագետների հետ, լսելու ու քննարկելու նրանց դասախոսությունները, մասնակցելու միջազգային գիտաժողովների և գիտական սեմինարների, գործընկերային կապեր հաստատելու և աստիճանաբար ինտեգրվելու միջազգային գիտակրթական համայնքին:

Ֆակուլտետի շրջանավարտներն ունեն լայն աշխարհայացք, անհրաժեշտ տեսական հիմնարար գիտելիքներ, տիրապետում են վերլուծական տարբեր գործիքների և մեթոդների, կարճ ժամանակահատվածում ի զորու են յուրացնելու մասնագիտական գործունեության ցանկացած ոլորտի առանձնահատկությունները պահպանելով վերապատրաստման և վերաորակավորման ներուժը: Հենց այս հատկությունների շնորհիվ է, որ համալսարանական կրթությամբ տնտեսագետ-շրջանավարտները մեծ արդյունավետությամբ աշխատում են ինչպես գիտակրթական հաստատություններում, այնպես էլ տնտեսության բոլոր ոլորտների մասնավոր ընկերություններում, պետական կառավարման համակարգում, միջազգային կառույցներում և այլուր:

Անկասկած է, որ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը վերջին տասնամյակներում ապրել է արմատական փոփոխություններ, իրականացված բարեփոխումների շնորհիվ պահպանել է առաջատարի իր դիրքերը և այսօր էլ իրականացվող նախաձեռնությունների, համառության, գործադրվող ջանքերի շնորհիվ անցնում է վերափոխումների կարևորագույն շրջան: Իսկ իրականացվող բարեփոխումների նպատակը մեկն է՝ ապահովել առողջ, մրցակցային, հարմարավետ կրթական միջավայր, որում կձևավորվեն աշխատաշուկայում մրցունակ կադրեր:

Սույն գիրք-ալբոմում փորձել ենք ամփոփել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի անցած ճանապարհը, արժևորել տարիների ձեռքբերումները, հիշատակել ֆակուլտետի կայացման և զարգացման գործում անուրանալի վաստակ ունեցող անձանց:

# 1 | Ֆակուլտետի կազմավորումն ու զարգացումը



Հիմնադրումից ի վեր Երևանի պետական համալսարանում տնտեսագիտությունը եղել է կարևոր ուղղություններից մեկը: Տնտեսագիտության ֆակուլտետը՝ որպես առանձին միավոր, կազմավորվել է 1933-1934 ուստարում:




Մինչև Տնտեսագիտության ֆակուլտետի ստեղծումը ներկայիս ամբիոնների փոխարեն գործել են առարկայական հանձնաժողովներ, որոնք զբաղվել են ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներով: Համալսարանի առարկայական 27 հանձնաժողովներից չորսը գործել են Հասարակագիտական ֆակուլտետում:

1933 թ. մայիսի 20-ի համալսարանի կազմակերպման հանձնաժողովի նիստի որոշմամբ Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը միացավ համալսարանին:

Պետական համալսարանի Հասարակագիտական և Տնտեսագիտական ֆակուլտետներում դեկաններ են եղել Ս. Տիգրանյանը (1921 թ.), Գ. Ղարաջանյանը (Արկոմեդ), Ց. Խանզադյանը, Թ. Ավդալբեկյանը և ուրիշներ: Հետագա տարիներին Տնտեսագիտական ֆակուլտետի դեկաններ են եղել Հ. Պետիկյանը (1934-1935 թթ. և 1940-1941 թթ.), Ս. Զուրաբյանը (1938-1940 թթ.), Կ. Կարագյանը (1941-1942 թթ. և 1966-1972 թթ.), Ա. Գարամյանը (1942-1944 թթ.), Պ. Ոսկերչյանը (1944-1947 թթ.), Ե. Մանուկյանը (1937-1938 թթ. և 1947-1956 թթ.), Զ. Բաշինջաղյանը (1956-1957 թթ.), Ս. Հարությունյանը (1962-1963 թթ.) և Ս. Մելիքյանը (1972-1975 թթ.):

Տնտեսագիտության ֆակուլտետում դասախոսել են այնպիսի անվանի մտավորականներ, ինչպիսիք են՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Անուշավան Արզումանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հայկ Ազատյանը, պրոֆեսորներ Ներսիկ Ստեփանյանը, Զաքարե Բաշինջաղյանը, Թադևոս Ավդալբեկյանը, Ղևոնդ Շաքարյանը, Հովհաննես Թումանյանը և ուրիշներ:



Համալսարանի իրավա-տնտեսագիտական ֆակուլտետի առաջին շրջանավարտները դասախոսների հետ (1925/1926 ուս. տարի)



Արզումանյան Անուշավան



Ազատյան Հայկ



Ավդալբեկյան Թադևոս



Ստեփանյան Ներսիկ



Բաշինջաղյան Զաքարե





Մանկավարժական ինստիտուտի պատմա-տնտեսագիտական և լեզվագրական ֆակուլտետների առաջին շրջանավարտները, 1927-1931 թթ.

Երկար ժամանակ ***Քաղաքատնտեսության*** (1990-ական թվականներից՝ ***Տնտեսագիտական տեսության***) ամբիոնը ղեկավարել են պրոֆեսորներ Զաքարե Բաշինջաղյանը (1936-1971 թթ.), Սմբատ Բադալյանը (1971-1978 թթ.), Գրիշա Ղարիբյանը (1978-1998 թթ., 2000-2009 թթ.), Շավարշ Մարգարյանը (1998-2000թթ.)։ Քաղաքատնտեսության ամբիոնում դասավանդել են անվանի պրոֆեսորներ Մուշեղ Ադոնցը, Սարգիս Զուրաբյանը, Ներսես Թովմասյանը, Վլադիմիր Ներկարարյանը և ուրիշներ։







Հովհաննես Թումանյանը դասի ժամին



Քաղաքատնտեսության ամբիոն



Բադալյան Սմբատ



Ղարիբյան Գրիշա



Բաշինջաղյան Զաքարե և այլք



Մարգարյան Շավարշ



Ադոնց Մուշեղ



Բաշինջաղյան Զաքարե և այլք



Զուրաբյան Սարգիս



Թովմասյան Ներսիկ



Ներկարարյան Վլադիմիր



Թումանյան Հովհաննես

Հետագայում ***Ժողովրդական տնտեսության պլանավորման և ճյուղային էկոնոմիկայի*** ամբիոնի վերակազմավորմամբ (վարիչ՝ Հովհաննես Թումանյան) ստեղծվում են ***Ժողովրդական տնտեսության պլանավորման*** (վարիչ՝ Անուշավան Կիրակոսյան) և ***Ճյուղային էկոնոմիկայի*** (վարիչ՝ Ավագ Ավանեսյան) ամբիոնները:



Կիրակոսյան Անուշավան



Ավանեսյան Ավագ

***Ֆինանսներ և վարկ*** ամբիոնը հիմնադրվել է 1930 թ. կեսերին՝ հանրապետության ճանաչված ֆինանսիստ Վանյա Դավթյանի նախաձեռնությամբ: Երկար տարիներ ամբիոնը գլխավորել է պրոֆեսոր Ղևոնդ Շաքարյանը, ում վաստակը մեծ է հանրապետության ֆինանսական և բանկային համակարգի համար բարձրորակ կադրերի պատրաստման գործում: Հետագայում՝ 1961 թ. սեպտեմբերից, այս ամբիոնը գլխավորել է պրոֆեսոր Վարազդատ Խլղաթյանը:



Շաքարյան Ղևոնդ



Խլղաթյան Վարազդատ



Կարագյան Կարպիս



Մանուկյան Շավարշ

1961 թ. ***Հաշվառման և վիճակագրության*** ամբիոնի հիմքի վրա կազմավորվել են երկու նոր՝ ***Հաշվապահական հաշվառման*** (վարիչ՝ պրոֆեսոր Կարպիս Կարագյան) և ***Վիճակագրության*** ամբիոնները (վարիչ՝ դոցենտ Շավարշ Մանուկյան):





Արխիվային փաստաթղթեր

1964 թ. կազմավորվել է ***Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման*** ամբիոնը, որի առաջին վարիչն է եղել հայտնի մտավորական Վլադիմիր Կարաբեգովը:

Պետական համալսարանի կազմում Տնտեսագիտության ֆակուլտետը նվիրումով իրականացրել է բարձրորակ տնտեսագետներ և ապրանքագետներ պատրաստելու իր առաքելությունը:

Այս մասնագիտության նկատմամբ Խորհրդային Հայաստանի տնտեսությունում աճող պահանջարկը բավարարելու նպատակով 1955 թ. ցերեկային ուսուցմանը զուգահեռ կազմակերպվում է հեռակա, իսկ 1958 թ., նաև երեկոյան ուսուցում:

1975 թ. Տնտեսագիտության, Ապրանքագիտության և Առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետների հիման վրա, ՀՍՍՀ Կառավարության որոշմամբ, կազմավորվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Սույն որոշման արդյունքում տնտե-

սագետ-մասնագետների պատրաստումը համալսարանում ընդմիջվեց:

Կարճ ժամանակ անց՝ 1983 թ., ԵՊՀ կազմում Տնտեսագիտության ֆակուլտետը վերաբացելու խնդիր առաջացավ: Այդ հարցում նախաձեռնող դարձան հանրապետությունում հայտնի գիտնականներ, մտածող հայեր, որոնք գտան, որ Համալսարանը Տնտեսագիտության ֆակուլտետ չունենալ չի կարող: Նախաձեռնողների շարքում մեծ ավանդ ունեցան ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Գրիշա Ալեքսանի Ղարիբյանը և ԵՊՀ ռեկտոր (1977-1991 թթ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը:



Համբարձումյան Սերգեյ



Ղարիբյան Գրիշա



Մովսիսյան Յուրի

ԵՊՀ կազմում Տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման հարցում կարևոր դեր է ունեցել նաև այն ժամանակվա Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Յուրի Թադևոսի Մովսիսյանը: Նա թողեց պրոռեկտորի պաշտոնը և Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի աշխատակիցների հետ տեղափոխվեց Երևանի պետական համալսարան:

1984-1985 ուստարվա սկզբից՝ իննամյա ընդմիջումից հետո, ԵՊՀ-ում վերաբացվեց Տնտեսագիտության ֆակուլտետը՝ «Տնտեսագիտական կիբեռնետիկա» անվանումով: Մայր բուհն ընդունեց 1-5-րդ կուրսերի ավելի քան 120 ուսանողների և շուրջ մեկ տասնյակ դասախոսների, ովքեր տեղափոխվեցին Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից՝ համալրելով համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի շարքերը: Դրանով իսկ վերականգնվեց ակադեմիական մի ավանդույթ. հանրապետության գլխավոր կրթօջախին վերապահվեց բարձրագույն համալսարանական կրթությամբ տնտեսագիտական կադրերի պատրաստման պատվաբեր ու պատասխանատու գործը, ինչպես հարիր է աշխարհի գրեթե բոլոր դասական հետազոտական համալսարաններին:

ԵՊՀ Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի առաջին դեկանը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանն էր, ով միաժամանակ ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչն էր:

1990-ական թվականների սկզբներին ֆակուլտետը քանակական, որակական, կառուցվածքային, կադրային լուրջ փոփոխությունների ենթարկվեց: Յու. Մովսիսյանի՝ ՀՀ Գերագույն խորհրդի տնտեսական ինքնուրույնության և տնտեսական զարգացման հարցերի հանձնաժողովի նախագահ ընտրվելուց հետո 1990 թ. ֆակուլտետի դեկանի պարտականությունները ստանձնեց դոցենտ Գ. Բախշյանը, ով պաշտոնավարեց մինչև 1993 թ., իսկ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ ընտրվեց դոցենտ Վ. Թորոյանը:

1990-1991 ուստարվանից ֆակուլտետը սկսեց ընդունելություն կազմակերպել նաև *միջազգային տնտեսական հարաբերություններ* մասնագիտությամբ: 1992 թ. ստեղծվեց ***Միջազգային տնտեսական հարաբերությունների*** ամբիոնը, որի հիմնադիր վարիչը դարձավ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թ. Թորոսյանը: ՀՀ անկախացման և շուկայական հարաբերությունների անցման պայմաններում նոր մասնագիտացումների բացումը, ինչպես նաև ֆակուլտետի անվանափոխումը (***Տնտեսագիտական կիբեռնետիկայի փոխարեն՝ Տնտեսագիտության***) էապես մեծացրին պահանջարկը համալսարանական տնտեսագիտական կրթության նկատմամբ:

***Տնտեսագիտության*** անվանումով ֆակուլտետը գործեց 1991-2013 թթ.՝ շուրջ 23 տարի, այդ ժամանակահատվածում իր աշխատակիցների և ուսանողների թվով դառնալով ԵՊՀ ամենամեծ



Բախշյան Գագիկ



Թորոսյան Թորոս



Թորոյան Վասակ

ստորաբաժանումներից մեկը:

1991-2013 թթ. ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի շրջանավարտների թիվը ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր թվի գրեթե 10 տոկոսն էր (5571 շրջանավարտ՝ 59498-ից):

Տնտեսագիտության ֆակուլտետում ծավալված փոփոխությունները նոր թափ և համակարգային ընդգրկում ստացան 90-ականներին (դեկան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղարիբյան): ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետն առաջիններից մեկն էր, որ արմատական շրջադարձ կատարեց շուկայական տնտեսության պահանջներին համապատասխանող տնտեսության ձևավորման բնագավառում: Կարճ ժամանակաշրջանում դասավանդման հին մոդելից անցումը նոր մոդելին բարդ և դժվար իրագործելի խնդիր էր՝ կապված բազմաթիվ հարցերի միաժամանակյա լուծման անհրաժեշտության հետ: Մասնավորապես շարունակում էր գործել իներցիայի ուժը, դասախոսական կազմը հոգեբանորեն և մասնագիտորեն առնչվում էր որոշ դժվարությունների հետ, որոնք ընթացքում հաջողությամբ հաղթահարվեցին:

Տնտեսագիտական կրթության որակավորման բարելավման, դասախոսական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման կարևորագույն նախադրյալներից է համագործակցությունն արտասահմանյան առաջատար համալսարանների հետ: 1995-2000 թվականներին ֆակուլտետի ավելի քան երեք տասնյակ բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներ անվճար հիմունքներով իրենց ուսումը շարունակեցին Մոսկվայի պետական համալսարանում, ՌԴ Կառավարության Ժողովրդական տնտեսության ակադեմիայում, Գ.Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտական ակադեմիայում:

Միջազգային համագործակցությունը չսահմանափակվեց միայն ԱՊՀ շրջանակներով: 1990-ական թվականներին ֆակուլտետի բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ տարբեր ծրագրերով կամ ուղղակի պայմանագրերով վերապատրաստվել կամ դասընթացներ են ունկնդրել ԱՄՆ-ի Բենթլի (Բոստոն) բարձրագույն տնտեսագիտական քոլեջում, Կոլորադոյի, Այովայի, Ռեդլանդզի համալսարաններում, Կալիֆորնիայի (Ֆրեզնո, Պոմոնա, Նորթրիջ) պետական համալսարանում, Մեծ Բրիտանիայի Քրենֆիլդի համալսարանում, Լոնդոնի բարձրագույն տնտեսագիտական դպրոցում, Եվրոպական կենտրոնական համալսարանում (Բուդապեշտ, Պրահա), Հունաստանի Մակեդոնիայի սոցիալ-տնտեսագիտական համալսարանում և այլուր: Այդ համագործակցության շնորհիվ ոչ միայն բարելավվեցին կրթական ծրագրերն ու դասավանդման որակը, այլև ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը ճանաչվեց որպես ժամանակակից տնտեսագետ-մասնագետներ պատրաստող առաջատար կրթօջախ:

1996-1997 ուստարում, նախքան բակալավրիատի գծով շրջանավարտների թողարկումը, համալսարանում առաջինը հենց Տնտեսագիտության ֆակուլտետում երկամյա ծրագրով բացվեց մագիստրատուրա: Ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի թվական աճը հանգեցրեց կազմակերպական և կառուցվածքային նոր փոփոխությունների անհրաժեշտության: 1996 թ. հիմնադրվեց ***Կառավարման և գործարարության*** ամբիոնը (վարիչ՝ պրոֆեսոր Հայկ Սարգսյան), 1999 թ.՝ Տնտեսագիտության ֆակուլտետի ***Մաթեմատիկայի*** ամբիոնը (վարիչ՝ պրոֆեսոր Հայկ Ղազարյան), 2000 թ.՝ ***Ֆինանսահաշվային*** ամբիոնը (վարիչ՝ դոցենտ Լևոն Դավթյան): Համապատասխանաբար ճշգրտվեցին մագիստրոսական մասնագիտացումները, հստակեցվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը:

1990-ական թվականներին ֆակուլտետում որոշակի աշխատանքներ ծավալվեցին նաև ուսումնական գրականության և այլ նյութերի ստեղծման ուղղությամբ: Ռուսերենից հայերեն թարգմանվեց Պ. Սամուելսոնի և Վ. Նորդհաուզի «Տնտեսագիտու-



Սարգսյան Հայկ



Ղազարյան Հայկ



Դավթյան Լևոն

թյուն» դասագիրքը: Պրոֆեսորներ Հ. Սարգսյանը և Մ. Սահակյանը համահեղինակեցին «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ» դասագիրքը: Այնուհետև լույս տեսան «Միջազգային տնտեսագիտություն» (պրոֆեսոր Թ. Թորոսյան), «Գործույթների հետազոտման մաթեմատիկական եղանակներ» (համահեղինակ՝ պրոֆեսոր Մ. Սահակյան), «Մարդկային զարգացման հիմունքներ» (համահեղինակներ՝ պրոֆեսորներ Հ. Սարգսյան, Գ. Ղարիբյան, դոցենտներ Հ. Մարզպանյան, Ա. Համբարձումյան), «Տնտեսագիտություն» (համահեղինակներ՝ պրոֆեսորներ Հ. Սարգսյան, Գ. Ղարիբյան, Հ. Մարզպանյան) դասագրքերը և այլն: Թարգմանվեցին Ջ. Սաքսի «Մակրոէկոնոմիկա», Յա. Յադգարովի «Տնտեսագիտական մտքի պատմություն», Գ. Մենքյուի «Մակրոէկոնոմիկա» դասագրքերը: Պատրաստվեցին ուսումնական ձեռնարկներ՝ «Ինովացիոն մենեջմենթ», «Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության գնահատում» (պրոֆեսոր Ս. Ղանթարչյան) և այլն: ***Տնտեսագիտության տեսության*** ամբիոնը ձեռնարկեց ամբիոնի հինգ դասընթացների ուսումնական ձեռնարկների հրատարակման աշխատանքները:

2000 թ. սկզբին ֆակուլտետը ԵՊՀ Այգեձորի մասնաշենքից տեղափոխվեց Աբովյան փողոցի պատմական համալսարանական մասնաշենք (Սև շենք): Շարունակվեցին ֆակուլտետի ձեռքբերումները: 2000-2023 թթ. ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանն է եղել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ***Հայկ Սարգսյանը:***

2002 թ. ԵՊՀ-ում վերաբացվեց ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհուրդը (նախագահ՝ պրոֆեսոր Գ. Ղարիբյան):

2009 թ.՝ ֆակուլտետի վերաբացումից 25 տարի անց, կոլեկտիվն իր արդյունավետ աշխատանքով հասել էր նրան, որ այն դարձել էր ժամանակի պահանջները բավարարող և միջազգային չափանիշներով տնտեսագետ կադրեր պատրաստող կենտրոն: 1984 թ.-ից հետո ֆակուլտետի ուսանողների թիվը տասնապատկվել էր: Դպրոցը բարձր առաջադիմությամբ ավարտած մեծ թվով շրջանավարտներ՝ առանձին տարիներին դպրոցն ավարտած մեդալակիրների գրեթե մեկ քառորդը, մրցույթով էին համալրում Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների շարքերը:

ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը 21-րդ դար թևակոխեց նոր ձեռքբերումներով և առկա հիմնախնդիրների համալիր լուծման վճռականությամբ: Մեծ թափ ստացան հայալեզու դասագրքերի և ուսումնական ձեռնարկների պատրաստման, թարգմանության, խմբագրման և հրատարակման աշխատանքները: Ֆակուլտետի առաջատար դասախոսների հեղինակությամբ կամ խմբագրությամբ պարբերաբար լույս է ընծայվել ուսանողությանը խիստ անհրաժեշտ մեծածավալ ուսումնական գրականություն:

Ընդլայնվել է և կոնկրետ առարկայական բովանդակություն է ձեռք բերել միջազգային համագործակցությունը: Համագործակցության շրջանակներում ֆակուլտետի դասախոսների գրեթե կեսը վերապատրաստվել է արտասահմանյան կրթօջախներում, հիմնվել են համակարգչային լսարաններ, ժամանակակից գրականությամբ է համալրվել ֆակուլտետի ընթերցասրահը, ներդրվել են դասավանդման նոր տեխնոլոգիաներ: Մասնավորապես ամենաէական արդյունքներից մեկը Կալիֆորնիայի (Ֆրեզնո) պետական համալսարանի աջակցությամբ *կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաներ* մագիստրոսական նոր մասնագիտացման բացումն ու ծրագրային ապահովումն էր: 2003-2013 թթ. ֆակուլտետի մասնաշենքում գործել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն. Հայաստան» (CRRC) կազմակերպությունը (տնօրեն՝ Հեղինե Մանասյան), որն աննախադեպ հնարավորություններ է ընձեռել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների ստեղծագործական գործունեության համար:

Ուսումնագիտական աշխատանքների իրականացման գործին ակտիվորեն մասնակցել են տն-

տեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ Գրիշա Ղարիբյանը, պրոֆեսորներ Հայկ Սարգսյանը, Սարգիս Ղանթարջյանը, Հայկ Մնացականյանը, Թորոս Թորոսյանը, Արամ Առաքելյանը, Վարդան Բոստանջյանը, Աշոտ Մարկոսյանը, Ռուբեն Գևորգյանը, Գագիկ Գալստյանը, Վահրամ Աբրահամյանը, Անահիտ Համբարձումյանը, Ամալյա Սարիբեկյանը, Սամսոն Դավոյանը և ուրիշներ:

Ֆակուլտետը սերտ համագործակցել է Ռուսաստանի Դաշնության, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի և այլ երկրների գիտակրթական կենտրոնների հետ: Համագործակցության շրջանակում ֆակուլտետին կից ստեղծվել է «Հետազոտությունների և բիզնեսի կենտրոն» հիմնադրամը, որի նպատակներից է ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների խթանումը:







Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը մշտապես ակտիվորեն ներգրավված է գործող միջամբիոնային գիտական սեմինարի աշխատանքներում:

2014 թվականին կրթօջախը վերանվանվել է Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի: 2014-2024 թթ. ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի շրջանավարտների թիվը կազմել է ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր թվի գրեթե 10 տոկոսը (4275 շրջանավարտ՝ 44775-ից):

Այսօր Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, որպես համալսարանի հնագույն ֆակուլտետներից մեկը, Հայաստանի և տարածաշրջանի ամենաբարձր վարկանիշն ունեցող ուսումնական հաստատություններից է, որտեղ ստացած կրթությունը հնարավորություն է տալիս դառնալու մրցունակ մասնագետ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև ամբողջ աշխարհում:

1934 թվականից ի վեր ֆակուլտետն ավարտել են տասնյակ հազարավոր բարձրակարգ մասնագետներ, որոնք, գերազանց տիրապետելով իրենց մասնագիտությանը, հաջողությամբ և բարձր արդյունավետությամբ աշխատում են տնտեսության տարբեր ոլորտներում, պետական կառավարման համակարգում, գիտահետազոտական կենտրոններում և համալսարաններում: Կրթական տարբեր ծրագրերով շուրջ 1200 ուսանող (այդ թվում՝ առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ և հայցորդներ) այսօր մասնագիտական կրթություն է ստանում համալսարանում:

Նորանկախ Հայաստանում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի զարգացման ընթացքը բնութագրվում է բազմակողմ վերափոխումներով: Դրանցից առանձնացվում են կառուցվածքային բարեփոխումները՝ կառուցվածքային նոր ստորաբաժանումների ստեղծմամբ և բակալավրիական նոր մասնագիտությունների ներդրմամբ: Վերջին 15-20 տարիների ընթացքում ընդամենը մեկ՝ «Տնտեսագիտության տեսություն» բակալավրի մասնագիտությամբ կադրերի պատրաստումից անցում կատարվեց նոր հիմնված՝ «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտություններով կադրերի թողարկմանը: ***Կառավարման և գործարարության*** և ***Ֆինանսահաշվային*** ամբիոնները դարձան թողարկող ամբիոններ: Վերափոխումները հնարավորություն ընձեռեցին տարեկան թողարկելու մինչև 500 բարձրորակ շրջանավարտներ «Կառավարում», «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» մասնագիտություններով և առանձին տարիների գործող մինչև 10 մագիստրոսական ծրագրերի գծով:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆա-

կուլտետը համագործակցում է ինչպես պետական մարմինների, այնպես էլ մասնավոր ոլորտի կազմակերպությունների հետ (այդ թվում՝ ՀՀ Կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների, Կենտրոնական բանկի և այլն): Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտակրթական ներուժն օգտագործվում է ՀՀ Կառավարության տարբեր օղակների ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացում, ինչպիսիք են՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (2001-2003 թթ.), «Երևան քաղաքի զարգացման ծրագիրը» (2004-2006 թթ.), «ՀՀ-ում հողերի խոշորացման ծրագիրը» (2005-2006 թթ.), «Կայուն զարգացման ծրագիրը» (ընդունված ՀՀ Կառավարության 2008 թ. որոշմամբ), «Հայաստանում հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի զեկույցը» (2010 թ.), «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը» (ընդունված ՀՀ Կառավարության 2014 թ. որոշմամբ), «Հայաստանի պարենային ապահովության և սնուցման ազգային ռազմավարական ուսումնասիրությունը» (2018 թ.), «Մարդկային կապիտալի ուսումնասիրությունը» (2022 թ.), «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգը» (ընդունված 2024 թ.):







Գիտաուսումնական և հետազոտական գործունեություն իրականացնելիս ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը համագործակցում է նաև միջազգային կառույցների հետ՝ ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակ, Համաշխարհային բանկ, ՀՌԿԿ հայաստանյան կենտրոն, «TEMPUS ECESIS» և այլն:

Ֆակուլտետում գործում է ուսուցման եռաստիճան համակարգ՝ բակալավրիատ (4 տարի տևողությամբ), մագիստրատուրա (ծրագրով պայմանավորված՝ 1, 1.5 կամ 2 տարի տևողությամբ) և ասպիրանտուրա (առկա՝ 3 տարի, հեռակա՝ 4 տարի տևողությամբ):

Բակալավրի որակավորումը շրջանավարտներին լայն հնարավորություններ է ընձեռում զբաղեցնելու պաշտոններ տնտեսության տարբեր բնագավառներում, ինչպես նաև երկրի պետական կառավարման համակարգում և այլ ոլորտներում: Քառամյա ծրագրի ավարտին շրջանավարտներին շնորհվում է տնտեսագիտության բակալավրի կամ կառավարման բակալավրի պետական դիպլոմ՝ կախված ընտրված կրթական ծրագրից (տես Աղյուսակ 1.1):

**Աղյուսակ 1.1**

**Ֆակուլտետում գործող բակալավրի կրթական ծրագրերը՝ ըստ մասնագիտությունների և որակավորման**

| Բակալավրի կրթական ծրագրեր | |
|---|---|
| **մասնագիտությունը** | **որակավորումը** |
| Տնտեսագիտություն | Տնտեսագիտության բակալավր |
| Կառավարում | Կառավարման բակալավր |
| Ֆինանսներ | Տնտեսագիտության բակալավր |



Մագիստրոսի որակավորումը շրջանավարտներին իրավունք է տալիս զբաղեցնելու պաշտոններ, այդ թվում՝ ընդգրկվելու գիտահետազոտական աշխատանքներում, որոնց համար աշխատողից պահանջվում է խորացված, ոլորտային մասնագիտական կրթություն: Մագիստրոսական ծրագրերի հիմնական նպատակը դիմորդների խորացված մասնագիտական վերապատրաստումն է: Ծրագրի ավարտին շրջանավարտներին շնորհվում է տնտե-

սագիտության մագիստրոսի կամ կառավարման մագիստրոսի պետական դիպլոմ՝ համապատասխան կրթական ծրագրով (տես Աղյուսակ 1.2):

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասավանդում են ոլորտի առաջատար մասնագետներ՝ պրոֆեսորներ, գիտությունների դոկտորներ և թեկնածուներ, ՀՀ պետական պարգևների և մասնագիտական ոլորտում պատվավոր կոչումների արժանացած վաստակավոր դասախոսներ: Ֆակուլտետում համատեղության կարգով դասավանդում են նաև ՀՀ պետական կառավարման, ինչպես նաև ֆինանսաբանկային ոլորտի և տնտեսության առաջատար կազմակերպությունների մասնագետներ, հասարակական գործիչներ և մեծանուն գիտնականներ:

**Աղյուսակ 1.2**
**Ֆակուլտետում գործող մագիստրոսական կրթական ծրագրերը՝ ըստ մասնագիտությունների և որակավորման**

| Մագիստրոսական կրթական ծրագրեր | | |
|---|---|---|
| **մասնագիտությունը** | **ծրագրերի անվանումը** | **որակավորումը** |
| Տնտեսագիտություն | Տվյալների գիտությունը բիզնեսում | Տնտեսագիտության մագիստրոս |
| | Միջազգային տնտեսական հարաբերություններ | |
| | Տնտեսական քաղաքականություն և իրավունք | |
| Ֆինանսներ | Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ | Տնտեսագիտության մագիստրոս |
| Հաշվապահական հաշվառում և հարկում | Հաշվապահական հաշվառում և աուդիտ | Տնտեսագիտության մագիստրոս |
| Կառավարում | Գործարար վարչարարություն (կառավարում) | Կառավարման մագիստրոս |
| Շուկայագիտություն (մարքեթինգ) | Շուկայագիտություն (մարքեթինգ) | Կառավարման մագիստրոս |

Ազգային և միջազգային աշխատաշուկաների պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր են առաջարկում ֆակուլտետում գործող չորս ամբիոնները՝

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների,
2. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման,
3. Ֆինանսահաշվային,
4. Կառավարման և գործարարության:



Ֆակուլտետում 2016 թ. հիմնադրվել է **Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը**, որի գործունեությունը նպատակաուղղված է սահմանադրականության մշտադիտարկման ու կառավարման, տնտեսության ինստիտուցիոնալ զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների կատարմանը, գիտագործնական լուծումների առաջադրմանը: Կենտրոնի գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն են՝ սահմանադրականության ախտորոշում և մակարդակի գնահատում, սահմանադրականության գնահատման տվյալների բազաների հավաքագրման մեթոդների մշակում և հավաքագրում, կատարված հետազոտությունների և ստեղծված տվյալների բազաների առևտրայնացման ուղիների մշակում, ինչպես նաև «Big Data» և «Data Science» մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունը սահմանադրական տնտեսագիտության ոլորտում:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2019 թ. հիմնադրվել և մինչև 2023 թ. գործել է ***Նորարարության փնփեսագիփություն*** ամբիոնը, որը ղեկավարել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանը:



Ամբիոնի ստեղծումը պայմանավորված է եղել բարձրագույն կրթության ոլորտում որդեգրված՝ գիտության ոլորտում նորարարական գործունեության զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության, գիտության և նորարարական մշակումների մրցունակությունը ու միջազգայնացումը խթանելու, դրանք միջազգային զարգացման միտումներին և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին համահունչ դարձնելու նպատակներով:

Ամբիոնի հիմնադրումից հետո «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական ծրագիրը Կառավարման և գործարարության ամբիոնից տեղափոխվել է Նորարարության ամբիոն:

Ամբիոնում աշխատել են տնտեսագիտության 3 դոկտոր, պրոֆեսոր, 1 դոցենտ, 3 ասիստենտ: Ամբիոնի դասախոսները ակտիվ աշխատանքային գործունեություն են ծավալել ՀՀ տնտեսության առանցքային այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ պետական կառավարման համակարգը, արտոնագրման և հեղինակային իրավունքների պաշտպանությունը, սոցիալական ծառայությունները և այլն:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը արդյունավետ համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գիտահետազոտական կենտրոնների հետ: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում **միջազգային համագործակցությունը** դիտարկվում է որպես զարգացման և կրթության որակի բարելավմանն ուղղված ռազմավարական կարևոր ուղղություն: Ֆակուլտետը միջազգային համագործակցության ծրագրեր է իրականացրել դեռևս 1993 թվականից: ԵՊՀ-ն (այդ թվում՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը) համագործակցում է ավելի քան 230 բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ: Փոխանակման բազմաթիվ ծրագրերի շրջանակում ֆակուլտետի ուսանողները հնարավորություն ունեն կրթություն ստանալու արտերկրի հեղինակավոր համալսարաններում, մասնակցելու միջազգային ծրագրերի և նախագծերի: Ի թիվս բազմաթիվ միջազգային համագործակցության ծրագրերի՝ ֆակուլտետում ուսանողների համար լայն հնարավորություն է ապահովվում.

- «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ուսանողների շարժունություն (բակալավրիատի երկրորդ կուրսից սկսած),
- միջբուհական համագործակցության ծրագրերի շրջանակում ուսանողների շարժունություն (բակալավրիատի երկրորդ կուրսից սկսած),
- մագիստրատուրայի ուսանողների և ասպիրանտների համար միջազգային բուհերում և գիտահետազոտական կենտրոններում հետազոտական դրամաշնորհների, ինչպես նաև կրթաթոշակների միջոցով ուսումը շարունակելու հնարավորություն,
- կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագիր ԱՄՆ-ի Սան Խոսեի պետական համալսարանի հետ (ՍԽՊՀ) - **«Տվյալների գիտությունը բիզնեսում»** մագիստրոսական ծրագրի երկրորդ տարվա՝ մինչև հինգ ուսանողներ կարող են ուսումը շարունակել ՍԽՊՀ-ի «Տվյալների վերլուծություն» ծրագրի 2-րդ կուրսում՝ ստանալով և՛ ԵՊՀ-ի, և՛ ՍԽՊՀ-ի դիպլոմներ:

ԵՊՀ ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ

ԵՊՀ-ում 2021 թ.-ից գործում է նաև **«Բիզնես ինկուբատոր»** կառուցվածքային ստորաբաժանումը, որի նպատակը տարբեր ֆակուլտետներում, այդ թվում՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ստեղծվող արդյունքների առևտրայնացման միջավայրի ստեղծումն է, համալսարանական միջավայրում ծնվող գաղափարների գեներացումը և ակսելերացիան, այդ գաղափարները գիտակրթական, արդյունաբերական, տեխնոլոգիական արդյունքի վերածելու, ինչպես նաև նորարարական գաղափարների հավաքագրմանն ու զարգացմանը միտված օժանդակության ապահովումը:

Գիտակրթական ու հետազոտական համատեղ նախագծերի իրականացման, մասնագիտական ու արտադրական պրակտիկաներ կազմակերպելու, ուսանողների՝ աշխատաշուկա ելքի ապահովման նպատակով ֆակուլտետն ակտիվորեն համագործակցում է ՀՀ ֆինանսաբանկային ոլորտի, պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ: Ուսումնառության ընթացքում, կրթական գործընթացներին զուգահեռ, մեծ ուշադրություն է դարձվում նաև ուսանողների արտալսարանային կյանքին ու գործունեությանը: Ուսանողների համար կազմակերպվում են սեմինարներ, հանրային դասախոսություններ, ճանաչողական այցեր, արտալսարանային դասեր ու հանդիպումներ ոլորտի փորձառու մասնագետների, հանրային գործիչների, մեծանուն գիտնականների, բիզնեսի ներկայացուցիչների հետ, որոնք իրենց հարուստ փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին:

Ֆակուլտետը շարժվում է ժամանակին համընթաց՝ ապահովելով առաջադեմ կրթական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ կիրառման շարունակական հնարավորություններ: Պարբերաբար կրթական գործընթացներում ներդրվում են կրթության որակի բարելավմանն ու ուսումնառության կազմակերպման արդիականացմանը նպատակաուղղված առաջադեմ տեխնոլոգիաները:

ԵՊՀ-ում գործում են մի շարք կառուցակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին դիմելու ուսման վարձի փոխհատուցում ստանալու համար: Ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստանալու հնարավորություն ունեն տվյալ ուստարում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները: Ֆակուլտետը ներառված է ֆինանսական օժանդակության մի շարք ծրագրերում, համագործակցում է տարբեր հաստատությունների և կառույցների հետ: Ֆակուլտետում լավագույն ուսանողների համար սահմանված են անվանական կրթաթոշակներ:

Վերջին տարիներին ուսուցման տարբեր ձևերով ֆակուլտետն ավարտում է տարեկան շուրջ 300 շրջանավարտ, որոնք աշխատում են պետական համակարգում (այդ թվում՝ ՀՀ նախարարություններում և գերատեսչություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում), ՀՀ կենտրոնական բանկում, առևտրային բանկերում, մասնավոր ձեռնարկություններում, միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և այլուր:

Մասնավորապես, 2023-24 ուստարում ֆակուլտետում առկա ուսուցմամբ ուսանողների թիվը կազմել է 584 (533 բակալավրիատ, 51 մագիստրատուրա), իսկ հեռակա ուսուցմամբ ուսանողների թիվը՝ 283 (253 բակալավրիատ, 30 մագիստրատուրա): Նույն տարում առկա ուսուցմամբ շրջանավարտների թիվը կազմել է 220 (186 բակալավրիատ, 34 մագիստրատուրա), իսկ հեռակա ուսուցմամբ շրջանավարտների թիվը՝ 71 (43 բակալավրիատ, 28 մագիստրատուրա):

### *Հոբելյանական միջոցառումները՝ որպես գործունեության հաշվետվություն, գնահատանքի և երախտիքի դրսևորում*

***Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի*** հիմնադրման և վերաբացման տարեդարձերը ավանդաբար նշվել են մեծ շուքով:

Ֆակուլտետի ***հիմնադրման 70-*** և ***վերաբացման 20***-ամյակները նշվել են 2004 թ.: Այդ կապակցությամբ կազմակերպված միջոցառումները նվիրված էին ֆակուլտետի գիտակրթական գործունեության յուրահատուկ հաշվետվությանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին բարձր գնահատանքի և երախտիքի արժանացմանը:

Տասը տարի անց՝ 2014 թ. դեկտեմբերի 9-ին, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը նշեց հիմնադրման 80- և վերաբացման 30-ամյակները: Այդ առիթով կազմակերպված միջոցառմանը ներկա էին ՀՀ պետական այրեր, ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, ԵՊՀ դասախոսներ և այլ հյուրեր: Միջոցառմանը ֆակուլտետի վաստակաշատ դասախոսները պարգևատրվեցին ՀՀ ԱԺ նախագահի անունից՝ Ազգային ժողովի պատվո մեդալով, պատվոգրերով և շնորհակալագրերով:

2024 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը նշեց հիմնադրման 90- և վերաբացման 40-ամյակները: Դեռևս 2024 թ. գարնանը ձևավորված հոբելյանական հանձնաժողովը մշակել էր ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակի միջոցառումների ցանկը և դրանց կատարման ժամանակացույցը: Որոշվել էր կազմակերպել միջազգային գիտաժողով, հանդիսավոր նիստ, պատրաստել ֆիլմ և հրատարակել գիրք-ալբոմ:

*ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 90- և վերաբացման*












*40-ամյակներին նվիրված հոբելյանական միջոցառումներից հանդիսավոր նիստը տեղի ունեցավ առանձնահատուկ շուքով՝ կարմիր գորգի հանդիսավոր արարողությամբ, 2024 թ. հոկտեմբերի 31-ին Արամ Խաչատրյան համերգասրահում:*

Հանդիսավոր նիստին մասնակցում էին ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները, դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՀՀ ԿԲ նախագահը, խորհրդի անդամներ, պաշտոնատար անձինք, տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ այլ բուհերի և գիտակրթական հաստատությունների ղեկավարներ, ֆակուլտետի շրջանավարտներ, ուսանողներ և հյուրեր:

Ողջույնի խոսքով հանդես եկան ԵՊՀ ռեկտոր ***Հովհաննես Հովհաննիսյանը***, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան ***Կարեն Խաչատրյանը,*** «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն ***Հայկ Ստեփանյանը***:

Ֆակուլտետի հիմնադրման 90- և վերաբացման 40-ամյակների առթիվ ֆակուլտետի դասախոսները պարգևատրվեցին ֆակուլտետի զարգացման, գիտակրթական գործունեության կազմակերպման և երիտասարդ կադրերի պատրաստման գործում ներդրած մեծ ավանդի համար: «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրվեցին մասնագիտական հաջողություններ գրանցած և ֆակուլտետի զարգացման գործում ներգրավված երեք շրջանավարտ՝ ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, ՀԱՀ Մանուկյան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Վաչե Գաբրիելյանը, «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը, իսկ գործընկեր որոշ կազմակերպությունների ղեկավարները և հիմնադիրները՝ ֆակուլտետի հետ երկարատև և արդյունավետ համագործակցության, ֆակուլտետի նախաձեռնություններին ակտիվ աջակցության և նշանակալի ներդրման համար արժանացան շնորհակալագրերի և խորհրդանշական հուշանվերների:









# 2 | Ֆակուլտետի դեկանները



Երևանի պետական համալսարանում տնտեսագիտության ֆակուլտետի կայացման, զարգացման, իննամյա դադարից հետո նաև վերաբացման գործընթացների կազմակերպման մեջ իրենց ուրույն դերակատարում են ունեցել ֆակուլտետի դեկանները: Նրանցից յուրաքանչյուրը, բեղուն գիտական գործունեությունից զատ, հասարակական և կազմակերպչական ակտիվ գործունեություն է ծավալել՝ ի նպաստ որակյալ տնտեսագետ-մասնագետների պատրաստման հայրենանվեր գործի:

Այդ մասին փաստում են ֆակուլտետի դեկանի պաշտոնավարումը ստանձնած անձանց հարուստ կենսագրականները: Երևանի պետական համալսարանի կազմում ֆակուլտետի դեկանի պաշտոնավարման ժամանակահատվածները՝ 1934 թ.-ից առ այսօր, ներկայացված են աղյուսակ 2.1-ում:



**ՊԵՏԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**
*Տնտեսագետ*
*Պաշտոնավարել է 1934-1935 թթ. և 1940-1941 թթ.*



**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐՈ ՀԱԿՈԲԻ**
*Տնտեսագետ*
*Պաշտոնավարել է 1935-1937 թթ.*



**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՓՐԵՄ ՂԱԶԱՐԻ**
*Տնտեսագետ, դոցենտ*
*Պաշտոնավարել է՝ 1937-1938 թթ. և 1947-1956 թթ.*



**ԶՈՒՐԱԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՇԱՐԲԱԹԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*
*Պաշտոնավարել է 1938-1940 թթ.*



**ԿԱՐԱԳՅԱՆ ԿԱՐՊԻՍ ՊՈՂՈՍԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*
*Պաշտոնավարել է 1941-1942 թթ. և 1966-1972 թթ.*



**ԳԱՐԱՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՏԻՆԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
*Պաշտոնավարել է 1942-1944 թթ.*



**ՈՍԿԵՐՉՅԱՆ ՊՈՂՈՍ ՏՈՆԱՊԵՏԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
*Պաշտոնավարել է 1944-1947 թթ.*



**ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ԶԱՔԱՐ ԳԵՎՈՐԳԻ**
*Տնտեսագետ, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*
*Պաշտոնավարել է 1956-1957 թթ.*



**ՇԱՔԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԼԵՎՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
*Պաշտոնավարել է 1957-1961 թթ.*



**ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
*Պաշտոնավարել է 1963-1966 թթ.*



**ՄԵԼԻՔՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿՈՍԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
*Պաշտոնավարել է 1972-1975 թթ.*



**ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ ԹԱԴԵՎՈՍԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
*Պաշտոնավարել է 1984-1990 թթ.*



**ԲԱԽՇՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
*Պաշտոնավարել է 1990-1993 թթ.*



**ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻՇԱ ԱԼԵՔՍԱՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ*
*Պաշտոնավարել է 1993-2000 թթ.*



**ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
*Պաշտոնավարել է 2000-2023 թթ.*



**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԳԱԳԻԿԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
*Պաշտոնավարում է 2023 թ.-ից առ այսօր*



**ՊԵՏԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

*Տնտեսագետ*

Ծնվել է 1905 թ. Վանի նահանգի Կեմ գյուղում: Հայրը զոհվել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1914 թ.): 1915 թ. ընտանիքի անդամների հետ գաղթել է Երևան: 1915-1917 թթ. ապրել է Երևանի ամերիկյան կոմիտեի որբանոցում՝ սովորելով մինչև հինգերորդ դասարան: 1922 թ. եղել է պիոներ-կազմակերպիչ: 1925 թ. ընդունվել և 1927 թ. ավարտել է կուսակցական դպրոց ու կոմերիտական աշխատանքի նշանակվել Զանգեզուրի նահանգում:

1929 թ. նա ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնի ուսանող էր: Մեկ տարի անց Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմը Հ. Պետիկյանին գործուղում է սովորելու Մոսկվայի պլանատնտեսագիտական ինստիտուտում: Ավարտելուց հետո նա վերադառնում է Երևան և նշանակվում ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում վերապատրաստման դասընթացներ անցնելով՝ կրկին դասախոսական աշխատանք է կատարում ԵՊՀ-ում:

1937-1938 թթ. Հ. Պետիկյանը ՀԽՍՀ լուսժողկոմատի միջնակարգ դպրոցների վարչության պետն էր:

1941 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, 1944 թ. աշնանը՝ զորացրվել:

1944 թ. հոկտեմբերի 1-ից ԵՊՀ-ում վերականգնվել են նրա դասախոսական իրավունքները, սակայն նույն տարվա հոկտեմբերի 15-ին ռեկտորի հրամանով նա ազատվել է աշխատանքից (ազատման պատճառը չի նշվում)*:



* Կենսագրական հետագա տվյալները չի հաջողվել ճշտել:



**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐՈ ՀԱԿՈԲԻ**
*Տնտեսագետ*

Ծնվել է 1899 թ. Կարսի մարզի Կարմիր Վանք գյուղում: 1912-1914 թթ. սովորել և ավարտել է Ալեքսանդրապոլի ուսումնարանը, 1923-1926 թ.՝ Անդրկովկասի կոմունիստական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Մինչև 1932 թ. Լենինականում (այժմ՝ Գյումրի) վարել է խորհրդային և կուսակցական ղեկավար պաշտոններ:

Կ. Խաչատրյանը 1932-1933 թթ. եղել է Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի տնօրեն (ռեկտոր): 1933 թ. նշանակվել է Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1935-1937 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: 1937 թ.-ից անցել է այլ աշխատանքի. 1937-1941 թթ.՝ ՀԽՍՀ գլխավոր դատախազի օգնական, 1941-1943 թթ.՝ զինվորական դատախազ, 1943-1949 թթ.՝ արդարադատության նախարարի տեղակալ, այնուհետև՝ փաստաբանների հանրապետական կոլեգիայի նախագահ: 1944-1954 թթ. Կ. Խաչատրյանը համատեղությամբ աշխատել է ԵՊՀ հեռակա իրավաբանական ֆակուլտետում որպես քաղաքատնտեսության դասախոս*:



* Կենսագրական հետագա տվյալները չի հաջողվել ճշտել:



**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՓՐԵՄ ՂԱԶԱՐԻ**
*Տնտեսագետ, դոցենտ*

Ծնվել է 1904 թ. Վանի նահանգի Մոխրաբերդ գյուղում: 1915 թ. ընտանիքի հետ գաղթել և բնակություն է հաստատել Երևանում: 13 տարեկանում զրկվելով հորից՝ ստիպված էր աշխատել Անդրկովկասի տարբեր քաղաքներում որպես սևագործ բանվոր:

1926 թ. զորակոչվել է Կարմիր բանակ: Զորացրվելուց հետո ընդունվել է Անդրկովկասի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարան, ուսումը շարունակել ասպիրանտուրայում: 1938 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1932-1939 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ քաղաքատնտեսության դասախոս: 1937-1938 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

1941-1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում, այնուհետև շարունակել աշխատանքը ԵՊՀ-ում՝ 1947-1956 թթ. զբաղեցնելով տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի, 1960-1971 թթ. քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտի պաշտոնները: 1956-ին ազատվել է դեկանի պաշտոնից: Այնուհետև պարբերաբար վերընտրվել է (1960 թ., 1965 թ., 1971 թ.) քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ:

Ե. Մանուկյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով:

Մահացել է 1974 թ. օգոստոսին Երևանում:



**ԶՈՒՐԱԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՇԱՐԲԱԹԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,*
*ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1902 թ. նոյեմբերի 15-ին Ղալաչա (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդավան) գյուղում: 1913 թ. տեղափոխվել է Թիֆլիս և ընդունվել Ներսիսյան դպրոց:

1922 թ.-ից անցել է գիտամանկավարժական գործունեության ԽՍՀՄ տարբեր քաղաքներում: 1938-1940 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, որի ավարտից հետո շարունակել է գիտամանկավարժական աշխատանքը:

1951 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն տարում նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1969-1982 թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների՝ հոդվածներ, գրքույկներ, գրքեր, որոնցից են՝ «Մ. Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները» (Եր., 1940 թ.), «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» (Եր., 1959 թ.), «Կապիտալիզմի բնույթի փոփոխման առասպելը» (Եր., 1960 թ.), «Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում» (Եր., 1971 թ.):

1965 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1982 թ. դեկտեմբերի 1-ին Երևանում:

1997 թ.-ից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի նախակրթարանը կոչվում է «Սարգիս Զուրաբյան վարժարան»:



**ԿԱՐԱԳՅԱՆ ԿԱՐԴԻՍ ՊՈՂՈՍԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,*
*ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1908 թ. հոկտեմբերի 20-ին Կ. Պոլսին մերձակա հայաբնակ Պարտիզակ գյուղում: 1915 թ. Մեծ եղեռնի տարիներին ապաստան է գտել Սիրիայում: 1919 թ. վերադարձել է գյուղ, երկու տարի անց մշտական բնակություն հաստատել Կ. Պոլսում և տեղի հայկական դպրոցներից մեկում ստացել միջնակարգ կրթություն: 1925 թ. ներգաղթել է հայրենիք, բնակություն հաստատել Երևանում: 1926 թ. աշխատանքի է անցել Երևանի փայտամշակման ֆաբրիկայում որպես հաշվետար, այնուհետև՝ ՀԽՍՀ աշխժողկոմատում որպես հաշվապահ: 1933 թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը և աշխատանքի անցել Հայկոոպում որպես տնտեսագետ, ապա՝ գլխավոր հաշվապահ:

1938 թ.-ից համատեղությամբ աշխատել է ԵՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնում: 1941-1942 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, 1942 – 1953 թթ.՝ Հայկոոպի գլխավոր հաշվապահ և վարչության անդամ: 1953 թ. դարձել է ԵՊՀ հիմնական աշխատող:

1957 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1959 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1962 թ. ընտրվել է ԵՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ, 1966 թ.՝ նշանակվել ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: 1969 թ. դարձել է պրոֆեսորի պաշտոնակատար, 1977 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1975 թ. տեղափոխվել է նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ՝ որպես ամբիոնի վարիչ: Եղել է նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

Հեղինակ է «Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում» (Եր., 1957 թ.) մենագրության և «Հաշվապահական հաշվառման տեսություն» (Եր., 1964 թ.) ուսումնական ձեռնարկի, որն ունեցել է մի քանի հրատարակություն:

1966 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1992 թ. նոյեմբերի 26-ին Երևանում:



**ԳԱՐԱՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՏԻՆԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1895 թ. Շուշի քաղաքում: 1909 թ. ավարտել է Բաքվի ժողովրդական, 1912 թ.՝ քաղաքային միջնակարգ դպրոցը, 1920 թ.՝ Տոմսկի պոլիտեխնիկական ինստիտուտը: Տեղափոխվել է Երևան և աշխատել Պետական գույքի գլխավոր վարչությունում որպես վիճակագիր: 1921 թ.՝ Հողժողկոմատի վիճակագրության բաժնի պետ: 1922-1937 թթ. պաշտոններ է զբաղեցրել ՀԽՍՀ ԿՎՎ-ում՝ գլխավորելով գյուղատնտեսության, պետապի բաժինները, սինթետիկ հաշվագրման բյուրոն: Եղել է ԿՎՎ կոլեգիայի անդամ: Միաժամանակ համատեղությամբ դասախոսել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում:

1937 թ. Ա.Գարամյանը նշանակվել է ԵՊՀ վիճակագրության և հաշվառման ամբիոնի վարիչ: 1942-1944 թթ. տնտեսագիտության ֆակուլտետի դեկանն էր:

Ա.Գարամյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով (1954 թ.), «Աշխատանքային արիության համար» մեդալով, պատվոգրերով:

Մահացել է 1961 թ. Երևանում:



**ՈՍԿԵՐՉՅԱՆ ՊՈՂՈՍ ՏՈՆԱՊԵՏԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1907 թվականի հուլիսի 4-ին Արևմտյան Հայաստանի Հազո-Սասուն քաղաքում: Ոսկերչյանների ընտանիքը թուրքական յաթաղանից մազապուրծ՝ հանգրվանում է Աշտարակի շրջանի Ուջան գյուղում: 1926 թ. պատանի Պողոսն ավարտում է Կոշ գյուղի յոթնամյա դպրոցը, 1929 թվականին՝ Երևանի տնտեսագիտական տեխնիկումը: Այնուհետև, 1936 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետը կուսակցական աշխատանքի է անցնում ՀԿԿ Արթիկի շրջկոմում, ապա 1937-1939 թվականներին վարում է ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի կուլտուր-պրոպագանդայի, իսկ 1941- 44 թթ՝ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի պաշտոնները:

Պ. Ոսկերչյանը 1939 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան, 1946 թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզ, ստանում տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1944 թ. ավարտում է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր քաղաքատնտեսություն առարկայի դասախոսների պատրաստման վեցամսյա դասընթացը:

Պ. Ոսկերչյանն իր մանկավարժական գործունեությունն սկսել է 1935 թվականից: Քաղաքատնտեսություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, Արդյունաբերության աշխատողների վերապատրաստման, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտներում: 1944-1947 թթ. համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկանն էր: 1951 թվականից, շուրջ 27 տարի անընդմեջ, աշխատել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ և ապա դոցենտ: Հեղինակ է շուրջ 30 գիտական աշխատության և 3 մենագրության:

Պ. Ոսկերչյանը պարգևատրվել է կառավարական բազմաթիվ պատվոգրերով:

Վախճանվել է 1986 թվականի նոյեմբերի 8-ին:



**ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ԶԱՔԱՐ ԳԵՎՈՐԳԻ**
*Տնտեսագետ, պրոֆեսոր,*
*ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1895 թ. մայիսի 26-ին Թիֆլիսում՝ ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ընտանիքում: 1913 թ. ավարտել է տեղի 3-րդ արական գիմնազիան, 1917 թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը և զորակոչվել բանակ: 1918-1919 թթ. աշխատել է Թիֆլիսի դատական մարմիններում:

1921 թ. Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո նշանակվել է կարևորագույն գործերի քննիչ, այնուհետև՝ Վր. ԽՍՀ գերագույն հեղափոխական տրիբունալի հետաքննչական բաժնի պետ: 1926-1928 թթ. աշխատել է Անդրֆեդերացիայի ֆինանսական մարմիններում:

1927-1930 թթ. աշխատել է Անդրկովկասի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանում որպես քաղաքատնտեսության դասախոս և ուսումնական մասի պրոռեկտորի օգնական: 1930-1933 թթ. սովորել է Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի տնտեսագիտության ինստիտուտում, որն ավարտելուց հետո վերադարձել է Թիֆլիս և մինչև 1936 թ. աշխատել Անդրկովկասի երկրամասային կոմիտեում, ժողովրդական կոմիսարների խորհրդում: 1936 թ. տեղափոխվել է Հայաստան և աշխատել ՀԿ(բ)Կ ԿԿ-ում, ՀԽՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարիատում:

1936-1971 թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության դասախոս և քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: Այդ ընթացքում դասավանդել է նաև Երևանի մի քանի այլ ուսումնական հաստատություններում:

1937 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1944-1947 թթ. եղել է նաև արտասահմանի հետ ԽՍՀՄ մշակութային կապերի ընկերության Հայաստանի վարչության պետի տեղակալ, 1947-1949 թթ.՝ ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1956-1957 թթ.՝ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

Հեղինակ է տնտեսագիտության, գրականության, արվեստի և մշակույթի հարցերին նվիրված գիտական և գիտահանրամատչելի գրքերի, գրքույկների ու հոդվածների, ինչպես նաև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գիտական կենսագրությունների (Եր., 1968 թ., Եր., 1970 թ.), համահեղինակ՝ «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» (Եր., 1971 թ.) քաղաքատնտեսության ուսումնական ձեռնարկի:

1958 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Պարգևատրվել է Լենինի (2) շքանշանով:

Վախճանվել է 1971 թ. մարտի 2-ին Երևանում:

Երևանի Աբովյան փողոցի թիվ 39 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:



**ՇԱՔԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԼԵՎՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1900 թ. նոյեմբերի 20-ին Շուշիում: 1919 թ. ավարտել է տեղի ռեալական ուսումնարանը, 1924 թ.՝ Թիֆլիսի պետական պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը:

1925 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ պետպլանում որպես մասնաճյուղային ծրագրերի բաժնի վարիչ:

1929 թ.-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1932 թ. դարձել նորաստեղծ Ֆինանսներ և վարկ ամբիոնի վարիչ:

1949 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն տարում նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1955 թ.-ից եղել է Համամիութենական ֆինանսական ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի, 1957 թ.-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների, որոնցից են՝ «Սովետական վալյուտան ամենակայուն վալյուտան է աշխարհում» (Եր., 1950 թ.), «Ֆինանսները և սոցիալիստական շինարարությունը ՀՍՍՌ-ում 40 տարում» (Եր., 1960 թ.), «Վ. Ի. Լենինը սովետական ֆինանսների մասին» (Եր., 1960 թ.) գրքերը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական մեկ տասնյակ ատենախոսություն:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1961 թ. հուլիսի 30-ին Երևանում:



**ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1910 թ. հունվարի 3-ին Վանի նահանգի Հայք գյուղում: Ճակատագրի բերումով մոր և եղբոր հետ մազապուրծ լինելով 1915 թ. Եղեռնից՝ ապաստանել է Երևանում: Նախնական կրթությունն ստացել է մանկատանը, ապա ավարտել թիվ 2 միջնակարգ դպրոցը և անցել մանկավարժական աշխատանքի:

1937 թ. ավարտել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը և դասախոսել նույն ֆակուլտետում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին մեկնել է ռազմաճակատ: 1945-1947 թթ. աշխատել է ՀԽՍՀ ֆինանսների նախարարությունում, միաժամանակ դասավանդել Երևանի ֆինանսական տեխնիկումում:

1950 թ. ավարտել է ասպիրանտուրան, 1951 թ. պաշտպանել թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1950-1966 թթ. աշխատել է ԵՊՀ-ում, 1963-1966 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, 1967-1968 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, 1968-1987 թթ.՝ տնտեսագիտական մտքի պատմության բաժնի վարիչ:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների, «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» (Եր., 1961 թ.) ուսումնական ձեռնարկի և մի շարք մենագրությունների, որոնցից են՝ «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX – XIV դարերում» (Եր., 1970 թ.), «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» (Եր., 1966 թ.), «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը V – VIII դարերում» (Եր., 1973 թ.), «Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում XV – XVIII դարերում» (Եր., 1982 թ.):

Վախճանվել է 1989 թ. նոյեմբերի 17-ին Երևանում:



**ՄԵԼԻՔՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿՈՍԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1928 թ. Տավուշի մարզի Բերդ գյուղում:

1946 թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, 1950 թ.՝ Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետը: 1951-1956 թ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նույն տարում նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1965-1969 թթ. եղել է համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-1975 թթ.՝ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, 1975-1976 թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունների նախարարության միջնակարգ մասնագիտական կրթության բաժնի վարիչ: 1976 թ.՝ ԵԺՏԻ, այնուհետև՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ:

Սերգեյ Մելիքյանը հրատարակել է գիտական և ուսումնամեթոդական աշխատություններ, մասնակցել ուսումնական գրականության խմբագրմանը:

Մահացել է 1992 թ. փետրվարի 29-ին Երևանում:



**ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ ԹԱԴԵՎՈՍԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1929 թ. հուլիսի 14-ին ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում: 1955 թ. ավարտել է Ադրբեջանի արդյունաբերության ինստիտուտի ինժեներատնտեսագիտական ֆակուլտետը: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական, 1978 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1981 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1967-1968 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի էկոնոմիկայի և արդյունաբերական արտադրության կազմակերպման ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1969-1974 թթ.՝ ՀԽՍՀ պետպլանի տնտեսության պլանավորման ԳՀԻ գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն և բաժնի վարիչ, 1972-1973 թթ.՝ համատեղությամբ՝ ԵՊՀ Տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ, 1974-1977 թթ.՝ ՀԽՍՀ պետպլանի ժողտնտեսության պլանավորման բաժնի պետ, 1977-1979 թթ.՝ Կուբայի Հանրապետությունում պլանավորման խորհրդի՝ տարածքային պլանավորման գծով խորհրդական, 1979-1984 թթ.՝ ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ, 1980-1984 թթ.՝ նաև գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1984-1990 թթ.՝ ԵՊՀ Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի դեկան:

1990-1991 թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և ղեկավարել տնտեսական ինքնուրույնության և տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովը: 1991 թ.-ից մինչև կյանքի վերջը համատեղությամբ աշխատել է ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Հեղինակ է ավելի քան 60 գիտական աշխատությունների, այդ թվում՝ “Проблемы оптимизации плановых решений в экономических регионах” (Ер., 1986 г.) մենագրության, համահեղինակ՝ «Մաթեմատիկական մեթոդները և մոդելները պլանավորման մեջ» (Եր., 1986 թ.) գրքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մի քանի թեկնածուական ատենախոսություններ:

Վախճանվել է 1994 թ. հունիսի 3-ին Երևանում:



**ԲԱԽՇՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1950 թ. նոյեմբերի 2-ին Սյունիքի մարզի Դարբաս գյուղում: 1968 թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետ «Տնտեսագիտական կիբեռնետիկա» մասնագիտությամբ: 1973 թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրա (ք. Մոսկվա), որտեղ 1977 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1977-1979 թթ. աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Տնտեսագիտության ամբիոնում որպես դասախոս, իսկ 1979-1986 թթ.՝ որպես դոցենտ: 1986 թ. տեղափոխվել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ և աշխատել որպես դոցենտ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում: 1990-1993 թթ. եղել է ֆակուլտետի դեկան:

1993-1994 թթ. աշխատել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում որպես փոխնախարար, 1994-1999 թթ.՝ ՀՀ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից հիմնադրված՝ Տնտեսական քաղաքականության և հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն: Կենտրոնը իրականացնում էր խորհրդատվություն էկոնոմիկայի նախարարությանը տնտեսության անցման ժամանակաշրջանում: Այդ ընթացքում համագործակցել է Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում իրականացվող մի շարք ծրագրերի մշակմանը:

1999 թ. մեկնել է Տորոնտո (Կանադա) մշտական բնակության:

2000-2022 թթ. դասավանդել է «Տնտեսագիտության հիմունքներ» առարկան Տորոնտոյի «Skills for Change» և «North American College of Information Technology» քոլեջներում:

Համահեղինակ է «Մաթեմատիկական մեթոդները և մոդելները պլանավորման մեջ» բուհական դասագրքի (Եր., 1986 թ.), ինչպես նաև 30-ից ավելի գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են Երևանում, Մոսկվայում, Բեռլինում և Վաշինգտոնում:



**ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻՇԱ ԱԼԵՔՍԱՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
*ՀՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1930 թ. մայիսի 25-ին ՀԽՍՀ Սիսիանի շրջանի Բորիսովկա (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ) գյուղում: 1946 թ. ընդունվել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարան: 1948 թ. ավարտել է Երևանի կայարանի երեկոյան դպրոցը, 1954 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1962 թ.՝ ասպիրանտուրան:

1963 թ. պաշտպանել է թեկնածուական, 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1978 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1954 թ.-ից աշխատում է ԵՊՀ-ում. 1978-1990-ական թթ. եղել է քաղաքատնտեսության ամբիոնի, 1990-2008 թթ.՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, 1977-1978 թթ.՝ ԵՊՀ կուսկոմիտեի երկրորդ քարտուղար, 1978-1991 թթ.՝ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1984 թ. նրա նախաձեռնությամբ ԵԺՏԻ-ից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվել է ԵՊՀ և հետագայում դարձել տնտեսագիտության (այժմ՝ տնտեսագիտության և կառավարման) ֆակուլտետ: 1993-2000 թթ. եղել է այդ ֆակուլտետի դեկան: 2001-2023 թթ. եղել է տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր և «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ»:

1965-1975 թթ. համատեղությամբ գլխավորել է ՀԽՍՀ պետպլանի ԳՀ ինստիտուտի սոցիալական զարգացման բաժնի աշխատանքները:

Հեղինակ է գիտական ավելի քան 100 աշխատության, այդ թվում՝ «Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում» (Եր., 1972 թ.) և “Проблемы повышения уровня жизни населения в социалистическом обществе” (Ер., 1977 г.) մենագրությունների, համահեղինակ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին» (Եր., 2017 թ.) մենագրության, ինչպես նաև՝ «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» (Եր., 1971 թ.), «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004 թ.) ուսումնական ձեռնարկների և «Տնտեսագիտություն» (Եր., 2004 թ.) բուհական դասագրքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 50 ատենախոսություն:

2002-2018 թթ. եղել է ԵՊՀ-ում գործող տնտեսագիտության մասնագիտական խորհրդի նախագահ:

1999 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

2010 թ. արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

2018 թ. Երևանի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում բացվել է նրա գեղանկարների անհատական ցուցահանդեսը:



**ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1948 թ. ՀՀ Արագածոտնի մարզի Սուսեր գյուղում: 1965 թ. ոսկե մեդալով ավարտելով Երևանի թիվ 7 երեկոյան դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտական կիբեռնետիկայի բաժին: Ուսումը շարունակել է Նովոսիբիրսկի պետական համալսարանում, ապա 1970 թ. ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում:

1972-1973 թթ. ծառայել է սովետական բանակում:

1976 թ. Մոսկվայում՝ Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1990 թ. Մոսկվայի կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման հիմնախնդիրները» թեմայով և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1975-1980 թթ. աշխատել է ԵՊՀ-ում և ԵԺՏԻ-ում, 1980-1988 թթ.՝ Հայաստանի ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ, 1989-1990 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմում որպես խորհրդատու, 1991-1993 թթ. եղել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջին փոխնախարար: 1999 թ. աշխատել է ՀՀ կառավարությունում որպես առաջին փոխվարչապետի խորհրդական:

1994 թ.-ից աշխատում է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում: Պրոֆեսոր Հ. Սարգսյանը 1996 թ. հիմնադրել է Կառավարման և գործարարության ամբիոնը: 2000 թ.-ից մինչև 2023 թ. հունիս ամիսը ղեկավարել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը: 2017 թ.-ից, համատեղությամբ նշանակվել է ֆակուլտետի Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի տնօրեն:

2011 թ. Սինգապուրի «Ասիայի լավագույն տնտեսագիտական դպրոցների պարգև» մրցանակաբաշխությունում արժանացել է «Տնտեսագիտության լավագույն պրոֆեսոր» մրցանակին: 2014 թ. ստացել է ՀՀ պետական պարգև՝ «Անանիա Շիրակացի» մեդալ: Պարգևատրվել է ՀՀ ԱԺ Պատվո մեդալով, ԵՊՀ ոսկե մեդալով, ՀՀ կրթության և գիտության նախարարության հուշամեդալով՝ կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար:

2009 թ.-ից ՀՀ հանրային խորհրդի անդամ է:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման հիմնահարցերը, երկրներում և տնտեսություններում տրանսֆորմացիոն գործընթացների ուսումնասիրությունները, կայուն զարգացման հիմնախնդիրները: Հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների և զեկուցումների, ինչպես նաև 19 մենագրության, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների:

Գիտական հրապարակումներից են՝ “Планирование и механизм регионального управления” (Ер., 1988 г.), «Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը» (Եր., 2001 թ.) մենագրությունները: Համահեղինակ է “Эффективность и оптимальность экономического развития” (1982 г.), «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում» (2003 թ.), «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները» (2014 թ.), «Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում» (2015 թ.), «Трансформационные аспекты феномена рыночного хозяйства» (2016 г.), «Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ» (2017 թ.), «Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը» (2018 թ.), «ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները» (2020 թ.), «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» (2023 թ.) աշխատությունների:

Պրոֆեսոր Սարգսյանի ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է 7 տասնյակ թեկնածուական և դոկտորական ատենախոսություն:



**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԳԱԳԻԿԻ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1986 թ. քաղաք Երևանում: 2002 թ. գերազանցության ոսկե մեդալով ավարտել է Երևանի Պեյո Յավորովի անվան թիվ 131 դպրոցը և ընդունվել ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ: 2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի բակալավրիատը և ընդունվել նույն ֆակուլտետի մագիստրատուրա՝ «Տնտեսական քաղաքականություն և կառավարում» մասնագիտացմամբ, որը գերազանցությամբ ավարտել է 2008 թ. և ընդունվել նույն ֆակուլտետի ասպիրանտուրա՝ «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտացմամբ:

2011 թ. ավարտել է ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Ձեռնարկատիրության և հարկային քաղաքականության փոխգործակցության հիմնահարցերը ՀՀ տնտեսությունում» թեմայով՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2014 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

2008-2011 թթ. եղել է ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահը: 2007-2011 թթ. ԵՊՀ խորհրդի, իսկ 2008-2011 թթ.՝ ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ է եղել՝ ուսանողական քվոտայով:

2011-2016 թթ. աշխատել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնում՝ սկզբում որպես ասիստենտ, ապա որպես դոցենտ: 2016-2023 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչը:

2023 թ. հունիսին ընտրվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան:

Ուսանողական տարիներից սկսած մինչ օրս զբաղվել է հասարակական գործունեությամբ. երիտասարդական, գիտակրթական (այդ թվում՝ միջազգային) տարբեր կազմակերպությունների անդամ է, նախագահությունների անդամ: 2011-2018 թթ. եղել է ՀՀ Նախագահի հովանու ներքո իրականացվող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» ղեկավար մարմնի պատասխանատու քարտուղար:

2019 թ.-ից ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Տնտեսագիտության 015 աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի անդամ է, 2020-2021 թթ. եղել է ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի անդամ՝ պրոֆեսորադասախոսական քվոտայով, 2020 թ.-ից «Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է, 2021 թ.-ից ունի աուդիտորի որակավորում և անդամակցում է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին՝ որպես աուդիտոր-անդամ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է պետության կայացածության, տնտեսության թվային փոխակերպումների, մարդկային կապիտալի զարգացման, բուհ-կազմակերպություն համագործակցության, պետական տնտեսական քաղաքականության հիմնախնդիրները: Հեղինակ է 3 մենագրության, 1 ուսումնական ձեռնարկի և շուրջ 40 գիտական հոդվածների: 2018-2023 թթ. ղեկավարել է 4 գիտական դրամաշնորհ, այդ թվում՝ միջազգային:

Մասնակցել է մի շարք գիտաժողովների, համաժողովների և դասընթացների (այդ թվում՝ միջազգային), արժանացել տարբեր պատվոգրերի և հավաստագրերի: Եղել է մի շարք գիտաժողովների, գիտական դպրոցների կազմկոմիտեների, գիտական կոմիտեների նախագահ, անդամ:

2005 թ. ճանաչվել է ԵՊՀ լավագույն ուսանող (ԵՊՀ արծաթե մեդալ), 2007 թ.՝ ՀՀ տարվա լավագույն ուսանող (ոսկե մեդալ): Պարգևատրվել է ՀՀ Նախագահի շնորհակալագրով (2017 թ.), ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով (2017 թ.), ՀՀ ԿԳՆ Ոսկե մեդալով (2017 թ.):

Աղյուսակ 2.1

**Ֆակուլտետի դեկաններն ըստ ժամանակագրության (1934 թ.-ից առ այսօր)**

| N | Տարիներ | Ֆակուլտետի դեկանները |
|---|---|---|
| 1. | ***1934-1935*** | Պետիկյան Հովհաննես Հովհաննեսի, տնտեսագետ |
| 2. | ***1935-1937*** | Խաչատրյան Կարո Հակոբի, տնտեսագետ |
| 3. | ***1937-1938*** | Մանուկյան Եփրեմ Ղազարի, տնտեսագետ, դոցենտ |
| 4. | ***1938-1940*** | Զուրաբյան Սարգիս Շարբաթի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ |
| 5. | ***1940-1941*** | Պետիկյան Հովհաննես Հովհաննեսի, տնտեսագետ |
| 6. | ***1941-1942*** | Կարագյան Կարպիս Պողոսի, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ |
| 7. | ***1942-1944*** | Գարամյան Անդրանիկ Կոստանտինի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 8. | ***1944-1947*** | Ոսկերչյան Պողոս Տոնապետի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 9. | ***1947-1956*** | Մանուկյան Եփրեմ Ղազարի, տնտեսագետ, դոցենտ |
| 10. | ***1956-1957*** | Բաշինջաղյան Զաքար Գևորգի, տնտեսագետ, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ |
| 11. | ***1957-1961*** | Շաքարյան Ղևոնդ Լևոնի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր |
| 12. | ***1961-1963*** | Ս. Հարությունյան* |
| 13. | ***1963-1966*** | Թովմասյան Ներսես Ռաֆայելի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր |
| 14. | ***1966-1972*** | Կարագյան Կարպիս Պողոսի, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ |
| 15. | ***1972-1975*** | Մելիքյան Սերգեյ Մարկոսի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 16. | ***1984-1990*** | Մովսիսյան Յուրի Թադևոսի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր |
| 17. | ***1990-1993*** | Բախշյան Գագիկ Վաղարշակի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |
| 18. | ***1993-2000*** | Ղարիբյան Գրիշա Ալեքսանի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ |
| 19. | ***2000-2023*** | Սարգսյան Հայկ Լևոնի, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր |
| 20. | ***2023 թ.-ից առ այսօր*** | Խաչատրյան Կառլեն Գագիկի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ |



* Կենսագրական տվյալները չի հաջողվել ճշտել:

# 3 | Ֆակուլտետի կառավարման մարմինները



***ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը*** գործում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կազմում որպես գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանում, իրականացնելով և՛ բարձրագույն մասնագիտական, և՛ հետբուհական կրթություն մի քանի մասնագիտություններով: Ֆակուլտետի գործունեությունն ապահովող անհրաժեշտ որոշումների կայացման համար հիմք են հանդիսանում ՀՀ օրենսդրությունը, ԵՊՀ կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը, ինչպես նաև ֆակուլտետի կանոնակարգը:

Ֆակուլտետի ***դեկանը*** և ***գիտական խորհուրդը*** ֆակուլտետի կառավարման մարմիններն են: ***Գիտական խորհրդի***՝ որպես կառավարման կոլեգիալ մարմնի ***նախագահը ֆակուլտետի դեկանն է:*** Գիտական խորհրդի կազմը ձևավորվում է ***ի պաշտոնե***, ***հրավիրյալ*** և ***ընտրովի*** անդամներից: Գիտական խորհրդի ի պաշտոնե անդամներն են՝ դեկանը, փոխդեկանները, ամբիոնի վարիչները, մեթոդխորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը: Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են:

Ներկայում ֆակուլտետում գործող գիտական խորհրդի կազմը հաստատվել է ԵՊՀ ռեկտորի հրամանով 2023 թ. հոկտեմբերին (լիազորությունների ժամկետը 5 տարի, տե՛ս Աղյուսակ 3.1):



**Աղյուսակ 3.1**

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի անվանական կազմը**

| ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ԱՆԴԱՄՆԵՐ | | |
|---|---|---|
| 1 | Խաչատրյան Կառլեն Գագիկի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ, խորհրդի նախագահ |
| 2 | Վարդանյան Գագիկ Իշխանի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. |
| 3 | Խառատյան Ալվարդ Ալբերտի | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. |
| 4 | Հակոբջանյան Աննա Հովիկի | ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ., |
| 5 | Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի | ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ., |
| 6 | Սահակյան Գնել Էդուարդի | ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. |
| 7 | Ալեքսանյան Վարդան Սամվելի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |
| 8 | Մնացականյան Գրիգոր Մանվելի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ, Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |

| ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՎԻՐՅԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ | | |
|---|---|---|
| **9** | Գաբրիելյան Վաչե Վազգենի | Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ. |
| **10** | Ասլանյան Գագիկ Սերգեյի | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ |
| **11** | Փոքրիկյան Արթուր Լիպարիտի | Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ազգային ծրագրերի ավագ համակարգող, տ.գ.թ. |
| **ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ** | | |
| **12** | Առաքելյան Արամ Հմայակի | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ |
| **13** | Բոստանջյան Վարդան Բաբկենի | ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. |
| **14** | Աբրահամյան Վահրամ Գևորգի | ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. |
| **15** | Գևորգյան Ռուբեն Ալբերտի | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. |
| **16** | Թորոսյան Թորոս Շահենի | ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. |
| **17** | Միրզոյան Նարինե Էռնեստի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |
| **18** | Մարգարյան Հասմիկ Գառնիկի | ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., խորհրդի քարտուղար |
| **19** | Զաքոյան Հարություն Վարազդատի | ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տեխ.գ.թ. |
| **20** | Եղոյան Կարեն Շիրազի | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |
| **21** | Ղուկասյան Գայանե Մամիկոնի | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.-մ.գ.թ. |
| **22** | Խաչատրյան Նոննա Նիկոլայի | ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |
| **23** | Գալստյան Ամալյա Ռոմենի | ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. |
| **24** | Սահակյան Կարեն Էդուարդի | ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. |
| **ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՎԻ ՍՈՎՈՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ** | | |
| **25** | Դանիելյան Վերգինե Արմենի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈւԽ նախագահ |
| **26** | Մաթևոսյան Վիկտորյա Վահագնի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի |
| **27** | Կարապետյան Տիգրան Արամի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ |
| **28** | Հարությունյան Անդրանիկ Զարմաիրի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող |
| **29** | Արզումանյան Հայկ Կամոյի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող |
| **30** | Բաղդասարյան Սուսաննա Ռաֆիկի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի |
| **31** | Պետրոսյան Անի Սեյրանի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի |
| **32** | Բալայան Բենիկ Արտեմի | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող |







Ֆակուլտետի գիտական խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է ըստ ԵՊՀ գիտական խորհրդի ընդունած օրինակելի կանոնակարգի և սահմանած ընթացակարգերի:

Այդ գործառույթներն են.

- ֆակուլտետի կանոնակարգի ընդունումը,
- ֆակուլտետի գիտական, կրթական աշխատանքներին և միջազգային կապերին (և այլ հարցերին) առնչվող որոշումների ընդունումը,
- ֆակուլտետի ամբիոնի վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը,
- ֆակուլտետի կառուցվածքի՝ ամբիոնների, ստորաբաժանումների ստեղծման, լուծարման և վերակազմավորման վերաբերյալ ԵՊՀ ռեկտորին առաջարկությունների ներկայացումը,
- ԵՊՀ հոգաբարձուների և գիտական խորհուրդներում ֆակուլտետի ներկայացուցիչների առաջադրումը,
- ԵՊՀ ռեկտորի հաստատմանը ֆակուլտետի ուսումնական պլանների ներկայացումը,
- ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանն առնչվող հարցերի լուծումը:

Ֆակուլտետի գիտխորհուրդը ուստարվա ընթացքում գումարում է առնվազն 8 նիստ: Ֆակուլտետի գիտխորհրդի որոշումների կատարումը պարտադիր է ֆակուլտետի և՛ աշխատողների, և՛ սովորողների համար:

Գիտխորհրդի քարտուղարին, խորհրդի կազմից դեկանի ներկայացմամբ, նշանակում է ԵՊՀ ռեկտորը: ***2023 թ.-ից ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղարը ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Հասմիկ Գառնիկի Մարգարյանն է:***



***2023 թ.-ից առ այսօր ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանն է տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանը:*** Դեկանի պաշտոնում, 5 տարի ժամկետով, դոցենտ Կ.Գ. Խաչատրյանին նշանակել է ԵՊՀ ռեկտորը՝ ԵՊՀ գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրության արդյունքների հիման վրա:



Դեկանի հիմնական գործառույթներն են.

▪ կրթական, գիտական, արտադրական, միջազգային (և այլ) ոլորտներում ֆակուլտետի գործունեության ղեկավարումը,

▪ ԵՊՀ և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարման ապահովումը,

▪ դեկանի տեղակալների և ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածուներին ռեկտորի հաստատմանը ներկայացնելը,

▪ ուսանողներին հեռացնելու, նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու առնչությամբ, սահմանված կարգով ռեկտորին առաջարկությունների ներկայացումը,

▪ կուրսից կուրս ուսանողներին փոխադրելու կապակցությամբ հրամանների արձակումը,

▪ ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ և ֆակուլտետի կանոնակարգերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

Ֆակուլտետի դեկանի արձակած հրամանները, տված հրահանգները պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և ուսանողների համար:

***2023 թ.-ից առ այսօր ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալներն են.***

***Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վարդան Սամվելի Ալեքսանյանը*** (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ),

***Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Էռնեստի Միրզոյանը*** (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ):



Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ընթացիկ հարցերը քննարկվում և իրենց լուծումն են ստանում դեկանատի նիստերում: Դեկանատի նիստերին մասնակցում է ***դեկանատն իր ողջ կազմով՝ դեկանը, դեկանի տեղակալները, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղարը, ֆակուլտետի արհբյուրոյի և ուսանողական խորհրդի նախագահները***:

Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է ***մեթոդական խորհուրդը,*** որի ստեղծումն ու գործունեությունը սահմանվում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգով: ***Ներկայում ֆակուլտետում մեթոդական խորհուրդը գործում է հետևյալ կազմով.***

**1.** Վարդանյան Գագիկ Իշխանի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.,

**2.** Բոստանջյան Վարդան Բաբկենի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի անդամ, Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ,

**3.** Թորոսյան Թորոս Շահենի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի անդամ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.,

**4.** Եղոյան Կարեն Շիրազի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի անդամ, Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.:



Մեթոդական խորհրդի նախագահ
Գագիկ Իշխանի Վարդանյան

Ֆակուլտետում գործում են նաև ***որակի հանձնաժողովը*** և ***մրցութային հանձնաժողովը***: Հանձնաժողովներից յուրաքանչյուրի գործունեությունը նպատակաուղղված է իր կանոնակարգման ոլորտին վերաբերող հարցերի ուսումնասիրմանը, նախապատրաստմանը և դրանց վերաբերյալ ֆակուլտետի գիտական խորհրդին եզրակացությունների ներկայացմանը:

Մասնավորապես, որակի հանձնաժողովն իրականացնում է նոր կամ վերանայված կրթական

ծրագրերի վերաբերյալ եզրակացությունների ուսումնասիրում և ծրագրերի հաստատման վերաբերյալ ֆակուլտետի գիտխորհրդին եզրակացությունների ներկայացում: Մրցութային հանձնաժողովն ապահովում է մրցութային հիմունքներով ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման գործընթացի կազմակերպումը՝ պահանջվող ընթացակարգի համաձայն:

***Ներկայում ֆակուլտետում որակի հանձնաժողովը գործում է հետևյալ կազմով.***

**1.** Ալեքսանյան Վարդան Սամվելի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի հանձնաժողովի նախագահ, ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.,

**2.** Հակոբջանյան Աննա Հովիկի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի հանձնաժողովի անդամ, Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ.,

**3.** Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի հանձնաժողովի անդամ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ.,

**4.** Դանիելյան Վերգինե Արմենի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի հանձնաժողովի անդամ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈւԽ նախագահ:



***Ներկայում ֆակուլտետում մրցութային հանձնաժողովը գործում է հետևյալ կազմով.***

**1.** Առաքելյան Արամ Հմայակի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ.,

**2.** Ալեքսանյան Վարդան Սամվելի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի անդամ, ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ,

**3.** Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի անդամ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ.,

**4.** Մնացականյան Գրիգոր Մանվելի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի անդամ, ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ, Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.,

**5.** Հարությունյան Անդրանիկ Զարմաիրի - ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի անդամ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող:



Մրցութային հանձնաժողովի նախագահ
Արամ Հմայակի Առաքելյան

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կրթական գործընթացը կազմակերպող ***հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են.***

**1.** ***Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն*** - ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան,

**2.** ***Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն*** - ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Ալվարդ Ալբերտի Խառատյան,

**3.** ***Ֆինանսահաշվային ամբիոն*** – ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գնել Էդուարդի Սահակյան,

**4.** ***Կառավարման և գործարարության ամբիոն*** - ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյան:



Ամբիոնները, գիտակրթական գործունեություն ծավալելով, ապահովում են ուսումնական գործընթացը, իրականացնում՝ գիտական և մեթոդական հետազոտություններ: Ամբիոնի վարիչները, ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները կազմակերպելուց և վերահսկելուց զատ, ներկայացնում են ամբիոնը համալսարանական ստորաբաժանումների և արտահամալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

2023 թ. ԵՊՀ-ում իրականացված վերափոխման արդյունքում ամբիոնների լաբորանտական կազմի և ֆակուլտետի դեկանատի օպերատորների, գործավար (ուսումնաօժանդակ) կազմի միավորմամբ ձևավորվել են ***ֆակուլտետային գրասենյակներ***: Կրթական ստորաբաժանման (ֆակուլտետի) գրասենյակի վարչարարության մասնագետի իրավունքները և պարտականություններն ամրագրված են ԵՊՀ ռեկտորի հրամանով հաստատված ԵՊՀ կրթական ստորաբաժանման գրասենյակի վարչարարության մասնագետի պաշտոնի անձնագրում: Ֆակուլտետի գրասենյակի ***վարչարարության մասնագետի*** գործառույթների հիմնական ուղղվածություններն են.

- ուսանողների հետ տարվող աշխատանքների գործառույթներ,
- ուսումնական գործընթացի գործառույթներ,
- ընթացիկ գործավարություն:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ***գրասենյակի ղեկավարն է*** Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. ***Վարդան Սամվելի Ալեքսանյանը:***

Ֆակուլտետի գրասենյակը գործում է հետևյալ կազմով.

**1.** Ասրյան Լիլիթ Մերուժանի - վարչարարության մասնագետ,

**2.** Գաբրիելյան Ֆլորա Գևորգի - վարչարարության մասնագետ,

**3.** Գասպարյան Արփինե Մանվելի - վարչարարության մասնագետ,

**4.** Գրիգորյան Ռեգինա Աշոտի - վարչարարության մասնագետ,

**5.** Կարապետյան Բելլա Նվերի - վարչարարության մասնագետ,

**6.** Կորխմազյան Ռուզան Փաշիկի - վարչարարության մասնագետ,

**7.** Պետրոսյան Մարիամ Արծրունու - վարչարարության մասնագետ,

**8.** Ստեփանյան Լիլիթ Գևորգի - վարչարարության մասնագետ,

**9.** Ստեփանյան Նաիրա Հակոբի - վարչարարության մասնագետ:





# 4 Ֆակուլտետի ամբիոնները

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ՖԻՆԱՆՍԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՄԲԻՈՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ձևավորվել է 2016 թվականին Տնտեսագիտական տեսության (նախկինում՝ Քաղաքատնտեսության) և Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնների հիմքի վրա: ԵՊՀ-ում Քաղաքատնտեսության ամբիոնը (հետագայում՝ Տնտեսագիտական տեսության) ստեղծվել է 1929 թ., իսկ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը՝ 1991 թ.:

ԵՊՀ կազմում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացումից հետո Տնտեսագիտական տեսության ամբիոնը ղեկավարել են տ.գ.դ., պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ա. Ղարիբյանը (1978-1998 թթ., 2000-2009 թթ.), տ.գ.դ., պրոֆեսոր Շ. Ս. Մարգարյանը (1998-2000 թթ.), տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Վ. Միքայելյանը (2010-2016 թթ.):







Միքայելյան Միքայել

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ստեղծման օրվանից՝ 1991 թ.-ից, մինչև Տնտեսագիտական տեսության ամբիոնի հետ միաձուլվելը, ղեկավարել է տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Շ. Թորոսյանը: Այս ամբիոնը Հայաստանում նոր իրողություն էր իր մասնագիտացման ուղղվածության առումով:

***Տնտեսագիտական տեսության*** և ***Միջազգային տնտեսական հարաբերությունների*** ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպման արդյունքում 2016 թ. ձևավորվել է ***Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը***:

## ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 87-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական տեսության ամբիոնը ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի հասակակիցն է: Մինչև 1990-ական թվականները այն կոչվում էր քաղաքատնտեսության ամբիոն: Ամբիոնի վարիչներ են եղել պրոֆեսորներ Աբրահամ Գալոյանը, Ներսիկ Ստեփանյանը, Զաքարե Բաշինջաղյանը, Սմբատ Բադալյանը և Գրիգոր Ղարիբյանը, Շավարշ Մարգարյանը, Միքայել Միքայելյանը:

Համալսարանի քաղաքատնտեսության (տնտեսագիտական տեսության) ամբիոնը միշտ էլ համալրված է եղել բարձրորակ կադրերով: Այնտեղ գիտամանկավարժական արդյունավետ աշխատանք են կատարել ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ա. Արզումանյանը, ՀԽՍՀ ԳԱԱ թղթակից անդամ Հ. Ազատյանը, պրոֆ. Ն. Ստեփանյանը, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչներ, պրոֆեսորներ Զ. Բաշինջաղյանը, Ս. Բադալյանը, Մ. Ադոնցը, Ս. Զուրաբյանը, Ն. Թովմասյանը, Գ. Ղարիբյանը, Շ. Մարգարյանը, Վ. Ներկարարյանը, Մ. Գրիգորյանը, Գ. Կիրակոսյանը, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,

դոց. Ս. Միքայելյանը, դոցենտներ Հ. Ներսիսյանը, Հ. Խոնդկարյանը, Ս. Մելիքյանը, Վ. Գաբուզյանը, Ռ. Մելքումյանը, Հ. Հովակիմյանը, Վ. Օրդուխանյանը, Գ. Հարությունյանը, Գ. Աղաջանյանը և ուրիշներ:



ԵՊՀ կազմից տնտեսագիտական ֆակուլտետի դուրսբերման և ԵԺՏԻ կազմավորումից հետո համալսարանում շարունակեց գործել քաղաքատնտեսության ամբիոնը՝ այլ ֆակուլտետներում տնտեսագիտություն առարկան դասավանդելու համար: Ամբիոնի զարգացման նոր փուլը սկսվեց ԵՊՀ-ում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացումից հետո: Այն դարձավ նաև մայր ամբիոն՝ ֆակուլտետում ներկայումս գործող ամբիոնների համար:

Տնտեսագիտության բնագավառի բուհերի, այդ թվում նաև ԱՊՀ երկրների քաղաքատնտեսության ամբիոնների շարքում ***Տնտեսագիտական տեսության*** ամբիոնը առաջիններից էր, որ կարճ ժամանակահատվածում ի զորու եղավ տնտեսագիտության դասավանդումը իրականացնել ժամանակակից շուկայական տնտեսագիտության սկզբունքներին համապատասխան:

Կարճ ժամանակահատվածում անցումը գաղափարայնացված և արդեն անառարկա (սոցիալիստական տնտեսական համակարգը փլուզված էր) տեսական կառույցից նոր և ինչ-որ առումով իրատեսական (շուկայական համակարգի ձևավորման միայն սկիզբն էր) տնտեսագիտությանը բարդ և դժվարին խնդիր էր: Գործում էր նաև իներցիայի ուժը, բացակայում էին նաև համապատասխան դասագրքերը: Նման պայմաններում ամբիոնը, ամբիոնի վարիչ և ֆակուլտետի դեկան Գ. Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ, վճռականորեն ընտրեց արմատական բարեփոխումների ճանապարհը:

Ամբիոնի անձնակազմը նախ ձեռնամուխ եղավ ներդնելու տնտեսագիտական կրթության նոր համակարգ: Այստեղ ամենադժվար և ամենակարևոր խնդիրը առանցքային առարկայի՝ քաղաքատնտե-



սության բովանդակության փոխարինումն էր նոր, ժամանակակից տնտեսագիտական տեսությամբ: Այդ նպատակով կազմվեցին ուսումնական նոր պլաններ և առարկայական ծրագրեր աշխարհում լայնորեն ընդունված չափորինակների հիման վրա, և խնդիր դրվեց դասավանդումն իրականացնել այդ ծրագրերով՝ օգտագործելով արդեն ռուսերենից թարգմանաբար հրատարակված դասագրքերը: Այդպիսով, տնտեսագիտական բոլոր առարկաների դասավանդումը համակարգված ձևով փոխադրվեց ժամանակակից շուկայական տնտեսագիտության հիմքերի վրա:



Դասախոսական անձնակազմի որակական մակարդակի բարձրացման հարցի լուծումն իրականացվեց երկու ուղիներով զուգահեռաբար: Ամբիոնը խնդիր դրեց վերաորակավորել դասախոսական անձնակազմը, և այդ նպատակով ֆակուլտետում ամբիոնի դասախոսները կազմակերպեցին տեսական-մեթոդաբանական սեմինարներ տնտեսագիտական նոր սկզբունքների արմատավորման նպատակով: 1993-1994 թթ. ծմռանը Գ.Ա. Ղարի-

բյանի ջանքերով Հայաստանի Ամերիկյան համալսարանում տնտեսագիտության ֆակուլտետի դասախոսների և ասպիրանտների համար կազմակերպվեցին եռամսյա դասընթացներ ամերիկյան պրոֆեսորներ Ֆ. Բրեքլինի և Գ. Գանևսկու դասավանդմամբ: Միաժամանակ ամբիոնը ֆակուլտետի լավագույն շրջանավարտներին և ասպիրանտներին հնարավորություն ընձեռեց դասավանդելու որոշ առարկաներ:

Տնտեսագիտական հիմնական դասընթացների բովանդակություններն արմատապես փոխելու անհրաժեշտություն առաջացավ: Այդ գործին լծվեցին ֆակուլտետի առաջատար մասնագետներից շատերը, որոնց շնորհիվ ունեցանք ժամանակի պահանջներին համահունչ ձեռնարկներ, դասագրքեր, ուղեցույցներ, ուսումնական դասընթացներ ու ծրագրեր:

Համալսարանում ֆակուլտետի վերաբացումից 20 տարի անց ***Տնտեսագիտական տեսության*** ամբիոնը արդեն համալրված էր ժամանակակից տնտեսագիտությանը քաջ գիտակ երիտասարդ մասնագետներով: 2000-2004 թթ. ամբիոնի ասպիրանտներից և հայցորդներից 13-ը պաշտպանեցին ատենախոսություններ և ստացան տնտեսագիտության թեկնածուի աստիճան, որոնցից 11-ը ամբիոնի աշխատակիցներն էին (***Կարեն Դարբինյանը, Արման Մարտիրոսյանը, Գևորգ Պետրոսյանը, Արտակ Մանգասարյանը, Կարինե Ավետիսյանը. Ալվարդ Խառատյանը, Մարգարիտա Եղիազարյանը, Աննա Հակոբջանյանը, Արման Խուրշուդյանը, Գարիկ Սիրոյանը, Գուրգեն Աթաբեկյանը***):



Տնտեսագիտական տեսության ամբիոնը իրականացրել է տնտեսագիտական կրթության հիմնարար առարկաների՝ «Տնտեսագիտական տեսության», «Անցումային տնտեսության տեսության», «Տնտեսական պատմության» և «Տնտեսագիտական մտքի պատմության» դասավանդումը բակալավրիատում և մասնագիտական ու հատուկ դասընթացների դասավանդումը մագիստրատուրայում («Սոցիալական տնտեսագիտություն», «Տնտեսական (բիզնեսի) իրավունք», «Զարգացման տնտեսագիտության հիմնահարցեր», «Անցումային տնտեսության ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական սկզբունքները», «Տնտեսագիտության տեսության արդի մեթոդաբանական հիմնախնդիրները», «Ձեռնարկության արդյունավետության տեսություն», «Անցումային տնտեսության ֆինանսական հարաբերությունների տեսություն», «ՀՀ բնակչության միգրացիայի հիմնախնդիրները», «Հայ տնտեսագիտական մտքի պատմություն», «Մարդկային կապիտալի տեսություն», «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում», «Տնտեսական և քաղաքական ռիսկերի տեսություն», «Հոգեբանական տնտեսագիտություն»):






Ամբիոնի աշխատանքներում, ուսումնամեթոդականից զատ, ծավալուն տեղ են զբաղեցրել նաև տեսական և կիրառական հետազոտությունները: Մասնավորապես, 1999-2004 թթ. ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «ՀՀ-ում աղքատության հաղթահարման պետական ռազմավարության ծրագրի» (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ղարիբյան, դոց. Հ. Մարզպանյան) մշակմանը: Պետպատվերի շրջանակներում ամբիոնի աշխատակիցները իրականացրել են երկու հետազոտություն «ՀՀ բնակչության սոցիալական շերտավորման հիմնախնդիրները և դրանց կարգավորման ուղիները» և «ՀՀ անցումային տնտեսությունում մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները» թեմաներով: Վերջին 20 տարիների ընթացքում ամբիոնը մասնակցել է նաև դրամաշնորհային ծրագրերի:

Աղյուսակ 4.1

**Տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2004 թ.**

| | |
|---|---|
| *Հիմնական աշխապակիցներ* | |
| 1. | Ղարիբյան Գրիգոր Ալեքսանի, տ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ամբիոնի վարիչ |
| 2. | Մարզպանյան Հարություն Ալեքսանի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Գալստյան Գագիկ Սերյոժայի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Հովսեփյան Վոլոդյա Երվանդի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Մուսայելյան Արտակ Վիկտորի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Խաչատրյան Լևոն Հայկի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Մարգարյան Լևոն Շավարշի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Մարտիրոսյան Արման Ռուբենի, տ.գ.թ., ասիստ. |
| 9. | Ավետիսյան Կարինե Ռուբիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Դարբինյան Կարեն Մուշեղի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Եղիազարյան Մարգարիտա Ռաֆայելի, տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Պետրոսյան Գևորգ Կամոյի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Գրիգորյան Մյասնիկ Արտավազդի, ասիստենտ |
| 14. | Ներսիսյան Արմեն Ռովելի, ասիստենտ |
| 15. | Չատինյան Մայա Վազգենի, ասիստենտ |
| 16. | Ղազարյան Լևոն Գեորգիի, ասիստենտ |
| 17. | Փաշայան Կարեն Ավետիքի, ասիստենտ |
| 18. | Մարգարյան Հասմիկ Գառնիկի, ասիստենտ |
| 19. | Մովսիսյան Սևիլ Սամվելի, ասիստենտ |
| 20. | Մկրտչյան Հասմիկ Վանուշի, դասախոս |
| 21. | Գալստյան Հասմիկ Նորիկի, դասախոս |
| 22. | Գաբրիելյան Վարդուհի Գևորգի, դասախոս |
| 23. | Գալստյան Անի Նորիկի, դասախոս |
| 24. | Խանդամիրյան Անուշ Պավլուշի, դասախոս |
| 25. | Հովսեփյան Մարինա Վոլոդյայի, դասախոս |
| 26. | Նավոյան Իզաբելա Ջավենի, ավագ լաբորանտ |
| 27. | Գաբրիելյան Ֆլորա Գևորգի, ավագ լաբորանտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Խուրշուդյան Արման Գագիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 2. | Հակոբջանյան Աննա Հովիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 3. | Սիմոնյան Արմեն Մնացականի, տ.գ.թ., ասիստ. |
| 4. | Մանգասարյան Արտակ Ռոմիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 5. | Հակոբյան Արթուր Վշտունու, տ.գ.թ., ասիստենտ |
| 6. | Վարդանյան Արման Վլադիմիրի, տ.գ.թ., ասիստ. |



Աղյուսակ 4.2

**Տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2014 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Միքայելյան Միքայել Վարազդատի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Ղարիբյան Գրիգոր Ալեքսանի, տ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ամբիոնի պատվավոր վարիչ |
| 3. | Հովսեփյան Վոլոդյա Երվանդի, տ.գ.թ., պրոֆեսոր |
| 4. | Գալստյան Գագիկ Սերյոժայի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Գալստյան Հասմիկ Նորիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Եղիազարյան Մարգարիտա Ռաֆայելի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Խաչատրյան Լևոն Հայկի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Մարգարյան Լևոն Շավարշի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Մարտիրոսյան Արման Ռուբենի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Ներսիսյան Արմեն Ռովելի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Պետրոսյան Գևորգ Կամոյի, տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Պետրոսյան Արսեն Գառնիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Ղազարյան Լևոն Գեորգիի, ասիստենտ |
| 14. | Մարգարյան Հասմիկ Գառնիկի, ասիստենտ |
| 15. | Գալստյան Անի Նորիկի, ասիստենտ |
| 16. | Գաբրիելյան Վարդուհի Գևորգի, դասախոս |
| 17. | Հովհաննիսյան Թամարա Գագիկի, դասախոս |
| 18. | Խանդամիրյան Անուշ Պավլուշի, դասախոս |
| **Համատեղողներ** | |
| 1. | Մարկոսյան Աշոտ Խաչատուրի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 2. | Մոմջյան Մարիամ Բաբկենի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Հարությունյան Արմենուհի Արայիկի, դասախոս |

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ 25-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի Միջազգային տնտեսական հարաբերությունների (ՄՏՀ) ամբիոնը ստեղծվել է 1991 թ. և եղել է Հայաստանում առաջինն իր ուղղվածությամբ:

Ստեղծման օրվանից ամբիոնը ղեկավարել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թորոս Շահենի Թորոսյանը: Հնգամյա բարձրագույն կրթության համակարգով «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ ավարտել են ավելի քան 300 շրջանավարտ, որոնցից մոտ 2/3-ը՝ գերազանց և բարձր առաջադիմությամբ, իսկ նույն մասնագիտությամբ անցած տարիների ընթացքում ավարտած մագիստրանտների թիվը կրկին մոտ 300 է: 2016 թ. ամբիոնը ուներ ինչպես առկա, այնպես էլ հեռակա (որը սկսել է գործել 2009 թ.-ից) մագիստրոսական ուսուցում (ավելի քան 85 մագիստրանտներ):



Տվյալ մասնագիտության շրջանավարտները լայնորեն ընդգրկված են հանրապետության տարբեր ոլորտներում՝ միջազգային տնտեսական կազմակերպություններում, ֆինանսական և բանկային համակարգերում, պետական և մասնավոր հատվածներում, ինչպես նաև շարունակում են ուսումը կամ աշխատում են արտասահմանյան տարբեր երկրներում:

Ամբիոնում ներգրավված են եղել ինչպես հիմնական դասախոսներ, այնպես էլ հրավիրված գիտական աստիճաններ, կոչումներ ունեցող մասնագետներ: Դասախոսական կազմի մեծամասնությունը ամբիոնի նախկին շրջանավարտներն են (Է. Մանուկյան, Մ. Գալստյան, Ս. Հովհաննիսյան, Ա. Գաբրիելյան, Հ. Հովհաննիսյան, Գ. Հայրապետյան, Ս. Խաչատրյան, Ա. Ենգոյան, Ա. Շեկյան), որոնցից ոմանք վերապատրաստվել են աշխարհի տարբեր համալսարաններում: Ամբիոնի վարիչի ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածու է դարձել 21 մասնագետ:

ՄՏՀ ամբիոնի դասախոսական կազմը հրատարակել է բազմաթիվ գրքեր, ուսումնական ձեռնարկներ, հոդվածներ և թեզիսներ, որոնցից հատկապես ուշագրավ են.

- «Միջազգային տնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկը, որը մայրենի լեզվով առաջին աշխատանքն էր հանրապետությունում տվյալ ուղղությամբ (2003 թ.): Հետագայում այն լրամշակվելուց և լրացումներից հետո լույս է տեսել ևս երկու անգամ (2005 թ., 2009 թ.):
- «Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր» գրքույկը (2001 թ.), որը այս թեմայով առաջին հետազոտությունն էր հանրապետությունում:
- «Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա» գիրքը (2004 թ.), (առաջինը Հայաստանում նման թեմատիկայով):
- Ամբիոնի դասախոսները անգլերենից հայերեն են թարգմանել Հ. Մ. Վենետիկյան, Ջ. Ա. Ուորֆիլդի, «Համաշխարհային առևտրի ֆինանսավորում» գիրքը (2006 թ):



• ՄՏՀ ամբիոնի դասախոսները հրատարակել են «Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը» գիրքը (2010 թ.), իսկ 2012 թ.՝ «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում» աշխատությունը:

Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համագործակցության ծրագրերին: Այսպես, 1993-94 թթ. իրականացվել է հայ-ամերիկյան առաջին տնտեսագիտական փոխանակման ծրագիրը ԱՄՆ Կոլորադոյի Համալսարանի Տնտեսագիտության ինստիտուտի հետ, իսկ 2002-2004 թթ.՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության գծով համագործակցությունը Կանադայի Առևտրային քաղաքականության և իրավունքի կենտրոնի հետ: «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության մագիստրանտները ստանում են հավաստագրեր այդ ուղղությամբ: Ամբիոնն ընդգրկված է եղել նաև բազմաթիվ միջազգային համագործակցության այլ ծրագրերում:

2000-2013 թթ. ՄՏՀ ամբիոնը համակարգել է տնտեսագիտության ֆակուլտետի միջազգային կապերը: 2015 թ.-ից ֆակուլտետի միջազգային կապերը համակարգում է Գ. Հայրապետյանը՝ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության հետ սերտ համագործակցելով:

**Աղյուսակ 4.3**

**Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2004 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Թորոսյան Թորոս Շահենի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Հովսեփյան Միքայել Գևորգի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Մկրտչյան Մարիետա Թևոսի, աշխ.գ.թ., դոցենտ |
| 4. | Գաբրիելյան Արման Գառնիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 5. | Հովհաննիսյան Սևակ Հովհաննեսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 6. | Հովհաննիսյան Հասմիկ Վաղինակի, ասիստենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Մանասերյան Թաթուլ Նորայրի, տ.գ.դ., դոցենտ |
| 2. | Պապյան Սիմոն Ռաֆիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Պողոսյան Սուրեն Հովհաննեսի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Սանուկյան Էդգար Էմիլի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Գալստյան Մարտին Արտաշեսի, տ.գ.թ., ասիստ. |
| 6. | Ենգոյան Արտակ Մերուժանի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի, դասախոս |
| 8. | Բալասանյան Նառա Սուրենի, դասախոս |
| 9. | Գալստյան Արա Ռուբիկի, դասախոս |







**Աղյուսակ 4.4**
**Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2014 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Թորոսյան Թորոս Շահենի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Մանասերյան Թաթուլ Նորայրի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Գաբրիելյան Արման Գառնիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի, տ.գ.թ., դոց. |
| 5. | Հովհաննիսյան Հասմիկ Վաղինակի, տ.գ.թ., դոց. |
| 6. | Մկրտչյան Մարիետա Թևոսի, աշխ.գ.թ., դոցենտ |
| 7. | Պողոսյան Սուրեն Հովհաննեսի, տ.գ.թ., դոցենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Թադևոսյան Զոյա Աղվանի, դոցենտ |
| 2. | Հովսեփյան Միքայել Գևորգի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Ենգոյան Արտակ Մերուժանի, տ.գ.թ., ասիստենտ |
| 4. | Հարությունյան Հրանտ Զավենի, տ.գ.թ., ասիստ. |
| 5. | Պապյան Սիմոն Ռաֆիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 6. | Սարգսյան Լիլիթ Նորայրի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Խանգելդյան Արծրուն Աղաբեկի, տ.գ.թ., ասիստ. |
| 8. | Խաչատրյան Սարգիս Աշոտի, տ.գ.թ., ասիստենտ |
| 9. | Շեկյան Արամ Լեոնարդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Ոլիխանյան Տաթևիկ Արմենի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Փաշայան Միքայել Մուշեղի, տ.գ.թ., ասիստենտ |

***Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների*** ամբիոնը 2016-2023 թթ. ղեկավարել է պրոֆեսոր Գագիկ Սերյոժայի Գալստյանը:



2023 թ. դեկտեմբերի 18-ից ամբիոնը ղեկավարում է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանը:



Հայրապետյան Գրիգոր

Ամբիոնն իրականացնում է ԵՊՀ այլ ֆակուլտետներում «Տնտեսագիտության հիմունքներ» և «Միջազգային տնտեսական հարաբերություններ» դասընթացների դասավանդումը:

Ամբիոնի մասնագիտական դասընթացներն են՝ «Միկրոտնտեսագիտություն (1-ին մակարդակ)», «Մակրոտնտեսագիտություն (1-ին մակարդակ)», «Տնտեսական պատմություն», «Համաշխարհային տնտեսություն», «Ազգային տնտեսություն», «Միջազգային տնտեսագիտություն», «Տնտեսագիտական մտքի պատմություն», «ՀՀ միջազգային տնտեսական հարաբերություններ», «Տնտեսագիտության արդի հիմնախնդիրներ» և մի շարք հատուկ դասընթացներ՝ «Ինստիտուցիոնալ տնտեսագիտություն», «Կայուն զարգացում» և «Տնտեսագիտության արդի հիմնախնդիրներ»:



Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնն իրականացնում է «Տնտեսական քաղաքականություն և իրավունք», «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական ծրագրերը:

Ամբիոնի դասախոսները ակտիվորեն ներգրավված են տեղական և միջազգային գիտական հետազոտություններում: Մասնավորապես՝

- Շվեյցարական ակադեմիական կովկասյան ցանցի շրջանակներում 2016 թ. ամբիոնը մասնակ-



ցել է «Հայաստանի և Վրաստանի ինքնության հարցի ազդեցությունը արտաքին տնտեսական և քաղաքական հարաբերությունների վրա» գիտական հետազոտությունում (տ.գ.թ., դոց. Գ. Հայրապետյան):

• 2016 թ. ամբիոնը մասնակցել է UNIDO-ի կողմից հովանավորվող «ՀՀ-ի և Եվրասիական տնտեսական միության որակի ենթակառուցվածքի համեմատական նկարագիրը» թեմայով հետազոտության կատարմանը (տ.գ.թ., դոց. Հ. Հովհաննիսյան):

• 2015 թ. ամբիոնը մասնակցել է «ՀՀ-ի գինի և կոնյակ արտադրողների արտահանման աջակցման հիմնահարցերը Չինաստանի ժողովրդական հանրապետության շուկայում» թեմայով հետազոտական աշխատանքի կատարմանը (տ.գ.թ., դոցենտ Հ.Հովհաննիսյան):

• 2014 թ. Գրիգոր Հայրապետյանը եղել է Բաց հասարակության հիմնադրամի (OSF) «ՀՀ ներառական կրթության մոտարկումը միջազգային ստանդարտներին» թեմայով հետազոտական թիմի անդամ:

• 2014 թ. ամբիոնը (տ.գ.թ. Արտակ Ենգոյան) մասնակցել է Բաց հասարակության հիմնադրամի՝ Հայաստանի ֆինանսական օժանդակության ծրագրով հովանավորվող գիտական հետազոտության կատարմանը, որը վերաբերում էր ՀՀ գյուղատնտեսության ֆինանսավորմանը և գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանման հիմնահարցերին:

• 2012-2013 թթ. Գրիգոր Հայրապետյանը եղել է Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող (ECORYS Nederland B.V) «ՀՀ և ԵՄ միջև խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ազդեցության գնահատում» թեմայով հետազոտական թիմի հայաստանյան անդամ:

• 2010-2012 թթ. ամբիոնը (տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյան) մասնակցել է Տնտեսագիտական կրթության և հետազոտության կոնսորցիումի (EERC) «ՀՀ միջազգային և տարածաշրջանային արտաքին առևտուրը. Հեռանկարներ և հնարավորություններ» թեմայով հետազոտական աշխատանքի կատարմանը:

• 2008-2010 թթ. Գ. Հայրապետյանը եղել է Տնտեսագիտական կրթության և հետազոտության կոնսորցիումի (EERC) կողմից ֆինանսավորվող «Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրավչության գործոնները» թեմայով հետազոտական թիմի անդամ:



Ամբիոնի դասախոսները, մանկավարժական գործունեությունից բացի, մեծ աշխատանքներ են իրականացրել մենագրությունների և ուսումնական ձեռնարկների պատրաստման և հրապարակման գործում, ակտիվորեն ներգրավված են հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում:

**Աղյուսակ 4.5**
**Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2024 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի, տ.գ.թ., դոցենտ, ամբիոնի վարիչ |
| 2. | Դավոյան Սամսոն Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Թորոսյան Թորոս Շահենի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 4. | Մարտիրոսյան Արման Ռուբենի, տ.գ.դ., դոցենտ |
| 5. | Մարգարյան Հասմիկ Գառնիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Գաբրիելյան Վարդուհի Գևորգի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Գալստյան Անի Նորիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Հովհաննիսյան Հասմիկ Վաղինակի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Գաբրիելյան Արման Գառնիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Գալստյան Հասմիկ Նորիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 11. | Եղիազարյան Մարգարիտա Ռաֆայելի, տ.գ.թ., դոցենտ |
| 12. | Ներսիսյան Արմեն Ռովելի, տ.գ.թ., դոցենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Մայիլյան Ֆիրուզա Նորայրի, տ.գ.դ., պրոֆեսոր |



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը (նախկինում՝ ***Տնտեսագիտական կիբեռնետիկայի*** ամբիոն) հիմնադրվել է 1965 թ. և գործել է մինչև 1975 թ., երբ ԵՊՀ-ում Տնտեսագիտության ֆակուլտետը փակվեց ու ստեղծվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (ԵԺՏԻ): Իննամյա ընդմիջումից հետո, 1984-1985 ուստարվանից սկսած, ԵՊՀ-ում Տնտեսագիտության ֆակուլտետը վերաբացվեց ***Տնտեսագիտական կիբեռնետիկա***, իսկ ամբիոնը ***Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորում*** անվամբ:

Կադրերի պատրաստման գործում հիմնական դերակատարներից էր ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը, որի պրոֆեսորադասախոսական անձնակազմում ներառված էին փորձառու դասախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յու. Թ. Մովսիսյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Վ. Հ. Թորոյանը և Մ. Ա. Սահակյանը, տնտեսագիտության թեկնածուներ, դոցենտներ Գ. Վ. Բախշյանը և Ա. Բ. Եղիազարյանը, տնտեսագիտության թեկնածու Լ. Մ. Սարդարյանը: Ամբիոնի առարկաների ցանկում, տնտեսագիտական դասընթացներից բացի, ներառված էին «Ծրագրավորում և ալգորիթմական լեզուներ», «Հաշվիչ մեքենաներ», «Կառավարման ավտոմատացված համակարգեր», «Տնտեսագիտական կիբեռնետիկա», «Սոցիալիստական էկոնոմիկայի մոդելավորում» դասընթացները: 1984-1999 թթ. Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետում ուսուցումը իրականացվում էր հնգամյա բարձրագույն կրթության համակարգով, և շրջանավարտները ստանում էին *տնտեսագետ-մաթեմատիկոսի* որակավորում: 1991 թ.-ից ֆակուլտետը վերանվանվել է Տնտեսագիտության, իսկ 1994 թ.-ից շրջանավարտները ստացել են նաև այլ որակավորումներ՝ տնտեսագետի, միջազգային տնտեսա-



կան կապերի գծով մասնագետի և այլն: Հնգամյա բարձրագույն կրթության համակարգով ուսուցման ժամանակահատվածում ֆակուլտետն ունեցել է 3 *անվանական կրթաթոշակառու*՝ Ալվարդ Խառատյան (1984-1987 թթ.), Վաչե Գաբրիելյան (1987-1990 թթ.), Հասմիկ Գալստյան (1990-1993 թթ.):

Ներկայումս Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնն ապահովում է ԵՊՀ-ում տնտեսագետ կադրերի պատրաստման կրթական գործընթացում տնտեսամաթեմատիկական գործիքակազմի և համակարգչային ծրագրային փաթեթների կիրառումը: Բակալավրիատի մակարդակով ամբիոնն իրականացնում է հետևյալ պարտադիր դասընթացները՝ «Բարձրագույն մաթեմատիկա», «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում», «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ», «Էկոնոմետրիկա», «Տնտեսական իրավիճակների մոդելավորում», «Մասնագիտական ծրագրային փաթեթներ», «Միկրոտնտեսագիտություն (2-րդ մակարդակ)», «Մակրոտնտեսագիտություն (2-րդ մակարդակ)»: Բակալավրիատի ուսանողների մասնագիտական կամընտրական դասընթացներից են՝ «Ժամանակային շարքերի էկոնոմետրիկա և կանխատեսում», «Էլեկտրոնային առևտուր», «Բիզնեսի գնահատում»:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը ղեկավարել են ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Վլադիմիր Կարաբեգովը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանը (1972-1974 թթ., 1984-1990 թթ.), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Բենիամին Եղիազարյանը (1974-1975 թթ.), տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գագիկ Բախշյանը (1990-1991 թթ.), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վասակ Թորոյանը (1991-2002 թթ.), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Առաքելյանը (2003-2023 թթ.): 2023 թ. դեկտեմբերից ամբիոնը ղեկավարում է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ալվարդ Խառատյանը:



Թորոյան Վասակ



Խառատյան Ալվարդ

2024-2025 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են 13 հիմնական դասախոս և 26 հրավիրված մասնագետներ: Հրավիրված դասախոսներից 19-ը դասավանդում են «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրում, որոնք ՀՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի լավագույն մասնագետներ են: Ամբիոնի ասպիրանտները և հայցորդները ստանում են տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Ամբիոնի պրոֆեսոր Ռ. Գևորգյանը ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նախագահն է (2023 թ.-ից), իսկ պրոֆեսոր Ա. Առաքելյանը և դոցենտ Ա. Խառատյանը՝ խորհրդի անդամներ:







Ամբիոնի դասախոսները ոլորտի առաջատար մասնագետներ են, տարիներ շարունակ աշխատել են Հայաստանի Հանրապետության Կառավարության տարբեր օղակներում, շարունակաբար իրենց խորհրդատվությունը տրամադրելով այդ կառույցներին, ներգրավվելով ՀՀ Կառավարության ծրագրային տարբեր փաստաթղթերի մշակման գործում: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յու.Թ. Մովսիսյանը եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1990-1994 թթ.), ղեկավարել է Տնտեսական ինքնուրույնության և տնտեսական զարգացման մշտական հանձնաժողովը (1990-1991 թթ.): 1990 թ. Մովսիսյանի ղեկավարությամբ մշակվել է ՀՀ տնտեսական ինքնուրույնության և ազատ ձեռնարկատիրական գործունեության հիմնադրագիրը: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Հ. Թորոյանը եղել է ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի անդամ (2002-2006 թթ.), ՀՀ կենտրոնական բանկի փորձագետ (2006 թ.), ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ (2006-2011 թթ.): Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Մ.Ա. Սահակյանը ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1990-1995 թթ.), ակտիվ մասնակցել է Տնտեսական ինքնուրույնության և տնտեսության զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի աշխատանքներին, եղել է Տնտեսության զարգացման ենթահանձնաժողովի նախագահ, Եվրախորհրդի միջխորհրդարանային GLOBE ծրագրի հանձնաժողովի անդամ (1993-1995 թթ.), ԱՊՀ երկրների խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի մշտական պատվիրակության հանձնաժողովի անդամ (1992-1995 թթ.):



Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից քաղաքական լայն գործունեությամբ առանձնանում է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա. Բ. Եղիազարյանը (1984-1995 թթ. աշխատել է Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման, այնուհետև՝ Կառավարման և գործարարության ամբիոնում): Որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր (1995-1999 թթ.) նա ղեկավարել է Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը: Եղիազարյանը զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ՝ ՀՀ տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման պետական հանձնաժողովի նախագահի տեղակալ (1990-1992 թթ.), Տնտեսական բարեփոխումների վարչության պետ (1992-1993 թթ.), ՀՀ էկոնոմիկայի նախարար (1993-1995 թթ.), Հայաստանի բանկերի միության նախագահ (1999-2003 թթ.), ՀՀ վարչապետի խորհրդական (2003-2006 թթ.) և այլն: 1995 թ.-ից սկսած ՀՀ կառավարության տարբեր մարմիններում աշխատել և ղեկավար պաշտոններ է զբաղեցրել ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Վ. Տերտերյանը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական, ՀՀ տարածքային կառավարման նախարարի աշխատակազմի ղեկավար, ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման վարչության պետ և այլն: 2005 թ.-ից մինչ օրս Տերտերյանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալն է: Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ն. Ա. Մարտիրոսյանը աշխատել է որպես ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (1995-1996 թթ.), ՀՀ սոցիալական ապահովության նախարարի տեղակալ (1998 թ.), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական:



Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մակրոտնտեսական մոդելների գնահատման ու դրանց միջոցով կանխատեսումների ու վերլուծությունների իրականացման նպատակով մասնակցել է ՀՀ կառավարության մի շարք ծրագրային փաստաթղթերի մշակմանը, այդ թվում՝ *«Մարդկային կապիտալի ուսումնասիրությունը»* (2022 թ.), *«Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգը»* (2024 թ.), *«ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»* (2014 թ.) և այլն:







Ամբիոնի դասախոսները և ասպիրանտները ակտիվորեն ներգրավված են հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում: Մանկավարժական գործունեությունից բացի, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մեծ աշխատանքներ է իրականացրել մենագրությունների և ուսումնական ձեռնարկների, ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունված և բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում գիտական հոդվածների հրապարակման գործում:

Աղյուսակ 4.6

**Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2004 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Առաքելյան Արամ Հմայակի, տեխ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Անդրեասյան Լևոն Խաչատուրի, տեխ.գ.թ., դոցենտ |
| 3. | Կարապետյան Արամ Տալվորիկի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 4. | Կակոսյան Աշոտ Վազրիկի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 5. | Մարտիրոսյան Նարեկ Արմենի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Բունիաթյան Մարինա Մնացականի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Սարգսյան Աննա Սուրենի, տ.գ.թ., ասիստենտ |
| 8. | Եղոյան Կարեն Շիրազի, տ.գ.թ., ասիստենտ |
| 9. | Սարդարյան Լաուրա Մաթևոսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Խառատյան Ալվարդ Ալբերտի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Ղուկասյան Գայանե Մամիկոնի, ֆ.-մ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի, ասիստենտ |
| 13. | Քոչինյան Նարինե Սինարայի, դասախոս |
| **Համատեղողներ** | |
| 1. | Թորոյան Վասակ Հովհաննեսի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 2. | Եղիազարյան Բենիամին Հովսեփի, տ.գ.դ., պրոֆեսոր |



Աղյուսակ 4.7

**Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2014 թ.**

| Հիմնական աշխատակիցներ | |
|---|---|
| 1. | Առաքելյան Արամ Հմայակի, տեխ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Սահակյան Մելս Արտավազդի, ֆ.-մ.գ.թ., պրոֆեսոր |
| 3. | Գևորգյան Ռուբեն Ալբերտի, տ.գ.դ., դոցենտ |
| 4. | Ավետիսյան Ռուբիկ Ավետիսի, ֆ.-մ.գ.թ., դոց. |
| 5. | Բունիաթյան Մարինա Մնացականի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Եղոյան Կարեն Շիրազի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Խառատյան Ալվարդ Ալբերտի, տ.գ.թ., դոց. |
| 8. | Կակոսյան Աշոտ Վազրիկի, ֆ.-մ.գ.թ., դոց. |
| 9. | Կարապետյան Արամ Տալվորիկի, ֆ.-մ.գ.թ., դոց. |
| 10. | Ղուկասյան Գայանե Սամիկոնի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 11. | Մարտիրոսյան Նարեկ Արմենի, տ.գ.թ., դոց. |
| 12. | Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի, տ.գ.թ., դոց. |
| 13. | Սարգսյան Սոնա Հայկի, տ.գ.թ., դոցենտ |
| 14. | Սարդարյան Լաուրա Մաթևոսի, տ.գ.թ., դոց. |
| 15. | Տոնոյան Գագիկ Պետրոսի, ֆ.-մ.գ.թ., դոց. |
| 16. | Քոչինյան Նարինե Սինարայի, տ.գ.թ., ասիստ. |
| 17. | Խալաթյան Անի Սարգսի, դասախոս |
| 18. | Մարուխյան Վեհանուշ Սամվելի, դասախոս |
| 19. | Միքայելյան Մանուկ Արմենի, դասախոս |
| **Համատեղողներ** | |
| 1. | Սարգսյան Աննա Սուրենի, տ.գ.թ., դոցենտ |

Աղյուսակ 4.8

**Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2024 թ.**

| Հիմնական աշխատակիցներ | |
|---|---|
| 1. | Խառատյան Ալվարդ Ալբերտի, տ.գ.թ., դոցենտ, ամբիոնի վարիչ |
| 2. | Առաքելյան Արամ Հմայակի, տեխ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Գևորգյան Ռուբեն Ալբերտի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 4. | Բունիաթյան Մարինա Մնացականի, տ.գ.թ., դոց. |
| 5. | Եղոյան Կարեն Շիրազի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Կարապետյան Արամ Տալվորիկի, ֆ.-մ.գ.թ., դոց. |
| 7. | Ղուկասյան Գայանե Սամիկոնի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 8. | Ջրբաշյան Նաիրուհի Մխիթարի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Պետրոսյան Անուշիկ Համլետի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 10. | Սարգսյան Սոնա Հայկի, տ.գ.թ., դոցենտ |
| 11. | Քոչինյան Նարինե Սինարայի, տ.գ.թ., դոցենտ |
| 12. | Փարսյան Աստղիկ Գենադիի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Ռաֆյան Տաթևիկ Հակոբի, դասախոս |
| **Համատեղողներ** | |
| 1. | Կակոսյան Աշոտ Վազրիկի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 2. | Սարգսյան Աննա Սուրենի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Մկրտչյան Արաքսյա Տիգրանի, մանկ.գ.թ., դոցենտ |
| 4. | Ադիլխանյան Հայկ Յուրիի, տ.գ.թ., ասիստենտ |
| 5. | Հակոբյան Ենոք Բենիամինի, տ.գ.թ., ասիստենտ |
| 6. | Խալաթյան Անի Սարգսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Գուլյան Էդիկ Ավագիմի, ասիստենտ |









Ամբիոնը ստեղծվել է 2001 թվականին. հիմնադիր վարիչն է եղել հանրապետությունում ճանաչված գիտնական, պետական և հասարակական գործիչ Լևոն Միսակի Դավթյանը: 2004-2008 թթ. ամբիոնը ղեկավարել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բաբկենի Բոստանջյանը, իսկ 2008-2022 թվականներին՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյանը: 2023 թվականից ամբիոնի վարիչի պարտականությունները կատարում է տնտեսագիտության թեկնածու Գնել Էդուարդի Սահակյանը:



Սահակյան Գնել

***Ֆինանսահաշվային*** ամբիոնի ստեղծման օրվանից մեծ աշխատանքներ են տարվել պրոֆեսորադասախոսական բարձր որակավորում ունեցող անձնակազմի ձևավորման, գիտամանկավարժական և գիտահետազոտական աշխատանքների համար պահանջվող մակարդակի ապահովման, մասնագիտացման ժամանակակից ուղղությունների ընտրման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, հանրապետության տնտեսության կառուցվածքի արդիականացմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացման, արտաքին գիտաուսումնական կապերի ընդլայնման, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի գործունեությանն առնչվող այլ ուղղությունների զարգացման համար:

Շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական հարաբերություններն ունեն առանցքային դերակատարություն՝ հատկապես տնտեսության ոլորտում, որոնց կարգավորումն ու արդյունավետության ապահովումը պահանջում է բարձր որակավորում ունեցող ֆինանսիստ մասնագետների առկայություն: Հենց այս հանգամանքով էր պայմանավորված ամբիոնի ստեղծման անհրաժեշտությունը: Ֆինանսահաշվային ամբիոնի կարևորության վկայություն պետք է համարել այն, որ ֆինանսական հարաբերություններում մասնագիտացված ֆակուլտետի գրեթե բոլոր շրջանավարտներն արագորեն պատասխանատու աշխատանքի են անցնում ինչպես տնտեսության պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատում Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոսները դասավանդում են «Ֆինանսներ», «Ֆինանսական շուկաներ», «Պետական ֆինանսներ», «Բանկային գործ», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Տնտեսական վիճակագրություն» առարկաները: Հատուկ դասընթացներից են «Պետական ֆինանսական համակարգ», «Կապիտալի շուկայի ձևավորում», «Վարկային գործառնություններ», «Բանկային նոր տեխնոլոգիաներ» դասընթացները:



Ֆինանսահաշվային ամբիոնը իրականացնում է նպատակային և համակարգված աշխատանքներ ֆինանսների կառավարման ասպարեզում ուսանողների մասնագիտացման և շուկայական հարաբերությունների պայմաններում նրանց արհեստավարժության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Կրթական ծառայությունների որակին ներկայացվող պահանջների կտրուկ բարձրացմանը զուգահեռ՝ ամբիոնն ուսումնական գործընթացի կատարելագործման, կրթական արդիական տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև դասախոսների մակարդակի կատարելագործման ճանապարհով ծավալում է համակողմանի գործունեություն՝ նշված նպատակներին հասնելու համար: Այդ առումով ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մշակած և սահմանած կարգով հաստատված են ծրագրեր, որոնք ուղղված են տնտեսական զարգացման ժամանակակից ուղղությունների ուսումնասիրմանը և հետագայում դրանց գործնական ներդրմանը:

Մասնավորապես, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայում, ընդհանուր մասնագիտական դասընթացներից բացի, ունկնդիրները հնարավորություն ունեն լսելու հատուկ մասնագիտական դասընթացներ՝ «Հարկաբյուջետային քաղաքականություն», «Դրամավարկային քաղաքականություն», «Ներդրումային քաղաքականություն», «Բյուջետային գործընթաց», «Կորպորատիվ ֆինանսներ», «Ֆինանսական վերլուծություն», «Ֆինանսական հոսքերի կառավարում», «Բանկային մենեջմենթ», «Բանկային հաշվապահություն և աուդիտ», «Ռիսկերի կառավարում և ապահովագրություն», ինչպես նաև՝ ֆինանսական այլ հարաբերությունների կարգավորմանը նվիրված դասընթացներ:

Ֆակուլտետի ասպիրանտուրայի համապատասխան մասնագիտությամբ հայցորդների ատենախոսությունների գիտական ղեկավարումն իրականացվում է Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոսների կողմից:

Գործունեության անցած ժամանակահատվածում ամբիոնի դասախոսներից Հ. Մնացականյանը և Վ. Հարությունյանը գիտական աստիճաններ շնորհող համապատասխան մասնագիտական խորհուրդներում պաշտպանել են դոկտորական ատենախոսություններ և ստացել դոկտորի գիտական աստիճան: Բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման աշխատանքներին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հաճախ են հանդես եկել փորձագիտական եզրակացություններով, գրախոսականներով և կարծիքներով՝ մենագրությունների, հետազոտական աշխատանքների և գիտական աստիճանի կամ կոչման հավակնող մասնագետների ուսումնասիրությունների վերաբերյալ:





Ֆինանսահաշվային ամբիոնը ստեղծման օրվանից ծավալել է ծանրակշիռ գործունեություն գիտամանկավարժական և գիտահետազոտական աշխատանքների ասպարեզում: Այդ գործում մեծ է եղել ֆակուլտետի և ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի դերը, որում ընդգրկված են եղել հանրապետության պետական, քաղաքական և հասարակական գործունեության ոլորտներում արժեքավոր փորձ կուտակած այնպիսի անձիք, ինչպիսիք են Լ. Դավթյանը, Վ. Բոստանջյանը, Բ. Ասատրյանը, Ա. Մինասյանը, Դ. Անանյանը և այլք: Նրանք շուկայական հարաբերությունների անցման տարբեր ժամանակահատվածներում իրենց հիմնական աշխատանքներն իրականացրել են ՀՀ Ազգային ժողովում, Կառավարությունում, Կենտրոնական բանկում, Պետական գույքի կառավարման կոմիտեում, Էկոնոմիկայի նախարարությունում, Պետական եկամուտների կոմիտեում, Ազգային վիճակագրական ծառայությունում, Արժեթղթերի հանձնաժողովում և պետական այլ կառույցներում:

Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոսները մանկավարժական գործունեությունից բացի, մեծ աշխատանքներ են իրականացրել մենագրությունների և ուսումնական ձեռնարկների պատրաստման և հրապարակման գործում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հրատարակած հետազոտությունների և գիտական հոդվածների ընդհանուր ծավալն ամբիոնի ստեղծման պահից մինչ օրս կազմում է ավելի քան 200 տպագրական մամուլ:









Աղյուսակ 4.9

**Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2004 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Բոստանջյան Վարդան Բաբկենի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Հակոբյան Արզուման Զորիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Ահարոնյան Անահիտ Ներսեսի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Մնացականյան Հայկ Գերասիմի, տ.գ.թ. |
| 5. | Ասատրյան Բագրատ Արտաշեսի, տ.գ.թ. |
| 6. | Վարդանյան Աշոտ Գուրգենի, տ.գ.թ. |
| 7. | Սահակյան Գնել Էդուարդի, տ.գ.թ. |
| 8. | Գրիգորյան Իրինա Գուրգենի, դասախոս |
| **Համատեղողներ** | |
| 1. | Ճուղուրյան Արմեն Գևորգի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 2. | Նահապետյան Սամվել Սուրենի, տ.գ.թ., դոց. |
| 3. | Քառյան Արայիկ Վլադիմիրի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Մինասյան Արծվիկ Գարեգինի, տ.գ.թ. |
| 5. | Հովակիմյան Թամարա Սիրականի, տ.գ.թ. |
| 6. | Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի, տ.գ.թ. |
| 7. | Կիրակոսյան Գևորգ Ֆերդինանտի, տ.գ.թ. |
| 8. | Ավագյան Ենոք Ենոքի, տ.գ.թ. |
| 9. | Սահակյան Կարեն Էդուարդի, տ.գ.թ. |
| 10. | Ադիլխանյան Միքայել Հրանտի, տ.գ.թ. |
| 11. | Գյոնջյան Հրայր Լևոնի, տ.գ.թ. |
| 12. | Սիրոյան Գարիկ Աշոտի, տ.գ.թ. |
| 13. | Սարոյան Կոնստանտին Ռաֆայելի, տ.գ.թ. |
| 14. | Դավթյան Տիգրան Շչորսի, դասախոս |
| 15. | Թոփալյան Դիանա Վահեի, դասախոս |
| 16. | Մարզպանյան Էդգար Հարությունի, դասախոս |
| 17. | Գյուլբուդաղյան Սիրակ Վաղարշակի, դասախոս |



Աղյուսակ 4.10

**Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2014 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Մնացականյան Հայկ Գերասիմի, տ.գ.դ., ամբիոնի վարիչ |
| 2. | Բոստանջյան Վարդան Բաբկենի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Զուրաբյան Կարինե Անուշավանի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Կիրակոսյան Գևորգ Ֆերդինանտի, տ.գ.թ., դոց. |
| 5. | Հակոբյան Արզուման Զորիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Հովակիմյան Թամարա Սիրականի, տ.գ.թ., դոց. |
| 7. | Ասատրյան Բագրատ Արտաշեսի, տ.գ.թ., ասիստ. |
| 8. | Ավագյան Ենոք Ենոքի, տ.գ.թ., ասիստենտ |
| 9. | Մարզպանյան Էդգար Հարությունի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Մնացականյան Գրիգոր Մանվելի, տ.գ.թ., ասիստ. |
| 11. | Սահակյան Գնել Էդուարդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Սահակյան Կարեն Էդուարդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Վարդանյան Աշոտ Գուրգենի, տ.գ.թ., ասիստենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Նահապետյան Սամվել Սուրենի, տ.գ.թ., դոցենտ |
| 2. | Ներսիսյան Կարեն Վասիլի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Քառյան Արայիկ Վլադիմիրի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Ավագյան Աննա Արմանի, տ.գ.թ., ասիստենտ |
| 5. | Բաղդասարյան Քրիստինե Յուրիի, տ.գ.թ., ասիստենտ |
| 6. | Մինասյան Արծվիկ Գարեգինի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Մուրադյան Արման Մաքսիմի, տ.գ.թ., ասիստենտ |
| 8. | Սիրոյան Գարիկ Աշոտի, տ.գ.թ., ասիստենտ |
| 9. | Սողոմոնյան Եղիշե Հենրիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Ֆարմանյան Հայկ Լևոնի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Անանյան Դավիթ Սանասարի տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Առաքելյան Մեսրոպ Ֆելիքսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Դովլաթյան Հասմիկ Հովհաննեսի, տ.գ.թ., ասիստ. |
| 14. | Խաչատրյան Արկադի Սանասարի, տ.գ.թ., ասիստ. |
| 15. | Ղահրամանյան Հասմիկ Ջևիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 16. | Սարգսյան Նարեկ Լյովայի, տ.գ.թ., ասիստենտ |
| 17. | Խաչատրյան Լևոն Հակոբի, դասախոս |
| 18. | Մինասյան Լուսինե Պետիկի, դասախոս |

Աղյուսակ 4.11

**Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2024 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Սահակյան Գնել Էդուարդի, տ.գ.թ., ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար |
| 2. | Բոստանջյան Վարդան Բաբկենի, տ.գ.դ., պրոֆ. |
| 3. | Կիրակոսյան Գևորգ Ֆերդինանտի, տ.գ.թ., դոց. |
| 4. | Հովակիմյան Թամարա Սիրականի, տ.գ.թ., դոց. |
| 5. | Մնացականյան Գրիգոր Մանվելի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Սահակյան Կարեն Էդուարդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Դովլաթյան Հասմիկ Հովհաննեսի, տ.գ.թ., ասիստ. |
| **Համատեղողներ** | |
| 1. | Մնացականյան Հայկ Գերասիմի, տ.գ.դ., պրոֆ. |
| 2. | Ասատրյան Բագրատ Արտաշեսի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Կիրակոսյան Գևորգ Ֆերդինանտի, տ.գ.թ., դոց. |
| 4. | Մաթևոսյան Էլյանորա Նորայրի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Ներսիսյան Կարեն Վասիլի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Սիրոյան Գարիկ Աշոտի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Նահապետյան Սամվել Սուրենի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Քեշիշյան Գևորգ Հարությունի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Քառյան Արայիկ Վլադիմիրի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Էլարյան Սերգեյ Հակոբի, տ.գ.թ., ասիստենտ |
| 11. | Կարապետյան Լիանա Հրաչյայի, տ.գ.թ., ասիստ. |
| 12. | Մուրադյան Արման Մաքսիմի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Առաքելյան Մեսրոպ Ֆելիքսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 14. | Ավետիսյան Նաիրուհի Ռաֆիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 15. | Աֆյան Դիանա Գրիշայի, տ.գ.թ., ասիստենտ |
| 16. | Կլեկչյան Լևոն Ռուբենի, տ.գ.թ., ասիստենտ |
| 17. | Ղահրամանյան Հասմիկ Ջնիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 18. | Սիմոնյան Գոհար Լևոնի, տ.գ.թ., ասիստենտ |
| 19. | Սողոմոնյան Եղիշե Հենրիկի, տ.գ.թ., ասիստենտ |
| 20. | Տեփոյան Վահագն Լիպարիտի, տ.գ.թ., ասիստ. |
| 21. | Ասրյան Լիլիթ Մերուժանի, դասախոս |
| 22. | Մինասյան Լուսինե Պետիկի, դասախոս |
| 23. | Փանոսյան Մերի Ստեփանոսի, դասախոս |
| 24. | Ավագյան Արմինե Արտուշի, դասախոս |
| 25. | Խաչատրյան Լևոն Հակոբի, դասախոս |
| 26. | Սարգսյան Արևիկ Վահանի, դասախոս |



## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

***Կառավարման և գործարարության*** ամբիոնը հիմնադրվել է 1996 թվականին: Ամբիոնի հիմնադիր վարիչ է նշանակվել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Լևոնի Սարգսյանը, որն այն ղեկավարել է մինչև 2003թ.: 2003-2016 թթ. ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցրել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Լևոնի Ղանթարչյանը: 2016 թվականին այդ ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվել է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կաղեն Գագիկի Խաչատրյանը և պաշտոնավարել մինչև 2023 թվականը: Այժմ ամբիոնը ղեկավարում է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աննա Հովիկի Հակոբջանյանը:

Կառավարման և գործարարության ամբիոնի հիմնադրումից սկսած՝ սկիզբ դրվեց կառավարիչների պատրաստման ծրագրին բակալավրիական և մագիստրոսական կրթական մակարդակներում: Մի շարք ուղղություններով՝ բակալավրիատում «Կառավարում», մագիստրատուրայում՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Ինովացիոն կառավարում», «Մարքեթինգ (շուկայագիտություն)» կրթական ծրագրերով մասնագետների թողարկումը տարիներ շարունակ իր նպաստն է բերել ՀՀ տնտեսության, նրա տարբեր օղակներում կառա-



Սարգսյան Հայկ



Ղանթարչյան Սարգիս



Խաչատրյան Կաղեն



Հակոբջանյան Աննա

վարման գիտելիքահենք մեթոդների արմատավորման հարցում: Նման որակի ապահովումը պայմանավորված էր ինչպես միջազգային լավագույն համալսարաններից հրավիրված մասնագետների, այնպես ՀՀ տարբեր ոլորտների մասնագետների կրթական գործընթացներին ակտիվ ներգրավվածությամբ: Մասնավորապես, Արմեն Եղիազարյանի, Վաչե Գաբրիելյանի, Մանուկ Հերգնյանի, Տիգրան Կարապետյանի, Կարեն Եղիազարյանի, Անդրանիկ Գրիգորյանի, Մելիք Գասպարյանի և այլոց շնորհիվ, ովքեր բարձր պաշտոններ են զբաղեցրել պետական կառավարման համակարգում և մասնավոր ընկերություններում, ամբիոնը տվել է բանիմաց և հեռանկարային շատ շրջանավարտներ:



Ամբիոնը կազմակերպել է ՀՀ տնտեսության առաջատար ընկերությունների ղեկավարների դասախոսությունները «Կառավարում» մասնագիտությամբ սովորողների, գիտական խորհրդի անդամների համար: Նրանք նաև կրթաթոշակ են սահմանել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի շատ անդամներ գործուն մասնակցություն են ունեցել և հանդես են եկել զեկուցումներով հանրապետությունում կազմակերպված «ՀՀ տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» (2018թ.) և «Տնտեսական հեղափոխությունը. ընկալումը և գործարկումը»







(2019թ.) գիտագործնական խորհրդաժողովներում, որոնց մասնակցել են ՀՀ վարչապետը, փոխվարչապետներ, նախարարներ, ԱԺ պատգամավորներ, զեկուցումներով հանդես են եկել ամբիոնի պրոֆեսորներ և դոցենտներ Հ. Սարգսյանը, Ա. Մարկոսյանը, Գ. Վարդանյանը, Ա. Սարիբեկյանը, Կ. Խաչատրյանը և այլք:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի շրջանավարտներ են, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ բիզնեսում, պետական կառավարման համակարգում աշխատանքի մեծ փորձառություն ունեցող մասնագետներ (մասնավորապես՝ բանկերի կառավարիչներ, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ, խոշոր կազմակերպությունների ղեկավարներ, բիզնեսների հիմնադիր տնօրեններ):

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ, մասնակցում միջազգային և տեղական գիտաժողովների և համաժողովների:

Ամբիոնի դասախոսները և ասպիրանտները ներգրավված են հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում:

Աղյուսակ 4.12

**Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2004 թ.**

| | Հիմնական աշխատակիցներ |
|---|---|
| 1. | Ղանթարջյան Սարգիս Լևոնի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Ջաքոյան Հարություն Վարազդատի, տեխ.գ.թ., դոցենտ |
| 3. | Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Համբարձումյան Անահիտ Համբարձումի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Եղիազարյան Արմեն Բենիամինի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Չիլինգարյան Ալեքսանդր Երվանդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 7. | Ասրյան Կարինե Նիկոլայի, տ.գ.թ., ասիստենտ |
| 8. | Ոսկանյան Արթուր Ֆրիդրիխի, դասախոս |
| 9. | Բարխուդարյան Գոհար Արայի, դասախոս |
| | **Համատեղողներ** |
| 1. | Սարգսյան Հայկ Լևոնի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 2. | Դավոյան Սամսոն Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Ավետիսյան Ռուբեն Ավետիսի, ֆ.-մ.գ.թ., դոցենտ |
| 4. | Աղաջանյան Լևիկ Հրանտի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Մանասյան Վոլոդյա Գուրգենի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Գալստյան Ամալյա Ռոմենի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Շմավոնյան Գարեգին Ջիվանի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Պետրոսյան Արսեն Գառնիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Գաբրիելյան Վաչե Վազգենի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Կարապետյան Տիգրան Սերգեյի, տ.գ.թ., դոցենտ |
| 11. | Գալստյան Մերուժան Շոթայի, տ.գ.թ., դոցենտ |
| 12. | Հերգնյան Սանուկ Մկրտչի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Գրիգորյան Անդրանիկ Գրիշայի, տ.գ.թ., ասիստ. |
| 14. | Սարգսյան Արման Ալբերտի, տ.գ.թ., ասիստենտ |
| 15. | Սարգսյան Արթուր Մայիսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 16. | Գոյունյան Գևորգ Ստեփանի, տ.գ.թ., ասիստենտ |
| 17. | Արասխանյան Սամվել Փայլակի, ասիստենտ |
| 18. | Գասպարյան Մելիք Ֆերդինանդի, ասիստենտ |
| 19. | Մովսիսյան Հռիփսիմե Գեղամի, դասախոս |
| 20. | Տեր-Գրիգորյան Ադրինե Վլադիմիրի, դասախոս |
| 21. | Մկրտչյան Աննա Ֆահրադի, դասախոս |
| 22. | Բեգլարյան Կարապետ Ստեփանի, դասախոս |

Աղյուսակ 4.13
**Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2014 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Ղանթարչյան Սարգիս Լևոնի, տ.գ.դ., պրոֆեսոր, ամբիոնի վարիչ |
| 2. | Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի, տ.գ.թ., պրոֆ. |
| 3. | Աբրահամյան Վահրամ Գևորգի, տ.գ.դ., դոցենտ |
| 4. | Ասրյան Կարինե Նիկոլայի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Գալստյան Ամալյա Ռոմենի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Զաքոյան Հարություն Վարազդատի, տեխ.գ.թ., դոցենտ |
| 7. | Խաչատրյան Նոննա Նիկոլայի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Հակոբջանյան Աննա Հովիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Համբարձումյան Անահիտ Համբարձումի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Անտոնյան Քրիստինե Աղասու, տ.գ.թ., ասիստ. |
| 11. | Չիլինգարյան Ալեքսանդր Երվանդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Սահակյան Նունե Մեսրոպի, տ.գ.թ., ասիստենտ |
| 13. | Բարխուդարյան Գոհար Արայի, ասիստենտ |
| 14. | Մկրտչյան Աննա Ֆահրադի, ասիստենտ |
| 15. | Ոսկանյան Արթուր Ֆրիդրիխի, ասիստենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Սարգսյան Հայկ Լևոնի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 2. | Դավոյան Սամսոն Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Առաքելյան Վալերի Հովհաննեսի, տ.գ.դ., դոցենտ |
| 4. | Ասլանյան Գագիկ Սերգեյի, տ.գ.թ., դոցենտ |
| 5. | Դադայան Լիլիթ Յուրիի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Սարգսյան Արման Ալբերտի, տ.գ.թ., դոցենտ |
| 7. | Ալեքսանյան Վարդան Սամվելի, տ.գ.թ., ասիստ. |
| 8. | Գրիգորյան Անդրանիկ Գրիշայի, տ.գ.թ., ասիստ. |
| 9. | Թոմիկյան Կարապետ Հովհաննեսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 10. | Խաչատրյան Կառլեն Գագիկի, տ.գ.թ., ասիստ. |
| 11. | Կարապետյան Տիգրան Սերյոժայի, տ.գ.թ., ասիստենտ |
| 12. | Մանուկյան Մեսրոպ Գևորգի, տ.գ.թ., ասիստենտ |

Աղյուսակ 4.14
**Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2024 թ.**

| | |
|---|---|
| **Հիմնական աշխատակիցներ** | |
| 1. | Հակոբջանյան Աննա Հովիկի, տ.գ.թ., դոցենտ, ամբիոնի վարիչ |
| 2. | Սարգսյան Հայկ Լևոնի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 3. | Աբրահամյան Վահրամ Գևորգի, տ.գ.դ., պրոֆ. |
| 4. | Վարդանյան Գագիկ Իշխանի, տ.գ.դ., պրոֆեսոր |
| 5. | Համբարձումյան Անահիտ Համբարձումի, տ.գ.թ., դոցենտ |
| 6. | Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի, տ.գ.թ., պրոֆ. |
| 7. | Ալեքսանյան Վարդան Սամվելի, տ.գ.թ., դոցենտ |
| 8. | Ասրյան Կարինե Նիկոլայի, տ.գ.թ., դոցենտ |
| 9. | Գալստյան Ամալյա Ռոմենի, տ.գ.թ., դոցենտ |
| 10. | Գյոզալյան Վարդուշ Գաբրիելի, տ.գ.թ., դոցենտ |
| 11. | Զաքոյան Հարություն Վարազդատի, տեխ.գ.թ., դոցենտ |
| 12. | Խաչատրյան Նոննա Նիկոլայի, տ.գ.թ., դոցենտ |
| 13. | Միրզոյան Նարինե Էռնեստի, տ.գ.թ., դոցենտ |
| 14. | Բարխուդարյան Գոհար Արայի, տ.գ.թ., ասիստենտ |
| 15. | Չիլինգարյան Ալեքսանդր Երվանդի, տ.գ.թ., ասիստենտ |
| 16. | Սահակյան Նունե Մեսրոպի, տ.գ.թ., ասիստենտ |
| 17. | Թոմիկյան Կարապետ Հովհաննեսի, տ.գ.թ., ասիստենտ |
| 18. | Մկրտչյան Աննա Ֆահրադի, ասիստենտ |
| **Համատեղողներ** | |
| 1. | Խաչատրյան Կառլեն Գագիկի, տ.գ.թ., դոցենտ |
| 2. | Ասլանյան Գագիկ Սերգեյի, տ.գ.թ., դոցենտ |
| 3. | Դադայան Լիլիթ Յուրիի, տ.գ.թ., դոցենտ |
| 4. | Վարազդատյան Տարոն Սիրակի, տ.գ.թ., ասիստենտ |



# 5 | Ֆակուլտետի կրթական ծրագրերը



ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում գործում են հետևյալ ***բակալավրիատի կրթական ծրագրերը***՝

1. **«Տնտեսագիտություն»** (որակավորումը՝ Տնտեսագիտության բակալավր)
2. **«Ֆինանսներ»** (որակավորումը՝ Տնտեսագիտության բակալավր)
3. **«Կառավարում»** (որակավորումը՝ Կառավարման բակալավր)



***«Տնտեսագիտություն» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել բարձրորակ տնտեսագետ-մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ֆինանսաբանկային ոլորտի, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի տարբեր օղակների համար: Ներկայումս «Տնտեսագիտություն» մասնագիտությունն ամենատարածված մասնագիտություններից մեկն է համարվում, որը առկա է գրեթե բոլոր ԲՈՒՀ-երում: Հետևաբար «Տնտեսագիտություն» մասնագիտության մրցունակությունն ապահովելու համար անընդհատ վերանայվում է կրթական ծրագիրը և դրանում ներառված դասընթացների բովանդակությունը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: «Տնտեսագիտություն» մասնագիտության կրթական ծրագրում ներառված են հետևյալ հիմնական դասընթացները՝ միկրոտնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն, տնտեսագիտական մտքի պատմություն, համաշխարհային տնտեսություն, տնտեսական պատմություն, միջազգային տնտեսագիտություն, ազգային տնտեսություն և այլն: Բակալավրիատի «Տնտեսագիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը ենթադրում է ապրանքների և ծառայությունների արտադրության, բաշխման, սպառման հարցերի ուսումնասիրումը: Կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են մարդիկ, ընկերությունները և կառավարությունը որոշումներ կայացնում ռեսուրսները բաշխելու/վերաբաշխելու համար, որպեսզի բավարարեն իրենց պահանջմունքները: «Տնտեսագիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ստանալ հիմնարար տնտեսագիտական գիտելիքներ և մասնագիտացում տնտեսագիտության տարբեր բնագավառներում:





***«Ֆինանսներ» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել մասնագետներ, որոնք ունակ կլինեն վերլուծելու և գնահատելու ֆինանսական շուկայում տեղի ունեցող մի շարք գործընթացներ և զարգացումներ, իսկ հիմնախնդիրներին՝ արդյունավետ լուծում առաջարկելու: Ծրագրի նպատակներից է նաև բանկային համակարգի, ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների, տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգերի տարբեր օղակների համար պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

«Ֆինանսներ» կրթական ծրագիրն ապահովվում է համապատասխան ակադեմիական բազա և

պատրաստում է մասնագետների, որոնք մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում:



Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպություններում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:



***«Կառավարում» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է*** մասնավոր և պետական հատվածի համար կառավարիչ մասնագետների պատրաստումը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ուսանողներին՝



- ➢ զարգացնելու տնտեսագիտական մտածողությունը,
- ➢ ձեռք բերելու սեփական բիզնեսը ստեղծելու ունակություն,
- ➢ կյանքի կոչելու նորարարական գաղափարները:

«Կառավարում» կրթական ծրագիրը տալիս է համապարփակ գիտելիք և հմտություններ բիզնեսի ստեղծումից մինչև կայացում հաջորդական բոլոր գործընթացների կառավարման վերաբերյալ՝ բիզնես գաղափարի ձևավորումից մինչև կազմակերպության գրանցում, գործունեության պլանավորում, մարդկային ռեսուրսների կառավարում, մարքեթինգային ռազմավարության մշակում, կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում, կազմակերպության ֆինանսական վերլուծություն, կազմակերպության գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտում և կառավարում, վերահսկողություն, արդյունավետ կառավարչական որոշումների ընդունում:




«Կառավարում» կրթական ծրագիրն անընդհատ լրամշակվում է և արձագանքում ժամանակակից պահանջներին՝ տրամադրելով նաև նախագծերի կառավարման (project manager), թվային բիզնեսի, ռազմավարական կառավարման, լոգիստիկայի, որակի կառավարման համակարգերի և ժամանակակից այլ մասնագիտացումների վերաբերյալ գիտելիք ու հմտություններ:

Ուսումնառության ընթացքում ուսանողների համար կազմակերպվում են այցեր տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպություններ և հանդիպումներ ոլորտի փորձառու կառավարիչների հետ:

Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն ստեղծելու սեփական բիզնեսը, ինչպես նաև աշխատելու ոլորտային կազմակերպություններում որպես անձնակազմի, ռիսկերի, ֆինանսների, որակի, նախագծերի և այլ օղակների կառավարիչ:



ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում գործում են հետևյալ ***մագիստրոսական կրթական ծրագրերը***՝

1. **«Տվյալների գիտությունը բիզնեսում»** (մասնագիտությունը՝ Տնտեսագիտություն, որակավորումը՝ Տնտեսագիտության մագիստրոս),
2. **«Միջազգային տնտեսական հարաբերություններ»** (մասնագիտությունը՝ Տնտեսագիտություն, որակավորումը՝ Տնտեսագիտության մագիստրոս),
3. **«Տնտեսական քաղաքականություն և իրավունք»** (մասնագիտությունը՝ Տնտեսագիտություն, որակավորումը՝ Տնտեսագիտության մագիստրոս),
4. **«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»** (մասնագիտությունը՝ Ֆինանսներ, որակավորումը՝ Տնտեսագիտության մագիստրոս),
5. **«Հաշվապահական հաշվառում և աուդիտ»** (մասնագիտությունը՝ Հաշվապահական հաշվառում և աուդիտ, որակավորումը՝ Տնտեսագիտության մագիստրոս),
6. **«Գործարար վարչարարություն (կառավարում)»** (մասնագիտությունը՝ Կառավարում, որակավորումը՝ Կառավարման մագիստրոս),
7. **«Շուկայագիտություն (մարքեթինգ)»** (մասնագիտությունը՝ Շուկայագիտություն (մարքեթինգ), որակավորումը՝ Կառավարման մագիստրոս),

***«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել մրցունակ, միջազգային կրթության չափանիշներին համապատասխան բարձրակարգ մասնագետներ տվյալագիտության ոլորտում: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել Հայաստանի և աշխարհի ինչպես ՏՏ, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտներում:

Մագիստրոսական ծրագիրը պատրաստում է մասնագետներ, որոնք ներկայացնում են միանգամից երեք ոլորտ՝ մաթեմատիկա, ծրագրավորում և բիզնես վերլուծություն: Միևնույն ժամանակ ծրագիրը կենտրոնացած է բիզնես գործընթացներում այդ գիտելիքների պրակտիկ կիրառությունների վրա: Տվյալագիտության ոլորտը ամենադինամիկ զարգացող ոլորտն է աշխարհում, ուստի մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանը շարունակաբար փոփոխվում է աշխատաշուկայի պահանջներին արագ և գրագետ արձագանքելու համար: 2020 թ.-ից սկսած ծրագրում կիրառվում են «Nvidia»-ի տեխնոլոգիաները, ինչը հնարավորություն է տալիս, որ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը ոչ միայն արտերկրից «գիտելիք ներմուծի», այլև ինքն «արտահանի» որակյալ գիտելիք:
















«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ուսումնական գործընթացը և ծրագիրը լիովին համապատասխանեցված են ԱՄՆ-ի Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրին: Ըստ ձեռք բերված համաձայնության՝ ուսուցման 2-րդ տարում ծրագրի շրջանակում մինչև հինգ ուսանողներ հնարավորություն ունեն շարունակելու կրթությունը ՍԽՊՀ «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրում, բարեհաջող ավարտելուց հետո ստանալու տվյալագետի կրկնակի դիպլոմ և անցնելու պրակտիկա Սիլիկոնային հովտի կազմակերպություններում:





***«Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել տնտեսագետ-մասնագետներ, որոնք կարող են աշխատել տարբեր մշակութային միջավայրերում՝ հաշվի առնելով վարքագծի սոցիալական և տնտեսական տարբեր նորմեր և կանոններ: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել ՀՀ պետական կամ մասնավոր այն ընկերություններում, որոնց գործունեությունը կապված է արտաքին հատվածի հետ, ինչպես նաև ՀՀ-ում գործունեություն ծավալած միջազգային տնտեսական կազմակերպությունների գրասենյակներում: Ներկայիս արագ փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման, կայուն տնտեսական աճի ապահովման, միջազգային շուկայում մրցունակ դիրքի գրավման, արտարժութային մուտքերի անընդհատ ավելացման և, ի վերջո, ՀՀ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար առաջնային նշանակություն ունի միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում բարձր որակավորում ունեցող տնտեսագետ-մասնագետների պատրաստումը: «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսի կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ստանալու աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան գիտելիք՝ ծրագրի կառուցվածքի և ուսուցման ընտրված մեթոդաբանության շնորհիվ: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողներն իրենց մասնագիտական պրակտիկան անցնում են ՀՀ տարբեր կազմակերպություններում և հաստատություններում, որտեղ կան արտաքին տնտեսական հարցերով զբաղվող ստորաբաժանումներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները կիրառելու գործնականում, ինչպես նաև ձեռք բերելու մասնագիտական հմտություններ և կարողություններ:





***«Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկությունների զարգացման ծրագրեր մշակող, վերլուծող և իրականացնող բարձրորակ մասնագետներ պատրաստելը: Այդ մասնագետները կարող են նաև հաջողությամբ ներգրավվել պետական կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում՝ տնտեսական քաղաքականություն, զարգացման ծրագրեր ու հայեցակարգեր մշակելու, ինչպես նաև նշված մարմինների տնտեսագիտական ստորաբաժանումներում աշխատելու համար: Տնտեսության զարգացման նոր իրավիճակում կարևորվում է բիզնեսի տարբեր ոլորտների համար մասնագետների պատրաստումը և դրանում պետական կարգավորման ու կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների դերը: Փորձը ցույց է տալիս, որ տնտեսության պետական կարգավորման համակարգերում և բիզնեսում մեծ է տնտեսական քաղաքականություն, հայեցակարգեր ու ծրագրեր մշակող և իրականացնող տնտեսագիտական կադրերի նկատմամբ պահանջարկը: Ուսանողները հնարավորություն ունեն իրենց պրակտիկան անցնելու պետական կարգավորող մարմիններում, գերատեսչություններում, Երևանի քաղաքապետարանում ու խոշոր առևտրային կազմակերպություններում (մասնավորապես, ՄՊՀ-ում, ՀԾԿՊՀ-ում, ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություններում):





***«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** ուսանողներին ֆինանսական ոլորտում առաջադեմ գիտելիքների և մասնագիտացված հմտությունների մատուցումը, ինչի արդյունքում հնարավոր կլինի պատրաստել շրջանավարտներ, որոնք կտիրապետեն ֆինանսների տեսությանը, կունենան առաջադեմ վերլուծական հմտություններ և առաջատար կլինեն բանկային համակարգում, ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններում, պետական ֆինանսական և այլ հաստատություններում:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագիրը տալիս է այնպիսի մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական կարողություններ և ընդհանրական կարողություններ, ինչպիսիք են՝ ֆինանսական ոլորտի գլոբալ և լոկալ հիմնախնդիրների բացահայտումը, ֆինանսական շուկայում ներդրումային պորտֆելի ձևավորման և կառավարման սկզբունքների ներկայացումը, կորպորատիվ ֆինանսների կառավարման հիմնական առանձնահատկությունների բացահայտումը, ներդրումային և բիզնես գործընթացների վերլուծության իրականացումը, կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատումը և այլն:

Դասավանդող կազմում ներգրավված են ինչպես ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի փորձառու մասնագետները, այնպես էլ հրավիրյալ դասախոսներ, որոնք նեղ ոլորտային մասնագետներ են, մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկից, առևտրային բանկերից, Պետական եկամուտների կոմիտեից, Արժեթղթերի ֆոնդային բորսայից:





***«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակաուղղված է՝*** ուսանողների մասնագիտական պատրաստմանը, գիտելիքների զարգացմանը և հմտությունների ձեռքբերմանը, որոնք անհրաժեշտ են հաշվապահության ոլորտում հաջողակ մասնագետ դառնալու համար: Սույն ծրագիրը միտված է իր շրջանավարտներին փոխանցել այնպիսի հմտություններ և գիտելիքներ, որոնք պահանջված են աշխատաշուկայում:

«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում ուսանողները ձեռք են բերում ընդհանուր հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների կազմման և վերլուծության, հարկային հաշվառման, ֆինանսների կառավարման, ինչպես նաև, ժամանակակից հաշվապահական ծրագրերի, համակարգչային համակարգերի օգտագործման գիտելիքներ:

Դասավանդող կազմում ներգրավված են ինչպես ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի փորձառու մասնագետները, այնպես էլ հրավիրյալ դասախոսներ, որոնք նեղ ոլորտային մասնագետներ են:





***«Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել բիզնես ոլորտի կառավարիչների, որոնք ISO 9001 միջազգային ստանդարտներին համապատասխան՝ որակի կառավարման համակարգի և ռիսկերի կառավարման պահանջների հիման վրա կարող են. բացահայտել կազմակերպության գործունեության ուղղությունները, բիզնես գործընթացները, բիզնես մոդելները, կազմակերպության հսկողությունից դուրս գտնվող արտաքին իրավիճակներին ուղեկցող անբարենպաստ ռիսկերը և միջոցառումներ կազմակերպել դրանց նվազեցման ուղղությամբ, մշակել կազմակերպության կառավարման արդյունավետ համակարգ (այդ թվում ռիսկերի կառավարման համակարգ) կազմակերպության ֆինանսական կայունության ամրապնդման նպատակով, իրացնելով առաջնորդին բնորոշ ներուժը՝ կառավարչական գործունեության ընթացքում կիրառել գործնական հմտություններ բիզնես միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու, արդյունավետ և արգասավոր կառավարչական որոշումների կայացման, աշխատանքների նախագծման և իրականացման, կորպորատիվ կառավարման, արդյունավետ հաղորդակցման, անձնակազմի խրախուսման և գնահատման մեթոդաբանության ներդրման ուղղությամբ:

Մագիստրոսական ծրագիրը տալիս է գործնական կարողություններ՝ աշխատելով վերը նշված մասնագիտական ոլորտների փորձագետների հետ:

Կրթական ծրագրի ուսուցման հիմնական նպատակն է աջակցել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ գործարար-առաջնորդների պատրաստմանը, որոնց հատուկ է ստեղծարար կառավարչական գործելաոճը: Ուսումնառության ընթացքում ուսանողներին փոխանցվում են գործնական հմտություններ կազմակերպություններում իրական խնդիրներ լուծելու նպատակով՝ կիրառելով կառավարչական տարբեր մեթոդներ, հնարքներ, մոդելներ և այլ գործիքակազմ:

Տվյալ մագիստրոսական ծրագիրը հաջողությամբ ավարտած շրջանավարտները մասնագիտորեն պատրաստված են լինում որպես տարբեր ոլորտների կազմակերպության կառավարման բոլոր մակարդակներում պատասխանատուներ և փորձագետներ, որակի կառավարման համակարգի մշակման, ներդրման և բարելավման մասնագետներ, իրենց բիզնես գաղափարները գործնական կյանքում իրագործողներ և սեփական կազմակերպությունների հիմնադիրներ, ֆինանսական և ռիսկ-մենեջերներ, կազմակերպությունների վարկանշման և կոնտրոլինգի մասնագետներ, անձնակազմի կառավարման և լոգիստիկայի գծով մասնագետներ, նախագծերի մենեջերներ:





***«Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է*** պատրաստել մրցունակ մասնագետներ, որոնք իրենց ակադեմիական և պրակտիկ գիտելիքը կիրացնեն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպություններում: Դասավանդող կազմում ներգրավված են ինչպես ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի փորձառու մասնագետները, այնպես էլ հրավիրյալ դասախոսներ, որոնք նեղ ոլորտային մասնագետներ են՝ մարքեթինգային կազմակերպությունների հիմնադիրներ, ղեկավարներ, ինչպես նաև խոշոր կազմակերպությունների մարքեթինգային բաժինների ղեկավարներ: Նման համագործակցության շնորհիվ ուսանողները ստանում են աշխատանքի առաջարկներ: Կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ ֆակուլտետում կազմակերպվում են վարպետության դասեր, արտալսարանային դասեր, որոնք վարում են ոլորտի առաջատար մասնագետները: Ուսումնառության ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու գիտական կոնֆերանսների, հանդես գալ զեկուցումներով և ստանալ մասնակցության հավաստագրեր:

Ուսումնառության ընթացքում կուտակելով և՛ ակադեմիական գիտելիքի, և՛ պրակտիկ հմտությունների մեծ պաշար՝ որպես որակավորված մաս-

նագետ, ուսանողները ստանում են աշխատանքի առաջարկ ինչպես ուսումնառության շրջանում, պրակտիկայի ընթացքում, այնպես էլ մագիստրոսի որակավորում ստանալուց հետո:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում նախկինում գործել են ***«Ինովացիոն կառավարում» և «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» մագիստրոսական կրթական ծրագրերը***:





***«Ինովացիոն կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը*** ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հիմնադրվել է 2011-2012 ուսումնական տարում և գործել մինչև 2019-2020 ուսումնական տարին: ***Ծրագրի նպատակն էր*** պատրաստել մասնագետներ, որոնք ունակ կլինեն գեներացնելու նորարարական գաղափարներ, առևտրայնացնելու այդ գաղափարները և կառավարելու նորարարությունները: Հայաստանում արդեն իսկ ստեղծվել և գործում են մի շարք մասնավոր և պետական կառույցներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցում են ինովացիոն գործունեությանը և ինովացիոն ընկերություններին (Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Գյումրի SS կենտրոն, Վիասֆեր Տեխնոպարկ, հետազոտական համալսարաններ և այլն): Այս իմաստով «Ինովացիոն կառավարում» կրթական ծրագիրն ունեցել է իր դերակատարումը, տեխնոլոգիական զարգացում ապահովող ճյուղերի, կազմակերպությունների կառավարիչների պատրաստման հարցում:





***«Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը*** ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հիմնադրվել է 2017-2018 ուսումնական տարում և գործել մինչև 2021-2022 ուսումնական տարին: ***Ծրագրի նպատակն էր*** պատրաստել աշխատաշուկայում մրցունակ և բարձր որակավորում ունեցող կադրեր, որոնք կտիրապետեն ոչ միայն տեսական գիտելիքի, այլև պոտենցիալ գործատուի համար արժեքավոր գործնական հմտությունների:

Ուսումնասիրելով աշխարհի լավագույն համալսարանների փորձը՝ նպատակ էր դրվել նաև ապահովել դասընթացների այնպիսի համախումբ, որտեղ հաշվի կառնվեն ինչպես ոլորտի զարգացման գլոբալ և տարածաշրջանային միտումները, այնպես էլ պետական և մունիցիպալ կառավարման ՀՀ առանձնահատկությունները, մարտահրավերներն ու հեռանկարները: Այս մարտահրավերներից ելնելով՝ ծրագրի շրջանակում պատրաստվել են մասնագետներ, որոնք տիրապետել են տարբեր ոլորտներում և մակարդակներում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության գնահատման, առկա խնդիրների լուծման ընթացիկ և ռազմավարական տեսլականների և հայեցակարգերի մշակման, պետական ծրագրերի և նախագծերի պլանավորման, մշակման ու հիմնավորման, ինչպես նաև պետական և մունիցիպալ մակարդակներում որակի, կադրային, ժամկետային, ռիսկերի կառավարման, ինչպես նաև կառավարման այլ ուղղություններում անհրաժեշտ համապատասխան հմտությունների:



ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ***ասպիրանտական կրթությունն*** իրականացվում է գործող ուսուցման եռաստիճան համակարգի երրորդ մակարդակում: Ասպիրանտական կրթության գործընթացը կազմակերպվում է 3 ձևով՝ առկա (3 տարի տևողությամբ), հեռակա (4 տարի տևողությամբ) և հայցորդություն (5 տարի տևողությամբ):

Ուսումնառությունն ասպիրանտուրայում ուղղված է ինքնուրույն գիտական հետազոտություն կատարելուն, խորը տեսական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետների պատրաստմանը, որն ավարտելուց հետո ասպիրանտը կարողանում է պատրաստել որակյալ գիտական աշխատություն՝ ատենախոսություն: Ատենախոսության հրապարակային պաշտպանության արդյունքում ասպիրանտին շնորհվում է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ֆակուլտետում ասպիրանտական կրթության կազմակերպման հիմնական խնդիրներն են.

- ասպիրանտուրայի ընդունելության պլանավորումն ու կազմակերպումը,
- ասպիրանտների ուսման գործընթացի համակարգումն ու վերահսկողությունը,
- գիտական աշխատողների պատրաստման, որակավորման բարձրացման նպատակով ուսումնառության գործընթացի արդյունավետության վերլուծությունը,
- բարձր որակավորման գիտական աշխատողների պատրաստման նորմատիվային փաստաթղթերի պատրաստումը:

Ֆակուլտետում ասպիրանտների պատրաստումը կատարվում է տնտեսագիտության հետևյալ ուղղություններով.

- Ը.00.01 – «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն»,
- Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»,
- Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»,
- Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն»,
- Ը.00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում»:

Ուսումնառությունն ասպիրանտուրայում նախատեսում է ուսումնական պլաններով հաստատված տնտեսագիտության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրություն, ինչպես նաև մասնագիտության հարակից առարկաների դասավանդում: Առարկայական քննությունները հանձնելուց հետո, ասպիրանտները հանձնում են որակավորման քննություն մասնագիտությունից: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կազմակերպվում է ասպիրանտների տարեկան ատեստավորում:

# 6 | Ֆակուլտետի գիտական կյանքը



## Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհուրդը

Սկսած 2002 թվականից՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական ներուժի հիման վրա գործում է տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը:





ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում պաշտպանվում են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Աղյուսակ 6.1-ում ամփոփ, ըստ ժամանակագրության, ներկայացված են Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում կազմակերպված պաշտպանությունների մասնագիտական դասիչները.

**Աղյուսակ 6.1**

**Ֆակուլտետում գործող Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում կազմակերպված պաշտպանությունների մասնագիտական դասիչները**

| | |
|---|---|
| 2002-2004 թթ. | Ը.00.01 - Տեսական տնտեսագիտություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.08 - Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում |
| 2005–2006 թթ. | Ը.00.01 - Տեսական տնտեսագիտություն<br>Ը.00.06 - Միջազգային տնտեսագիտություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.08 - Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում |
| 2007-2013 թթ. | Ը.00.01 - Տեսական տնտեսագիտություն<br>Ը.00.06 - Միջազգային տնտեսագիտություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.08 - Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում |
| 2014–2018 թթ. | Ը.00.01 - Ընդհանուր տնտեսագիտություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.08 - Մաթեմատիկական տնտեսագիտություն |
| 2019-2020 թթ. | Ը.00.01 - Ընդհանուր տնտեսագիտություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.03 – Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում<br>Ը.00.08 – Մաթեմատիկական տնտեսագիտություն |
| 2021 թ. | Ը.00.01 - Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.03 – Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում<br>Ը.00.08 – Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում |
| 2022-2024 թթ. | Ը.00.01 - Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն<br>Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում<br>Ը.00.08 – Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում |

2024-2025 թթ. ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհուրդը գործունեությունն իրականացնելու է ներքոնշյալ դասիչներով և կազմերով (տե՛ս Աղյուսակ 6.2, 6.3 և 6.4):

**Աղյուսակ 6.2**

**Ը.00.01- Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն (տնտեսագիտություն)**

| Ազգանուն Անուն Հայրանուն | Գիտական աստիճան Գիտական կոչում Աշխատանքի վայր | Խորհրդի կազմ |
|---|---|---|
| 1. Գևորգյան Ռուբեն Ալբերտի (նախագահ) | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.08 |
| 2. Դավոյան Սամսոն Աշոտի (նախագահի տեղակալ) | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.01/Ը.00.02 |
| 3. Հակոբջանյան Աննա Հովիկի (գիտական քարտուղար) | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.01 |
| 4. Թորոսյան Թորոս Շահենի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.01 |
| 5. Սարինյան Ռոբերտ Ներսեսի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ | Ը.00.01 |
| 6.Մայիլյան Ֆիրուզա Նորայրի | տնտեսագիտության դոկտոր, դոցենտ ՀՊՏՀ | Ը.00.01 |
| 7. Մարտիրոսյան Արման Ռուբիկի | տնտեսագիտության դոկտոր, դոցենտ ԵՊՀ | Ը.00.01 |



**Աղյուսակ 6.3**

**Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում**

| Ազգանուն Անուն Հայրանուն | Գիտական աստիճան Գիտական կոչում Աշխատանքի վայր | Խորհրդի կազմ |
|---|---|---|
| 1. Գևորգյան Ռուբեն Ալբերտի (նախագահ) | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.08 |
| 2.Դավոյան Սամսոն Աշոտի (նախագահի տեղակալ) | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.01/ Ը.00.02 |
| 3. Հակոբջանյան Աննա Հովիկի (գիտական քարտուղար) | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.01 |
| 4. Բոստանջյան Վարդան Բաբկենի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.02 |
| 5. Աբրահամյան Վահրամ Գևորգի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.02 |
| 6. Վարդանյան Գագիկ Իշխանի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.02 |
| 7. Ծպնեցյան Հրաչյա Սերգեյի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՀԱԱՀ | Ը.00.02 |
| 8. Խաչատրյան Կառլեն Գագիկի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.02 |
| 9. Գաբրիելյան Բելլա Վալերիի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարան (Երևանի մասնաճյուղ) | Ը.00.02 |
| 10. Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի | տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.02 |
| 11. Ալեքսանյան Վարդան Սամվելի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.02 |



Աղյուսակ 6.4

**Ը.00.08 - Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում**

| Ազգանուն Անուն Հայրանուն | Գիտական աստիճան Գիտական կոչում Աշխատանքի վայր | Խորհրդի կազմ |
|---|---|---|
| 1.Գևորգյան Ռուբեն Ալբերտի (նախագահ) | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.08 |
| 2.Առաքելյան Արամ Հմայակի (նախագահի տեղակալ) | տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ե.13.01 |
| 3.Հակոբջանյան Աննա Հովիկի (գիտական քարտուղար) | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.01 |
| 4. Թավադյան Աշոտ Աղասու | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայ-ռուսական համալսարան | Ը.00.08 |
| 5.Ղանթարջյան Սարգիս Լևոնի | տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԵՊՀ | Ը.00.08 |
| 6.Մխիթարյան Ժիրայր Սամվելի | տնտեսագիտության թեկնածու, ՀՀ Վերահսկիչ պալատ | Ը.00.08 |
| 7. Խառատյան Ալվարդ Ալբերտի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԵՊՀ | Ը.00.01 |
| 8. Բազինյան Եվգենյա Արայիկի | տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ՀՊՏՀ | Ը.00.08 |

Ստորև ներկայացվում է ֆակուլտետում գործող ամբիոնների ***գիտական կյանքը, գիտական հետազոտությունները և գիտական աշխատանքները:***









## *Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն*

Ամբիոնի աշխատակիցների գիտական հետաքրքրությունների շրջանակներն են՝ տնտեսական աճի և ազգային տնտեսության, տնտեսական պատմության, տնտեսագիտական մտքի զարգացման, կայուն զարգացման հիմնախնդիրները, տնտեսական մրցակցության պաշտպանությունը և կարգավորումը, ձեռնարկատիրական ունակությանը և ռիսկերին առնչվող խնդիրները, եկամուտների անհավասարության և աղքատության միտումները, բնակչության միգրացիան, անշարժ գույքի շուկայի զարգացման միտումները, պետական պարտքին առնչվող հիմնախնդիրները, ՕՈՒՆ-ների ներգրավման հիմնախնդիրները, ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի զարգացման հիմնահարցերը, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման (ԵԱՏՄ, ԵՄ) առանձնահատկությունները, միջազգային տնտեսական կազմակերպությունները և դրանց գործունեության ազդեցությունը և այլն:





## *Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն*

Ամբիոնի աշխատակիցների գիտական հետաքրքրությունների շրջանակներն են՝ տվյալների հավաքագրման և վերլուծության գործիքների մշակման մեթոդաբանությունը, քանակական և որակական հետազոտությունների և դրանց մեթոդաբանությունների մշակումը, ընտրանքը, տվյալների շտեմարանների վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծությունը, մաթեմատիկական և վիճակագրական մոդելները, արհեստական բանականությունը, մեքենայական ուսուցումը, տվյալների գիտությունը և վարքագծային մոդելները, տնտեսական գործընթացների մաթեմատիկական մոդելավորումը, խաղերի տեսությունը, էկոնոմետրիկ մոդելավորումը և կանխատեսումը մակրո- և միկրոտնտեսագիտական ոլորտներում, տվյալների վիճակագրական վերլուծությունների և էկոնոմետրիկ մոդելավորման փաթեթները, տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ, կառավարման տեղեկատվական համակարգերը, տնտեսագիտական ինֆորմատիկան, հավանականային մետրիկաների տեսության որոշ հարցերի ուսումնասիրությունը, բազմաչափ վիճակագրական վերլուծության կիրառումը անորոշություն պարունակող խնդիրներում, որոշումների կայացման ինֆորմացիոն համակարգերի նախագծումը, արհեստական նեյրոնային ցանցերը, դիֆերենցիալ օպերատորները, մաթեմատիկական անալիզը, միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության արդի հիմնախնդիրները՝ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, տնտեսաբնապահպանական հիմնախնդիրները, կայուն զարգացման հիմնախնդիրները, տարածքային զարգացման անհամաչափությունները և այլն:



### *Ֆինանսահաշվային ամբիոն*

Ամբիոնի աշխատակիցների գիտական հետաքրքրությունների շրջանակներն են՝ ֆինանսական հարաբերությունների կարգավորման, ֆինանսական համակարգի զարգացման, կենտրոնացված ֆինանսական ռեսուրսների ձևավորման, բանկային, ապահովագրական և այլ ֆինանսական ինստիտուտներում գործունեության կազմակերպման, կորպորատիվ մշակույթի արմատավորման, ֆինանսական ռիսկերի կառավարման, հաշվապահական հաշվառման, ինչպես նաև ֆինանսական հարաբերությունների թվայնացման խնդիրները:





### *Կառավարման և գործարարության ամբիոն*

Ամբիոնի աշխատակիցները կատարում են գիտական և հետազոտական աշխատանքներ հետևյալ մասնագիտական ուղղություններով. տնտեսության պետական կարգավորում, հարկային քաղաքականություն, բիզնեսի կազմակերպում և կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, ֆինանսական կառավարում, ռիսկերի կառավարում, նորամուծությունների կառավարում, աշխատանքի շուկա, ծառայությունների շուկա, մարքեթինգային ռազմավարություններ, մարքեթինգային հետազոտություններ, նախագծերի կառավարում, մարդկային կապիտալի զարգացում, բուհ-կազմակերպություն համագործակցության խթանում և այլն:











## Վերջին 20 տարիների ընթացքում ֆակուլտետում իրականացվել են մի շարք դրամաշնորհային ծրագրեր

### *Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն*

1. «Ուղեղների արտահոսք. որակյալ աշխատուժի արտագաղթի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա», MIT Global Seed Funds 2024-2026 թթ. (հետազոտության ղեկավարն է տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանը, իսկ ամերիկյան կողմից հետազոտության ղեկավար՝ Քրիստոֆեր Պալմերը):

2. «Բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետության գնահատումը հարավկովկասյան հանրապետություններում», 2018 թ., ՀՀ գիտության պետական կոմիտեի դրամաշնորհ (ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Սամսոն Դավոյան)

3. «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները ՀՀ անցումային տնտեսությունում», 2008-2010 թթ. (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Ղարիբյան): Հետազոտության արդյունքում արժևորվել են ՀՀ անցումային տնտեսությունում կապիտալի նախասկզբնական կուտակման և սոցիալ-տնտեսական վերափոխումների հետևանքները: Բացահայտվել են տնտեսական, սոցիալական և ազգային անվտանգության խորը ճգնաժամային իրավիճակի հետևանքները:

4. «Աշխատանքի շուկայի վերլուծություն», 2006-2008, ՀՀ ԿԲ-ի դրամաշնորհ (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Ղարիբյան): Հետազոտությունն իրականացվել է 2007-2008 թվականներին ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 6129 տնային տնտեսությունների հարցման արդյունքներով: Բացահայտվել են տնային տնտեսությունների անդամների ժողովրդագրական առանձնահատկությունները, աշխատանքի շուկայում զբաղվածությունը և գործազրկությունը: Արտագաղթի և աշխատուժի միգրացիոն հոսքերի վերլուծություններով բացահայտվել են աշխատանքի շուկայի տեսանելի և անտեսանելի լարվածության գործակիցները:

5. Երևանի պետական համալսարանի և Կանադայի (Օտտավա) Առևտրային քաղաքականության և իրավունքի կենտրոնի (ԱՔԻԿ) միջև կնքված 2002-2004 թթ. համագործակցության շրջանակներում Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ընտրվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության գծով հանրապետությունում կադրեր պատրաստող օղակ: Տվյալ համագործակցության շրջանակներում կատարվել է նաև «ԱՀԿ անդամակցության ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության վրա» թեմայով հետազոտություն (աշխատանքային խմբի ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյան):

### *Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն*

1. «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն», ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 2024-2029 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ. Ե. Հակոբյան):

2. «ՀՀ զբոսաշրջության զարգացման հեռանկարային ուղղությունները և տնտեսական ցուցանիշների վրա զբոսաշրջության ազդեցության գնահատումը», Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) գիտահետազոտական գործունեության խթանման դրամաշնորհ, 2020-2021 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյան):

3. «Էներգետիկայի շուկայում կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը էլեկտրաէներգիայի գների վրա», Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ԳԿՀԱՀ/ANSEF), 2016-2017 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ. Վ. Մարուխյան):

4. «Փոքր և միջին ձեռնարկություններում բնապահպանական գործունեության խրախուսում», «Կանաչ տնտեսությունն Արևելյան գործընկերության երկրներում» ԵՄ նախաձեռնության (EaP

GREEN) ծրագիր, 2014-2015 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյան):

5. «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների կազմակերպում: Միջբուհական մագիստրոսական կրթական ծրագիր», Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2006 թ., (ղեկավար՝ տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյան):

6. «NIS College and University Partnership Program», Կալիֆոռնիայի պետական համալսարան, 2004-2005 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Մ. Բունիաթյան):

### *Ֆինանսահաշվային ամբիոն*

Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր Վ. Բոստանջյանի և դոցենտ Գ. Կիրակոսյանի կողմից իրականացվել են մի շարք դրամաշնորհային նախագծեր, որոնք ֆինանսավորվել են ՀՀ գիտության կոմիտեն և ՀՀ կենտրոնական բանկին կից գործող «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամը: Դրանք են.

1. «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», 2017 թ.:

2. «Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 2017-2018 թթ.:

3. «Ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», 2018-2019 թթ.:

4. «Վարկային ռեսուրսների տրամադրման գործընթացի կատարելագործման և պատասխանատու վարկավորման մեխանիզմների զարգացման հեռանկարները ՀՀ-ում», 2021-2023 թթ.:

### *Կառավարման և գործարարության ամբիոն*

1. «Մարդկային կապիտալի կառավարման հիմնախնդիրներն ու լուծումները Հայաստանի Հանրապետությունում», ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 2024-2029 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան):

2. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները թվային փոխակերպումների պայմաններում», ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 2024-2027 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյան):

3. «Արցախից բռնի տեղահանված ուսանողների ադապտացման տնտեսական և հոգեբանական խնդիրները բարձրագույն ուսումնական հաստատություններում», ԵՊՀ ներքին դրամաշնորհ, 2024-2025 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյան): Հետազոտության նպատակն է եղել բացահայտել Արցախից բռնի տեղահանված ուսանողների ադապտացման տնտեսական և հոգեբանական խնդիրները, առաջադրել դրանց բացասական ազդեցության նվազեցման ուղիներ:

4. «Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով էկոհամակարգային ծառայությունների գնահատում մասնակցային մոտեցմամբ», Ավստրիայի զարգացման համագործակցության (ADC) «Բարձրագույն կրթություն և հետազոտություններ հանուն միջազգային զարգացման համագործակցության» (APPEAR) ծրագիր, 2023-2026 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան): Ծրագիրը հիմնված է քաղաքացիական գիտության, մասնակցային և միջգիտակարգային մոտեցումների վրա, որում ներգրավված են տարբեր շահագրգիռ կողմեր: Դրամաշնորհային ծրագրի նպատակն է զարգացնել Երևանի պետական համալսարանի ու Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կարողությունները էկոհամակարգային ծառայությունների գնահատման և կիրառման ուղղությամբ:

5. «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում», ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե, 2021-2024 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան): Հետազոտության շրջանակում խնդիր է դրվել ուսումնասիրել բուհ-կազմակերպություն համագործակցության կառուցակարգերը, վեր հանել առկա խնդիրները և նախանշել միջոցառումներ դրանց բարելավման ուղղությամբ:

6. «Պետության կայացվածության և տնտեսական զարգացման փոխկապվածության հիմնահարցերը ՀՀ-ում», ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե, 2019-2021 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան):

7. «Պետության ինստիտուտների կայացվածությունը որպես տնտեսական աճի ապահովման հիմնական գործոն», ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե, 2018-2020 թթ. (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյան):

8. «Միգրացիա. միտումներ, հետևանքներ», Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և Քոլոլիան հիմնադրամի «Դեմոգրաֆիա և բնակչություն» դրամաշնորհային ծրագիր, 2012-2013 թթ. (ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Սարգսյան):

9. «Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը», 2001 թ., Ռազմավարական և ազգային հետազոտությունների ազգային կենտրոն (ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Սարգսյան): Հետազոտության շրջանակում լուսաբանվել են Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական քաղաքականության ընտրովի հարցեր, տնտեսության իրական հատվածում և այլ ոլորտներում արձանագրված հիմնական

արդյունքները և կատարված վերլուծությունների ու ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել են իրավիճակի բարելավման որոշ լուծումներ:

**«Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով**

2013-2017 թթ., 5 տարի անընդմեջ ֆակուլտետի, ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորման և Ուսանողական գիտական ընկերության համատեղ ջանքերով կազմակերպվել է **«Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովը**: 5 տարիների ընթացքում գիտաժողովը հնարավորություն է ընձեռել ուսանողներին և երիտասարդ գիտնականներին ներկայացնելու սեփական հետազոտություններն ու վերլուծությունները, նպաստել է գիտության ոլորտում առաջին քայլերն անող տնտեսագետ-գիտնականներին ստանալ ավագ գործընկերների աջակցությունն ու խորհուրդները, յուրօրինակ հարթակ է եղել գաղափարների փոխանակման, շահագրգիռ քննարկում ծավալելու, ինչպես նաև արդյունավետ համագործակցություն ծավալելու համար: Յուրաքանչյուր տարի գիտաժողովից հետո մասնակիցների աշխատանքները, որոնք հաղթահարել են գիտական փորձաքննությունը և երաշխավորվել հրատարակության, տպագրվել են առանձին՝ գիտաժողովի նյութերի ժողովածուում, որը ներառվել է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի ժողովածուների ցանկում: Աղյուսակ 6.5-ում ներկայացված է գիտաժողովի մասնակիցների և հրատարակված աշխատանքների քանակներն ըստ տարիների:

**Աղյուսակ 6.5**

**«Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի մասնակիցների և հրատարակված աշխատանքների քանակները, 2013-2017թթ.**

| Տարեթիվը | Մասնակիցների քանակը | Հրատարակված գիտական աշխատանքների քանակը |
|---|---|---|
| 2013թ. | 73 | 59 |
| 2014թ. | 80 | 51 |
| 2015թ. | 101 | 45 |
| 2016թ. | 92 | 46 |
| 2017թ. | 65 | 37 |












## ԵՊՀ հրատարակչությունում հրատարակված որոշ գրքեր
















































*ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024 թ. հոկտեմբերի 8-10-ը անցկացվեց «Փոխակերպվող տնտեսություն. թվային տեխնոլոգիա, տարածական անհամամասնություններ և կյանքի որակ» խորագրով միջազգային եռօրյա գիտաժողովը՝ նվիրված ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին:*

Գիտաժողովին մասնակցում էին Հարվարդի, Սորբոնի, Ազորեի, Նիդեռլանդների, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական, Սանկտ Պետերբուրգի համալսարանների, Հարվարդի բիզնես դպրոցի և այլ համալսարանների շուրջ 40 անվանի գիտնականներ աշխարհի ավելի քան 22 երկրներից՝ ԱՄՆ-ից, Բրազիլիայից, Չիլիից, Ֆրանսիայից, Իտալիայից, Իսպանիայից, Պորտուգալիայից, Նիդեռլանդներից, ՌԴ-ից, Հնդկաստանից և այլ երկրներից:

Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին ԵՊՀ ռեկտորը, պրոռեկտորները, դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՀՀ ԿԲ խորհրդի անդամներ, պաշտոնատար անձինք, ՀՀ այլ բուհերի ղեկավարներ, հյուրեր:

Եռօրյա գիտաժողովի համակարգված աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին նաև Հայաստանի այլ բուհերի գիտնականներ և հետազոտողներ, մասնագիտական ոլորտում ճանաչված փորձագետներ, ՀՀ պետական կառավարման, ինչպես նաև ֆինանսաբանկային ոլորտի և առաջատար կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ներկայացվեցին ավելի քան 70 զեկույցներ յոթ թեմատիկ բաժանմունքներում:









MARTIN GALSTYAN
GOVERNOR OF CENTRAL
BANK OF ARMENIA
ARMENIA


Data
C.A.R.S
RSAI


TWO QUESTIONS













**«Բանբեր Երևանի համալսարանի»** հասարակական գիտությունների քառամսյա հանդեսը լույս է տեսնում 1967 թվականից: 2010-2014 թթ. «Բանբերը» շարունակել է լույս տեսնել նույն պարբերականությամբ, բայց արդեն մասնագիտական վեց շարքով: Սկսած 2015 թվականից, համաձայն ՀՀ գրապալատի պահանջների, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի շարքերը դարձել են առանձին հանդեսներ՝ իրենց անհատական միջազգային համարանիշներով: 2020 թ. հունվարից սկսած, ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ, **«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»** հանդեսը վերակազմավորվել է երկու առանձին հանդեսների՝ «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա», **«Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն»:**

**«Բանբեր Երևանի համալսարանի»**







«Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն» հանդեսը ժամանակակից գիտական հանդես է: Հրատարակում է գիտական հոդվածներ և ուսումնասիրություններ տնտեսագիտության բոլոր բնագավառներում, որոնք կարող են լինել ինչպես տեսական բնույթի, այնպես էլ կիրառական: Հանդեսն ընդունում է բնօրինակ հոդվածներ և համապարփակ ուսումնասիրություններ, որոնք նախկինում չեն հրապարակվել: Ընդգրկված է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի սահմանած՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են ֆակուլտետում դասավանդող մասնագետները, ինչպես նաև արտասահմանյան նշանավոր գիտնականներ: Հանդեսի խմբագրական խորհուրդը ձգտում է ընդլայնել հեղինակների շրջա-

նակը՝ հրավիրելով հետազոտողներ աշխարհի տարբեր բուհերից: Խմբագրական խորհրդի համար առանցքային է այն, որ գիտական նյութերի հեղինակներն ու գրախոսները ծանոթ են իրենց նկատմամբ ներկայացվող պահանջներին: Խորհուրդն ընդունում է անաչառ որոշումներ, որոնք բացառապես հիմնված են տրամադրված նյութերի մասնագիտական մակարդակի և որակի վրա:

Գիտական հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ, և արդեն 2023 թվականից հոդվածները հրատարակվում են միայն անգլերեն լեզվով:

«Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն» գիտական հանդեսը գործում է **խմբագրական խորհրդի հետևյալ կազմով՝**

- **Գլխավոր խմբագիր՝ Կառլեն Խաչատրյան**, տ.գ.թ., դոց., Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ԵՊՀ, Հայաստան,
- **Հայկ Սարգսյան**, տ.գ.դ., պրոֆ., Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, ԵՊՀ, Հայաստան,
- **Արամ Առաքելյան**, տեխ.գ.դ., պրոֆ., Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, ԵՊՀ, Հայաստան,
- **Ռուբեն Գևորգյան**, տ.գ.դ., պրոֆ., Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, ԵՊՀ, Հայաստան,
- **Վարդան Բոստանջյան**, տ.գ.դ., պրոֆ., Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, ԵՊՀ, Հայաստան,
- **Պերճ Բերբերօղլու**, տ.գ.դ., պրոֆ., Գլոբալ ուսումնասիրությունների Օզմենի ինստիտուտի տնօրեն, Նևադայի համալսարան, ԱՄՆ,
- **Վլադիմիր Աւիրյան**, տ.գ.թ., պրոֆ., Բարսելոնայի տնտեսագիտության դպրոց, Իսպանիա,
- **Վահագն Ջրբաշյան**, տ.գ.թ., դոցենտ, Տնտեսագիտության տեսության ամբիոն, Բարսելոնայի համալսարան, Իսպանիա,
- **Յակով Յադգարով**, պրոֆ., ՌԴ կառավարությանը կից ֆինանսական ակադեմիա, ՌԴ,
- **Վիկտոր Սիդորով**, պրոֆ., Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, Կուբանի համալսարան, ՌԴ,
- **Սերգեյ Քալենջյան**, տ.գ.դ., պրոֆ., Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի դեկան, ՌԴ Նախագահին կից ժողովրդական տնտեսության և հանրային ծառայության ռուսական ակադեմիա, ՌԴ:

**«Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը»** ստեղծվել է որպես Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտահետազոտական և փորձագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որի նպատակը գիտավերլուծական հետազոտությունների իրականացումն է:

2017 թվականի հունվարի 1-ից հասարակական հիմունքներով տնօրեն է նշանակվել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Լևոնի Սարգսյանը:

ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. դեկտեմբերի 20-ի նիստի որոշմամբ հաստատվել է կենտրոնի կանոնադրությունը, որում ամրագրվել են, մասնավորապես, հետևյալ նպատակները.

- բացահայտել և վերլուծել սահմանադրական տնտեսագիտության ոլորտի իրավական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները, իրականացնել դրանց լուծումների վերաբերյալ գիտական առաջարկներ, որոնք կնպաստեն հասարակության կայուն զարգացման քաղաքականության մշակմանը,
- աջակցել սահմանադրական տնտեսագիտության ոլորտում գիտակրթական ու հետազոտական ծրագրերի մշակմանը և սահմանադրական տնտեսագիտության միջազգային լավագույն փորձի ներդրմանը,





- պետական կառույցների հետ համատեղ մշակել տարբեր ոլորտներին առնչվող տնտեսական քաղաքականության սկզբունքներ, հաշվի առնելով սահմանադրական կանոնների ազդեցության կա-

ռուցակարգերը և կիրառելիության առանձնահատկությունները,

- մշակել տնտեսական քաղաքականության մեջ կիրառելի սկզբունքներ և գործիքակազմ, որոնք կբարելավեն կառավարչական որոշումների գիտական հիմնավորումները,
- ԵՊՀ-ի դասախոսներին և սովորողներին սահմանադրական տնտեսագիտության հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար օժանդակել համապատասխան միջավայրի ստեղծմանը,
- հրատարակել կենտրոնում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները, մշակված ծրագրերը, մենագրությունները և ուսումնաօժանդակ նյութերը:

Կենտրոնը, 2017 թվականից սկսած, հետազոտություններ է իրականացրել, մասնավորապես, «Սահմանադրականություն» և «Ազգային անվտանգություն» գիտական հիմնախնդիրների լուսաբանման ու լուծումների բնագավառներում: Այդ նպատակով պարբերաբար կազմակերպվել են գիտական սեմինարներ, պատկան մարմիններին ու գիտագործնական խորհրդաժողովներում ներկայացվել են զեկուցումներ, հրատարակվել են գիտական հոդվածներ և մենագրություններ:

***Կենտրոնն իր գործունեության 6 տարիների ընթացքում իրականացրել է հետևյալ աշխատանքները.***

**1. Գիտահետազոտական և թեմատիկ գործունեություն**

✓ 2021-2023 թթ.՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացրել է «Տնտեսության թվային վերափոխումների կարգավորումը ՀՀ-ում. գործիքներ և ռեժիմներ» թեմայով ծրագիրը:

✓ 2021-2022 թթ.՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացրել է «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» թեմայով ծրագիրը (Պայմանագիր № ՏՀ-4):



✓ 2019-2021 թթ.՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացրել է «Գների կայունության և ֆինանսական կայունության փոխազդեցությունները և ներդաշնակեցման խնդիրները» թեմայով ծրագիրը (Պայմանագիր № ՏՀ-2):

✓ 2019-2020 թթ.՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացրել է «ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները» թեմայով ծրագիրը (Պայմանագիր № 10-3/19T-5B):



✓ 2017-2019 թթ.՝ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացրել է «ՀՀ Կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ Սահմանադրության կարևոր նորմ» թեմայով ծրագիրը (Պայմանագիր № ՏՀ-1):

✓ 2016-2018 թթ.՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացրել է «Սահմանադրական գնահատման հետազոտական ծրագիրը» (Պայմանագիր № 10-3/15T-47):

**2. Հիմնական հրապարակումներ**

✓ Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, «Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման հիմնախնդիրները», Երևան, Զանգակ հրատարակչություն, 2017 թ., 139 էջ:

✓ Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան «Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը», Երևան, Զանգակ հրատարակչություն, 2018 թ., 206 էջ:

✓ Ռ. Գևորգյան, Հ. Ղահրամանյան, Ժ. Մխիթարյան, Վ. Սարգսյան, «ՀՀ ԿԲ անկախությունը սահմանադրականության համատեքստում», Երևան, Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2019 թ.:

✓ Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Կ. Մինասյան, Ժ. Մխիթարյան, Հ. Զաքարյան, «ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները», ԵՊՀ հրատարակչություն, 2020 թ.:

✓ Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Կ. Ավետիսյան, Ժ. Մխիթարյան, Վ. Սարգսյան, Կ. Մինասյան, Հ. Զաքարյան, «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում»,

Մաս 2, ԵՊՀ հրատարակչություն, 2023 թ.:

**3. Մասնակցություն միջազգային գիտաժողովներին**

✓ Challenges of Spiritual and Legal Behavior of the Contemporary Individual and Imperatives of Their Overcoming, միջազգային գիտաժողով, 2017 թ., Հռոմ, զեկուցման թեմա՝ "Constitutionalism: issues of diagnostics, monitoring and administration"

✓ Феномен рыночного хозяйства: от истоков до наших дней. Партнерство в условиях риска и неопределенности, միջազգային գիտաժողով, Սոչի, 2020 թ., զեկուցման թեմա՝ «Экономическая революция в контексте трасформационных процессов рыночного хозяйства Армении»

✓ Рыночные трансформации: новые бизнес-модели, инновационные технологии, практика решений, միջազգային գիտաժողով, Սանկտ Պետերբուրգ, 2021 թ., զեկուցման թեմա՝ «Проблемы конституционализации экономических отношений»

**4. Դասընթացների կազմակերպում**

2018թ. ապրիլ-օգոստոս ամիսներին կենտրոնը կազմակերպել է «R ծրագրային փաթեթը սկսնակների համար» խորագրով դասընթացը, իսկ 2018 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին՝ «SPSS փաթեթի հիմունքները» դասընթացը, որը վարում էր ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր Ռ. Գևորգյանը: Դասընթացներին մասնակցում էին չորս տասնյակից ավելի ուսանողներ, ասպիրանտներ և դասախոսներ: Դասընթացն ավարտած մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

**5. Խորհրդաժողովների և սեմինարների կազմակերպում**

✓ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նախաձեռնած՝ *«Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները»* թեմայով խորհրդաժողով, 2018 թ.:

✓ ՀՀ ԿԲ «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի և կենտրոնի կազմակերպած՝ *«Կենտրոնական բանկի անկախությունը՝ որպես ՀՀ սահմանադրականության կարևոր նորմ»* թեմայով գիտաժողով, 2019 թ.:



# 7 Ֆակուլտետի միջազգային կապերը



ԵՊՀ կազմում ֆակուլտետի վերաբացումից կարճ ժամանակ անց, 1990-ական թվականներից սկսած, ընդլայնվեց ֆակուլտետի միջազգային կապերի աշխարհագրությունը՝ շնորհիվ ԱՊՀ երկրներից զատ տարածաշրջանային այլ երկրների հետ ակտիվ համագործակցության: 2000-2013 թթ. ֆակուլտետի միջազգային կապերը համակարգել է Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը՝ ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Շ. Թորոսյանի ղեկավարությամբ: Այդ գործառույթը, 2013-2014 թթ. իրականացրել է Թ. Ն. Մանասերյանը, իսկ 2015 թ.-ից սկսած, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության հետ սերտ գործակցությամբ, իրականացնում է տ.գ.թ., դոցենտ Գ. Ռ. Հայրապետյանը՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչը:



ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի միջազգային կապերի խթանմանը էապես նպաստել են փոխանակման, կրթական և հետազոտական բազմաթիվ ծրագրերը, ինչպես նաև միջբուհական համագործակցության և «Էրազմուս+» ծրագրի վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկատվությունը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների ակտիվությունը հիմնականում դրսևորվել է հետևյալ ուղղություններով.

- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,
- միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն,
- միջազգային գիտահետազոտական սեմինարներին և գիտաժողովներին մասնակցություն,
- գիտահետազոտական սեմինարների և գիտաժողովների կազմակերպում,
- Հայաստանի և արտասահմանյան մի շարք հեղինակավոր համալսարանների հետ համագործակցություն,
- արտերկրի համալսարաններում վերապատրաստում,
- արտերկրի համալսարաններում՝ որպես հրավիրյալ պրոֆեսոր, դասախոսական աշխատանքի իրականացում:

Ֆակուլտետի միջազգային գործունեության ամենաակնառու ուղղությունը **ուսանողների այցերն են** սովորելու նպատակով **(«Erasmus+», կրկնակի դիպլոմ)**: Ֆակուլտետում գործում են **երկու մագիստրոսական ծրագրեր**՝ «Կառավարում» մասնագիտությամբ **«Գործարար վարչարարություն (կառավարում)»,** «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ **«Միջազգային տնտեսական հարաբերություններ»**, որոնք համագործակցում են Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի հետ:

2015-16 ուստարում ԵՊՀ-ի և ԱՊՀ Ցանցային համալսարանի միջև համագործակցության շրջանակներում ֆակուլտետն ունեցել է մագիստրատուրայի 2 շրջանավարտ, որոնք գերազանց հանձնել են ավարտական քննությունները և ստացել կրկնակի դիպլոմներ: Նույն ուստարում ֆակուլտետի 3 ուսանող փոխանակման տարբեր ծրագրերով ուսումը շարունակել է արտասահմանում (Բուլղարիա, Պորտուգալիա և Չինաստան): Հաջորդ երկու ուստարիներին (2016-17, 2017-18) ևս ԵՊՀ-ի և ԱՊՀ Ցանցային համալսարանի միջև համագործակցության շրջանակներում ֆակուլտետն ունեցել է 2-ական շրջանավարտ:



2016-17 ուստարում ԵՊՀ-ի և Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի միջև սկիզբ առած համագործակցության շրջանակներում ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի 4 ուսանող, նշյալ հաստատությունում ուսումը շարունակելու համար հանձնել է քննություն և ստացել գերազանց գնահատական, ինչը նրանց հնարավորություն է տվել

ստանալու ուսման վարձի 50% զեղչ: Նրանք իրենց ուսման երկրորդ տարին շարունակել են Տնտեսագիտության բարձրագույն դպրոցում և ավարտելով ստացել են կրկնակի դիպլոմ: Նույն ուստարում փոխանակման տարբեր ծրագրերով արտասահմանում (Բուլղարիա, Պորտուգալիա, ՌԴ) ուսումը շարունակել է ֆակուլտետի 6 ուսանող, իսկ հաջորդ երկու ուստարիներին համապատասխանաբար՝ 2017-18 ուստարում 2 ուսանող (Իսպանիա, Իտալիա), 2018-19 ուստարում 1 ուսանող (Իսպանիա):

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում փոխանակման ծրագրերի շրջանակներում ռուսերենով և անգլերենով բարձր արդյունավետությամբ **դասընթացներ** են կազմակերպվել **օտարերկրյա ուսանողների համար**: 2016-2017 ուստարում ԵՊՀ-ի և Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) միջև համագործակցության շրջանակներում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում անհատական ծրագրով դասընթացներ («Համաշխարհային տնտեսություն» և «Միջազգային տնտեսագիտություն») է անցել Էլիզա Գամբերինին, իսկ ԵՊՀ-ի և Պրահայի տնտեսագիտության համալսարանի միջև համագործակցության շրջանակներում անհատական ծրագրով դասընթացներ է անցել Չեխիայի քաղաքացի Նատալիա Միլդովան:

2018-2019 ուստարվա առաջին կիսամյակում, ԵՊՀ-ի և Գերմանիայի Կիրառական գիտությունների Վորմս համալսարանի միջև համագործակության շրջանակներում, ֆակուլտետն ընդունել է Լեվի Էլիաս Շեյֆերհելդին՝ «Միջազգային տնտեսագիտություն» առարկան անգլերենով ուսանելու համար, իսկ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում՝ Կա Ֆոսկարի համալսարանի ուսանող Տուրետա Յակոբոին՝ «Տնտեսագիտական մտքի պատմություն» առարկան անգլերենով ուսանելու համար: Նույն ուստարվա երկրորդ կիսամյակում, ԵՊՀ-ի և Գերմանիայի Մաղդեբուրգի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում, ընդունվել է Ֆելիքս Զահինին՝ «Առևտրային քաղաքականություն և ԱՀԿ» առարկան անգլերենով ուսանելու համար:

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում, ԵՊՀ-ի և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում, ֆակուլտետն ընդունել է նույն համալսարանի ուսանողուհի Աննա Հակոբյանին անհատական ծրագրով “Personnel Management” (3 կրեդիտ) և “Fundamentals of Management” (4 կրեդիտ) դասընթացները անգլերենով անցնելու համար: Հաջորդ ուստարում՝ 2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակում, ֆակուլտետն ընդունել է նույն համալսարանի ուսանողուհի Եկատերինա Պետրովային: 2022-23 ուստարվա առաջին կիսամյակում, ԵՊՀ-ի և Վոլգոգրադի պետական համալսարանի միջև համագործակցության շրջանակներում, նույն համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի, ՌԴ քաղաքացի Մարիա Խաչատրյանը ուսումնառել է ֆակուլտետում:

Միջազգային համագործակցության համատեքստում առանձնահատուկ կարևորություն են ունեցել **օտարերկրացի դասախոսների այցերը:**



2015-16 ուստարում ֆակուլտետում կազմակերպվել է չորս բաց դասախոսություն հրավիրված արտասահմանյան դասախոսների կողմից Պիտեր Թումանով (Մարկետի համալսարան, ԱՄՆ, թեմա «Համեմատական տնտեսական համակարգեր և զարգացում», 09 ապրիլ 2016թ.), Սերգեյ Սարկիսյան (ՄաքԳիլ համալսարան, Կանադա, թեմա «Թիմային աշխատանքի կառավարում և ընկերության արտադրողականություն», 16 մայիս 2016թ.), Նադեժդա Չապկինա (ՌԴ Հյուսիս-Արևելյան պետական համալսարան, Մագադան, 23 մայիս 2016թ.), Թերեզա Դաբան Սանչես (Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար, 25 մայիս 2016թ.):

ԵՊՀ-ի և Բելգորոդի ազգային հետազոտությունների համալսարանի միջև համագործակցության շրջանակներում 2016թ. դեկտեմբերի 20-ին Սվետլանա Կուչերյավենկոն (Թեմա՝ «Ռիսկերի կառավարումը փոքր ու միջին ձեռնարկություններում») և Օքսանա Վագանովան (Թեմա «Ռուսաստանի տնտեսության ինովացիոն զարգացման հնարավորությունները և հիմնախնդիրները») բաց դասախոսություն են կարդացել ֆակուլտետի ուսանողների համար: Այս համագործակցության շրջանակներում Բելգորոդի «Գիտական արդյունք - Տնտեսագիտական հետազոտություններ» պարբերականում ֆակուլտետից երկու գիտական հոդված է հրատարակվել (պրոֆեսոր Ս. Լ. Ղանթարջյան, դոցենտ Գ. Ռ. Հայրապետյան):

2018 թ. հունիսի 13-ին ֆակուլտետում բաց դա-

սախոսություն է կարդացել Ղազախստանի ֆինանսների նախարարության հաշվապահական մեթոդաբանության վարչության պետ, ԱՊՀ երկրների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության խորհրդատվական խորհրդի նախագահ Արմանաի Բեկտուրովան:

2019 թ. նոյեմբերի 12-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական քաղաքականության նախարար Թիմուր Մեկեշևիչը ֆակուլտետի ուսանողների համար բաց դասախոսություն է կարդացել «Եվրասիական ինտեգրման զարգացումը տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների ոլորտներում» թեմայով:

«Էրազմուս+» ծրագրի շրջանակներում 2022-23 ուստարվա երկրորդ կիսամյակում Մասառիկի համալսարանից (Չեխիա) Լիբոր Զիդեկը ֆակուլտետի 2-րդ կուրսի «Տնտեսագիտություն» և «Կառավարում» մասնագիտությամբ ուսանողների համար կարդացել է «Համաշխարհային տնտեսություն» առարկան (8 ժամ):



Լյուքսեմբուրգի համալսարանի
պրոֆեսոր Անդրեաս Իրմենին ԵՊՀ
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում
Եվրոպական բիզնես դպրոցի (Պորտուգալիա)



պրոֆեսոր Անա Պինտո Բորխեսը ԵՊՀ
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում

2023-2024 ուստարում ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություններ են կարդացել Լյուքսեմբուրգի համալսարանի իրավագիտության, տնտեսագիտության և ֆինանսների ֆակուլտետի դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Իրմեն, Պորտուգալիայի Եվրոպական բիզնես դպրոցի դասախոս Անա Պինտո Բորջեսը, Վիլնյուսի Գեդիմինասի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Դաիվա Մակուտենիենեն և Վասեդա համալսարանի (Ճապոնիայի մեծությամբ երկրորդ համալսարան) դոկտոր, պրոֆեսոր Յասույուկի Տոդոն:



Վասեդա համալսարանի (Ճապոնիա)
պրոֆեսոր Յասույուկի Տոդոն ԵՊՀ
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում



Վիլնյուսի Գեդիմինասի տեխնիկական համալսարանի
պրոֆեսոր Դաիվա Մակուտենիենեն ԵՊՀ
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում

ԵՊՀ-ի և արտասահմանյան մի շարք համալսարանների միջև համագործակցության շրջանակում ֆակուլտետում **ստաժավորում են անցել օտարերկրյա մեր գործընկերները**:

ԵՊՀ-ի և Աստանայի Լ.Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում մագիստրանտ Սեյդուլա Ժանդոսը 2016 թ. դեկտեմբերի 2-10-ը իր գիտահետազոտական ստաժավորումը անցկացրել է Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում: ԵՊՀ-ի և Սանկտ Պետերբուրգի պե-

տական համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2022-23 ուստարվա երկրորդ կիսամյակում Իրինա Լյալինան ընդունվել է ֆակուլտետ՝ որպես ստաժոր:

ԵՊՀ-ի և Կազանի Ազգային հետազոտական տեխնոլոգիական համալսարանի միջև համագործակցության շրջանակներում Կազանի Ազգային հետազոտական տեխնոլոգիական համալսարանի լոգիստիկայի և կառավարման ամբիոնի վարիչ, Ալեքսեյ Իվանի Շինկևիչը, Նաիրա Վարդի Բարսեղյանը, Ֆարիդա Ֆիդաիլի Գալիմուլլինը 2023 թ. սեպտեմբերի 2-11-ը գտնվել են ֆակուլտետում՝ որպես ստաժոր:

Ֆակուլտետի միջազգային կապերի զարգացման տեսանկյունից կարևորվում են **առկա համագործակցությունների հետագա հնարավորությունների ընդլայման** և **նոր համագործակցությունների հաստատման նպատակով կազմակերպված այցերը**:

2019 թ. ապրիլի 25-ին Իսպանիայի Վալյադոլիդի համալսարանի Տնտեսագիտության և բիզնես կառավարման ֆակուլտետի դեկանը և միջազգային կապերի գծով պատասխանատուն (Մարիա Գոմես Գարսիա և Բենջամին Պենյաս Մայանոնի) այցելել են ֆակուլտետ համագործակցության հետագա հնարավորությունները քննարկելու համար:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և «Cbonds» կազմակերպության միջև 2022 թ. սեպտեմբերի 14-ին ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ հաստատելու գիտակրթական փոխգործակցություն և համատեղ ջանքերով իրականացնելու կրթական, գիտական և հետազոտական աշխատանքներ, այդ թվում՝ գործնական պարապմունքներ:

2023 թ.-ից ֆակուլտետում Ավստրիայի զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվում է «Մասնակցային մոտեցմամբ էկոհամակարգային ծառայությունների գնահատում՝ Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով» («EcoServ») 4-ամյա գիտական ծրագիրը, որի նպատակն է մշակել էկոհամակարգային ծառայությունների գնահատման շրջանակ հայաստանյան մակերևութային ջրային ռեսուրսների համար, ինչպես նաև ոլորտում կատարել որոշակի կրթական բարեփոխումներ: Այս ծրագիրը ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետն իրականացնում է Վիեննայի բնական ռեսուրսների և կյանքի մասին գիտությունների համալսարանի և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ:





«ECOServ» ծրագրի մեկնարկային հանդիպումը ԵՊՀ-ում



2023թ. ուստարվա առաջին կիսամյակում Ջորջ Վաշինգտոնի համալսարանի “Office of Innovation & Entrepreneurship” կենտրոնի ներկայացուցիչներ Kerry Slattery-ի և Robert Smith-ի հետ կազմակերպվել է հեռահար հանդիպում քննարկում: Այնուհետև դեկտեմբերի 7-ին ֆակուլտետ են այցելել Ջորջ Վաշինգտոնի համալսարանի “Office of Innovation & Entrepreneurship կենտրոնից” Kerry Slattery-ին և Robert Smith-ը՝ ֆակուլտետի հետ համագործակցության հնարավորությունները տեղում քննարկելու համար:

2024թ. հունվարի 19-ին ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ է այցելել Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության դպրոցի դոցենտ Ինեսսա Ավանեսովան: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ և բազմակողմ ձևաչափերով նոր գործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

Ֆակուլտետի միջազգային կապերը համակարգող տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանը ակտիվորեն մասնակցել է **վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը**: ԵՊՀ կողմից իրականացվող «I-Net» ծրագրի շրջանակներում 2015-2016 ուստարում Տնտեսագիտության և

կառավարման ֆակուլտետում և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում Գրիգոր Հայրապետյանն իրականացրել է վերապատրաստման դասընթացներ համալսարանի միջազգայնացման գործընթացը առավել աշխուժացնելու նպատակով, որին մասնակցել են նշված ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի ավելի քան 35 ներկայացուցիչ: Նույն ուստարում՝ 2016թ. նոյեմբերի 23-ին, ֆակուլտետը մասնակցել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կազմակերպած «Տնտեսական զարգացման ջանքերը Հայաստանում» թեմայով կլոր սեղանին:



Հանդիպում Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մոսկովյան տնտեսագիտության դպրոցի դոցենտ Ինեսսա Ավանեսովայի հետ

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի երկու դասախոսներ (Նաիրուհի Ջրբաշյան, Արամ Կարապետյան) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ինչպես նաև Ուկրաինայի և Ուզբեկստանի իրենց գործընկերների հետ 2019 թ. փետրվարի 13-26-ը մասնակցել են **«Erasmus+ TOPAS» եվրոպական ծրագրի** շրջանակում Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանում (HSWT) կազմակերպված ինտենսիվ **վերապատրաստման դասընթացին:**

ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ 2021 թ. սեպտեմբերի 28-ին ֆակուլտետում կազմակերպվել է միասնական դաս նվիրված ԱՊՀ 30-ամյակին: Դասը վարել է Գրիգոր Հայրապետյանը, դասին մասնակցել են մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները:

2024 թ. մայիսի 16-ին Թուրքմենստանի պետական տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի կողմից կազմակերպված միջազգային բաց հեռահար օլիմպիադային մասնակցած ֆակուլտետի 4 ուսանողներից երկուսը գրավել են առաջին, իսկ մյուս երկուսը՝ երկրորդ տեղերը: Առաջին տեղերը զբաղեցրած ուսանողներն են՝ Զինա Ղազարյանը և Ալեն Ղազարյանը, իսկ երկրորդ տեղերը՝ Աիդա Գյուրջօղլյանը և Էվա Միրզոյանը: Օլիմպիադային մասնակցած ուսանողների խմբի ղեկավարն էր տ.գ.թ., դոցենտ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ Գրիգոր Հայրապետյանը:



Զինա Ղազարյան



Ալեն Ղազարյան



Էվա Միրզոյան



Աիդա Գյուրջօղլյան

Աղյուսակ 7.1-ում և 7.2-ում ամփոփ ներկայացված են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի միջազգային համագործակցությունը բնութագրող ցուցանիշները՝ ըստ տարածաշրջանների, ուստարիների՝ 2016-2021 թթ.:

**Աղյուսակ 7.1**

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի օտարերկրյա ուսանողների (այդ թվում նախապատրաստական) թիվը ըստ ուստարիների, 2016-2021 թթ.**

| Ուստարի | Բակալավրիատի և նախապատրաստական ուսանողների թիվը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1 կուրս | 2 կուրս | 3 կուրս | 4 կուրս | Ընդամենը |
| 2016-2017 | 4 | 5 | 6 | 8 | 23 |
| 2017-2018 | 2 | 4 | 3 | 6 | 15 |
| 2018-2019 | 7 | 2 | 4 | 3 | 16 |
| 2019-2020 | 6 | 7 | 2 | 5 | 20 |
| 2020-2021 | 7 | 5 | 5 | 3 | 20 |

Աղյուսակ 7.2

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մասնագետների, ասպիրանտների և ուսանողների արտասահմանյան գործուղումները ըստ ուստարիների, 2016-2020 թթ.**

| ԵՐԿՐՆԵՐ | 2016-2017 ուստարի | | | 2017-2018 ուստարի | | | 2018-2019 ուստարի | | | 2019-2020 ուստարի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մասնագետներ | Ասպիրանտներ | Ուսանողներ | Մասնագետներ | Ասպիրանտներ | Ուսանողներ | Մասնագետներ | Ասպիրանտներ | Ուսանողներ | Մասնագետներ | Ասպիրանտներ | Ուսանողներ |
| **ԵՄ երկրներ** | 6 | 4 | 9 | 5 | - | 1 | 5 | - | 3 | 2 | - | 1 |
| **Մեծ Բրիտանիա** | - | - | - | - | - | 1 | 2 | - | - | - | - | - |
| **Շվեյցարիա** | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 | - |
| **ԱՄՆ** | - | - | - | - | - | - | 2 | - | 5 | - | - | - |
| **Ռուսաստան** | 2 | - | - | 2 | - | 5 | 3 | - | 3 | 1 | - | - |
| **Ուկրաինա** | - | - | - | - | - | - | 2 | - | - | - | - | - |
| **Վրաստան** | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **Չինաստան** | - | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - |
| **Իրան** | - | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | 9 | 4 | 11 | 7 | - | 7 | 14 | - | 11 | 3 | 1 | 1 |

2019-2020 ուստարում Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ), «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հետ և «PMI Science»-ի աջակցությամբ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնն իրականացնում է **«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը:** Մագիստրոսական ծրագրի ուսումնական ամբողջ ծրագիրը լիովին ներդաշնակեցված է Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրի հետ:




Սան Խոսեի պետական համալսարանում կրթությունը շարունակելու հնարավորություն ԵՊՀ ուսանողների համար



Ըստ ձեռք բերված համաձայնության՝ ծրագրի մինչև հինգ ուսանողներ երկփուլ ընտրությունը հաղթահարելու դեպքում ուսման երկրորդ տարին, ԵՊՀ-ում իրենց ստացած կրեդիտները փոխանցելով ՍԽՊՀ, հնարավորություն ունեն շարունակելու կրթությունը ՍԽՊՀ «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրում, բարեհաջող ավարտելուց հետո ստանալու տվյալագետի **կրկնակի դիպլոմ** և անցնելու պրակտիկա Սիլիկոնային հովտի կազմակերպություններում: Ծրագրի շրջանակում Սան Խոսեի պետական համալսարանում ուսումը շարունակել են Մարիա Հովհաննիսյանը (2022թ.) և Ալբեր Մակարյանը (2024թ.):




Մարիա Հովհաննիսյան

Մագիստրոսական ծրագրի շրջանակում լավագույն ուսանողները յուրաքանչյուր տարի հնարավորություն ունեն օգտվելու PMI Science-ի աջակցությամբ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (EIF) կողմից տրամադրվող ֆինանսավորման ծրագրից: Այս տարիների ընթացքում մագիստրոսական ծրագրի 83 ուսանողի արդեն իսկ հատկացվել է ֆինանսավորում: Հայ կրթական հիմնարկության կողմից ևս մագիստրոսական ծրագրին կրթաթոշակներ է տրամադրվում, քանի որ կրթական ծրագիրը ներառված է կրթաթոշակային մրցույթի մասնագիտությունների ցանկում:

«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը միացել է «Nvidia» ընկերության՝ ամբողջ աշխարհում առաջարկվող կրթական ծրագրերի նախաձեռնությանը: Երիտասարդ դասախոսներ Գագիկ Չախոյանը և Գևորգ Ղալչյանն արդեն հաստատվել են որպես «Nvidia»-ի «դեսպան»: Նրանք «Nvidia» միակ «դեսպաններն» են ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ տարածաշրջանում: Դա ենթադրում է, որ նշյալ դասախոսները հրավիրվելու են աշխարհի տարբեր համալսարաններ՝ «Nvidia»-ի կրթական տեխնոլոգիաները դասավանդելու և ներկայացնելու համար: Այսպիսի կարգավիճակ ստանալու գործընթացը բավականին բարդ է, և այն կարող են ստանալ միայն աշխարհի առաջատար բուհերի դասախոսները:

Սկսած 2020 թ. սեպտեմբերից՝ «Nvidia»-ի տեխնոլոգիաները կիրառվում են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրում, ինչը հնարավորություն է տալիս նոր մակարդակի բարձրացնելու բարձրագույն կրթության դասավանդման որակը: «Nvidia»-ի հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս, որ ԵՊՀ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը ոչ միայն արտերկրից «գիտելիք ներմուծի», այլև ինքն «արտահանի» որակյալ գիտելիք:

## ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ամբիոնների դասախոսները ակտիվ և արդյունավետ համագործակցում են միջազգային հարթակներում

### *Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն*

***Միջազգային կազմակերպությունների*** հետ համագործակցության մեծ փորձ ունի պրոֆեսոր ***Ռ. Գևորգյանը***՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ (EIF, 2017 թ.), Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների (ISTC) կենտրոն (2017 թ.), «PMI Science Հայաստան» (2017 թ.), Ինժեներական քաղաք (2019 թ.), «Nvidia» ընկերություն (2020 թ.), «Plat AI» (2022 թ.), «Թուրին Թեք» կազմակերպություն, Մեծ Բրիտանիա, Լոնդոն (2023 թ.), «PMI Science Շվեյցարիա» (2023 թ.):

Դոցենտ ***Ն. Ջրբաշյանը*** ևս սերտորեն համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ: Աշխատելով որպես ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի ազգային խորհրդատու և Համաշխարհային բանկի խորհրդատու, Ջրբաշյանը մասնակցել է ՀՀ կառավարության այնպիսի ծրագրային փաստաթղթերի մշակմանը, ինչպիսիք են՝ «Կայուն զարգացման ծրագիրը» (ընդունված ՀՀ Կառավարության 2008 թ. որոշմամբ), «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը» (ընդունված ՀՀ Կառավարության 2014թ. որոշմամբ), «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգը» (ընդունված 2024 թ.), «Հայաստանի պարենային ապահովության և սնուցման ազգային ռազմավարական ուսումնասիրությունը» (2018 թ.), «Հայաստանում հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի զեկույցը» (2010 թ.):



Դոցենտ ***Լ. Սարդարյանը*** 2001-2015 թթ. ՄԱԿ-ի Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրերում աշխատել է որպես փորձագետ, որի շրջանակներում հրատարակվել են մի շարք հետազոտական աշխատանքներ: Միջազգային ծրագրերին ակտիվորեն մասնակցել են դոցենտ ***Կ. Եղոյանը***՝ աշխատելով որպես ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի «Հողի գրանցման ծրագրի» ազգային փորձագետ (2000-2001 թթ.), Շվեյցարահայկական տեխնիկական համագործակցության ծրագրի համակարգող (2002-2003 թթ.), Համաշխարհային բանկի «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման» ծրագրի Ծախսերի վերականգնման ռազմավարության մշակման ազգային խմբի ղեկավար (2003-2023 թթ.), դոցենտ ***Ա. Սարգսյանը***՝ որպես փորձագետ աշխատելով Համաշխարհային բանկի

(2016 թ.), Միգրացիայի միջազգային կազմակերպության (2012 թ.), Միավորված ազգերի կազմակերպության (UNPFA) ծրագրերում (2013 թ., 2017 թ.), դոցենտ ***Ա. Կարապետյանը՝*** հանդես գալով որպես Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի հարցերով խորհրդատու (2001-2002 թթ.), դոցենտ ***Ն. Մարտիրոսյանը՝*** աշխատելով որպես ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Անցում դեպի զարգացում» ծրագրի համակարգող (1996-1997 թթ.), ՀՀ էկոնոմիկայի նախարարության «1996-1998 թթ. պետական ներդրումների ծրագրի» համակարգող (1995 թ.), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի» փորձագետ (2006-2007 թթ.):

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վառ օրինակներից է դոցենտ ***Գ. Ղուկասյանի*** մասնակցությունը ՀՌԿԿ Հայաստանյան կենտրոնի «Data Initiative», «CRRC/IFES Corruption Survey» տվյալների արխիվավորման (2007-2019 թթ.) և «Սիվիլիթաս» հիմնադրամի «Հանրային կարծիքի ուսումնասիրություն» ծրագրի տվյալների արխիվավորման (2010-2014 թթ.) աշխատանքներին, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «ՀՀ համայնքների զարգացում» նախագծի (2006-2012 թթ.) և TEMPUS IV-ECESIS ծրագրի (2009-2010 թթ.) աշխատանքներին:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են ***միջազգային գիտաժողովների:*** Մասնավորապես, պրոֆեսոր ***Վ. Թորոյանը*** մասնակցել է 12-րդ Մինի-Եվրո գիտաժողովին (Բրյուսել, 2002 թ.), Վերլուծական հիերարխիկ պրոցեսների 6-րդ միջազգային սիմպոզիումին (Բերն, 2001 թ.), դոցենտ ***Ռ. Ավետիսյանը՝*** «Հարմոնիկ վերլուծություն և մոտավորություններ, III» միջազգային գիտաժողովին (Երևան, 2005 թ.), պրոֆեսոր ***Ռ. Գևորգյանը՝*** «Emil Artin International Conference» միջազգային գիտաժողովին (Երևան, 2018 թ.), դոցենտ ***Ա. Խառատյանը՝*** «Գլոբալացման պայմաններում սոցիալ-տնտեսական համակարգերի ժամանակակից հիմնախնդիրները», XV Միջազգային գիտագործնական գիտաժողովին (Բելգորոդ, 2021 թ.), «Տնտեսություն և կառավարում» միջազգային գիտաժողովին (Մոսկվա, 2015 թ.), դոցենտ ***Ն. Քոչինյանը՝*** «Տնտեսական համակարգերի փոխակերպումը բուռն (տուրբուլենտ) զարգացման համատեքստում» միջազգային գիտաժողովին (Կուբան, ՌԴ, 2023 թ.), «Համագործակցություն, ռիսկերի և անորոշությունների դիմակայում», VIII միջազգային գիտագործնական գիտաժողովին (Սամարղանդ-Կարշի, Ուզբեկստան, 2020 թ.), *դոցենտ* ***Ա. Կարապետյանը՝*** «E-Gov's E-Government» գիտաժողովին (ԱՄՆ, 2002 թ.), «Կայուն ռեսուրսների կառավարման համար բացերի լրացում և թակարդների վերացում (Filling gaps and removing traps for sustainable resources management)» գիտաժողովին (Գերմանիա, 2019 թ.), դոցենտ ***Ն. Ջրբաշյանը՝*** «Մակրոտնտեսագիտություն և միջազգային տնտեսագիտություն» գիտաժողովին (ԱՄՆ, 2003 թ.), «Tropentag 2019, Միջազգային հետազոտություններ պարենային անվտանգության, բնական ռեսուրսների կառավարման և գյուղատնտեսական զարգացման վերաբերյալ» գիտաժողովին (Գերմանիա, 2019 թ.), դոցենտներ ***Գ. Ղուկասյանը և Ս. Սարգսյանը*** «Էներգաարդյունավետության և էներգախնայողության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովին (Երևան, 2017 թ.), դոցենտ ***Գ. Ղուկասյանը՝*** InWEnT, «էլեկտրոնային ուսուցումը Կովկասում» գիտաժողովին (Վրաստան, 2010 թ.), տ.գ.թ., ասիստենտ ***Ա. Խալաթյանը՝*** «Տարածաշրջանային գիտության եվրոպական ասոցիացիայի (ERSA)» 54-րդ տարեկան գիտաժողովին (Սանկտ Պետերբուրգ, 2014 թ.) և 55-րդ տարեկան գիտաժողովին (Լիսաբոն, 2015 թ.):



Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցում է նաև ***միջազգային գիտահետազոտական տարբեր սեմինարների:*** Պրոֆեսոր ***Ռ. Գևորգյանը*** մասնակցել է Քեմբրիջի համալսարանում կայացած «Տնտեսագիտություն և ֆինանսական շուկաներ» գիտահետազոտական սեմինարին (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2004 թ.), դոցենտ ***Ն. Ջրբաշյանը՝*** Մակրոտնտեսական և սոցիալական ցուցանիշների քարտեզագրման DEVINFO փաթեթի օգտագործողների միջազգային սեմինարին, (Շվեյցարիայի Համադաշնություն, 2004 թ.), դոցենտ ***Ս. Սարգսյանը՝*** SINERGIA- Համակարգված և կայուն էներգաարդյունավետությունը Հայաստանում հետազոտական ծրագրին (Գերմանիա, 2016 թ.):

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկա-

կան մոդելավորման ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են Մոսկվայում կամ Ծաղկաձորում անցկացվող «Բազմաչափ վիճակագրական վերլուծություն, էկոնոմետրիկա և իրական գործընթացների մոդելավորում» միջազգային դպրոց-սեմինարին, որը ներկայումս անվանակոչվել է Ս.Ա. Այվազյանի անվամբ: 2012-2024 թթ. դպրոց-սեմինարի ժամանակ զեկուցումներով հանդես են եկել պրոֆեսորներ ***Ա. Առաքելյանը*** և ***Ռ. Գևորգյանը***, դոցենտներ ***Ա. Խառափյանը, Ն. Քոչինյանը***, ***Ս. Սարգսյանը***, ***Գ. Ղուկասյանը, Մ. Բունիաթյանը,*** ասիստենտ ***Հ. Ադիլխանյանը,*** ինչպես նաև պրոֆեսոր ***Ա. Առաքելյանի*** ղեկավարությամբ ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողները:

Ամբիոնի դասախոսները ոչ միայն մասնակցում են գիտահետազոտական սեմինարների ու հեղինակավոր գիտաժողովների, այլև դրանց ***կազմկոմիտեների անդամ*** են: Պրոֆեսոր ***Ա. Առաքելյանը*** 2010 թ. Ինդոնեզիայում կայացած “Advances in Computing, Control & Telecommunications Technologies” ACT2010 և Հնդկաստանում կայացած “International Conference on Recent Trends in Information, Telecommunication and Computing” միջազգային գիտաժողովների կազմկոմիտեների անդամ էր:



Հետազոտական աշխատանքների համատեղ իրականացման, դասախոսների և ուսանողների ներքին և արտաքին շարժունության ապահովման նպատակով ամբիոնը ***համագործակցում է Հայաստանի և արտասահմանյան*** *մի շարք հեղինակավոր* ***համալսարանների հետ:*** Պրոֆեսոր ***Առաքելյանի*** ղեկավարությամբ «Erasmus Mundus» ծրագրի շրջանակում ամբիոնը համագործակցել է Հունաստանի ***Սալոնիկիի համալսարանի*** հետ, որի արդյունքում ֆակուլտետի մագիստրանտները ստացել են կրկնակի դիպլոմներ ԵՊՀ-ից և եվրոպական համալսարաններից, ինչպես նաև՝ Միացյալ Թագավորության Շեֆիլդի համալսարանից (2007-2012թթ.): Շրջանավարտների մի մասը հնարավորություն է ստացել շարունակելու ուսումը Գերմանիայի համալսարաններում որպես ասպիրանտ և ստացել է PD Dr. habil աստիճան (Անի Մելքոնյան, աշխատում է Technische Universität Clausthal-ում):

Գերմանիայի Դաշնության «Սիներջի» էլեկտրաէներգիայի խնայողություն և կայուն զարգացում (Project Energy Saving and Efficiency Use) ծրագրով ամբիոնը համագործակցել է Գերմանիայի Դաշնության Օլդենբուրգի Կ. ֆոն Օսյեցկու համալսարանի ***Տնտեսագիտական կրթության ինստիտուտի*** հետ (2014-2016 թթ.): Համագործակցության արդյունքում ամբիոնի երեք դասախոսներ՝ Հայկ Ադիլխանյանը, Վեհանուշ Մարուխյանը և Անի Խալաթյանը, պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ այս ծրագրի թեմայով:










***Հայաստանում Ամերիկյան համալսարանի*** հետ համագործակցությամբ դոցենտ ***Ն. Ջրբաշյանը*** մասնակցել է ՀՀ միջճյուղային հաշվեկշռի կառուցման աշխատանքներին (2021 թ.): Մեկ այլ համագործակցության շրջանակում ամբիոնը մասնակցել է Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի հետազոտողների խմբի աշխատանքներին: «NIS College and University Partnership Program» ծրագրի շրջանակում ամբիոնը համագործակցել է ԱՄՆ ***Կալիֆորնիայի (Ֆրեզնո) պետական համալսարանի*** հետ (2003թ.), «Erasmus Mundus» ծրագրի շրջանակներում՝ Լատվիայի ***Ռեզեկնեի համալսարանի*** հետ (2013թ.), «From Theoretical-Oriented to Practical Education in Agrarian Studies (TOPAS)» ծրագրով Գերմանիայի Դաշնության ***Weihenstephan-Triesdorf Կիրառական գիտությունների համալսարանի*** և ***Ուկրաինայի կյանքի և բնապահպանական գիտությունների ազգային համալսարանի*** հետ (2019-2022թթ.) և այլն:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ***վերապատրաստվում է,*** ինչպես նաև՝ ***դասախոսություններ կարդում*** արտերկրի համալսարաններում: Պրոֆեսոր ***Ռ. Գևորգյանը*** դասախոսություններ է կարդացել Ռոտերդամի Բնակարանային և քաղաքաշինական հետազոտությունների ինստիտուտում (Institute for Housing and Urban Development Studies-IHS), Նիդերլանդներ (2017թ.), Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում (2019թ.), ԱՄՆ-ի Սան Խոսեի պետական համալսարանում, ԱՄՆ (2019թ., 2024թ.): Դոցենտ ***Գ. Ղուկասյանը*** «Erasmus Mundus» ծրագրի շրջանակներում դասախոսություններ է կարդացել Լատվիայի Ռեզեկնեի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում (2013 թ.): Դոցենտ ***Ա. Կարապետյանը*** որպես հրավիրյալ պրոֆեսոր դասավանդել է Արիզոնայի պետական համալսարանի Հանրային կառավարման



ֆակուլտետում (2005 թ.) և Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Բիզնեսի և հասարակական կառավարման ֆակուլտետում (2001 - 2002 թթ.):

***Ն. Ջրբաշյանը*** և ***Ա. Կարապետյանը*** մասնակցել են «Erasmus+ TOPAS» եվրոպական ծրագրի շրջանակում Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանում (HSWT) կազմակերպված ինտենսիվ վերապատրաստման դասընթացին (2019 թ.), պրոֆեսոր ***Վ. Թորոյանը*** վերապատրաստվել է Բուդապեշտի Մրցակցության տարածաշրջանային կենտրոնում (2006 թ. և 2008 թ.), դոցենտ ***Ն. Մարփիրոսյանը***՝ Կալիֆորնիայի պետական համալսարանում (2001 թ.), Վիեննայի միացյալ ինստիտուտում (1994 թ.), Հարավային Կորեայի զարգացման ինստիտուտում (1994 թ.): Դոցենտ ***Ն. Ջրբաշյանը*** մասնակցել է «Գիտելիքների փոխանակման ծրագիր մակրոտնտեսագիտության և միջազգային տնտեսագիտության բնագավառում» ամառային ինտենսիվ դասընթացին ԱՄՆ-ի Յուտայի համալսարանում (2003 թ.): Դոցենտներ ***Ն. Քոչինյանը և Ս. Սարգսյանը*** մասնակցել են «Քաղաքային տնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրին Նիդերլանդների Թագավորության Բնակարանային և քաղաքային զարգացման ուսումնասիրությունների ինստիտուտում (HIS, 2017թ.):

Դոցենտ ***Կ. Եղոյանը*** ուսանել է Շվեդիայի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի (KTH) «Հողային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական ծրագրում (2005-2006 թթ.), դոցենտ ***Ն. Մարփիրոսյանը*** (2003 թ.)՝ Քեմբրիջի համալսարանի Ջաջի մենեջմենթի ինստիտուտում: *Դոցենտ* ***Ա. Կարապետյանը*** դարձել է ԱՄՆ-ի Կառավարության կողմից ֆինանսավորված Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագրի մրցանակակիր (2001 թ.), դոցենտ ***Ս. Սարգսյանը*** մասնակցել է Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագրին ԱՄՆ Միչիգանի Էն Արբոր համալսարանում (2006 թ.):

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը գիտակրթական, հետազոտական համատեղ նախագծերի իրականացման, մասնագիտական ու արտադրական պրակտիկաներ կազմակերպելու, ուսանողների՝ աշխատաշուկա ելքի ապահովման նպատակով ակտիվորեն համագործակցում է ՀՀ ֆինանսաբանկային ոլորտի, պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

## *Ֆինանսահաշվային ամբիոն*

Ամբիոնի գիտակրթական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքները թույլ են տվել համագործակցել Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Գերմանիայի և այլ երկրների համապատասխան կառույցների և հաստատությունների հետ: Դրանցից հատուկ ուշադրության է արժանի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի նախագահությամբ 2018 թվականին Ռուսաստանի Ժողովրդական տնտեսության ակադեմիայի և Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի նախաձեռնությամբ Երևանում անցկացված ***«Տնտեսության և կրթության ոլորտներում ԵԱՏՄ համագործակցությունը»*** միջազգային գիտաժողովը, որի կազմակերպման ու անցկացման համար ներգրավված էին ՀՀ կառավարության ներկայացուցիչը և Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր ***Վ. Բոստանջյանը***:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի համագործակցության արդյունքում, ինչպես նաև ֆակուլտետի միջազգային կապերի համակարգող Գ. Հայրապետյանի ակտիվ մասնակցությամբ՝ Ֆինանսահաշվային ամբիոնը զեկույցներով հանդես է եկել նաև միջազգային այլ գիտաժողովներում:

Մասնավորապես, դրանցից նշելի են՝

- International Scientific Conference “Sustainable Development and Social and Economic Cohesion in the 21st Century: Trends and Challenges”, 8-9 ноября 2021г., город София, Вардан Бостанджян, Армине Захарян, Проблемы стимулирования развития экономики Республики Армения,
- Международная научная конференция, 2016г., Тбилиси, Бостанджян В.Б., Захарян А.Г. Проблемы защиты прав акционеров в Республике Армения,
- Россия и ЕАЭС: глобальные тренды взаимодействия и новые вызовы для обеспечения национальной и региональной безопасности, 22 октября 2020г., Екатеринбург, Бостанджян В.Б., Захарян А.Г. Основные факторы инновационного развития экономики в Республике Армения,
- V Международная научно-практическая конференция “Большая Евразия: национальные и цивилизационные аспекты развития и сотрудничества”, 23-24 ноября 2022 года, Университет мировых цивилизаций, РАН Москва, Бостанджян В.Б., Захарян А.Г. Проблемы цифровой трансформации сферы образования в Республике Армения,

▪ VIII международная научная конференция «Государство и рынок: Евразийская доминанта развития в условиях формирования многополярного мира». 19–20 октября 2023 г., Санкт-Петербург, Бостанджян В.Б., Захарян А.Г. Создание инновационной логистической инфраструктуры как средство развития экономики Республики Армения.






Միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցություն է ծավալում նաև ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. ***Ա. Քառյանը***: Համագործակցության և համատեղ աշխատանքի արդյունքներից են՝

- ԱՄՆ ՄԶԳ «EMG LTD» կողմից իրականացվող «Ֆինանսական համակարգի զարգացման ծրագիրը», Երևան, 2007- 2009 թթ.,
- ԱՄՆ ՄԶԳ «Օրենսդրի հզորացման ծրագիրը», Երևան, 2004 – 2007 թթ.
- UNDP «Մարդկային զարգացման զեկույցը, (տասնամյակի զեկույց)», 2001 թ.,
- Համաշխարհային բանկի (WB) «Ապահովագրության կարգավորում և վերահսկողություն ծրագիրը», 2004 թ.,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողով՝ ՌԴ կառավարությանն առընթեր Ֆինանսական համալսարանի, «ԵԱՏՄ երկրների ազգային արժույթներով արտահանման վարկերի նվազագույն ընդունելի տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանության մշակման ծրագիրը», 2015 թ.:



## ***Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն***

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են ***միջազգային գիտահետազոտական սեմինարների*** և ***գիտաժողովների***:

▪ XXVIII Международная (заочная) научно-практическая конференция «Интеграция мировых научных процессов как основа общественного прогресса», Казань, 30 сентября 2015 года, Маркарян А.Г. «Возможности интеграции экономики Республики Армения в ЕАЭС».

▪ 2016թ. ապրիլի 4-8-ը ***Գ. Հայրապետյանը*** մասնակցել է Բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման վերապատրաստման ծրագրի Վրաստանում, որը կրկին կազմակերպվել է ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչության կողմից (Internationalization of Higher Educational Institutions, I-Net Program, Georgia, Tbilisi):

▪ ***Գ. Հայրապետյանը*** 2016 թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ը մասնակցել է վերապատրաստման ծրագրի Ռումինիայում, որը կազմակերպվել է ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչության կողմից (IANUS and IANUS II Capacity Building, Alexandru Ioan Cuza University, Romania, Iasi):

▪ Միջազգային հարաբերությունների ամրապնդման, փորձի փոխանակման, ինչպես նաև նոր գաղափարների ուսումնասիրման նպատակով ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ ***Գրիգոր Հայրապետյանը*** 2024 թ. հունիսի 3-8 մասնակցել է Աալենի կիրառական գիտությունների համալսարանում (Գերմանիա) կազմակերպված «Միջազգային շաբաթ» ծրագրին («The first $Q^n$ International Week»): Այցի շրջանակներում Գ. Հայրապետյանը Աալենի համալսարանի ուսանողների համար դասախոսություն է կարդացել «Տնտեսական և սոցիալական նորարարությունը Հայաստանի Հանրապետությունում» («Situating Economic and Social Innovations in Armenia») թեմայով:





## ***Կառավարման և գործարարության ամբիոն***




Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ևս ակտիվորեն մասնակցում են ***միջազգային ծրագրերի, գիտահետազոտական սեմինարների*** և ***գիտաժողովների***:

Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր ***Ամալյա Սարիբեկյանը*** 2000 թվականին մասնակցել է Ֆրեզնոյի և Երևանի պետական համալսարանի միջև ԱՄՆ-ի կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրին, որի շրջանակում քննարկվել են բակալավրի ու մագիստրատուրայի ուսումնական պլանները, ծրագրերը, դասավանդման ձևերն ու մեթոդները: Արդյունքում մշակվել և մագիստրոսական կրթական ծրագրում ներդրվել է «Վարչարարական կառավարում» (Public Administration) առարկան: Համագործակցության շրջանակում Ֆրեզնոյի պետական համալսարանի պրոֆեսորները դասախոսությունների շարքով հանդես են եկել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների շրջանում:





Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ Կառլեն Խաչատրյանը 2012 թ. նոյեմբերի 19-23-ը մասնակցել է «ՀԱՊԿ - 20 տարի. արդյունքներ և հեռանկարներ» ԱՊՀ երկրների երիտասարդ մասնագետների անվտանգության հարցերով գիտակրթական ծրագրին (ՌԴ, ք. Մոսկվա):

2023 թվականից ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ ***Աննա Հակոբջանյանը*** ԵՄ կողմից ֆինանսավորվող «Erasmus+»-ի շրջանակում մասնակցում է TGreen ծրագրին, որի նպատակը կրկնակի դիպլոմով «Green Economy and Management» մագիստրոսական ծրագրի ներդրումն է:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավար ***Նարինե Միրզոյանը*** ԵՊՀ պատվիրակության կազմում 2024 թվականի հուլիսի 2-5-ը մասնակցել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Erasmus+» ծրագրի շրջանակում Ստրասբուրգի համալսարանի (Ֆրանսիա) կազմակերպած «Բակալավրի կրթության բարեփոխումը հանուն կանաչ և կայուն զարգացման Հայաստանում և Մոլդովայում» միջազգային աշխատաժողովին:








Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը և ասպիրանտները ակտիվորեն մասնակցել են միջազգային տարբեր գիտական ֆորումների՝ գիտաժողովների, սեմինարների և այլն:

- Պրոֆեսոր ***Հայկ Սարգսյանը***, ասպիրանտներ Հ. Զայիմցյանը և Ք. Անտոնյանը 2006 թ. զեկուցել են МГУ- ի միջազգային գիտաժողովում՝ 4-ая Международная конференция факультета государственного управления МГУ им. М.В. Ломоносова (24-26 мая 2006):
- Ամբիոնի դոցենտ ***Կառլեն Խաչատրյանը*** զեկուցումներով հանդես է եկել՝ 2010 թ. Մոսկվայում կայացած «Լոմոնոսով - 2010» և 2011 թ. Կիևում կայացած «Շևչենկոյան գարուն. Տնտեսագիտություն» ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովներում:
- Սկսած 2012 թ.–ից՝ պրոֆեսոր Հայկ Սարգսյանը կազմակերպչական աշխատանքներով և զեկուցումներով պարբերաբար մասնակցել է ЦЭМИ РАН ինստիտուտի կողմից կազմակերպված միջոցառումներին՝ Международная школа семинар, «Многомерный статистический анализ и эконометрика», Цахкадзор, Москва.
- Սկսած 2015 թ.–ից՝ ֆակուլտետի դասախոսները, այդ թվում՝ պրոֆեսոր ***Հայկ Սարգսյանը*** և դոցենտ ***Կառլեն Խաչատրյանը*** պարբերաբար մասնակցել են ՌԴ-ում և Ուզբեկստանում անցկացվող գիտաժողովներին՝ Международная конференция «Феномен рыночного хозяйства».
- Պրոֆեսոր ***Հայկ Սարգսյանը***, 2017 թ. նոյեմբերի 17-18–ին իր կողմից ղեկավարվող Սահմանադ-

րական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի գիտական մշակումների արդյունքների մասին զեկույցով հանդես է եկել Հռոմի Պապական ինստիտուտում կայացած «INTERNATIONAL CONFERENCE. CHALLENGES SPIRITUAL AND LEGAL BEHAVIOR OF CONTEMPORARY INDIVIDUAL AND IMPERATIVES OF THEIR OVERCOMING» ֆորումում:

- 2019 թ. հունիսի 27-28–ին ամբիոնի պրոֆեսոր ***Հ. Սարգսյանը*** զեկուցմամբ մասնակցել է Սանկտ Պետերբուրգում կայացած Սահմանադրական տնտեսագիտությանը նվիրված միջազգային կոնֆերանսին:
- Ամբիոնի դոցենտ ***Աննա Հակոբջանյանը*** 2022 թվականին Հռոմում կայացած «International Conference on Applied Research in Education» միջազգային գիտաժողովին հանդես է եկել «The Development of Entrepreneurial Education In the Framework of University-Industry Collaboration» թեմայով զեկուցմամբ:
- Ֆակուլտետի դեկան ***Կառլեն Խաչատրյանը*** և դոցենտ ***Նոննա Խաչատրյանը*** 2023 թվականին «The ESG in the Context of Geopolitical and Economic Changes» միջազգային գիտաժողովին, ASUE, Yerevan, հանդես են եկել «Managerial Issues of Ecosistem services within ESG Framwork» թեմայով զեկուցմամբ:
- Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ ***Կառլեն Խաչատրյանը*** և Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. ***Նոննա Խաչատրյանը*** 2023 թ. դեկտեմբերի 4-9-ը Վիեննայի բնական ռեսուրսների և կյանքի մասին գիտությունների համալսարանում (BOKU) EcoServ ծրագրի շրջանակում մասնակցել են «Էկոհամակարգային ծառայությունների գնահատում մասնակցային մոտեցմամբ» աշխատաժողովին:
- 2024 թվականին ամբիոնի պրոֆեսոր ***Գագիկ Վարդանյանը*** և դոցենտ ***Կարինե Աsրյանը*** զեկուցումներով են հանդես եկել Յու. Գագարինի անվան Սարատովի պետական համալսարանում կայացած «Проектный менеджмент: проблемы и перспективы развития» VII Միջազգային գիտա-գործնական կոնֆերանսին:
- 2024 թվականին ամբիոնի պրոֆեսոր ***Վահրամ Աբրահամյանը*** ՌԴ-ում, Южный Федеральный университет Ростов на Дону, «Устойчивое и инновационное развитие в цифровом глобальном пространстве» IV միջազգային կոնֆերանսին հանդես է եկել գիտական զեկուցմամբ:





# 8 Ֆակուլտետի համագործակցությունը բիզնեսի և պետական հատվածի հետ



## ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ - աշխատաշուկա գործընկերային կամուրջը

Մասնագիտական կրթական շուկայում համալսարանների մրցակցային դիրքերի ձեռքբերման առանցքային գործոն է աշխատաշուկա-բուհ գործընկերային փոխկապակցումը: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, ի սկզբանե, մասնագիտական կրթական ծրագրեր կազմելիս ձեռնամուխ է եղել ապահովելու գործատուների ընդգրկվածությունը, երբ կրթական վերջնարդյունքների նպատակադրումները համապատասխանեցվում էին աշխատաշուկայի պահանջներին: Սակայն, դա բավարար չէր աշխատաշուկա-ֆակուլտետ կամուրջը ձևավորելու համար, և տարիների ընթացքում այն ամրապնդվեց մի քանի ուղղություններով:

Աշխատաշուկայում բուհի շրջանավարտների մրցակցային դիրքերի ամրապնդումը պահանջում է կրթության տեսական մոտեցումների զուգորդում գործնական հմտությունների հետ, երբ ակադեմիական հիմնարար գիտելիքներից զատ գեներացվում և ուսանողներին են փոխանցվում կիրառական մասնագիտական հմտություններ և կարողություններ: Հատկապես վերջին տասնամյակում ֆակուլտետում սկսեց մեծանալ համատեղող դասախոսների քանակը, որոնք գործնական միջավայրից բխող արդիական մասնագիտական հմտություններ և կարողություններ են մատուցում ուսանողներին: Ներկայումս համատեղությամբ աշխատող դասավանդողները կազմում են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի 24%-ը:

Դրան զուգընթաց, մշտապես ակտիվ գործընթացում է ֆակուլտետ հրավիրյալ մասնագետների այցերի կազմակերպումը տարբեր ոլորտների կազմակերպություններից՝ և՛ մասնավոր, և՛ պետական: Փորձառու մասնագետների հրավիրումը՝ վարպետության դասերի, ակնարկային դասախոսությունների, արտալսարանային հանդիպումների ձևաչափով, նպատակ ունի ուսանողներին «առաջին ձեռքից» ներկայացնելու մասնագիտական ոլորտի վերջին փոփոխությունները, մեկնաբանելու մասնագիտական նեղ ոլորտային իրական խնդիրները, փոխանցելու գործարարության ու տնտեսության պետական կառավարման և կազմակերպման հաջողված փորձը:

Կրթական ծրագրերում ընդգրկված պրակտիկ փորձառություն ունեցող մասնագետներից զատ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ-աշխատաշուկա գործընկերային կամուրջը պարբերաբար ամրապնդվում է տարբեր դասընթացների





շրջանակում ուսանողների արտագնա այցերի կազմակերպմամբ կազմակերպություններ, որը հնարավորություն է տալիս ուսանողներին գործնական միջավայրում ընկալել մասնագիտական խնդիրները, ծանոթանալ կազմակերպությունների տարբեր բաժինների աշխատանքների իրականացման գործընթացներին:

Ուսանողների «ակադեմիական գործուղումը» կազմակերպություններ նպատակ ունի հենց ուսումնառության տարիներին նրանց մոտ զարգացնելու մասնագիտական գործնական հմտություններ և կարողություններ: Ավելին, կազմակերպությունների հետ կապերի սերտացումը նոր հնարավորություններ է բացում ուսումնական պլանով նախատեսված պրակտիկայի կազմակերպման, ինչպես նաև ավարտական և մագիստրոսական թեզերի շրջանակում հետազոտական առանձին ծրագրերի իրականացման գործընթացում: Ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի ուսպլանով նախատեսված պրակտիկայի կազմակերպումն ապահովող կազմակերպությունների ցանկը ներկայացված է Աղյուսակ 8.1-ում:





ՀՀ ԿԲ նախագահ
Մարտին Գալստյան



«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյան

Աշխատաշուկա - Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ գործընկերային կամուրջը շարունակաբար ամրապնդվում է նաև ֆակուլտետի շրջանավարտների ցանցի միջոցով: Ֆակուլտետը սերտ համագործակցում է իր շրջանավարտների հետ, իսկ վերջիններս պարբերաբար հանդիպումներ ունենալով ուսանողության հետ՝ ներկայացնում են իրենց բիզնեսի հաջողված փորձը, աշխատաշուկայում ծագած մարտահրավերները:

Ֆակուլտետը նաև հատուկ ուշադրություն է դարձնում կրթական գործընթացի հետազոտական բաղադրիչին: Բակալավրիատում և, հատկապես, մագիստրատուրայում հետազոտական գործունեությունն ուղղվում է գործարարության միջավայր, երբ, գիտական ղեկավարներից բացի, շրջանավարտներն իրենց «ակադեմիական գործուղումների» ընթացքում գործարար միջավայրի ներկայացուցիչներից ստանում են հավելյալ խորհրդատվություն: Բացի այդ՝ ֆակուլտետում գործում է բիզնես ինկուբատոր, որը նախատեսում է ուսանողների ակտիվ մասնակցություն հետազոտական աշխատանքների իրականացման, նորարարական գաղափարների գեներացման, ստարտափերի ձևավորման գործընթացում, ինչն էլ որոշիչ գործոններից մեկն է աշխատաշուկա - Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ գործընկերային կամուրջն ամրապնդելու հանձնառության կատարման համար:

Հաշվի առնելով մրցունակ տնտեսագետ-մասնագետների բարձր պահանջարկի առկայությունը երկրի տնտեսությունում, կարևորելով ֆակուլտետի ուսանողների ձեռքբերած տեսական ու գործնական գիտելիքներն ամրապնդելու և խորացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ուսանողների հետագա աշխատանքային գործունեության համար չափազանց կարևորվող կարողությունների և հմտությունների զարգացումը՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի առաջնահերթությունների շարքում առանձնանում է ***բուհ-աշխապաշուկա համագործակցության*** ընդլայնման հրամայականը:

*«Բուհ-աշխապաշուկա համագործակցության խնդիրները և հեռանկարները» խորագրով ֆոկուսխմբային քննարկում ֆինանսաբանկային և սպասարկման ոլորտների ներկայացուցիչների հետ:*







Ֆակուլտետը կնքել է համագործակցության և փոխըմբռնման բազմաթիվ հուշագրեր պետական տարբեր կառույցների և կառավարման մարմինների, առաջատար ընկերությունների և կազմակերպությունների, ինչպես նաև այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել բարձրագույն որակավորմամբ տնտեսագետ-մասնագետների պատրաստման գիտակրթական գործընթացների արդյունավետությունը:

Կնքված հուշագրերով նախատեսված համագործակցության ուղղությունները՝ համատեղ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքների և ծրագրերի իրականացումը, համատեղ ջանքերով կրթական համակարգի զարգացումը, ստեղծել են նոր հնարավորություններ ուսանողների գիտելիքների և գործնական փորձի ձեռքբերման, ինչպես նաև շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցելու հարցում:

Վերջին տարիներին ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կնքած համագործակցության և փոխըմբռնման հուշագրերն են.

➢ **2020 թ., 26 փետրվար**

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ու Մոսկվայի Մ. Լոմոնոսովի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի միջև կնքվում է համագործակցության համաձայնագիր:



➢ **2022 թ., 14 սեպտեմբեր**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և «Cbonds» կազմակերպության միջև ստորագրվում է համագործակցության հուշագիր:



➢ **2023 թ., 31 հունվար**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, նույն ֆակուլտետի «Հետազոտությունների և գործարարության կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն Մերուժան Գալստյանը և Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյանը ստորագրում են համագործակցության եռակողմ հուշագիր:



➢ **2023 թ., 10 փետրվար**

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ստորագրում են երկու կառույցների միջև համագործակցության հուշագիր՝ համատեղ նպաստելու կրթական համակարգի զարգացմանը:



➢ **2023 թ. 20 մարտ**

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր:



➢ **2023 թ., 19 մայիս**



ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը և «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր:




➢ **2023 թ., 30 նոյեմբեր**

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Արսեն Հարությունյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր:





➢ **2024 թ., 1 մարտ**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Տնտեսական լրագրողների ակումբի» նախագահ Աննա Բաղդասարյանը ստորագրում են համագործակցության հուշագիր:






➢ **2024 թ., 3 մայիս**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Տնտեսական քաղաքականության վերլուծական կենտրոն» ՀԿ նախագահ Գարիկ Դինգչյանը ստորագրում են համագործակցության հուշագիր:





➢ **2024 թ., 15 մայիս**

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և ԱՊՀ երկրներում «Kotler Impact» ընկերության բացառիկ ներկայացուցիչ «AWE Consulting» ՍՊԸ-ի տարածաշրջանի տնօրեն Մերի Գրիգորյանը ստորագրում են համագործակցության եռակողմ հուշագիր:





➢ **2024 թ., 22 հուլիս**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ կազմակերպության տնօրեն Հովակ Հովակիմյանը ստորագրում են փոխըմբռնման հուշագիր:



Աղյուսակ 8.1

**Ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի ուսպլանով նախատեսված պրակտիկայի կազմակերպումն ապահովող խոշոր կազմակերպությունների ցանկը**

| N | Կազմակերպությունների անվանումը | N | Կազմակերպությունների անվանումը |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 28 | «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ |
| 2 | ՀՀ ֆինանսների նախարարություն | 29 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| 3 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 30 | «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ |
| 4 | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | 31 | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| 5 | ՀՀ կադաստրի կոմիտե | 32 | «Էլեկտրոն» ԲԲԸ |
| 6 | ՀՀ վիճակագրական կոմիտե | 33 | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ |
| 7 | ՀՀ կենտրոնական բանկ | 34 | «Յուքոմ» ՓԲԸ |
| 8 | ՀՀ բանկերի միություն | 35 | «Վիվա-ՄՏՍ» ՓԲԸ |
| 9 | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն | 36 | «Գառնի Ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ |
| 10 | Պետական գույքի կառավարման կոմիտե | 37 | «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ |
| 11 | «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ | 38 | «Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ |
| 12 | Հայաստանի ֆոնդային բորսա | 39 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ |
| 13 | Երևանի քաղաքապետարան | 40 | «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ |
| 14 | Արմավիրի քաղաքապետարան | 41 | «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ |
| 15 | Հրազդանի քաղաքապետարան | 42 | «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ |
| 16 | Մասիսի քաղաքապետարան | 43 | «Արմտորգ» ՓԲԸ |
| 17 | ԵՊՀ հաշվապահություն | 44 | «Քոգնայզ» ՓԲԸ |
| 18 | Տնտեսական մրցակցության հանձնաժողով | 45 | «Ինստիգեյթ Մոբայլ» ՓԲԸ |
| 19 | «Արարատբանկ» ԲԲԸ | 46 | «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ |
| 20 | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | 47 | «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ |
| 21 | «Ամերիաբանկ» ՓԲԸ | 48 | «ՕՆԷՔՍ» ՍՊԸ |
| 22 | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ | 49 | «Գամմա Գրուպ» ՍՊԸ |
| 23 | «Էվոկաբանկ» ՓԲԸ | 50 | «Երեմյան Փրոջեքթս» ՍՊԸ |
| 24 | «Ինեկոբանկ» ՓԲԸ | 51 | «Նաիրի ինշուրանս» ՍՊԸ |
| 25 | «Արդշինբանկ» ՓԲԸ | 52 | «Արմենիա ինշուրանս» ՍՊԸ |
| 26 | «Արցախբանկ» ՓԲԸ | 53 | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| 27 | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | 54 | «Իդրամ» ՍՊԸ |

## ԵՊՀ ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ



ԵՊՀ Բիզնես ինկուբատոր վարչական ստորաբաժանումը ստեղծվել է ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 29-ի N13 որոշմամբ: Բիզնես ինկուբատորը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է, որի նպատակը տարբեր ֆակուլտետներում գաղափարներից գեներացվող արդյունքների առևտրայնացման միջավայրի ստեղծումն է, համալսարանական միջավայրում ծնվող գաղափարների գեներացումն ու ակսելերացիան, այդ գաղափարները գիտակրթական, արդյունաբերական, տեխնոլոգիական արդյունքի վերածելու, ինչպես նաև նորարարական գաղափարների հավաքագրմանն ու զարգացմանը միտված օժանդակության ապահովումը: Բիզնես ինկուբատորը նորարարական գաղափարները գործող բիզնեսի վերածելու եզակի հնարավորություն է:

Այսօր ժամանակակից և առաջադեմ բուհերը զբաղվում են ոչ միայն կրթությամբ և գիտությամբ, այլ դառնում են նաև ինքնադրսևորման, ուսանողների և հետազոտողների հետաքրքիր նախագծերի

մշակման և իրականացման վայր: Այդ նպատակով, հատկապես արևմտյան բուհերում, այսօր ակտիվորեն գործում են բիզնես ինկուբատորներ: Բիզնես ինկուբատորները կենսական դեր են խաղում նորարարության խթանման, տնտեսական զարգացմանն աջակցելու և ակադեմիական համայնքներում ձեռներեցության խթանման գործում: Նրանք ծառայում են որպես կամուրջ ակադեմիական հետազոտությունների և իրական աշխարհի առևտրայնացման միջև՝ օգնելով խոստումնալից գաղափարները վերածել հաջողակ բիզնեսի:

ԵՊՀ Բիզնես ինկուբատորի հիմնական նպատակն է աջակցել նպատակասլաց ձեռներեցներին և ստարտափներին իրենց բիզնես նախագծերի իրականացման վաղ փուլերում: ԵՊՀ Բիզնես ինկուբատորի հատկանշական առանձնահատկությունը գաղափարների կրողների և դրանցով հետաքրքրվողների համագործակցությունն է համալսարանի հետ: Մասնակիցները պայմանագիր են կնքում ԵՊՀ կողմից իրենց ծրագրի համար գիտական աշխատանքների իրականացման վերաբերյալ: Բիզնես ինկուբատորի շահառուները մուտք են ստանում գիտական միջավայր՝ ակադեմիական ենթակառուցվածքներ, մասնակցում են Բիզնես ինկուբատորի կողմից կազմակերպվող սեմինարներին, դասընթացներին և դառնում համախոհների դինամիկ զարգացող համայնքի չափազանց կարևոր մաս:

ԵՊՀ Բիզնես ինկուբատորն արդեն իրականացրել է մի քանի նախագծեր և դասընթացներ.

1. **Սոցիալական ազդեցություն ունեցող ստարտափների ինկուբացիոն ծրագիրն** իրականացվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի համատեղ ջանքերով:




2. **Նորարարական և գիտահետազոտական գաղափարների մրցույթը** կյանքի է կոչվել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամի, Ինժեներական քաղաքի, ՍայՀաբ կիբեռանվտանգության կենտրոնի, Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի, Առաջադեմ հետազոտությունների կենտրոնի, Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի կողմից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի, ինչպես նաև միջազգային առաջատար համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների աջակցությամբ ու համագործակցությամբ:



**Python փաթեթի օգտագործումը բիզնեսի վերլուծության խնդիրների լուծման համար** դասընթացներին մասնակցել են ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետների ուսանողներ, դասախոսներ և հետազոտողներ:

ԵՊՀ Բիզնես ինկուբատորի աշխատակիցները վստահ են, որ ցանկացած նորարարություն ժամանակակից աշխարհում անհնար է առանց գիտության և բարձր տեխնոլոգիաների ներգրավման:

ԵՊՀ Բիզնես ինկուբատորի տնօրենը ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ռուբեն Ալբերտի Գևորգյանն է:



# 9 Ֆակուլտետի մասնակցությունը Արցախյան պատերազմներին



1988 թ. սկիզբ առած Արցախյան շարժումը նոր շունչ հաղորդեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին և միավորեց ողջ աշխարհի հայությանը՝ մարտահրավեր նետելով Խորհրդային Միությանը: Երևանի պետական համալսարանը, հաստատակամ դիրքորոշում որդեգրելով, կանգնեց Արցախյան շարժման պաշտպանության դիրքերում:

Շարժման անմիջական ղեկավար համալսարանականները բոլոր ֆակուլտետներում, այդ թվում տնտեսագիտության ֆակուլտետում, կազմակերպում էին բազմաթիվ միջոցառումներ՝ հանդիպումներ, միտինգներ, ամենօրյա ժողովներ, նիստեր, կայացնում էին որոշումներ և ուղարկում ամենատարբեր հասցեներով: Նպատակը սահմանադրական ճանապարհով Արցախի հարցի արդարացի լուծումն էր: Ի պատասխան այս պահանջի՝ 1988 թ. Ադրբեջանի ղեկավարությունը մի շարք հայաբնակ քաղաքներում (Սումգայիթ, Գանձակ, Խանլար, Դաշքեսան, Շամխոր, Մինգեչաուր, Բաքու) կազմակերպեց հայ բնակչության ջարդ և իրականացրեց ցեղասպանություն:

1988 թ. աղետալի երկրաշարժի անդառնալի կորուստներով հանդերձ՝ պայքարը շարունակվեց. ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ակտիվորեն մասնակցում էին Ազատության հրապարակում սկսված նստացույցերին:

1989 թ. ծավալված զինված բախումները արագորեն վերածվեցին պատերազմական գործողությունների և բազմաթիվ համալսարանականներ, այդ թվում՝ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ, զինվորագրվեցին Արցախի պաշտպանությանը:

**1988 – 1994 թթ.** Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետում ուսանած համալսարանականներից վեց ուսանող մասնակցել են **Արցախյան ազատամարտին**.

1. ***Ավագիմյան Վաչագան Ռաֆայելի (զոհված)***
2. ***Ավանեսյան Միեր Շուրայի***
3. ***Գյորգյան Ֆուրման Արկադյայի (զոհված)***
4. ***Թադևոսյան Ռուբեն Վովայի (զոհված)***
5. ***Հայրումյան Հրաչիկ Իշխանի***
6. ***Հովհաննիսյան Վարդան Նաալեփի (զոհված)***





**Ավագիմյան Վաչագան Ռաֆայելի**
**27.08.1969 – 22.11.1992**

***Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար» մեդալով (1994), «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով (1994):***

Ծնվել է 1969 թ. օգոստոսի 27-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում: 1986 թ. ավարտել է Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով: 1987 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի կիբեռնետիկայի բաժինը:

1988-1989 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Բաշկիրիայում):

1990 թ. սկսած՝ ծառայել է Շուշիի շրջանի պաշտպանական ստորաբաժանումներում, որի կազմում մասնակցել է Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական մարտերին:

1992 թ. նա Բեկոր Աշոտի (Աշոտ Ղուլյանի) առաջին վաշտի զինվոր էր:

Վ. Ավագիմյանը զոհվել է 1992 թ. նոյեմբերի 22-ին Բաչ-Գյունեխայայի համար մղված մարտերում: Նրա աճյունն ամփոփված է Ստեփանակերտի հուշահամալիրում՝ 1992 թ. սեպտեմբերի 2-ին Չլդրանի անտառում հերոսաբար զոհված հարազատ եղբոր՝ Սամվել Ավագիմյանի աճյունի կողքին:

ԼՂՀ Գերագույն խորհրդի 1994 թ. մայիսի 6-ի որոշմամբ Վ. Ավագիմյանը հետմահու պարգևատրվել է Շուշիի ազատագրման մեդալով, նույն թվականի դեկտեմբերի 30-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:



**Գյորգյան Ֆուրման Արկադյայի**
**28.08.1973 – 29.09.1992**

***«Չեմ կարողանում հաշտվել, որ ես հայրենիք ու հայրենի օջախ չունեմ, որ իմ սիրասուն մայրը փախստական է: Գիտե՞ս, մամ, միևնույնն է՝ գնալու եմ, բայց ուզում եմ քո օրհնությամբ գնալ, չեմ ուզում, որ երկու - երեք օրից գրություն ստանաս, թե մամ ջան, ես գնացի հայրենիք, որ դարանակալեմ մեր տան դիմացի սարի լանջին ու գընդակահարեմ մեր բակ մտնողին, հետո իջնեմ ու դարպասին գրեմ. «Այս տունը պատկանում է Ֆուրման Շահումյանցուն»:***

***Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության (2002) և ԼՂՀ «Արիության համար» (2002) մեդալներով:***

Ծնվել է 1973 թ. օգոստոսի 28-ին ԼՂՀ Շահումյանի շրջանի Վերին Շեն գյուղում: 1979 թ. հաճախել է Վերին Շենի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1982 թ. Գյորգյանների ընտանիքը տեղափոխվել է Շահումյանի շրջկենտրոն, որտեղ Ֆ. Գյորգյանը ուսումը շարունակել է թիվ 1 միջնակարգ դպրոցում:

Արցախյան շարժման սկզբից Ֆ. Գյորգյանը դարձավ նրա ակտիվ մասնակիցներից մեկը: 1988 թ. անդամագրվել է Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ջոկատին:

1991 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետը: Երևանում անդամակցել է Շահումյան-Գետաշեն հայրենակցական միությանը և օգնել Արցախ զենք տեղափոխելուն:

1992 թ. հուլիսին զինվորագրվել է Շահեն Մեղրյանի ղեկավարությամբ Երևանում ստեղծված պարտիզանական ջոկատին:

ԵՊՀ-ում առաջին կիսամյակի քննությունները հանձնելուց հետո Ֆ. Գյորգյանը մեկնել է Շահումյան, մասնակցել է տեղի ինքնապաշտպանության համար մղված մարտերին:

1992 թ. ապրիլի վերջին նա վերադարձել է Երևան՝ համալսարանում երկրորդ կիսամյակի քննությունները հանձնելու համար:

Ֆ. Գյորգյանը զոհվել է 1992 թ. սեպտեմբերի 29-ին ուղղաթիռի վթարից՝ Շահումյան մեկնելիս: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի հրամանագրով Ֆ. Գյորգյանը հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով: Նույն թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:



**Թադևոսյան Ռուբեն Վովայի**
**12.11.1975 – 10.04.1993**

**Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով (2002):**

Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 12-ին Երևանում: 1992 թ. ավարտել է Էջմիածնի թիվ 12 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետը:

1992 թ. կամավոր զինվորագրվել է Էջմիածնի շրջանի երկրապահ ջոկատին և դեկտեմբերի 22-ին մեկնել է ԼՂՀ Հադրութի շրջան: Մարտական առաջին գործողությունը, որին մասնակցել է Ռ. Թադևոսյանը, Հողեր գյուղի ազատագրման մարտերն էին: Նրան՝ որպես քաջարի մարտիկի, ընդգրկել են ջոկատի հետախուզական դասակում: Ռ. Թադևոսյանի մասնակցությամբ դասակը հաջողությամբ կատարել է բազմաթիվ առաջադրանքներ:

Ռ. Թադևոսյանը զոհվել է 1993 թ. ապրիլի 10-ին Խրմնջուղ գյուղի մոտ գտնվող բարձունքի համար մղվող մարտերի ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Զվարթնոցի եղբայրական գերեզմանատանը:

ՀՀ նախագահի 2002 թ. հունիսի 1-ի հրամանագրով՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած անձնազոհության և խիզախության համար, Ռ. Թադևոսյանը հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով:



**Հովհաննիսյան Վարդան Նաւլետի**
**13.01.1972 – 11.09.1992**

***«Իմ ուսանող լինելը չի կարող խանգարել ինձ մեկնել Արցախ: Ես առաջնագծում էլ ունեմ քննություն հանձնելու: Ամեն գնով մեկնելու եմ ռազմաճակատ. այնտեղ փղամարդ կոչվելու քննությունը պիտի հանձնեմ... Սովորել միշտ էլ կարող եմ, հիմա զինվոր է պետք...»:***

***Հետմահու պարգևատրվել է ԵՊՀ արծաթե հուշամեդալով (1998), ՀՀ Արիության մեդալով (1999):***

Ծնվել է 1972 թ. հունվարի 13-ին Երևանում: 1988 թ. ավարտել է Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցը: 1988 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆակուլտետը: 2-րդ կուրսից տեղափոխվել է Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ:

Արցախյան պատերազմի առաջին օրերից Վ. Հովհաննիսյանը փորձել է անդամագրվել երկրապահ ջոկատներին և մեկնել ռազմի դաշտ: Ջոկատների հրամանատարները մերժել են՝ պատճառաբանելով, որ նա ուսանող է:

1992 թ. հունիսին Վ. Հովհաննիսյանը, հանձնելով կիսամյակի քննությունները, փոխադրվում է 4-րդ կուրս, սակայն Արցախ գնալու մտադրությունից չի հրաժարվում: Ծնողներից թաքուն անդամագրվում է Սպարապետ Վազգեն Սարգսյանի հավաքագրած մահապարտների ջոկատին:

1992 թ. օգոստոսի 30-ին Վ. Հովհաննիսյանը «Արծիվ» մահապարտների գումարտակի կազմում մեկնում է Արցախ և սեպտեմբերի 1-11-ը մասնակցում ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չլդրան, Դրմբոն, Հարությունագոմեր բնակավայրերի ազատագրման մարտերին:

Վ. Հովհաննիսյանը զոհվել է 1992 թ. սեպտեմբերի 11-ին՝ Վաղուհասի բարձունքի ազատագրման ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում:

1998 թ. փետրվարին Վ. Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է ԵՊՀ արծաթե հուշամեդալով:

ՀՀ նախագահի 1999 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով Վ. Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով:

Արցախյան ազատամարտում հերոսացած քաջարի համալսարանականների հիշատակը վառ պահելու և նրանց օրինակով հայրենասեր նոր սերունդ դաստիարակելու նպատակով ԵՊՀ-ում 1996 թ. նոյեմբերի 20-ին ստեղծվեց ***«Վարդանանք»*** ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը: Ակումբի նախագահ ***Սաթենիկ Աբրահամյանը*** ակումբի խորհրդականների՝ երջանկահիշատակ ***Արկադի Տեր-Թադևոսյանի*** (Կոմանդոս), ***Քեյթի Գունդալկչյանի*** (բանասեր, թուրքագետ), փոխնախագահների՝ ***Ռուզաննա Կրպեյանի*** (Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի քույրը), ***Աննա Բախշյանի*** (Վարդան Բախշյանի քույրը) և «Մայրերի խորհրդի» նախագահի՝ ***Մարո Սարգսյանի*** (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զոհված ուսանող ազատամարտիկ Տիգրան Սարգսյանի մայրը) հետ հսկայածավալ աշխատանք է կատարել:

ԵՊՀ ռեկտորների աջակցության և անմիջական հովանավորության շնորհիվ ակումբն իր գործունեությամբ նպաստել է ԵՊՀ-ում «տղաների» մշտական ներկայությանը, հոգատարությամբ և ուշադրությամբ սփոփել է որդեկորույս ծնողների, զավակների վիշտը՝ ակումբի աշխատանքներին նրանց մասնակից դարձնելով:

***ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը*** իր երախտիքի խոսքն է ուղղում ***«Վարդանանք»*** ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի ղեկավարներին՝ համալսարանի ուսանողների հավաքական ներուժի արդյունավետ կենսագործման, պետականության հզորացման և ամրապնդման, նոր մարտահրավերներին դիմակայելու, նոր ժամանակներում ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված մտածողության, բարոյահոգեբանական և հասարակական հարաբերությունների ձևավորման գործում ունեցած անգնահատելի ավանդի համար:



## Արցախյան 2-րդ պատերազմ (Քառօրյա պատերազմ (2016))

Արցախյան ազատամարտից 22 տարի անց, Ադրբեջանը 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը փորձեց կրկին շրջել պատմության անիվը, սակայն այս անգամ ևս հայ զինվորը հանուն հայրենիքի նախընտրեց մահ իմացյալը…

Քառօրյա պատերազմի (հայտնի է նաև որպես Ապրիլյան պատերազմ) ժամանակ լայնամասշտաբ ռազմական գործողություններ ծավալվեցին Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի և Ադրբեջանի զինված ուժերի միջև՝ արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Այս պատերազմում առավել թեժ մարտեր ընթացան արցախա-ադրբեջանական շփման գծի հարավային (Հադրութ) և հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղություններում:

Հայ ժողովուրդը կրկին բռունցքվեց և հաստատակամ կանգնեց հայ զինվորի կողքին՝ կանխելու մեր երկրի անվտանգությանը սպառնացող ոտնձգությունը: Երևանի պետական համալսարանը մի շարք ծրագրեր իրագործեց:

Երևանի պետական համալսարանում ձևավորվեց «Մարտական պատրաստության» ակումբ, որում գրանցված ավելի քան 200 ուսանող կամավորականները ակումբի անդամների հետ ջոկատ կազմեցին և մեկնեցին Արցախ: Ջոկատի անդամները աչքի ընկան իրենց կազմակերպվածությամբ, կարգապահությամբ և զինվորական պարտականությունների ճշգրիտ կատարմամբ, որն ըստ արժանավույն գնահատվեց զորամասի հրամանատարության և աշխարհազորայինների կողմից:

ԵՊՀ ռեկտորատի արտահերթ նիստում կայացվեց որոշում. բացել առանձին հաշվեհամար, որպեսզի աշխատակիցները և ուսանողները կամավոր հիմունքներով դրամական օգնություն ցուցաբերեն Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և սահմանամերձ գոտիներում ապրող մեր ազգաբնակչությանը: ԵՊՀ ուսանողական բոլոր կառույցները կազմակերպեցին տարաբնույթ միջոցառումներ: ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները պարբերաբար այցելում էին ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալում բուժվող զինծառայողներին և ակումբի «Վարդանանք» թերթի էջերում մշտապես լուսաբանում՝ թե՛ համալսարանական և թե՛ ՀՀ նորօրյա հերոսների կյանքն ու գործած սխրանքները:

Քառօրյա պատերազմի համալսարանական նորօրյա հերոսներից մեկը Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Շուլի Հակոբյանն է: ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Շուլի Հակոբյանը 2016 թ. ապրիլի 4-ին 30 րոպեի ընթացքում խոցել է հակառակորդի «T-80» տեսակի 3 տանկ:



**Շուլի Արմենի Հակոբյան**
«Մարտական խաչ» 2-րդ
աստիճանի շքանշանակիր

***«Սիրելի՛ հայրենակիցներ, ի սրտե շնորհավորում եմ բոլորիս մեր երիտասարդի՝ Հայոց հզոր բանակի կազմավորման 25-ամյակի առթիվ: Ցանկանում եմ խաղաղություն և առողջություն: Թող մեր երկրի սահմանները միշտ ամուր լինեն, իսկ մեր զինվորները՝ միշտ պատրաստ: Այդպես է եղել միշտ, կլինի նաև ապագայում: Հայոց բանակն այս 25 տարիների ընթացքում բազմաթիվ փորձությունների միջով է անցել, ինչը նպաստել է նաև կայացած բանակ ունենալուն: Այդպիսին է Զինված ուժերը, այդպիսին է պաշտպանական ողջ համակարգը, հզոր և անվախ է հայ զինվորը... իսկ Արցախյան և քառօրյա պատերազմներին հաջորդող հաղթանակները պետք է ի կատար ածվեն՝ շնորհիվ այն զինվորների, ովքեր կանգնած են դիրքերում...»:***

*Հունվարի 28, 2017 թ.*
*Շուլի Հակոբյանի շնորհավորանքը*
*Հայոց բանակի կազմավորման 25-ամյակի կապակցությամբ*

Շուլի Արմենի Հակոբյանը ծնվել է 1996 թ. հունիսի 18-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: 2002-2013 թթ. սովորել է Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոցում: Ավարտելով դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ:

2014 թ. ավարտելով առաջին կուրսը՝ կիսատ է թողել ուսումը և մեկնել զինվորական ծառայության: 2014-2016 թթ. ծառայել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում:

2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով հակառակորդի զինված ուժերի ստորաբաժանումները լայնամասշտաբ հարձակումների ժամանակ ծավալված մարտական գործողությունների ընթացքում ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Թալիշ գյուղի պաշտպանական մարտերում:

2016 թ. Ապրիլյան պատերազմում ցուցաբերած բացառիկ խիզախության և անձնուրացության համար Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով Շուլի Արմենի Հակոբյանը պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

2016 թ. զորացրվելուց հետո ուսումը շարունակել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի երկրորդ կուրսում և 2019 թ. ավարտել է այն:

2019-2021 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:

2022 թ.-ից մինչ օրս սովորում է նույն ֆակուլտետի ասպիրանտուրայում:

2016 թ.-ից աշխատում է ՀՀ ՊՆ-ում և շարունակում է ծառայությունը զինված ուժերում:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

## Արցախյան 3-րդ պատերազմ (44-օրյա պատերազմ (2020))

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց Արցախի դեմ: Արցախյան 3-րդ պատերազմը տևեց 44 օր և ավարտվեց նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հայտարարությամբ:

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ուսանած յոթ ուսանող մասնակցել են **44-օրյա պատերազմին**.

1. ***Անդրեասյան Անդրեաս Տիգրանի՝ առկա 1-ին կուրսի ուսանող***
2. ***Խաչատրյան Արման Արամի՝ առկա 1-ին կուրսի ուսանող***
3. ***Սարգսյան Մովսես Կարենի՝ առկա 1-ին կուրսի ուսանող***
4. ***Չիլինգարյան Լիպարիտ Իվանի՝ առկա 1-ին կուրսի ուսանող***
5. ***Վարդանյան Գրիշա Տիգրանի՝ հեռակա 5-րդ կուրսի ուսանող***
6. ***Մաղաթյան Գեղամ Հովհաննեսի՝ շրջանավարտ***
7. ***Տոնոյան Արամ Աշոտի՝ շրջանավարտ***



**Անդրեասյան Անդրեաս Տիգրանի**
2001-2020 թթ.
գ. Ուրցաձոր, Արարատի մարզ

Անդրեաս Տիգրանի Անդրեասյանը ծնվել է 2001թ դեկտեմբերի 5-ին, Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում (2007- 2019 թթ.), որից հետո ընդունվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: 2020 թ. հունվարի 19-ին զորակոչվել է բանակ, ծառայել է Ասկերանում: Մարտական գործողությունների ժամանակ եղել է Ակնայում: Հոկտեմբերի 28-ին ստացել է ծանր վիրավորում և տեղափոխվել հիվանդանոց: Անմահացել է նոյեմբերի 6-ին և հուղարկավորվել Ուրցաձոր գյուղում: Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով:



**Խաչատրյան Արման Արամի**
2000-2020 թթ.
գ. Արագյուղ, Կոտայքի մարզ

Արման Արամի Խաչատրյանը ծնվել է 2000 թ., Կոտայքի մարզի Արագյուղ գյուղում: Բուհական կրթությունը կիսատ թողնելով՝ 2019 թ. զորակոչվել է ծառայության Ասկերանում: Արման Խաչատրյանը հետախույզ էր, ոսոխի դեմ կռվել է քաջաբար և ընկել է հանուն հայրենիքի հոկտեմբերի 11-ին: Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով:



**Սարգսյան Մովսես Կարենի**
2001-2020 թթ.
ք. Երևան

Մովսես Կարենի Սարգսյանը ծնվել է 2001 թ. հունվարի 19-ին Երևանում: Ավարտել է դպրոցը և 2019 թ. ընդունվել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: Համալսարան ընդունվելուց հետո՝ 2019 թ. հուլիսի 16-ին զորակոչվել է Հայոց բանակ: Սկզբնական շրջանում ծառայել է Լուսակերտում և 6 ամսվա ընթացքում, օրինակելի և պարտաճանաչ զինվոր լինելու համար, արժանացել հրամանատարության խրախուսանքների, ծնողներ՝ շնորհակալագրի: Կրտսեր-սերժանտի կոչումով, որպես հրթիռահրետանային համակարգի հաշվարկող, տեղափոխվել է Արցախ՝ Ներքին Հոռաթաղ:

Պատերազմի առաջին օրվանից մտել է մարտի մեջ և պայքարել թշնամու դեմ: 41 օր մարտնչել է հերոսաբար, սակայն 2020 թ. նոյեմբերի 6-ին նահատակվել թշնամու ԱԹՍ-ի հարվածից՝ Շուշի տեղափոխվելու ճանապարհին: Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով:



**Չիլինգարյան Լիպարիտ Իվանի**
2001-2020 թթ.
ք. Վանաձոր, Լոռու մարզ

Լիպարիտ Իվանի Չիլինգարյանը ծնվել է 2001 թ., Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Ընդունվելով ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ՝ զորակոչվել է ծառայության: Թշնամու դեմ մարտնչել է Ջրականում և ընկել հանուն հայրենիքի սեպտեմբերի 29-ին:



**Վարդանյան Գրիշա Տիգրանի**
1997-2020 թթ.
ք. Ջերմուկ, Վայոց ձորի մարզ

Գրիշա Տիգրանի Վարդանյանը ծնվել է 1997 թ., Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում: Եղել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող, մասնակցել է 2016թ. քառօրյա մարտերին: 26 օր էր, ինչ ամուսնացել էր, երբ մեկնեց առաջնագիծ՝ մայր հողը պաշտպանելու: Կռվեց Սանասարի ճակատում և ընկավ հոկտեմբերի 20-ին՝ դիպուկահարի գնդակից: Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված Գրիշա Տիգրանի Վարդանյանը ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով հայրենիքի պաշտպանության գործում ներդրած ավանդի, մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած խիզախության և անմնացորդ նվիրումի համար հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:



**Մադաթյան Գեղամ Հովհաննեսի**
1998-2020թթ.
ք. Չարենցավան, Կոտայքի մարզ

Գեղամ Հովհաննեսի Մադաթյանը ծնվել է 1998 թ. Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Սովորել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, եղել է ռազմական ակումբի անդամ: Ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը: Սեպտեմբերի 27-ից՝ որպես դասակի հրամանատար, մասնակցել է Ջրականի մարտերին: Զոհվել է հանուն հայրենիքի հոկտեմբերի 20-ին՝ Իշխանաձորում: Գեղամ Մադաթյանը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:



***Տոնոյան Արամ Աշոտի***
1990-2020 թթ.
ք. Երևան



Արամ Աշոտի Տոնոյանը ծնվել է 1990 թ., մայրաքաղաք Երևանում: Սովորել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում:

Մասնագիտությամբ եղել է ծրագրավորող, բուհն ավարտելուց հետո ծառայել է «Եղնիկներում»: Սեպտեմբերի 29-ին զորակոչով մեկնել է ռազմաճակատ, կռվել՝ քաջաբար: Զոհվել է հանուն հայրենիքի հոկտեմբերի 29-ին՝ Մատաղիսի պաշտպանական մարտերում:



# 10 Ֆակուլտետի ուսանողական կյանքը



Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում բեղուն և արգասաբեր գործունեություն են ծավալում ուսանողական երկու կառույց՝ **ուսանողական խորհուրդը** և **ուսանողական գիտական ընկերությունը:**

## *Ուսանողական խորհուրդը և հանձնաժողովները Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում*

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման բարձրագույն ընտրովի մարմին է:

Ուսանողական խորհրդի **հիմնական նպատակներն են**՝

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,







- ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցական մակարդակի բարձրացմանն ու քաղաքացիական ակտիվ կեցվածքի ձևավորմանը,
- միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ԵՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը:



***ԵՊՀ Ուսանողական խորհուրդը հիմնադրվել է 1994 թվականին***:

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ուսանողական կյանքը հարուստ և բազմաբնույթ է. ուսանողական խորհրդի և տարբեր հանձնաժողովների ջանքերը կենտրոնացած են ուսանողների ակադեմիական, մշակութային, գիտական և սպորտային զարգացման վրա:



***ՏԿՖ Ուսանողական խորհուրդը***

Ուսանողական խորհուրդը ֆակուլտետի ուսանողների հիմնական ներկայացուցչական մարմինն է: Խորհուրդը նպաստում է ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությանը, կազմակերպում է տարբեր միջոցառումներ և աջակցում ուսանողներին՝ ակտիվորեն մասնակցելու համալսարանական կյանքին: Խորհուրդը նաև կապ է պահպանում ֆակուլտետի ղեկավարության և ուսանողների միջև՝ ապահովելով երկկողմանի արդյունավետ համագործակցություն:

***Ուսանողական խորհրդի աշխատանքների համակարգման նպատակով գործում են հետևյալ հանձնաժողովները՝ Մշակույթի, Գիտակրթական, Սպորտի, Արտաքին կապերի, Լրատվական և Մոնիթորինգի (մշտադիտարկման):***

**Մշակույթի հանձնաժողովը** կազմակերպում













է մշակութային բազմաբնույթ միջոցառումներ՝ համերգներ, ցուցահանդեսներ, թատերական ներկայացումներ և մշակութային այլ ծրագրեր: Հանձնաժողովի նպատակն է նպաստել ուսանողների մշակութային զարգացմանը, ստեղծել հարմարավետ միջավայր ստեղծագործական ինքնարտահայտման համար և աջակցել տաղանդների բացահայտմանն ու զարգացմանը:

Տարիների ընթացքում հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ այցեր Հայաստանի տարբեր թանգարաններ ու մշակութային օջախներ, որոնք նպաստել են ուսանողների մշակութային և ազգային ոգու ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ուսանողները մասնակցել են նաև մշակութային մրցույթների, որոնց շնորհիվ բացահայտվել են ընկերասիրության և մրցակցության գաղտնիքները:

Նման միջոցառումները օգնել են շատ ուսանողների՝ գտնելու իրենց ինքնությունն ու զարգացնել տաղանդները:

Մշակութային երեկոներն ու փառատոները ֆակուլտետի ուսանողական կյանքի անբաժան մասն են: Կազմակերպվում են մշակութային երեկոներ և ցերեկույթներ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց շնորհները, մասնակցել արվեստի և երաժշտական համերգների զանազան միջոցառումների:

















Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու նաև արվեստի ցուցադրություններին և ցուցահանդեսներին, որտեղ ներկայացնում են իրենց ստեղծագործությունները:

Մշակութային ակումբները ֆակուլտետում միշտ առանձնահատուկ դեր են ունեցել: Այստեղ գործել և գործում են մշակութային տարբեր ակումբներ, որոնք կազմակերպում են միջոցառումներ և իրականացնում ծրագրեր մշակութային ժառանգության պահպանման և ճանաչման ուղղությամբ:

**Գիտակրթական հանձնաժողովը** նպաստում է ուսանողության կրթական, գիտական և ստեղծագործական զարգացմանը: Հանձնաժողովի ջանքերով ուսանողները հնարավորություն են ստանում հարստացնել ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ ընդհանուր գիտելիքները, լինել ավելի տեղեկացված: Հանձնաժողովը կազմակերպում է ինտելեկտուալ խաղեր, հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ, քննարկումներ և դասախո-



սություններ: Այդպիսի միջոցառումները նպաստում են ուսանողների ազատ հաղորդակցության հմտությունների զարգացմանը, ազատ արտահայտելու իրենց կարծիքը և դրսևորելու իրենց այնպես, ինչպես հարկն է և այդ ամենին զուգահեռ ակտիվորեն մասնակցելու համալսարանական գիտակրթական







բոլոր միջոցառումներին:

«Արի՛ մրցենք» ամենամյա մրցաշարի շրջանակներում նույնպես գիտակրթական հանձնաժողովը անմասն չի մնում՝ կազմակերպելով «Արդյոք ովքե՞ր են», «Ամենախելացին», «Քառամարտ», «Ի՞նչ, որ-





տե՞ղ, երբ» խաղերը:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի **սպորտի հանձնաժողովը** տարիներ շարունակ ակտիվ գործունեություն է ծավալել սպորտային տարբեր միջոցառումներ և մրցաշարեր կազմակերպելով՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողների ֆիզիկական զարգացմանը և առողջ ապրելակերպի ձևավորմանը: Սպորտի հանձնաժողովի միջոցառումները նպաստում են ուսանողների միջև ընկերական և առողջ մրցակցության, ինչպես նաև թիմային աշխատանքի հմտությունների զարգացմանը: ՏԿՖ սպորտի հանձնաժողովը այս տարիների ընթացքում կազմակերպել է և՛ ներֆակուլտետային, և՛ միջֆակուլտետային մի շարք միջոցառումներ, մրցաշարեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, ինչպես նաև կազմակերպվել է սպորտային վիկտորինա՝ ստուգելու ուսանողների տեղեկացվածությունն ու գիտելիքները սպորտի ոլորտում:

Սպորտի հանձնաժողովի հանդեպ ուսանողների հետաքրքրվածությունն ու աշխատանքներին ներգրավվածությունը տարեցտարի մեծանում են:

Այս մրցույթներում լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողները պարգևատրվում են և հետագայում մասնակցում միջբուհական մրցումներին:

Ֆակուլտետի **արտաքին կապերի հանձնաժողովի** հիմնական գործառույթներից է կրթական լավագույն ծրագրերի, միջոցառումների և կրթաթոշակների մասին ուսանողներին տեղեկացնելը: Այս հանձնաժողովը նպատակ ունի նպաստել ուսանողների մասնագիտական աճին և նրանց համար ապահովել առավել լայն հնարավորություններ:

Ֆակուլտետի ուսխորհուրդը պարբերաբար կազմակերպում է տեղեկատվական **հանդիպումներ և սեմինարներ**, որոնք նպատակ ունեն հարստացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները տնտեսագիտության տարբեր ոլորտներում: Այս միջոցառումները հիանալի հնարավորություն են ուսանողների համար՝ ուսումնասիրելու ժամանակակից տնտեսագիտական միտումները և հասկանալու շուկայի զարգացման ուղղությունները:





















Սեմինարների և հանդիպումների շրջանակում ուսանողները հնարավորություն են ստանում շփվելու տարբեր բնագավառների առաջատար մասնագետների հետ, որոնք ներկայացնում են իրենց հաջողության պատմությունները, ինչպես նաև ոլորտի դժվարությունները հաղթահարելու գաղտնիքները: Այս հանդիպումները ոչ միայն ավելացնում են ուսանողների մասնագիտական գիտելիքները, այլև ոգեշնչում են նրանց հետագա աշխատանքային գործունեությունը խթանելու առումով:









Ֆակուլտետի արտաքին կապերի հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ ուսանողները կարող են ծանոթանալ հանրապետական և միջազգային տարբեր ծրագրերի, մրցույթների և կրթաթոշակների, որոնք նպաստում են նրանց կրթական և մասնագիտական զարգացմանը:

Այս միջոցառումները և հանդիպումները օգնում են ուսանողներին զարգացնել իրենց հմտությունները, ձեռք բերել նոր գիտելիքներ և ընդլայնել մասնագիտական հորիզոնները:

**Լրատվական հանձնաժողովը** զբաղվում է ֆակուլտետում կայանալիք և արդեն իսկ տեղի ունեցած միջոցառումների, դասախոսությունների և սեմինարների լուսաբանմամբ, ինչպես նաև ֆակուլտետային սոցիալական ցանցերի և էջերի միջոցով ուսանողների իրազեկվածությունը ապահովող կոնտենտի ստեղծմամբ:





Ուսանողական խորհրդի հանրային ընկալումը բարձրացնելու, ուսանողության հետ կապը բարելավելու, նրանց ներգրավվածությունը խթանելու համար պետք է ուսանողը հաղորդակից լինի կառույցի մաս հանդիսացող իրողություններին: Ըստ այս նախապայմանների՝ լրատվական հանձնաժողովը իրականացնում է հետևյալ գործառույթները.

**1.** *ՈւԽ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի կառավարում,*

**2.** *Հանձնաժողովների իրականացրած միջոցառումների պատշաճ լուսաբանում,*

**3.** *Ֆակուլտետային լայնածավալ միջոցառումների լուսաբանում,*

**4.** *Կրթական-տեղեկատվական նյութերի հրապարակում,*

**5.** *Սոցիալական-ժամանցային հոլովակների պատրաստում,*

**6.** *Էլեկտրոնային հաղորդակցման կառավարում:*





Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի **Մոնիթորինգի (մշտադիտարկման) հանձնաժողովն** իր գործունեությունը ծավալում է հետևյալ գործառույթների շրջանակներում՝ հետևել և մշտադիտարկել ֆակուլտետային ուսանողական խորհուրդների աշխատանքները, բացահայտել ընթացիկ շեղումներն ու ներկայացնել առաջարկություններ դրանք շտկելու համար, ինչպես նաև նշել զարգացման միջոցառումների պլաններ՝ ուսանողական խորհրդում և ստորաբաժանումներում ներգրավված ուսանողների կարողությունները խթանելու համար, աջակցել ուսանողական խորհրդի նախագահին՝

համակարգելու ուսանողական խորհրդի աշխատանքները:

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահները 1999 թ.-ից առ այսօր ներկայացված են աղյուսակ 10.1-ում:








Աղյուսակ 10.1

**Ֆակուլտետի Ուխ նախագահները 1999 թ.-ից առ այսօր**

| N | Տարիներ | Ֆակուլտետի ՈՒԽ նախագահներ |
|---|---|---|
| 1. | *1999-2003 թթ.* | Սերգեյ Խաչատրյան |
| 2. | *2003-2004 թթ.* | Գևորգ Սաֆարյան |
| 3. | *2004-2006 թթ.* | Մագդա Մարկոսյան |
| 4. | *2006-2008 թթ.* | Կարլեն Խաչատրյան |
| 5. | *2008-2009 թթ.* | Արթուր Եղիազարյան |
| 6. | *2009-2010 թթ.* | Տիգրան Աբովյան |
| 7. | *2010-2011 թթ.* | Լևոն Կլեկչյան |
| 8. | *2011-2013 թթ.* | Հրաչ Գևորգյան |
| 9. | *2013-2017 թթ.* | Ռոզա Ալավերդյան |
| 10. | *2017-2019 թթ.* | Իրինա Վարդանյան |
| 11. | *2019-2021 թթ.* | Միեր Մանասյան |
| 12. | *2021 փետրվար-դեկտեմբեր* | Աննա Ավետյան |
| 13. | *2021-2022 թթ.* | Արփինե Երիմյան |
| 14. | *2022 թ.-ից առ այսօր* | Վերգինե Դանիելյան |





## *Ուսանողական գիտական ընկերությունը*

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ) ԵՊՀ ուսանողներին միավորող գիտակրթական կառույց է, որի *նպատակն* է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

### *ՈւԳԸ հիմնադրումը*

1920-1930-ական թվականներին ԵՊՀ տարբեր ամբիոններում գործել են ամբիոնային ուսանողական գիտական խմբակներ: Գրեթե 2 տասնամյակ անց՝ 1947 թվականի սեպտեմբերին, հրավիրվել է այդ խմբակների անդամների ընդհանուր ժողով, որի ժամանակ որոշվել է ստեղծել համալսարանական ուսանողական գիտական ընկերություն: **1947 թվականին հիմնադրվել է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը**:

1922-1930 թվականներին *տնտեսագիտության* բաժնում գործել են ուսանողական գիտական 2 խմբակներ՝ կոոպերացիայի և տնտեսագիտության: Կոոպերացիայի խմբակը ստեղծվել է 1925-1926 թվականներին և ղեկավարվել է տնտեսագիտության դասախոսների կողմից: Խմբակին անդամակցել են բոլոր ցանկացողները՝ անկախ ֆակուլտետից և մասնագիտությունից: Համալսարանի կոոպերատիվ խմբակը եղել է Երևանի գավառի սպառկոոպերացիային կից գործող կոոպերատիվ բջջային խմբակներից մեկը, որի հիմնական գործառույթն էր օգնել վերացնելու սպառկոոպերացիայի գծով 5000-ից ավելի մարդկանց անգրագիտությունը (1929 թվականին):

### ՈւԳԸ գործառույթները

ՈՒԳԸ-ն նախաձեռնում և իրականացնում է գիտական բազմաբնույթ միջոցառումներ, մասնավորապես՝ միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, նստաշրջաններ, օլիմպիադաներ, հոդվածագրության դպրոց, կլոր սեղան քննարկումներ, դասախոսություններ, գիտաճանաչողական էքսկուրսիաներ, գիտական ու կրթական այլ ուղղվածությամբ նախաձեռնություններ՝ դրանցում ներգրավելով համալսարանական և արտահամալսարանական ներուժը: ԵՊՀ ՈւԳԸ-ի միջազգային գիտա-





ժողովները ամենամյա են: Այդ գիտաժողովներին ակտիվորեն մասնակցում են նաև ***Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի*** **ՈւԳԸ** անդամներն ու ուսանողները՝ «Տնտեսագիտություն և կառավարում» բաժանմունքով: Գիտաժողովներին իրենց աշխատանքներն են ներկայացնում ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանցի ուսանողներ: Մասնակիցների քանակը եղել է շուրջ 300:

ՈՒԳԸ-ն ԵՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ տպագրության է նախապատրաստում նաև երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական աշխատանքները: «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» պարբերականը ՈՒԳԸ-ի գոյության հիմնաքարն է ու դրանով առանձնանում է ուսանողական մնացած կառույցներից: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, որի մեծ մասը պարբերականի խմբագրական խորհրդի անդամ է, ակտիվորեն ներգրավված է ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարման, տպագրության պատրաստման և գիտական աշխատանքների գրախոսման գործընթացի մեջ:

*ՈւԳԸ կառուցվածքը*

ԵՊՀ ՈՒԳԸ ղեկավար մարմինը ՈՒԳԸ գիտական խորհուրդն է, որի կազմի մեջ մտնում են ՈՒԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը և ֆակուլտետային ՈւԳԸ նախագահները: ՈւԳԸ-ն ունի նաև 4 մշտական հանձնաժողովներ՝

- արտաքին կապերի,
- տեղեկատվական հարցերի,
- թարգմանական հարցերի,
- ընդհանուր հարցերի:

Ընկերությունն իր կառուցվածքային սկզբնական օղակներն ունի յուրաքանչյուր ֆակուլտետում: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ձևավորվում է ֆակուլտետի ամբիոնների կողմից ներկայացված առնվազն երկուական ներկայացուցիչներից, ովքեր իրենց կազմից ընտրում են ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ և քարտուղար: Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է:

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈւԳԸ-ն** ակտիվ գործունեություն է ծավալել ՈւԳԸ-ի հիմնադրման դեռևս սկզբնական շրջանում՝ շարունակ նպաստելով համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործմանը՝ տարբեր գիտական ծրագրերում ֆակուլտետի ուսանողների ընդգրկումն ապահովելու միջոցով: Ֆակուլտետի ՈւԳԸ-ն իր նպատակների և գործառույթների իրականացման ժամանակ ակտիվորեն համագործակցում է հայաստանյան և արտասահմանյան գիտական կենտրոնների ու բուհերի ուսանողական գիտական կառույցների հետ՝ նախաձեռնելով ու հաջողությամբ պսակելով միջազգային գիտաժողովներ, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների վերաբերյալ դասընթացներ, միջբուհական օլիմպիադաներ, դասախոսություններ, խմբակներ և այլն:



***ՈւԳԸ անդամները***

ԵՊՀ ՈՒԳԸ 77-ամյա պատմության ընթացքում կառույցին անդամակցել են ավելի քան 10000 ուսանողներ և ասպիրանտներ, իսկ եթե հաշվի առնենք, որ ԵՊՀ ուսանողական գիտական առաջին խմբակն ստեղծվել է 1922 թվականին, ապա ՈՒԳԸ բովով անցած համալսարանականների թիվը շատ ավելի մեծ է: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈւԳԸ-ին անդամակցել են շուրջ 1000 ուսանողներ և երիտասարդ գիտնականներ: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈւԳԸ նախագահները 2014 թ.-ից առ այսօր ներկայացված են աղյուսակ 10.2-ում:

**Աղյուսակ 10.2**

**Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահները 2014- 2024 թթ.**

| *Ժամանակահատված* | Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահներ |
|---|---|
| *2014-2016 թթ.* | Միքայել Ղուկասյան |
| *2016-2017 թթ.* | Գևորգ Ղալաչյան |
| *2017-2020 թթ.* | Մերի Փանոսյան |
| *2020-2021 թթ.* | Տիգրան Կարապետյան |
| *2021-2022 թթ.* | Միհրան Սիսակյան |
| *2022-2023 թթ.* | Անահիտ Գասպարյան |
| *2023-2024 թթ.* | Արտաշես Հարությունյան |
| *2024 թ.-ից առ այսօր* | Անահիտ Սվազյան |





2017-2019 թթ. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ է եղել նույն ֆակուլտետի ուսանողուհի Մերի Փանոսյանը, ով 2019 թ. դեկտեմբերի 17-ին կայացած ԵՊՀ գիտական խորհրդի նիստի ընթացքում միաձայն ընտրվել է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ: Այդ տարիների ընթացքում ֆակուլտետի ՈւԳԸ-ն աչքի է ընկել տարաբնույթ միջոցառումների, մասնավորապես՝ միջազգային ու հանրապետական գիտաժողովների, օլիմպիադաների, նստաշրջանների, աշխատանքային տոնավաճառների, գիտախաղերի, մասնագիտական պանելային քննարկումների և նախաձեռնությունների կազմակերպմամբ: Այդ շրջանում և հետագայում ֆակուլտետի ՈւԳԸ-ն «ԵՊՀ ՈւԳԸ վարկանիշային աղյուսակում» զբաղեցրել է պատվավոր «գերազանց» հորիզոնականը:

Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահներն ու անդամներից շատերը տարբեր տարիների դարձել են «Հանրապետության լավագույն ուսանող» և «ԵՊՀ լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության, ինչպես նաև արտերկրում անցկացվող բազմաբնույթ մրցույթների հաղթողներ՝ բարձր պահելով ֆակուլտետի և նրա ՈւԳԸ-ի պատիվը:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈՒԳԸ նախկին անդամներից և ղեկավար կազմի ներկայացուցիչներից շատերը համալրել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը:

**Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի՝ ՈւԳԸ մրցանակների արժանացածները**

ԵՊՀ ՈՒԳԸ *պատվավոր* անդամի կոչմանն արժանացած համալսարանականների շարքերում են եղել նաև Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ներկայիս դեկան, տ.գ.թ., դոց., 2008-2011 թթ. ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Կառլեն Խաչատրյանը (պարգևատրվել է 2012 թ.-ին) և ֆակուլտետի դասախոս, 2019-2023 թթ. ԵՊՀ ՈւԳԸ նախագահ Մերի Փանոսյանը (պարգևատրվել է 2024 թ.-ին):










TRAINING AND RESEARCH CENTRE
CENTRAL BANK OF ARMENIA

# 11 Ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները



ԵՊՀ-ն, որպես որակյալ կրթության դարբնոց, մշտապես կիրառում է ուսանողների առաջադիմությունը բարելավելու, ուսման հանդեպ հետաքրքրությունը մեծացնելու մի շարք խթանիչ գործիքներ, դրանցից ամենաավանդականն է անվանական կրթաթոշակների շնորհումը: Վերոնշյալի համատեքստում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ձևավորվել է յուրաքանչյուր կիսամյակ 4 անվանական կրթաթոշակներ (Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Հասրաթյանի, Գրիգոր Հարությունյանի և Ստեփան Սիտարյանի անվան) շնորհելու մշակույթը:

Հայ առաքելական եկեղեցու վարդապետ Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակի սահմանումը ԵՊՀ ռեկտորատի կողմից Մայր բուհի՝ մրցունակ գիտելիքներ տրամադրելուն զուգահեռ հոգևոր կրթությունը կարևորելու վկայությունն է: Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները առ այսօր հետաքրքրություն են առաջացնում տնտեսագետների մոտ: Վերջինիս անվան կրթաթոշակին այս տարիների ընթացքում արժանացել է 13 ուսանող (տես Աղյուսակ 11.1):

Պետական և հասարակական գործիչ, Երևանը՝ բաց երկնքի տակ «թանգարան» դարձնելու գործի նվիրյալ Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակը ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում շնորհվել է շուրջ 12 ուսանողների (տես Աղյուսակ 11.2):

Պետական գործիչ Գրիգոր Հարությունյանի և տնտեսագիտության դոկտոր, մի շարք օրենքների նախաձեռնող և մշակող Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակներ են ստացել ֆակուլտետի շուրջ 18 ուսանողներ (տես Աղյուսակ 11.3 և 11.4):

Բոլոր 4 անվանական կրթաթոշակների թեկնածուներն ընտրվում են ըստ առաջադիմության՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց սովորելու պայմանով: Եղել են ուսանողներ, որոնք պահպանելով իրենց բարձր առաջադիմությունը, ստացել են կրթաթոշակը մի քանի տարի անընդմեջ:

Աղյուսակ 11.1

## Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Կուրս | Տարեթիվ |
|---|---|---|---|
| 1. | Պապոյան Մարիամ Արգամի | 3-րդ | 2008-2009 ուս. տարի |
| 2. | Խզմալյան Մարինե Արմենի | 4-րդ | 2009-2010 ուս. տարի |
| 3. | Դեմիրչյան Մանե Օնիկի | 4-րդ | 2010-2011 ուս. տարի |
| 4. | Մանվելյան Կատյա Ռոբերտի | 3-րդ | 2011-2012 ուս. տարի |
| 5. | Ասլանյան Անուշիկ Հարությունի | 4-րդ | 2012-2013 ուս. տարի |
| 6. | Նանյան Աշոտ Արարատի | 4-րդ | 2013-2014 ուս. տարի |
| 7. | Սարգսյան Գրետա Արամի | 3-րդ, տնտ. տես. | 2014-2015 ուս. տարի |
| 8. | Սարգսյան Գրետա Արամի | 4-րդ, տնտ. տես. | 2015-2016 ուս. տարի |
| 9. | Կարապետյան Արմինե Արմենակի | 4-րդ, տնտ. տես. | 2016-2017 ուս. տարի |
| 10. | Վարդանյան Իրինա Արմենակի | Մագ. 1-ին, կառավ. | 2017-2018 ուս. տարի |
| 11. | Վարդանյան Իրինա Արմենակի | Մագ. 2-րդ կառավ. | 2018-2019 ուս. տարի |
| 12. | Հովհաննիսյան Նվեր Մամիկոնի | Մագ. 1-ին, տնտտես. | 2019-2020 ուս. տարի |
| 13. | Հովհաննիսյան Նվեր Մամիկոնի | Մագ. 2-րդ, կառավ. | 2020-2021 ուս. տարի |
| 14. | Բադալյան Նարինե Սևակի | 3-րդ, ֆինանս. | 2021-2022 ուս. տարի |
| 15. | Գասպարյան Անահիտ Արմենի | 4-րդ, ֆինանս. | 2022-2023 ուս. տարի |
| 16. | Մաթևոսյան Վիկտորյա Վահագնի | 4-րդ, կառավ. | 2023-2024 ուս. տարի |

## Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ


Պապոյան Մարիամ


Խզմալյան Մարինե


Դեմիրչյան Մանե


Մանվելյան Կատյա


Նանյան Աշոտ


Սարգսյան Գրետա


Կարապետյան Արմինե


Վարդանյան Իրինա


Հովհաննիսյան Նվեր


Բաղալյան Նարինե


Գասպարյան Անահիտ


Մաթևոսյան Վիկտորյա

Աղյուսակ 11.2

**Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ**

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Կուրս | Տարեթիվ |
|---|---|---|---|
| 1. | Աբովյան Տիգրան Վարդանի | 4-րդ | 2008-2009 ուս. տարի |
| 2. | Թաղևոսյան Սոսե Արայիկի | 4-րդ | 2009-2010 ուս. տարի |
| 3. | Ալեքսանյան Րաֆֆի Արայի | 3-րդ | 2010-2011 ուս. տարի |
| 4. | Ալեքսանյան Րաֆֆի Արայի | 4-րդ | 2011-2012 ուս. տարի |
| 5. | Ալեքսանյան Րաֆֆի Արայի | Մագ. 1-ին | 2012-2013 ուս. տարի |
| 6. | Սարգսյան Արևիկ Վարդանի | 4-րդ | 2013-2014 ուս. տարի |
| 7. | Բարսեղյան Աննա Արմենի | 3-րդ | 2014-2015 ուս. տարի |
| 8. | Գրիգորյան Բելլա Դավիդի | 4-րդ, տնտ. տես. | 2015-2016 ուս. տարի |
| 9. | Սահակյան Աստղիկ Ահարոնի | 4-րդ, կառավ. | 2016-2017 ուս. տարի |
| 10. | Քարամյան Տիգրան Սպարտակի | 4-րդ, տնտ. տես. | 2017-2018 ուս. տարի |
| 11. | Քարամյան Տիգրան Սպարտակի | Մագ. 1-ին, տնտտես. | 2018-2019 ուս. տարի |
| 12. | Քարամյան Տիգրան Սպարտակի | Մագ. 2-րդ, տնտտես. | 2019-2020 ուս. տարի |
| 13. | Հակոբյան Աստղիկ Ռազմիկի | Մագ. 2-րդ, կառավ. | 2020-2021 ուս. տարի |
| 14. | Գալստյան Միլենա Հարությունի | 4-րդ, ֆինանս | 2021-2022 ուս. տարի |
| 15. | Ծատուրյան Աննա Դավիթի | 4-րդ, կառավ. | 2022-2023 ուս. տարի |
| 16. | Ծառուկյան Անի Հովհաննեսի | 4-րդ, տնտտես. | 2023-2024 ուս. տարի |

## Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ



Աբովյան Տիգրան



Թադևոսյան Սոսե



Ալեքսանյան Րաֆֆի



Բարսեղյան Աննա



Սահակյան Աստղիկ



Քարամյան Տիգրան



Հակոբյան Աստղիկ



Գալստյան Միլենա



Ծատուրյան Աննա



Ծառուկյան Անի

Աղյուսակ 11.3

**Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ**

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Կուրս | Տարեթիվ |
|---|---|---|---|
| 1. | Աբգարյան Դավիթ Կամոյի | 3-րդ | 2010-2011 ուս. տարի |
| 2. | Աբգարյան Դավիթ Կամոյի | 4-րդ | 2011-2012 ուս. տարի |
| 3. | Հովսեփյան Սիրարփի Գեղամի | 3-րդ | 2012-2013 ուս. տարի |
| 4. | Հովսեփյան Սիրարփի Գեղամի | 4-րդ | 2013-2014 ուս. տարի |
| 5. | Ղարիբյան Սինարա Ստեփանի | 3-րդ | 2014-2015 ուս. տարի |
| 6. | Օհանյան Տիգրան Կարենի | 4-րդ, տնտ. տես. | 2015-2016 ուս. տարի |
| 7. | Պետրոսյան Անուշ Ռաֆիկի | 4-րդ, տնտ. տես. | 2016-2017 ուս. տարի |
| 8. | Պետրոսյան Անուշ Ռաֆիկի | Մագ. 1-ին, տնտտես. | 2017-2018 1-ին կիսամյակ |
| 9. | Ղազարյան Ամասյա Արմենի | 4-րդ, տնտ. տես | 2017-2018 2-րդ կիսամյակ |
| 10. | Ղազարյան Ամասյա Արմենի | Մագ. 1-ին, տնտտես. | 2018-2019 ուս. տարի |
| 11. | Ղազարյան Ամասյա Արմենի | Մագ. 2-րդ, տնտտես. | 2019-2020 ուս. տարի |
| 12. | Բաղդասարյան Քնարիկ Գեղամի | 3-րդ, կառավ. | 2020-2021 ուս. տարի |
| 13. | Բաղդասարյան Քնարիկ Գեղամի | 4-րդ, կառավ. | 2021-2022 ուս. տարի |
| 14. | Ծառուկյան Անի Հովհաննեսի | 3-րդ, տնտտես. | 2022-2023 ուս. տարի |
| 15. | Ասատրյան Վահե Ջավենի | 3-րդ, ֆինանս. | 2023-2024 ուս. տարի |

## Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ


Աբգարյան Դավիթ


Հովսեփյան Սիրարփի


Ղարիբյան Սինարա


Օհանյան Տիգրան


Պետրոսյան Անուշ


Ղազարյան Ամասյա


Բաղդասարյան Քնարիկ


Ծառուկյան Անի


Ասատրյան Վահե

Աղյուսակ 11.4

Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Կուրս | Տարեթիվ |
|---|---|---|---|
| 1. | Օհանյան Տիգրան Կարենի | 3-րդ | 2014-2015 ուս. տարի |
| 2. | Ալավերդյան Ռոզա Արթուրի | Մագ. 2-րդ, կառավ. | 2015-2016 ուս. տարի |
| 3. | Աթանյան Հռիփսիմե Մայիսի | Մագ. 1-ին, տնտես. | 2016-2017 ուս. տարի |
| 4. | Աթանյան Հռիփսիմե Մայիսի | Մագ. 2-րդ, տնտես. | 2017-2018 ուս. տարի |
| 5. | Փանոսյան Մերի Ստեփանոսի | Մագ. 1-ին, ֆինանս. | 2018-2019 ուս. տարի |
| 6. | Փանոսյան Մերի Ստեփանոսի | Մագ. 2-րդ, ֆինանս. | 2019-2020 ուս. տարի |
| 7. | Բալասանյան Աննա Արարատի | Մագ. 2-րդ, ֆինանս. | 2020-2021 ուս. տարի |
| 8. | Եղոյան Միլենա Կարենի | 4-րդ, տնտես. | 2021-2022 ուս. տարի |
| 9. | Պետրոսյան Սարգիս Արամի | 4-րդ, ֆինանս. | 2022-2023 ուս. տարի |
| 10. | Սարգսյան Անգելինա Սերոբի | 4-րդ, ֆինանս. | 2023-2024 ուս. տարի |

## Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ


Օհանյան Տիգրան


Ալավերդյան Ռոզա


Աթանյան Հռիփսիմե


Փանոսյան Մերի


Բալասանյան Աննա


Եղոյան Միլենա


Պետրոսյան Սարգիս


Սարգսյան Անգելինա

# 12 Ֆակուլտետի երախտավորները





**ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱՖՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,*
*ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ԵՊՀ ռեկտոր*
*(1937 թ. օգոստոս - սեպտեմբեր)*

Ծնվել է 1904 թվականի փետրվարի 12-ին Կապանի շրջանի Կավարտ գյուղում: Երկու տարի գյուղական դպրոցում սովորելուց հետո 1912 թ. ուսումը շարունակել է Շուշիի ռեալական դպրոցում:

1928-29 թթ. սովորել է Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում, իսկ 1933-36 թթ.՝ կարմիր պրոֆեսուրայի ագրարային ինստիտուտում: 1929-37 թթ. կատարել է կուսակցական ղեկավար աշխատանք: 1926-37 թթ. ՀԿԿ Կենտկոմի անդամ էր:

Ա. Արզումանյանը քաղաքատնտեսություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում: Նրա դասախոսություններն աչքի էին ընկնում իրենց խորությամբ ու հետաքրքրությամբ: 1937 թ. օգոստոսի 7-ին նշանակվել է համալսարանի ռեկտոր: Այդ դժնի տարիներին ծանր մթնոլորտ էր նաև Երևանի համալսարանում: Վերադաս օրգաններ ուղարկված անստորագիր նամակներում Արզումանյանին մեղադրում էին ազգայնականներին և հատկապես «ժողովրդի թշնամի, հայտնի ազգայնական», ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Աղասի Խանջյանին ակտիվորեն պաշտպանելու համար: Եվ ընդամենը մեկուկես ամիս հետո նրան ազատում են ռեկտորի պաշտոնից, գործը հանձնում ՆԳՄ օրգաններին ու անմիջապես բանտարկում: Բարեբախտաբար, հաջողվում է ապացուցել նրա անմեղությունը, և կարճ ժամանակ անց Արզումանյանն ազատվում է բանտից:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից նա կամավոր մեկնում է խորհրդային բանակ, ծառայում Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինական առաջին և չորրորդ ռազմաճակատների զորամասերում:

Ա. Արզումանյանը ետպատերազմյան տարիներին ամբողջովին նվիրվում է գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանքին, որտեղ և դրսևորվում է տնտեսագետ-տեսաբանի նրա տաղանդը: 1946-52 թթ. աշխատում է Բաքվի Ս.Մ. Կիրովի անվան պետական համալսարանում որպես դեկան, ապա՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այնուհետև, ԽՄԿԿ Կենտկոմի որոշմամբ, փոխադրվում է Մոսկվա ու աշխատում իբրև ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի իմպերիալիզմի ընդհանուր պրոբլեմների բաժանմունքի վարիչ և տնօրենի տեղակալ:

1956 թ. նրան հանձնարարվում է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի ու միջազգային հարաբերությունների ինստիտուտի կազմակերպումը, որի անփոփոխ տնօրենն էր մինչև իր կյանքի վերջը: Հենց այդ տարիներին լայնորեն ծավալվում է նրա՝ համընդհանուր ճանաչում գտած գիտական եռանդուն գործունեությունը: Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների:

1958 թ. Արզումանյանն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1963 թ.՝ ակադեմիկոս, էկոնոմիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և ԳԱ նախագահության անդամ, ինչը նրա գիտական վաստակի համընդհանուր ճանաչման ու գնահատման վկայությունն է:

Հայ գիտնականի անունը լայնորեն հայտնի էր ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև արտերկրում: Նա կուսակցական, պետական ու քաղաքական ակտիվ գործիչ էր՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, Խորհրդային մեծ հանրագիտարանի գիտական խորհրդի անդամ: Նա համաշխարհային էկոնոմիկայի ու միջազգային հարաբերությունների ճանաչված մասնագետ էր մեր երկրում և նրա սահմաններից դուրս: Պարգևատրվել է ԽՍՀՄ բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Ա. Արզումանյանը վախճանվել է 1965 թվականի հուլիսի 18-ին:



**ԱԶԱՏՅԱՆ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ**
*Տնտեսագետ, պրոֆեսոր,*
*ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,*
*ՀԽՍՀ և Վր. ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1881 թ. սեպտեմբերի 25-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Ավարտել է Թիֆլիսի ռեալական դպրոցը:

1905 թ. ընդունվել է ՌՍԴԲ կուսակցության շարքերը և դարձել նրա մենշևիկյան ֆրակցիայի անդամ: 1905 թ. սեպտեմբերին ձերբակալումից խուսափելու նպատակով մեկնել է արտասահման և Փարիզի ազգային գրադարանում զբաղվել հասարակական գիտությունների ուսումնասիրությամբ: 1906թ. վերադարձել է Թիֆլիս ու անցել կուսակցական աշխատանքի: 1908-1911 թթ. աշխատել է Բաքվում, ընտրվել մետաղագործ բանվորների արհեստակցական միության քարտուղար, ապա նաև՝ ՌՍԴԲ(մ)Կ Բաքվի կոմիտեի քարտուղար:

Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո տեղափոխվել է Երևան և վարել մի շարք պատասխանատու պաշտոններ. եղել է Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի նախագահ, ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղար, Երևանի քաղաքային խորհրդի նախագահ, 1922-1929 թթ.՝ Հայաստանի կենտգործկոմի նախագահի տեղակալ: 1921 թ. հրավիրվել է ԵՊՀ, դասավանդել «Քաղաքատնտեսություն», «Ագրարային հարց», «Տնտեսական փուլերի պատմություն» առարկաները:

1928 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1930 թ. տեղափոխվել է Մոսկվա ու նշանակվել Լենինի անվան գյուղատնտեսական ակադեմիայի փոխնախագահ, սակայն 1931 թ. հունիսին առողջական վիճակից ելնելով տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ գործուն մասնակցություն է ունեցել նույն ակադեմիայի անդրկովկասյան մասնաճյուղի ստեղծմանը:

1934 թ.-ից Թիֆլիսի բարձրագույն ուսումնական հաստատություններում անցել է մանկավարժական աշխատանքի: 1956 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ, խմբագրել Կ. Մարքսի «Կապիտալի» հայերեն առաջին հրատարակության երկրորդ և երրորդ հատորները:

1961 թ. արժանացել է Վր. ԽՍՀ և ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1964 թ. նոյեմբերի 13-ին Թբիլիսիում, աճյունն ամփոփված է Երևանում:

Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 25 շենքի պատին ամրացված է նրան նվիրված հուշատախտակ:



**ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ**

*Պատմաբան, բանասեր, տնտեսագետ*

Ծնվել է 1885 թ. հոկտեմբերի 3-ին Պարսկաստանի Մակու քաղաքում, որտեղ ստացել է սկզբնական կրթություն: 1907 թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը: Մինչև 1913 թ. եղել է նույն կրթօջախի ուսուցիչ:

1921-1922 թթ. աշխատել է Հայպետհրատում: 1921թ. հրավիրվել է դասախոսելու ԵՊՀ-ում: Հասարակագիտական և պատմագրական ֆակուլտետներում դասավանդել է հայ հասարակական մտքի պատմություն և տնտեսական զարգացման պատմություն, վարել հասարակագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը և եղել համալսարանի վարչության անդամ: 1925 թ. դասավանդել է Երևանի կուսդպրոցում:

1926-1930 թթ. եղել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի անդամ: Այնուհետև զբաղվել է գրական-գիտական աշխատանքով՝ ստեղծելով մի շարք ինքնատիպ ու մնայուն գործեր, որոնցից են՝ «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում» և «Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում» աշխատությունները:

Տնտեսագիտական հետազոտությունները վերաբերում են Հայաստանի տնտեսական զարգացման պատմությանը՝ «Հայ շինականի և գեղջկուհու աշխատավարձը 5-րդ դարում», «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար» (Եր., 1927 թ.), տնտեսագիտության տեսությանը՝ «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» (Եր., 1926 թ.) և այլ հարցերի:

Գործուն մասնակցություն է ունեցել 1934-1935 թթ. հրատարակված «Ռուս-հայերեն նոր բառարանի» ստեղծմանը, ինչպես նաև կազմել է «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան»-ը (Եր., 1964 թ.):

Ծավալել է նաև թարգմանչական գործունեություն, որի լավագույն դրսևորումներից է Կ. Մարքսի «Կապիտալ»-ի թարգմանությունը գերմաներենից:

1937 թ. հուլիսի 26-ին ձերբակալվել է հակահեղափոխական գործունեություն ծավալելու մեղադրանքով: Գնդակահարման մասին վճիռը կայացվել է 1937 թ. դեկտեմբերի 28-ին:

1955 թ. արդարացվել է:



**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՈՍԻ**
*Տնտեսագետ, պրոֆեսոր,*
*ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1904 թ. նոյեմբերի 5-ին Շիրակի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզ) Լուսաղբյուր գյուղում: Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) ծխական դպրոցն ավարտելուց հետո սովորել է հողաչափների վարժարանում: 1933 թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ ինդուստրիալ ինստիտուտը, 1938 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը և մինչև կյանքի վերջը դասախոսել նույն ֆակուլտետում:

1945 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1946-1968 թթ. եղել է ԵՊՀ ժողովրդական տնտեսության պլանավորման և ճյուղային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ:

Մեծ է նրա վաստակը ինչպես Հայաստանի տնտեսության զարգացման պատմության լուսաբանման, այնպես էլ սոցիալիստական տնտեսության պլանավորման կատարելագործման, արտադրության արդյունավետության բարձրացման, միջճյուղային կապերի բարելավման հիմնախնդիրների լուծման և տնտեսագետ կադրերի պատրաստման գործում:

Հեղինակ է «Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի մասին» (Եր., 1954 թ.), «Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն» (Եր., 1960 թ.), «Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը» (Եր., 1962 թ.), «ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության բալանսը» (Եր., 1970 թ.) աշխատությունների:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական բազմաթիվ ատենախոսություններ:

1966 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1968 թ. հուլիսի 4-ին Երևանում:



**ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ ԱՂԱԼՈՅԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Ծնվել է 1907 թ. դեկտեմբերի 11-ին ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Սիսիանում, ապա ավարտել Գորիսի մանկավարժական տեխնիկումը, 1934 թ.՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետը: Սիսիանի դպրոցներում աշխատել է ուսուցիչ, եղել է ժողկրթբաժնի, ապա կուսշրջկոմի բաժնի վարիչ:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել շքանշանների ու մեդալների:

1947 թ. ավարտել է ասպիրանտուրան: 1948 թ. պաշտպանել է թեկնածուական, 1963 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1949 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1964 թ.՝ պրոֆեսորի կոչում:

Երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում և ԵրԲԻ-ում: 1971-1977 թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, ԵՊՀ-ում գործող տնտեսագիտության մասնագիտական խորհրդի նախագահ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների ու գրքերի, որոնցից են՝ «Մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության ոչնչացման և նրանց էական տարբերությունների վերացման մասին» (Եր., 1959 թ.), «Սոցիալիստական սեփականության ձևերի զարգացման մասին» (Եր., 1960 թ.), «Արտադրությունն ու սպառումը սոցիալիզմի ժամանակ» (Եր., 1963 թ.):

1967 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1986 թ. հունվարի 20-ին Երևանում:



**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1908 թ. ապրիլի 17-ին Ախալքալաքում: 1932 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանը՝ մաթեմատիկական վիճակագրություն մասնագիտությամբ:

1952 թ. պաշտպանել է թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Գիտամանկավարժական գործունեությունն սկսել է Մոսկվայի ֆինանսական ինստիտուտում, աշխատել ԽՍՀՄ աշխատանքի և սոցիալական հարցերի պետական կոմիտեի ԳՀ ինստիտուտում:

1960 թ. աշխատանքի է հրավիրվել Հայաստան: Եղել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնտեսական-վիճակագրական հետազոտությունների բաժնի վարիչ, ՀԽՍՀ պետպլանի հաշվողական կենտրոնի տնօրեն, ԵՊՀ պրոֆեսոր, 1972-1975 թթ.՝ վիճակագրության ամբիոնի վարիչ:

Զբաղվել է բնակչության կենսամակարդակի հետազոտության մեթոդաբանության մշակմամբ:

Վախճանվել է 1977 թ. հունվարի 20-ին Երևանում:



**ԱԴՈՆՑ ՄՈՒՇԵՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1910 թ. մայիսի 16-ին Բաքվում: 1932 թ. ավարտել է Երևանի հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտը, 1948 թ.՝ ասպիրանտուրան: Նույն թվականին պաշտպանել է թեկնածուական, 1958 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1961 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1948-1955 թթ. ղեկավարել է ՖԿՀՊԻ քաղաքատնտեսության ամբիոնը, 1955-1958 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի քաղաքատնտեսության բաժինը:

1958-1961 թթ. եղել է ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1962-1966 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1966-1989 թթ.՝ տնտեսագիտության և պլանավորման հայկական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների և մենագրությունների, որոնցից են «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում» (ռուս., Եր., 1957 թ.), «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը» (Եր., 1963 թ.), «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին» (Եր., 1968 թ.), «Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան» (Եր., 1978 թ.):

Եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական բազմաթիվ ատենախոսություններ:

1963-1967 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ ԳԽ պատվոգրերով:

Վախճանվել է 1994 թ. հունիսի 2-ին Երևանում:



**ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1919 թ. մարտի 9-ին ներկայիս ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի յոթնամյա դպրոցում: 1938 թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) գյուղատնտեսական տեխնիկումը և աշխատանքի անցել որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1940 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Մեծ հայրենականին և երկու անգամ ծանր վիրավորվել:

1949 թ. ավարտել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1952 թ.՝ ասպիրանտուրան: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1976 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1960-1970 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1968-1975 թթ.՝ ժողտնտեսության պլանավորման ամբիոնի վարիչ: 1975 թ. ստանձնել է նորաստեղծ ԵԺՏԻ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը, միաժամանակ՝ մինչև 1991 թ., ղեկավարել նույն ինստիտուտի ժողտնտեսության պլանավորման ամբիոնը:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների, այդ թվում՝ «Ժողովրդատնտեսական պլանի ցուցանիշների սիստեմը» (Եր., 1957 թ.), «Ինքնարժեքի պլանավորման հիմնական հարցերը» (Եր., 1967 թ.), «Արդյունաբերական արտադրանքի մեծածախ գների պլանավորումը» (Եր., 1969 թ.), «Նյութատեխնիկական մատակարարման պլանաչափ զարգացումը Սովետական Հայաստանում: Հիմնական տնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծություն» (Եր., 1973 թ.), «Սոցիալիստական պլանավորման բնորոշ գծերը» (Եր., 1986 թ.) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 ատենախոսություն:

Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» և մարտական մեդալներով:

Վախճանվել է 1995 թ. փետրվարի 27-ին Երևանում:



**ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՐԱՆՏ ՀՈՎՍԵՓԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1929 թ. մայիսի 15-ին ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Թովուզ գյուղում: 1948 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1953 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1956 թ.՝ ասպիրանտուրան:

1960 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1967 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1956 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս, դոցենտ:

1965-1966 թթ. եղել է ԵՊՀ հեռակա և երեկոյան ուսուցման գծով պրոռեկտորի պաշտոնակատար:

1975-1982 թթ. եղել է ԵԺՏԻ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 70 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Նյութական շահագրգռվածության սկզբունքը կոլտնտեսային արտադրության մեջ» (Եր., 1959 թ.), «Նյութական շահագրգռվածության տնտեսական օրենքը սոցիալիզմի ժամանակ» (Եր., 1973թ.) մենագրությունների:

2000 թ. պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով:

Վախճանվել է 2002 թ. նոյեմբերի 10-ին Երևանում:



**ՄԱՐԳԱՐՅԱՆ ՇԱՎԱՐՇ ՍԵԴՐԱԿԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1930 թ. հունիսի 16-ին ՀԽՍՀ Իջևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզ) Սևքար գյուղում: 1947 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1950 թ.՝ Երևանի վիճակագրական տեխնիկումը, 1955 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը:

1961թ. պաշտպանել է թեկնածուական, 1976 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1977 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1955-1958 թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի ասիստենտ, 1959-1974 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտքարտուղար, ապա՝ քաղաքատնտեսության բաժնի վարիչ, ղեկավարել նաև հանրապետության միջճյուղային հաշվեկշիռների կազմման աշխատանքները: 1974-1979 թթ. եղել է ԵրՊԻ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1979-1984 թթ.՝ ԵԺՏԻ ռեկտոր, 1984-1995 թթ.՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1995-2000 թթ.՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն:

Հեղինակ է շուրջ 80 գիտական ուսումնասիրությունների, այդ թվում՝ 7 մենագրության, որոնցից են՝ «Հայկական ՍՍՌ մեքենաշինության մասնագիտացումն ու կոոպերացումը» (Եր., 1961 թ.), «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության միջճյուղային կապերը՝ (Եր., 1970 թ.), «Զարգացած սոցիալիզմի ընդլայնված վերարտադրության բնորոշ գծերը» (Եր., 1979 թ.):

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են 20 թեկնածուական և մի քանի դոկտորական ատենախոսություն:

Պարգևատրվել է «Աշխատանքային փառք» մեդալով և ՀԽՍՀ ԳԽ պատվոգրերով:

Վախճանվել է 2000 թ. հոկտեմբերի 14-ին Իջևանում, աճյունն ամփոփված է ծննդավայրում:



**ԽԼՂԱԹՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԵՐԵՄԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1930 թ. օգոստոսի 20-ին ՀԽՍՀ Ախուրյանի շրջանի Ճլոխան (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Բենիամին) գյուղում: 1934 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1949 թ. ավարտել է թիվ 41 միջնակարգ դպրոցը, 1954 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1957 թ.՝ ասպիրանտուրան:

1958 թ. պաշտպանել է թեկնածուական, 1971 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1962 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1973 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1958-1961 թթ. եղել է ԵՊՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի դասախոս, 1961-1975 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ, 1975-1979 թթ.՝ նորաստեղծ ԵԺՏԻ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1980-1991 թթ.՝ ֆինանսահաշվային ֆակուլտետի դեկան, 1991-2002 թթ.՝ ընդհանուր ֆինանսներ և վարկ ամբիոնի պրոֆեսոր:

Գիտական ուսումնասիրությունները վերաբերում են տնտեսագիտության և ֆինանսական պլանավորման բնագավառում մաթեմատիկական մեթոդների կիրառմանը:

Հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Կապիտալ ներդրումների տնտեսական էֆեկտիվությունը և շինարարության արժեքի իջեցման ուղիները» (Եր., 1957 թ.), «Դրամաշրջանառությունը և հաշվարկների սիստեմը ՍՍՌՄ-ում» (Եր., 1962 թ.), «Արտադրության շահութաբերությունը և մաթեմատիկական մեթոդները» (Եր., 1968 թ.), «Ձեռնարկության արտադրության շահութաբերությունը և օպտիմալ պլանավորումը» (Եր., 1970 թ.), «Արտադրության շահութաբերությունը» (Եր., 1974 թ.) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 22 ատենախոսություն:

1970 թ. պարգևատրվել է Վ.Ի. Լենինի 100-ամյակի հոբելյանական, 2000 թ.՝ Անանիա Շիրակացու մեդալներով:

Վախճանվել է 2002 թ. մայիսի 8-ին Երևանում:



**ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ ՌՈՒԲԵՆԻ**

*Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1933 թ. հոկտեմբերի 2-ին ԼՂԻՄ Մարտունու շրջանի Նորաշեն գյուղում: 1957 թ. ավարտել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1964 թ.՝ ասպիրանտուրան:

1962 թ.-ից դասավանդել է ԵՊՀ ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոնում: 1972 թ. դարձել է աշխատանքի էկոնոմիկայի նորաստեղծ ամբիոնի վարիչ և 1975 թ. ամբիոնի հետ տեղափոխվել է ԵԺՏԻ:

1985 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1986 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1993-2001 թթ. աշխատել է ՌԴ կառավարությանը կից Մոսկվայի Ժողովրդական տնտեսության ակադեմիայում:

Հեղինակ է 64 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 18 մենագրության, 5 դասագրքի և ուսումնական ձեռնարկի: Հրատարակել է «Աշխատավարձի ձևերի և համակարգերի կատարելագործումը արդյունաբերության մեջ» (Եր., 1976 թ.), «Աշխատանքի վերջնական արդյունքների համար կոլեկտիվ վարձատրության արդյունավետությունը» (Եր., 1981 թ.) մենագրությունները և «Աշխատանքի էկոնոմիկա» դասագիրքը (ռուս., Մ., 1991 թ.):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 ատենախոսություն:

2003 թ. ստեղծել է «Հրանտ» կրթաթոշակային հիմնադրամը, որի սահմանած «Բարեկամություն» կրթաթոշակներից 15-ը հատկացվել է ԵՊՀ գերազանցիկ ուսանողներին, 2007 թ.՝ «Գիտության, կրթության, առողջապահության զարգացում» ՀՀ բարեգործական հիմնադրամը, որը ՀՀ բուհերի համար սահմանել է «Բարեկամություն» անունով կրթաթոշակ:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:



**ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ ԵՐՎԱՆԴԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1939 թ. մայիսի 23-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1957 թ. ավարտել է տեղի թիվ 38 միջնակարգ դպրոցը, 1959 թ.՝ Երևանի առևտրատնտեսագիտական տեխնիկումը, 1964 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1971 թ.՝ ասպիրանտուրան:

1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1979 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2014 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1964-1969 թթ. եղել է Երևանի երաժշտական սրահի տնօրեն: 1971 թ.-ից աշխատել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում, 1990-1991 թթ. եղել է նույն ամբիոնի վարիչ, 1991-2013 թթ.՝ ԵՊՀ ԻՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ: 2014 թ.-ից ԵՊՀ Տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր է:

Հեղինակ է գիտական շուրջ 40 հոդվածի, «Գիտատեխնիկական հեղափոխությունը և հասարակական աշխատանքի կատարելագործումը» (Եր., 1972 թ.), «Գիտատեխնիկական առաջադիմության սոցիալ-տնտեսական պրոբլեմները» (Եր., 1980 թ.) գրքերի և ուսումնական 3 ձեռնարկի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Վախճանվել է 2023 թ. սեպտեմբերի 5-ին Երևանում:



**ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

Ծնվել է 1942 թ. հունիսի 22-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1959 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և աշխատել տարբեր հիմնարկություններում: 1967 թ. ավարտել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1971 թ.՝ ասպիրանտուրան: 1968-1970 թթ. գործուղվել է Կուբա՝ Հավանայի համալսարան՝ գիտական ստաժավորման:

1973 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1973 թ.-ից աշխատել է ԵՊՀ-ում որպես ռեկտորի օգնական, միաժամանակ «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսի պատասխանատու քարտուղար: Հայաստանի բուհերի ռեկտորների խորհրդի գիտական քարտուղարի աշխատանքները համատեղել է ԵՊՀ գիտատեխնիկական ինֆորմացիայի բաժնի ղեկավարի պաշտոնի հետ, եղել է նաև քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ: 1981 թ. նշանակվել է ԵՊՀ միջազգային կապերի գծով պրոռեկտոր և աշխատել մինչև կյանքի վերջը՝ լինելով նաև միջազգային հարաբերությունների պատմության և տեսության ամբիոնի դոցենտ:

Նրա ջանքերով ԵՊՀ-ում ստեղծվել է աշխարհի 90-ից ավելի առաջատար բուհերի հետ գործող փոխադարձ կապերի լայն ցանց:

Հեղինակ է «Լատինական Ամերիկայի ինտեգրացիոն պրոցեսները դարերի և հազարամյակների սահմանագծին» (ռուս., Մ., 2000 թ.) և «Կուբան ապագայի որոնումներում» (Եր., 2002 թ.) մենագրությունների:

Արժանացել է Հայաստանի և այլ պետությունների դիպլոմների, պատվոգրերի և պետական բարձր պարգևների:

Վախճանվել է 2001 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում:



**ԳԱԼՍՏՅԱՆ ԳԱԳԻԿ ՍԵՐԳԵՅԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1953 թ. հոկտեմբերի 20-ին Երևանում: 1971 թ. ավարտել է թիվ 89 միջնակարգ դպրոցը, 1976 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1984 թ.՝ ասպիրանտուրան:

1975-1981 թթ. աշխատել է գիտահետազոտական տարբեր հաստատություններում:

1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1989 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2017 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1984 թ.-ից դասախոսական աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: 1990-1991 թթ. համատեղությամբ աշխատել է ՀՀ ԳԽ տնտեսական հանձնաժողովում որպես գլխավոր փորձագետ, 1998-1999 թթ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմում որպես տնտեսագիտական վարչության պետ:

2016-2023 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ:

Գիտական հետազոտությունների ոլորտում անցումային հասարակությունների տնտեսական հիմնախնդիրներն են և մակրոտնտեսական կայունության ու տնտեսական աճի հարցերը:

Հեղինակ է շուրջ 50 գիտական հոդվածների, ուսումնական մի քանի ձեռնարկի և «Անցումային տնտեսություններ. տեսության և վերափոխումների հարցերի շուրջ» (Եր., 2017 թ.) մենագրության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

Վախճանվել է 2024 թ. հունիսի 6-ին Երևանում:



**ՂԱՆԹԱՐՋՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԼԵՎՈՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1939 թ. հունիսի 13-ին Երևանում: 1956 թ. ավարտել է թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1961 թ.՝ ԵրՊԻ էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, 1966 թ.՝ ասպիրանտուրան: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական, 1980 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1982 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1966-1975 թթ. աշխատել է պոլիմերային արտադրության համամիութենական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում՝ որպես լաբորատորիայի վարիչ: 1975-1977 թթ. եղել է ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի դեկան, 1977-1983 թթ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի օգնական, 1983-1992 թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր բնապահպանության բաժնի վարիչ, 1992-1996 թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության պետ, 2003-2016 թթ.՝ ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ: 2016 թ.-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

1996-1998 և 2000-2002 թթ. եղել է Եվրասիական արտոնագրային կազմակերպության (Մոսկվա) վարչական խորհրդի նախագահի տեղակալ, 1997-1999 թթ.՝ Մադրիդյան խորհրդի կազմակերպության փոխնախագահ (Ժնև), 1999-2001 թթ.՝ Փարիզյան խորհրդի կազմակերպության փոխնախագահ (Ժնև): 1961-2003 թթ. համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ-ում և ԵրՊԻ-ում:

Հեղինակ է գիտական ավելի քան 115 աշխատության, այդ թվում՝ "Экономические проблемы оптимизации химико-технологических процессов" (М., 1980 г.) մենագրության, համահեղինակ՝ "Экономика типовых процессов химической технологии" (Л., 1970 г.), "Экономико-математическое моделирование химико-технологических систем" (Л., 1987 г.) մենագրությունների: Հեղինակ է նաև մի շարք ուսումնական ձեռնարկների, որոնցից են՝ «Ինովացիոն և վենչուրային մարքեթինգ» (Եր., 2012 թ.), «Մասնագիտության արդիական հիմնախնդիրները (ինովացիոն կառավարում)» (Եր., 2014 թ.): Հեղինակել է նաև գրական մի քանի գործ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 37 ատենախոսություն:



**ՍԱՀԱԿՅԱՆ ՄԵԼՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ**
*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1940 թ. հունիսի 8-ին Երևանում: 1957 թ. ավարտել է թիվ 25 միջնակարգ դպրոցը, 1962 թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1967 թ.՝ ասպիրանտուրան:

1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1976 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1962-1964 թթ. եղել է ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնի ասիստենտ, 1967-1972 թթ.՝ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ընդհանուր կառավարման ամբիոնի գիտաշխատող, 1972-1975 թթ.՝ ԵՊՀ և ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի ընդհանուր կառավարման բաժնի ղեկավար, 1975-1984 թթ.՝ ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի դոցենտ: 1984 թ.-ից մինչև 2020 թ. աշխատել է ԵՊՀ Տնտեսագիտության (այժմ՝ Տնտեսագիտության և կառավարման) ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում:

1978-1988 թթ. համատեղությամբ եղել է ՀԽՍՀ պետպլանի էկոնոմիկայի և պլանավորման ԳՀԻ հատուկ հետազոտությունների բաժնի գիտական ղեկավար, 1990-1995 թթ.՝ ՀՀ ԳԽ պատգամավոր:

Հեղինակ է ավելի քան 100 հոդվածի, «Քանակական եղանակները գործարարության և կառավարման համար» (Եր., 2002 թ., 2004 թ.), «Տնտեսական իրավիճակների մոդելավորում» (Եր., 2009 թ., 2011 թ.) ուսումնական ձեռնարկների, «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ. Գործույթների հետազոտում. Կառավարման գիտություն» (մաս 1, Եր., 1997 թ., մաս 2, 3, Եր., 2001 թ.) դասագրքի, ինչպես նաև համահեղինակ՝ “Математическое моделирование металлургических процессов” (М., 1976 г.) և «Մաթեմատիկական ծրագրավորում» (Եր., 1983 թ.) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:



**ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱՄ ՀՄԱՅԱԿԻ**

*Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1945 թ. ապրիլի 12-ին Թբիլիսիում: 1963 թ. ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1968 թ.՝ ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, 1971 թ.՝ ասպիրանտուրան:

1972 թ. պաշտպանել է թեկնածուական, 1988 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1991 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1972-1989 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ հաշվողական կենտրոնի ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ, փոխտնօրեն:

1989-2002 թթ. եղել է ՀՊՃՀ ալգորիթմական լեզուների և ծրագրավորման ամբիոնի վարիչ: 2002-2023 թթ. եղել է ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, 2024 թ.-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Հրատարակել է գիտական շուրջ 150 աշխատանք, այդ թվում՝ «Երկխոսական տեղեկատվական համակարգերի օպտիմալացման մեթոդներ» (ռուս., Եր., 1985 թ.), «Տվյալների բազաների ռելյացիոն մոդելներ» (ռուս., Եր., 2001 թ.) մենագրությունները:

Գիտական ուղղություններն են՝ խաղերի տեսություն, գործույթների հետազոտում, ժամանակային շարքերի վերլուծություն, մաթեմատիկական մոդելավորում:

Մասնակցել է միջազգային գիտական դրամաշնորհների և գիտաժողովների:

1978 թ. արժանացել է ՀամԼԿԵՄ մրցանակի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 32 ատենախոսություն:



**ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1948 թ. հունվարի 10-ին Վերին Թալինում: 1965թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով, 1969 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1975 թ.՝ ՀԽՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

1987 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2004 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2017թ.՝ պրոֆեսորի կոչում:

1969-1994 թթ. աշխատել է ՀԽՍՀ պետպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում՝ կրտսեր գիտատեխնիկական աշխատողից մինչև գիտական խմբի ղեկավարի պաշտոններում:

1994-2017 թթ. եղել է ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից պրոֆեսոր է:

Գիտական հետազոտությունները վերաբերում են աշխատանքի տնտեսագիտության հիմնահարցերին:

Հեղինակ է ավելի քան 40 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում» (Եր., 2014 թ.), «Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա» (Եր., 2016 թ.), «ՀՀ աշխատաշուկան. իրավիճակը և միտումները» (Եր., 2016 թ.) մենագրությունների: Համահեղինակ է «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004 թ.) մագիստրանտների համար ուսումնական ձեռնարկի, «Կառավարման և գործարարության ընտրովի հարցեր» (Եր., 2005 թ.) ուսումնական ձեռնարկի:

2003-2005 թթ. եղել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» փորձագետ:

2007 թ. պարգևատրվել է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի, 2014 թ.՝ ՀՀ ԱԺ շնորհակալագրերով, 2009 թ. և 2019 թ.՝ ԵՊՀ պատվոգրերով և 2014 թ.՝ վաստակագրով:

1998-2023 թթ. եղել է Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական քարտուղարը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:



**ԴԱՎՈՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԱՇՈՏԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1948 թ. մարտի 1-ին Շիրակի մարզի Ախուրյան գյուղում:

1965 թ. ընդունվել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժինը, որտեղից 1967 թ. գործուղվել է Նովոսիբիրսկի պետական համալսարան՝ անհատական ծրագրով ուսումը շարունակելու համար:

1970 թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան:

1976 թ.-ից տնտեսագիտության թեկնածու է, 1980 թ.-ից՝ դոցենտ:

2003 թ. ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում:

1991-1994 թթ. աշխատել է ՀՀ Կառավարության առընթեր պետական գույքի տնօրինման և ապակենտրոնացման կոմիտեի նախագահի տեղակալ: 1994-1995 թթ. վերապատրաստվել է Վիեննայում գործող Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի համատեղ գործող ինստիտուտում, այնուհետև Պրահայի Կառլի անվան համալսարանում՝ «Շուկայական տնտեսություն և ֆինանսական վերլուծություն» ծրագրով:

1996-1997 թթ. աշխատել է ՀՀ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարությունում՝ որպես մեթոդական վարչության պետ: Եղել է ՄԱԿ-ի և ՀՀ կենտրոնական բանկի փորձագետ:

2000-2018 թթ. զբաղեցրել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնը:

2018 թ.-ից մինչ օրս ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր է:

Հեղինակ է 8 մենագրությունների և 100-ից ավելի գիտական հոդվածների: Մասնակցել է 20-ից ավելի միջազգային գիտաժողովների՝ Նյու-Յորքում, Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում և այլ քաղաքներում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 ատենախոսություն:



**ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1949 թ. սեպտեմբերի 9-ին Երևանում: 1966 թ. ավարտել է թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1971 թ.՝ ԵրՊԻ տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը, 1977 թ.՝ ասպիրանտուրան:

1979 թ. պաշտպանել է թեկնածուական, 1993 թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1971-1974 թթ. աշխատել է ԵրՄՄԳՀԻ-ում: 1978-1993 թթ. եղել է Հայաստանի պետպլանի տնտեսագիտության և պլանավորման ԳՀԻ ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ, ապա՝ գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1993-1999 թթ. զբաղեցրել է ՀՀ ԱԺ տնտեսագիտական վարչության պետի պաշտոնը: 1994 թ. ընտրվել է ՀՀ կենտրոնական բանկի վարչության անդամ:

1999-2003, 2007-2012 և 2017-2018 թթ. եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր:

2003-2007 թթ. եղել է ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, 2012 թ.-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հրապարակումների, այդ թվում՝ “Оптимизация отраслевых систем в составе экономических программ” (Новосибирск, 1982), “Взаимодействие отраслевых систем в составе региональных программ (районы со сложившейся структурой производства)” (Новосибирск, 1982 г.), «Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման տնտեսական հիմնախնդիրները» (Եր., 2003 թ.), «Հանրային քաղաքականության վերլուծություն» (Եր., 2005 թ.), «Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (Եր., 2005 թ.) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 80 ատենախոսություն:

2017 թ. պարգևատրվել է ՀՀ Երախտագիտության մեդալով:



**ԹՈՐՈՍՅԱՆ ԹՈՐՈՍ ՇԱՀԵՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1950 թ. հուլիսի 23-ին Երևանում: 1967 թ. ավարտել է թիվ 35 միջնակարգ դպրոցը, 1973 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 1976 թ.՝ ասպիրանտուրան:

1978 թ. պաշտպանել է թեկնածուական, 1985 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1989 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1976-1979 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1983 թ.՝ ավագ գիտաշխատող, 1979-1992 թթ.՝ գիտական քարտուղար, 1992-2016 թթ.՝ ԵՊՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ: 2016 թ.-ից ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր է:

Հեղինակ է 140 աշխատության, այդ թվում՝ 20 մենագրության, որոնցից են՝ «Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման հեռանկարները» (Եր., 1989 թ.), «Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր» (Եր., 2001 թ.), «Միջազգային տնտեսագիտություն» (Եր., 2003 թ., 2005 թ., 2009 թ.), «Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա» (Եր., 2004 թ.), «Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը» (Եր., 2010 թ.):

2009 թ. և 2010 թ. պարգևատրվել է ԵՊՀ «Ոսկե մեդալով»:

2023 թ.-ից Հայ-ռուսական համալսարանում գործող Տնտեսագիտության 008 մասնագիտական խորհրդի անդամ է, Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ նախագահի տեղակալ:

2023 թ.-ից ԵՊՀ-ում գործող 015 խորհրդի անդամ է:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական շուրջ 30 ատենախոսություն:



**ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1953 թ. նոյեմբերի 16-ին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում:

1970 թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1970-1975 թթ. սովորել և հաջողությամբ ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը ու ստացել ինժեներ տնտեսագետի որակավորում «Մեքենաշինական արտադրության էկոնոմիկա և կազմակերպում» մասնագիտությամբ:

1979 թ. մրցույթով ընդունվել է Մոսկվայի Ն.Է. Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական համալսարանի ասպիրանտուրայի ցերեկային բաժինը, որը հաջողությամբ ավարտել է 1982 թ.: 1983թ. նույն բուհում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ նույն մասնագիտությամբ:

1975-1979 թթ. և 1982-2004 թթ. աշխատել է Երևանի հաստոցաշինական արտադրական միավորումում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները՝ արտադրամասի տնտեսագետ (1975-1979թթ.), գիտատեխնիկական առաջընթացի բյուրոյի ղեկավար (1983-1984 թթ.), գլխավոր տնտեսագետ (1985-1990 թթ), գլխավոր տնօրենի տեղակալ տնտեսագիտական և արտադրական հարցերի գծով (1990-1997 թթ.), աշխատանքային կոլեկտիվի խորհրդի նախագահ և բաժնետիրական ընկերության փոխնախագահ (1994-1997 թթ.):

1997-2004 թթ. աշխատել է «Երևանի հաստոցաշինական արտադրական միավորում» ԲԲԸ գլխավոր տնօրեն: Վ. Աբրահամյանի ջանքերով 1997-2004 թթ. ամբողջությամբ վերականգնվել և վերակառուցվել է միավորման կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական համալիրը: Նույն ժամանակահատվածում՝ 1997-2004 թթ., հաջողությամբ իրականացվել են ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական համալիրի պատվերները՝ խոշոր խմբաքանակով թողարկվել է պատրաստի զինատեսակ, կատարվել են առանձին զինատեսակների խոշոր խմբաքանակների նորոգման-վերականգնման աշխատանքներ:

2004 թ.-ից դասավանդել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում, իսկ 2005 թ.-ից՝ նաև Երևանի պետական համալսարանում:

2011 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2016 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

Հեղինակ է 86 գիտական աշխատության, այդ թվում երկու մենագրության (“Управление процессами повышения эффективности функционирования многономенклатурного машиностроительного производства путем оптимизации материальных и трудовых затрат осуществляемых организационно-инновационных работ” Монография, Новосибирск, 2009 г., «Բազմաանվանացանկային մեքենաշինական արտադրության արդյունավետության բարձրացումը կազմակերպական-ինովացիոն գործընթացների կառավարման միջոցով» Մենագրություն, Երևան, 2010 թ.) և երեք ուսումնական ձեռնարկների («Արտադրության մենեջմենթ» Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2022 թ., “Логистика: управление бизнес-процессами в интегрированных логистических цепях” Учебное пособие, Ереван, 2015 г., «Գործնական լոգիստիկա. արտադրանքի կյանքի պարբերաշրջանի փուլերի լոգիստիկական-կողմնորոշիչ կառավարումը» Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2014 թ.):

1991-1995 թթ. եղել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

2024 թ.-ից ԵՊՀ-ում գործող 015 խորհրդի անդամ է:



**ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿԻ**
*Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր*

Ծնվել է 1955 թ. փետրվարի 25-ին Թբիլիսիում: 1972 թ. ավարտել է տեղի թիվ 110 միջնակարգ դպրոցը, 1977 թ.՝ ԵրՊԻ էներգետիկայի ֆակուլտետը, 1990 թ.՝ ասպիրանտուրան:

1990 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2004 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2011 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1977-1982 թթ. եղել է միութենական «Էներգիա» ԳԱՄ-ի հայկական մասնաճյուղի «Ատոմային էլեկտրական կայաններ» ԳՀ ինստիտուտի ռեակտորների լաբորատորիայի ճարտարագետ, 1983-1992 թթ.՝ Պետպլանին կից Տնտեսագիտության և պլանավորման ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, 1992-1996 թթ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր մասնագետ, 1996-1997 թթ.՝ ՀՀ վարչապետի օգնական, 1997-1998 թթ.՝ ՀՀ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարի խորհրդական, 1999-2000 թթ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի խորհրդատու, 1999-2005 թթ.՝ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի նախագահի տեղակալ, 2005-2010 թթ.՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ: 2007-2010 թթ. եղել է ՏԶՀԿ ՀՀ-ում ֆինանսական կրթության զարգացման ծրագրի ազգային համակարգող:

1991-2010 թթ. համատեղությամբ դասախոսել է ԵՊՀ-ում: 2010 թ.-ից ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր է: Հեղինակ է շուրջ 80 գիտական ու մեթոդական աշխատանքների, այդ թվում՝ ուսումնաօժանդակ 4 ձեռնարկի՝ «Գործարար պլան», մեթոդական ձեռնարկ՝ տեստային ապահովումով, (Եր., 1999 թ.) (համահեղինակ), «Խորհրդատվության և վերապատրաստման դերը ՀՀ ձեռնարկատիրության զարգացման համակարգում» (Եր., 2009 թ.), «Ֆինանսատնտեսական ճգնաժամ. հաղթահարման ուղիները և հետճգնաժամային զարգացումները» (Եր., 2010 թ.), «Հասարակական-տնտեսական զարգացման արդի խնդիրները» (Եր., 2012 թ.):

Վերապատրաստվել և որակավորումը բարձրացրել է հայրենական և արտերկրյա կազմակերպություններում:

2016-2018 թթ. եղել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

2024 թ.-ից ԵՊՀ-ում գործող 015 խորհրդի անդամ է:



**ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է Երևանում, 1955 թ.: 1972 թ. ավարտել է Մուրացանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոցը, 1974 թ.՝ տեխնիկական թիվ 2 ուսումնարանը, որից հետո աշխատանքի է անցել Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատում: 1974 թ. ընդունվել է ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, 1979 թ. ավարտել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում, զորացրվելուց հետո ստացել է ավագ լեյտենանտի կոչում: 1981 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ Պետմատում:

1984 թ. մրցույթով զբաղեցրել է ԵԺՏԻ ՆՏՄ էկոնոմիկայի և պլանավորման ամբիոնի ասիստենտի պաշտոնը: 1984 թ. ընդունվել է ԽՍՀՄ Պետմատի գիտահետազոտական ինստիտուտի (НИИМС Госснаба СССР) հեռակա ասպիրանտուրա (ք. Մոսկվա), 1988 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1991 թ.-ից դոցենտ է: 2009 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 2012 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Դասավանդել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (1984-2019 թթ.), ՀՀ պետական կառավարման ակադեմիայում (2019-2020 թթ.), «Եվրասիա» միջազգային համալսարանում (2022-2024 թթ.):

2023 թ.-ից դասավանդում է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում:

1996-2007 թթ., գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց, պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել պետական կառավարման մարմիններում և կորպորատիվ հատվածում՝ ՀՀ առևտրի և արդյունաբերության նախարարությունում, ՀՀ հարկային տեսչությունում, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատում, «Հայագրոբանկում», «Արմենտելում»: 2002-2006 թթ. եղել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ:

2010-2011 թթ. զբաղեցրել է ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչի, իսկ 2011-2019 թթ.՝ ՀՊՏՀ պրոռեկտորի պաշտոնները, համակարգել է համալսարանի գիտական գործունեության և արտաքին կապերի ոլորտները:

Շուրջ 80 գիտական, ուսումնամեթոդական և 600-ից ավելի հրապարակումների հեղինակ է, այդ թվում՝ երկու մենագրության. «Экономика снабжения предприятий сегодня и завтра» (Москва, изд. «Экономика», 1990 г., Ա. Ի. Բասկինի համահեղինակությամբ) և «Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ» (ք. Երևան, 2008 թ.), մեկ ուսումնական ձեռնարկի. «Գինը մարքեթինգային համալիրում» (ք. Երևան, 2011 թ.):

Մասնակցել է ՀՀ կառավարության ծրագրային մի շարք փաստաթղթերի մշակման աշխատանքներին: Գիտական ու գործնական որոշ մշակումներ ներառվել են Կառավարության 2000-2006 թթ. ծրագրային փաստաթղթերում: Մասնակցել, զեկուցումներ և ելույթներ է ունեցել ՄԱԿ-ի «Ցանցային տնտեսություն և էլեկտրոնային կառավարում» միջազգային գիտաժողովում (Պեկին, 2001 թ.), ՄԱԿ-ի առևտրի և տնտեսական զարգացման համաժողովի (UNCTAD) XI նստաշրջանում (Բրազիլիա, Սան Պաուլո՝ 2004 թ.) Համաշխարհային բանկի «Գիտելիքի տնտեսություն» III և IV համաժողովներում (Բուդապեշտ, 2004 թ., Ստամբուլ, 2005 թ.), Լեհաստանի Արևելյան ինստիտուտի XV Տնտեսական համաժողովում (Կրինիցա, 2005 թ.) միջազգային և ազգային այլ գիտագործնական համաժողովներին:

Վերապատրաստվել և որակավորումը բարձրացրել է Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ճապոնիայում և Ավստրիայում:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է տասնյակից ավելի թեկնածուական և մեկ դոկտորական ատենախոսություն:

2011-2019 թթ. եղել է ՀՊՏՀ-ում գործող տնտեսագիտության մասնագիտական 014 խորհրդի անդամ:

2024 թ.-ից ԵՊՀ-ում գործող 015 խորհրդի անդամ է:

2024 թ.-ից ԵՊՀ Տնտեսագիտության և կառավաման ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահն է:



**ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1957 թ. սեպտեմբերի 24-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: 1974 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» բաժինը և 1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (Պլանա-տնտեսագիտական ֆակուլտետի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» մասնագիտությամբ): Նույն թվականին աշխատանքի է նշանակվել ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտում: 1979 թ. ընդունվել է ԵրԺՏԻ-ի ասպիրանտուրան (արտադրությունից չկտրված):

1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է աշխատել ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում, որտեղ 1988 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1998 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը: 2004 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա. Մարկոսյանն աշխատել է. ՀՀ սննդի արդյունաբերության նախարարությունում՝ վարչության պետ (1991-1992 թթ.), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում՝ բաժնի պետ (1992-1995 թթ.), նախարարի տեղակալ (1995-1996 թթ.), ՀՀ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարությունում՝ նախարարի տեղակալ (1996-1998 թթ.), ՀՀ սեփականաշնորհման նախարարությունում՝ նախարարի տեղակալ (1997-2001 թթ.), ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունում՝ նախարարի առաջին տեղակալ և տեղակալ (2001-2003 թթ.), ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում՝ վարչության պետի տեղակալ (2003-2017 թթ.), ԵՊՀ-ում՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, մագիստրոսական ծրագրի ղեկավար (2017 թ.), Նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ (2019-2023 թթ.):

Հեղինակ է գիտական 553 աշխատության, որից 52-ը մենագրություններ և կոլեկտիվ մենագրություններ են, իսկ 11-ը՝ ուսումնամեթոդական (ուսումնական) ձեռնարկներ: Հիմնական աշխատությունների շարքում են.

«Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ», Եր., 1997 թ., «Պետությունը և շուկան», գիրք առաջին, Եր., 2000 թ., «Տնտեսագիտություն բոլորի համար», Եր., 2001 թ. և 2006 թ., «Շուկայական տնտեսության հիմունքներ», Եր., 2002 թ., «Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև», Եր., 2004 թ., «Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, մեթոդաբանություն և արդյունքներ», Եր., 2004 թ., «Պետական գույքի կառավարումը», ուս. ձեռնարկ երկու հատորով, Եր., 2015 թ.:

Նրա խմբագրությամբ հայերենով լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, որոնց թվում են՝ Ջ.Մ. Քեյնսի «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» (Եր., 2006 թ.), Պոլ Հեյնեի «Տնտեսագիտական մտածելակերպ (Եր., 2008 թ.) և այլ:

Նրա ղեկավարությամբ, սկսած 1999 թ.-ից, պաշտպանվել է 107 թեկնածուական և 5 դոկտորական ատենախոսություն:

Ա. Խ. Մարկոսյանը պարգևատրվել է՝ Երախտագիտության մեդալով (ՀՀ Նախագահի 2016 թ. որոշում), ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալով (2016 թ.) և վարչապետի հուշամեդալով (ՀՀ վարչապետի 2006 թ. որոշում):



**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱԼԲԵՐՏԻ**

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1966 թ. ապրիլի 6-ին Երևանում: 1983 թ. ավարտել է Երևանի թիվ 25 միջնակարգ դպրոցը, 1990 թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1997 թ. պաշտպանել է թեկնածուական (ֆիզմաթ. գիտություններ), 2013 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2007 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2017 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1990-1997 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, 1997-1998 թթ.՝ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարությունում որպես գլխավոր մասնագետ, 1998-1999 թթ.՝ Հայկական զարգացման բանկում որպես բաժնի վարիչ, 1999-2001 և 2002-2004 թթ.՝ ԱՄՆ ՄԶԳ կապիտալի շուկաների զարգացման ծրագրում որպես ֆինանսական վերլուծաբան, 2001-2002 թթ. եղել է ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի գլխավոր տնտեսագետի գրասենյակի ղեկավար, 2004-2007 թթ.՝ «Կասկադ ինվեստմենտս» ընկերության տնօրենի տեղակալ, 2008-2012 թթ.՝ Ամերիաբանկի հավատարմագրային կառավարման բաժնի ղեկավար, 2007 թ.-ից՝ ԵՊՀ Տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Դասավանդել է Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ), Հայաստանում ֆրանսիական համալսարանում (ՀՖՀՀ): Գիտական հետաքրքրություններն են մաթեմատիկական և վիճակագրական մոդելները, արհեստական բանականությունը, մեքենայական ուսուցումը, տվյալների գիտությունը և վարքագծային մոդելների կիրառությունները տնտեսագիտական խնդիրներում:

Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների՝ Նյու-Յորք, Քեմբրիջ, Հռոմ, Մոսկվա, Սան Ֆրանցիսկո և այլ քաղաքներում:

Դասախոսություններով հանդես է եկել ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանում (2024 թ.), Նիդերլանդների IHS Բնակարանային և քաղաքաշինական հետազոտությունների ինստիտուտում, Էրազմուս համալսարանում (2017 թ.), Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում (2001 թ):

Անցել է վերապատրաստումներ և բարձրացրել իր որակավորումը Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Կենտրոնական տնտեսագիտության և մաթեմատիկայի ինստիտուտում, Կիևի էկոնոմիկայի դպրոցում և Քեմբրիջի համալսարանում:

2008 թ. ստացել է Ֆինանսական ռիսկերի որակավորված մենեջերի միջազգային որակավորում (FRM):

2013 թ.-ից ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 խորհրդի անդամ է, իսկ 2023 թվականից 015 խորհրդի նախագահ:

Ռ.Գևորգյանը նաև ԵՊՀ Բիզնես ինկուբատորի տնօրենն է:

Մասնակցել է բազմաթիվ գիտական դրամաշնորհների՝ «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» (ՀՀ ԲԿԳԿ, 2024-2029 թթ.), «Ավտոմատացված համակարգչային տեսողության կիրառումը ուսանողների հոգեբանական վիճակի, միմիկայի և ժեստերի ուսումնասիրության համար» (ՀՀ ԲԿԳԿ, 2024-2027 թթ.), «Լեռնային Ղարաբաղից բռնի վերաբնակեցված երեխաների հոգեբանական վիճակի գնահատման մեքենայական ուսուցման գործիքի մշակում և կիրառում» (ԵՊՀ, 2024-2025 թթ.) և այլն:

Ռ. Գևորգյանը ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավարն է:

2019 թվականին արժանացել է ԵՊՀ Ոսկե մեդալի:

Հեղինակ է 97 գիտական աշխատությունների և վեց մենագրության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:



**ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Ծնվել է 1976 թ. ապրիլի 28-ին Երևանում: 1993 թ. ավարտել է թիվ 172 միջնակարգ դպրոցը, 1998 թ.՝ ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը, 2001 թ.՝ ասպիրանտուրան:

2001 թ. պաշտպանել է թեկնածուական, 2012թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2007 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2017 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1999-2000 թթ. աշխատել է ՀՀ փոստի և հեռահաղորդակցության նախարարությունում որպես արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար, 2000-2002 թթ.՝ Զարգացման հայկական բանկում որպես գլխավոր մասնագետ: 2009-2021 թթ. ղեկավարել է Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ուսումնական կենտրոնը: 2021 թ-ից աշխատում է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում որպես գործադիր տնօրեն: 2022 թ.-ից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում որպես Ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ:

2001 թ.-ից աշխատել է ԵՊՀ ֆինանսահաշվային ամիոնում, որի վարիչն է եղել 2008-2022 թթ.: Հեղինակ է գիտական շուրջ 60 հոդվածի, համահեղինակ՝ «Ֆինանսներ և ֆինանսական համակարգ» (Եր., 2005 թ.), «Ֆինանսների կառավարման հիմունքներ» (Եր., 2016 թ.), «Ֆինանսական ինժեներիա» (Եր., 2020 թ.), «Հաշվապահական հաշվառում. թեստեր և խնդիրներ» (Եր., 2023 թ.) ուսումնամեթոդական ձեռնարկների:

Մասնագիտական գործունեության համար պարգևատրվել է Երևանի պետական համալսարանի շնորհակալագրով, իսկ 2014 թ.՝ ԵՊՀ Ոսկե մեդալով:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական շուրջ մեկ տասնյակ ատենախոսություն:







# 13 Ֆակուլտետի հայտնի շրջանավարտները



## Շրջանավարտները գիտակրթական հաստատություններում



Միքայել Քոթանյան
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
1987-1999 թթ. ՀՀ
ԳԱԱ տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն



Վլադիմիր Խոջաբեկյան
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
1999–2006 թթ. ՀՀ
ԳԱԱ տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն



Գրիշա Ղարիբյան
ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ, 1993-2000 թթ.
Տնտեսագիտության
ֆակուլտետի դեկան



Վլադիմիր Հարությունյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
2006-2022 թթ. ՀՀ ԳԱԱ
Միքայել Քոթանյանի
անվան Տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն



Յուրի Սուվարյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ գիտության
վաստակավոր գործիչ



Հեղինե Մանասյան
«ՀՌԿԿ-ՀԱՅԱՍՏԱՆ»
հիմնադրամի պատվավոր
տնօրեն





Կառլեն Խաչատրյան
ԵՊՀ Տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի
դեկան



Հասմիկ Սահակյան
«Հաշվապահության
Ուսուցման Միջազգային
Կենտրոն» կրթական
հիմնադրամի գործադիր
տնօրեն



Արման Մալխասյան
ԵՊՀ ընդհանուր հարցերի
գծով պրոռեկտոր



Գևորգ Գոյունյան
Հայաստանի Ամերիկյան
Համալսարանի
փոխնախագահ



Հրանտ Հարությունյան
ՀՖՀՀ Կառավարում
և Ֆինանսներ
ֆակուլտետների դեկան



Նարեկ Կեսոյան
ՀՊՏՀ Մարքեթինգի և
բիզնեսի կազմակերպման
ֆակուլտետի դեկան



Հասմիկ Հովհաննիսյան
ՀԱԱՀ Ագրոբիզնեսի
և տնտեսագիտության
ֆակուլտետի դեկանի
պաշտոնակատար



Նարինե Միրզոյան
ԵՊՀ Տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի
դեկանի տեղակալ





Ալվարդ Խառատյան
ԵՊՀ Տեսագիտության մեջ
մաթեմատիկական
մոդելավորման ամբիոնի
վարիչ



Գրիգոր Հայրապետյան
ԵՊՀ Տնտեսագիտության և
միջազգային տնտեսական
հարաբերությունների
ամբիոնի վարիչ



Աննա Հակոբջանյան
ԵՊՀ Կառավարման և
գործարարության ամբիոնի
վարիչ



Գնել Սահակյան
ԵՊՀ Ֆինանսահաշվային
ամբիոնի վարիչի
ժամանակավոր
պաշտոնակատար



Կարինե Ավետիսյան
ԵՊՀ Ակտուարական
և ֆինանսական
մաթեմատիկայի
ամբիոնի վարիչ



Հայկ Մնացականյան
ՀՊՏՀ Ֆինանսական
հաշվառման ամբիոնի
վարիչ



Գարիկ Սիրոյան
ԵՊՀ ԻՄ Ընդհանուր
տնտեսագիտության
ամբիոնի վարիչի
պաշտոնակատար



Միեր Օթարյան
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
փոխտնօրեն



Կարեն Գրիգորյան
ԵՊՀ հրատարակչության
տնօրեն



Տիգրան Գալստյան
ԵՊՀ Ֆինանսական
վերլուծությունների
վարչության պետ



Ռաֆիկ Գրիգորյան
ԵՊՀ գլխավոր հաշվապահ



Արշակ Ներսիսյան
ԵՊՀ Գնումների
կազմակերպման
վարչության պետ



Քրիստինե Զլատկովիչ
(նախկինում Անտոնյան)
Նորթվեստերն
համալսարան Մելլոն
հետդոկտորանտ



Եղոյան Կարեն
Լույս գիտակրթական
հիմնադրամի փորձագետ



## Շրջանավարտները պետական կառավարման համակարգում



Գագիկ Հարությունյան
ՀՀ փոխնախագահ
(1991-1996),
ՀՀ Սահմանադրական
դատարանի նախագահ
(1996- 2018)



Վաչե Գաբրիելյան
ՀՀ փոխվարչապետ
(2014-2018)



Մարտին Գալստյան
ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ



Վահե Հովհաննիսյան
ՀՀ ֆինանսների նախարար



Հասմիկ Ղահրամանյան
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի անդամ



Դավիթ Նահապետյան
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի անդամ



Բաբկեն Թունյան
ՀՀ ԱԺ տնտեսական
հարցերի մշտական
հանձնաժողովի
փոխնախագահ



Արծվիկ Մինասյան
Ազգային ժողովի
պատգամավոր



Սևակ Միքայելյան
ՀՀ Էկոնոմիկայի
նախարարի տեղակալ



Ռաֆայել Գևորգյան
ՊԵԿ նախագահի տեղակալ



Կարեն Թամազյան
ՀՀ ՊԵԿ նախագահի
տեղակալ



Գևորգ Մանթաշյան
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության
նախարարի առաջին
տեղակալ



Եղիշե Սողոմոնյան
ՀՀ Վերահսկիչ Պալատի
անդամ

## Տրջանավարտները մասնավոր ոլորտում



Անդրանիկ Գրիգորյան
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
գլխավոր գործադիր
տնօրեն, տնօրինության
նախագահ



Հայկ Ստեփանյան
«Բիբլոս Բանկ Արմենիա»
ՓԲԸ գլխավոր գործադիր
տնօրեն



Սերգեյ Խաչատրյան
«Երևանի կոնյակի
գործարան» ՓԲԸ գործադիր
տնօրեն



Արթուր Սահակյան
«Կոկա-Կոլա Հելլենիկ
Բոթլինգ Քամփնի
Արմենիա» ՓԲԸ գլխավոր
տնօրեն



Արա Խաչատրյան
«Սոֆթկոնստրակտ»
ՓԲԸ գլխավոր գործադիր
տնօրեն



Նարեկ Կարապետյան
«Տաշիր» ընկերությունների
խմբի առաջին
փոխնախագահ



Տիգրան Յուզբաշյան
«Կարաս Գրուպ» ՍՊԸ
համահիմնադիր



Աշոտ Հարությունյան
«Կարաս Գրուպ» ՍՊԸ
համահիմնադիր և
նախագահ



Տիգրան Օխանյան
«ԷկոՎիլ» ընկերության
հիմնադիր, խորհրդի
նախագահ



Մանուկ Հերգնյան
«CIVITTA Armenia»
(նախկինում՝ «EV
Consulting») հիմնադիր
տնօրեն



Կարեն Գյուլբուդաղյան
«Strategic Value Ventures»-ի
հիմնադիր տնօրեն



Գուրգեն Փոթիկյան
ԱՄՆ անշարժ գույքի
ներդրումային հիմնադրամի
տնօրեն



Հովհաննես Թորոյան
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ֆինանսական տնօրեն



Լևոն Մարտիրոսյան
«Արցախբանկ» ՓԲԸ
զարգացման գծով տնօրեն
- գործադիր տնօրենի
տեղակալ, վարչության
անդամ



Լիլիթ Գրիգորյան
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
գործառնական տնօրեն,
վարչության անդամ



Անի Սարգսյան
«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»
ՈւՎԿ ԱԿ գործադիր
տնօրենի տեղակալ-
ֆինանսական տնօրեն



Լևոն Կլեկչյան
AMX - Հայաստանի
կենտրոնական
դեպոզիտարիայի գլխավոր
տնօրենի տեղակալ



Վիկտորյա Քոչարյան
«Բիբլոս Բանկ Արմենիա»
ՓԲԸ, Ռիսկերի
կառավարման վարչության
ղեկավար



Սուրեն Ոսկանյան
«Բիբլոս Բանկ Արմենիա»
ՓԲԸ, Նորարարության
և թվայնացման բաժնի
ղեկավար



Սերգեյ Կարախանյան
«Բիբլոս Բանկ Արմենիա»
ՓԲԸ, Գործառնական
վարչության ղեկավար



Թելման Գևորգյան
«Բիբլոս Բանկ
Արմենիա» ՓԲԸ, Ներքին
դիտարկումների և
համապատասխանեցման
բաժնի ղեկավար



Արման Մուրադյան
«Հայէկոնոմբանկ»
ԲԲԸ, Ներքին աուդիտի
վարչության պետ



Արա Չալաբյան
Հայաստանի Ներքին
աուդիտորների
ինստիտուտի նախագահ



Արա Խաչատրյան
«Լիտոկոլ ԱՄ ԿՈ» ՍՊԸ
տնօրեն



Դավիթ Դավթյան
«Արմ Կոնստրակտ» ՍՊԸ
հիմնադիր



Աստղիկ Ալեքսանյան
«Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ
հիմնադիր



Արթուր Փոքրիկյան
Շվեյցարիայի զարգացման
և համագործակցության
գործակալության
ազգային ծրագրերի ավագ
համակարգող



Աննա Գյուրջյան
ՄԱԿ-ի Զարգացման
ծրագրի սոցիալ-
տնտեսական պորտֆելի
ղեկավար



Կարապետ Թոմիկյան
«Ադոռ» ՍՊԸ ֆինանսական
տնօրեն



Լիլիթ Ասատրյան
Հայաստանի երիտասարդ
կանանց ասոցիացիայի
և ՀՀ Կին ձեռներեցների
ցանցի հիմնադիր
նախագահ





Շուշանիկ Դանիելյան
«Հայաստանի մանուկներ»
հիմնադրամ (ՔՈԱՖ),
բիզնես ծրագրերի
ղեկավար



Գարիկ Դինգչյան
«Հայէկոնոմբանկ»
ԲԲԸ, Ներքին աուդիտի
վարչության պետ



Գևորգ Սաֆարյան
«Earlyone» և «Lime Tech» ընկերությունների հիմնադիր



Ալեքսանդր Չիլինգարյան
«ՍԱԿՎՈՅԱԺ» ընկերության («ԱԼՄԵՐԻԱՆ» ՍՊԸ) տնօրեն



Արման Գևորգյան
«LUXE ընկերությունների խմբի» հիմնադիր տնօրեն



Ստյոպա Ծառուկյան
«Pi Hospitality ընկերությունների խմբի» հիմնադիր տնօրեն



Կարեն Մաթոսյան
«Մեդիա Սթրիմ» ՍՊԸ հիմնադիր և տնօրեն



Նարեկ Ասատրյան
Սպրուտ մեդիամոնիթորինգային ընկերության համահիմնադիր



Արսեն Մնացականյան
«Ջեյ Դաբլյու Հոլդինգ» ՍՊԸ և «Թայմլես» ՍՊԸ գլխավոր տնօրեն

# 14 Ֆակուլտետի առանցքային իրադարձությունները



| N | | |
|---|---|---|
| 1. | 1921 թ. հունվար | Երևանի ժողովրդական համալսարանը ուներ 2 ֆակուլտետ՝ Հասարակագիտական (սոցիոլոգիական) և Բնագիտական: |
| 2. | 1921 թ. հոկտեմբեր | Երևանի ժողովրդական համալսարանը ուներ 5 ֆակուլտետ՝ Մանկավարժական, Գյուղատնտեսական, Արևելագիտական, Տեխնիկական և Խորհրդային շինարարության: |
| 3. | 1922 թ., սեպտեմբեր | Երևանի ժողովրդական համալսարանի Խորհրդային շինարարության ֆակուլտետը վերակազմավորվում է Հասարակագիտական ֆակուլտետի: |
| 4. | 1925 թ. | Մի շարք վերակազմակերպումներից հետո համալսարանում ստեղծվեցին մի քանի ֆակուլտետներ, այդ թվում՝ Սոցիալ-տնտեսագիտական-իրավաբանական: |
| 5. | 1930 թ., 14 հունիս | ԱԽՖՍՀ Ժողկոմխորհի որոշման համաձայն՝ վերակառուցվեց Երևանի պետական համալսարանը: Հայկական ԽՍՀ պետական համալսարանը վերակառուցվեց ինքնուրույն-մասնագիտական ինստիտուտների: Հիմնվեց Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը՝ ապահովելով ֆինանսական աշխատողների պատրաստումը: |
| 6. | 1930 թ., սեպտեմբեր | Համալսարանի Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի հիմքի վրա կազմակերպվում է Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը, որի խնդիրն էր պատրաստել կադրեր երեք մասնագիտությունների գծով՝ պլանավիկների և ապրանքագետների՝ Հայաստանի սպառողական կոոպերացիայի ու մատակարարման ժողկոմատի համար, և ֆինանսիստներ՝ ՀԽՍՀ Ֆինանսների ժողկոմատի համար: |
| 7. | 1933 թ., 20 մայիս | ՀԽՍՀ Պետպլանում տեղի է ունենում խորհրդակցություն, որի ժամանակ որոշվում է Երևանում կազմակերպել պետական համալսարան, որը, մասնավորապես, պետք է պատրաստեր խորհրդային շինարարության, պլանային-ֆինանսական, կոոպերատիվ և խորհրդային առևտրի ու սոցիալիստական հաշվառման ասպարեզներում աշխատող բարձր որակի տնտեսագետ կադրեր:<br>Որոշվում է Լենինականի Առևտրա-կոոպերատիվ ինստիտուտը միացնել Պետ. Համալսարանի հետ՝ եղած կոնտինգենտը համապատասխան բաշխելով կազմակերպվող ֆակուլտետներում և բաժիններում: |
| 8. | 1933 թ., 10 հունիս | ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն Երևանի պետական համալսարանը կազմակերպելու մասին կայացնում է որոշում և հաստատում է ֆակուլտետների կառուցվածքը՝ համապատասխան բաժիններով: Տնտեսագիտական ֆակուլտետը հաստատվում է ֆինանսային, պլանային, խորհրդային շինարարության և հաշվային բաժիններով՝ ապահովելով ուսումնական պլաններում լայն պատրաստվածություն տնտեսագիտության գծով: |
| 9. | 1934 թ., 10-11 հուլիս | ՀԿ(բ)Կ Կենտկոմի խիստ գաղտնի որոշումով հաստատվում է Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների կառուցվածքը: Տնտեսագիտական ֆակուլտետը հաստատվում է 4 տարի ուսման տևողությամբ:<br>Նույն որոշմամբ 1934-35 ուստարվա համալսարանի բոլոր ֆակուլտետների համար ընդունվողների թվաքանակը հաստատվում է 400 մարդ: |
| 10. | 1935 թ. | Տնտեսագիտական ֆակուլտետում ստեղծվում է տնտեսագիտական կաբինետ: |

| | | |
|---|---|---|
| 11. | 1935 թ., 20 նոյեմբեր | Ներսես Միքայելի Ստեփանյանին շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի գծով:<br>Առաջարկվում է Պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը լուծել ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի § 14, 5-րդ կետի կարգով: |
| 12. | 1935 թ., 20 նոյեմբեր | Վռամ Խրիստաֆորի Կոստանյանին շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի տնտեսական քաղաքականության և պլանավորման միացյալ ամբիոնի գծով:<br>Առաջարկվում է Պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը լուծել ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի § 14, 5-րդ կետի կարգով: |
| 13. | 1935 թ., 20 նոյեմբեր | Անդրանիկ Կոստանտինի Գարամյանին շնորհվում է դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի սոցիալիստական հաշվառման ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն): |
| 14. | 1935 թ., 20 նոյեմբեր | Արա Հովհաննեսի Մարգարյանին շնորհվում է դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի պլանավորման ամբիոնի գծով:<br>Առաջարկվում է Պետհամալսարանին գիտական աստիճանի հարցը կարգավորել համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն): |
| 15. | 1935 թ., 20 նոյեմբեր | Սարգիս Շարբաթի Զոհրաբյանին շնորհվում է դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն): |
| 16. | 1935 թ., 20 նոյեմբեր | Սուրեն Հովսեփի Մեսրոբյանին շնորհվում է դոցենտի գիտական կոչում Հայաստանի պետհամալսարանի ապրանքագիտական ամբիոնի գծով (հիմք՝ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. 13/1-ի որոշման հոդվ. 9-ի ծանոթություն): |
| 17. | 1935 թ., 20 նոյեմբեր | Գրիգոր Հակոբի Հակոբյանին հաստատում են դոցենտի պաշտոնակատար Հայաստանի պետհամալսարանի տնտեսագիտական ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938թ. հունվարի մեկը պաշտպանել դիսերտացիա գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար.20): |
| 18. | 1935 թ., 20 նոյեմբեր | Ալեքսանդր Ֆադեյի Տեր-Հովհաննիսյանին հաստատում են դոցենտի պաշտոնակատար Հայաստանի պետհամալսարանի սոց. հաշվառման ամբիոնի գծով՝ պարտավորեցնելով մինչև 1938թ. հունվարի մեկը պաշտպանել դիսերտացիա գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար (հիմք՝ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից բարձր տեխ. կրթ. կոմիտեի հրահանգի պար.20): |
| 19. | 1937 թ. | ԵՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետում գործում էր հաշվային կաբինետը՝ որպես լաբորատորիա և գիտական կաբինետ: |
| 20. | 1940 թ., 1 փետրվար | Ռեկտորատի նիստում կայացվում է որոշում նոր կազմակերպվող ամբիոնների կապակցությամբ՝ հաստիքացուցակների և շրջանավարտների բաշխման հարցերը քննարկելով: Այդ որոշման հիման վրա նախատեսվում էր Տնտեսագիտության ֆակուլտետում կազմակերպել խորհրդային առևտրի էկոնոմիկայի և պլանավորման նոր ամբիոն: |

| | | |
|---|---|---|
| 21. | 1940 թ., 11 հուլիս | Ռեկտորի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ, լսելով 1940թ. շրջանավարտներից ասպիրանտական քննություններին մասնակցելու թույլտվության հարցը, որոշվում է արտոնել միայն գերազանցիկներին: Տնտեսագիտության ֆակուլտետից առաջադրվում է շրջանավարտ Կարապետ Սամվելյանը: |
| 22. | 1953 թ., 22 մայիս | Մեծ դահլիճում տեղի է ունենում Տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը Երևանի ավտոդետալ գործարանի բանվորների հետ: |
| 23. | 1954 թ. | Համալսարանը սկսում է պարբերաբար լույս ընծայել «Գիտական տեղեկագիր» հանդեսի՝ «Տնտեսագիտությունների սերիա» խորագրով պրակները: |
| 24. | 1958 թ., 22 հունվար | Երկարամյա անբասիր և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Զաքարե Գևորգի Բաշինջաղյանին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից շնորհվում է Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: |
| 25. | 1964 թ. | Հայկական ԽՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի որոշմամբ համալսարանում կազմակերպվում է Ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետ, որն ուներ ցերեկային (արտադրությունից կտրված), երեկոյան և հեռակա (արտադրությունից չկտրված) ուսուցման ձևերը և հանրապետության պետական ու կոոպերատիվ առևտրի համար մասնագետներ էր պատրաստում երեք մասնագիտությունների գծով՝ ապրանքագիտություն և արդյունաբերական ապրանքների առևտրի կազմակերպում, ապրանքագիտություն և պարենային ապրանքների առևտրի կազմակերպում, առևտրի էկոնոմիկա: |
| 26. | 1967 թ.,<br>29 սեպտեմբեր | Մեծ դահլիճում տեղի է ունենում Կ.Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հրատարակության 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը: |
| 27. | 1968 թ., 20 մարտ | Տնտեսագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ համալսարանում կազմակերպվում է Կոմիտասին նվիրված երաժշտական երեկո: |
| 28. | 1971 թ., 7 մայիս | Չեխ տնտեսագետները՝ Պրահայի բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոնների վարիչներ, դասախոսներ և տնտեսագիտական գիտահետազոտական ինստիտուտի մի խումբ գիտական աշխատողներ, հանդիպում են ունենում համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետում: |
| 29. | 1975 թ. | Պետական համալսարանի Տնտեսագիտական, Ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետների հիման վրա ստեղծվում է հանրապետության 13-րդ բուհը՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: |
| 30. | 1984 թ. | 1984-1985 ուստարվա սկզբից իննամյա ընդմիջումից հետո ԵՊՀ-ում վերաբացվում է Տնտեսագիտության ֆակուլտետը՝ «Տնտեսագիտական կիբեռնետիկա» անվամբ: |
| 31. | 1990 թ.,<br>20 մայիս - 3 հունիս – 15 հուլիս | Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքներով ԵՊՀ կոլեկտիվի անդամներից ՀԽՍՀ ժողովրդական պատգամավորներ են ընտրվում: Նրանց թվում էին Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետից Յուրի Մովսիսյանը և Մելս Սահակյանը: |
| 32. | 1991 թ. | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում բացվում է ևս մի նոր մասնագիտություն՝ միջազգային տնտեսական հարաբերություններ: |

| | | |
|---|---|---|
| 33. | 1996 թ., 31 հոկտեմբեր | ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ Տնտեսագիտության ֆակուլտետում ստեղծվում է կառավարման և գործարարության (մենեջմենթի և բիզնեսի) ամբիոնը: |
| 34. | 1996 թ., 7 նոյեմբեր | Տեղի է ունենում համալսարանի ուսանողության արհկոմիտեի կազմակերպած հուշ-ցերեկույթ՝ նվիրված արցախյան հերոսամարտերի ընթացքում զոհված համալսարանական ազատամարտիկներին: Նրանց թվում էր տնտեսագիտության ֆակուլտետում ուսանած, Արցախյան 1-ին պատերազմի մասնակից Վարդան Նասլետի Հովհաննիսյանը: |
| 35. | 1999 թ., 4 հոկտեմբեր | ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի հրամանագրով ԵՊՀ 80-ամյա հոբելյանի կապակցությամբ համալսարանի մի խումբ դասախոսներ և աշխատակիցներ պարգևատրվում են ՀՀ շքանշաններով ու մեդալներով: Տնտեսագիտության ֆակուլտետից «Մովսես Խորենացի» մեդալով պարգևատրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիշա Ալեքսանի Ղարիբյանը: |
| 36. | 2001 թ., 17 փետրվար | ԵՊՀ գիտական խորհրդի հերթական նիստում Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշման և այդ ֆակուլտետի դեկանի զեկուցման քննարկման արդյունքների հիման վրա գիտխորհուրդը որոշում է ընդունում հիշյալ ֆակուլտետում բացելու երկրորդ մասնագիտության ուսուցում՝ հանրապետությունում տնտեսագետ կադրերի աճող պահանջարկը բավարարելու նպատակով:<br>Գիտխորհրդի որոշմամբ նույն ֆակուլտետում բացվեց նաև ֆինանսահաշվային ամբիոն: |
| 37. | 2003 թ., սեպտեմբեր-դեկտեմբեր | Տնտեսագիտության ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում կազմակերպվում են Կանադայի առևտրային քաղաքականության ու իրավունքի կենտրոնի և Առևտրի համաշխարհային կազմակերպության վերաբերյալ դասընթացներ: |
| 38. | 2006 թ., 16 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի շուրջ 50 ուսանողներ մասնակցում են «Հաշվառման ավտոմատացումը՝ որպես բիզնեսի կառավարման գործիք» խորագրով սեմինար-դասախոսությանը: |
| 39. | 2006 թ., 27 հոկտեմբեր | ԱՄՆ Օհայո նահանգի Բոուլինգ Գրինի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի պրոֆեսոր Չարլզ Չիթըը 3 սեմինարներ է վարում ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում: |
| 40. | 2006 թ., 29 նոյեմբեր | Պատմության, Տնտեսագիտության և Աստվածաբանության ֆակուլտետները, որոնք տեղակայված են Աբովյան 52 շենքում, նշում են իրենց մասնաշենքի 100-ամյա տարեդարձը: |
| 41. | 2007 թ., 8 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը հյուրընկալում է ՌԴ կենտրոնական բանկի նախագահի առաջին տեղակալ Ալեքսեյ Ուլյուկաևին: |
| 42. | 2008 թ., 7 նոյեմբեր | Տնտեսագիտութան ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպում է ՀՀ ֆինանսների նախագահ Տիգրան Դավթյանը: Վերջինս ներկայացնում է 2009թ. պետական բյուջեն: |
| 43. | 2008 թ., 18 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում մեկնարկում է տնտեսագիտության ոլորտին վերաբերող ուսանողական գիտաժողով: |
| 44. | 2009 թ., 14 մարտ | Ծաղկաձորում անցկացվում է ուսանողական գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 90 և Տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման 25-ամյակներին: |
| 45. | 2009 թ., 24 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԽ-ն համալսարանում առաջին անգամ կազմակերպում է «Բիզնես խաղեր»: |

| | | |
|---|---|---|
| 46. | 2009 թ., 7 մայիս | ՀՀ Կառավարության աշխատակազմի ներկայացուցիչները հանդիպում են ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների հետ և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում աշխատելու հնարավորությունները: |
| 47. | 2009 թ., 14 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները հանդիսավոր պայմաններում ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի կողմից ստանում են իրենց ավարտական վկայագրերը: |
| 48. | 2010 թ., 10 հունիս | ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականները շնորհավորում են տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գրիշա Ղարիբյանի 80-ամյակը, որից 60-ը նա անցկացրել է համալսարանում: |
| 49. | 2010 թ., 17 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «Ուսանող-2010» մրցանակաբաշխությունը: ԵՊՀ ՈՒԽ արծաթե մեդալին է արժանանում ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Լևոն Կլեկչյանը: |
| 50. | 2010 թ., 25 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները հանդիպում են «KPMG» անկախ աուդիտորական ընկերության ներկայացուցիչների հետ: |
| 51. | 2011 թ., 25 հունվար | 2010-2011թթ. Եվրամիության նախաձեռնությամբ իրականացվում է «Վրաստան, Հայաստան և Ադրբեջան. համագործակցության պատուհան» նախագիծը: Հայաստանից ծրագրին մասնակցող հինգ կառույցներից մեկը Մայր բուհն էր: ԵՊՀ-ում ծրագիրը համակարգում էր ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ Արամ Առաքելյանը: |
| 52. | 2011 թ., 13 հուլիս | ՀՀ վարչապետը Տ. Սարգսյանը դիպլոմներ է հանձնում ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը գերազանցությամբ ավարտած ուսանողներին: |
| 53. | 2011 թ., 1 սեպտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը հյուրընկալում է Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանին: |
| 54. | 2011 թ., 17 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «Ուսանող-2011» ամենամյա մրցանակաբաշխությունը, և տնտեսագիտության ֆակուլտետի հաղթող ուսանող է ճանաչվում 3-րդ կուրսի ուսանողուհի Օֆելյա Գրիգորյանը: |
| 55. | 2011 թ., 18 նոյեմբեր | Տնտեսագիտության ֆակուլտետում նշվում է ուսանողների միջազգային օրը: |
| 56. | 2012 թ., 19 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը հյուրընկալում է «ԻՍՕ» միջազգային կազմակերպության նախագահ Բորիս Ալյոշինին: |
| 57. | 2012 թ., 18 հոկտեմբեր | Դոնեցկի ազգային համալսարանի և Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետները համագործակցության անժամկետ պայմանագիր են կնքում: |
| 58. | 2013 թ., 21 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում մեկնարկում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով եռօրյա միջազգային երիտասարդական գիտաժողովը: Կազմակերպիչներն էին ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետը և «ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» ՀԿ-ն: |

| | | |
|---|---|---|
| 59. | 2013 թ., 19 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության տարեկան համաժողովը, որն անցկացվում է 2011 թ-ից: Արդեն ավանդական դարձած միջոցառմանը մասնակցում են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Վաչե Գաբրիելյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահրամ Ավանեսյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, բազմաթիվ հայտնի տնտեսագետներ և Մայր բուհի ուսանողներ: |
| 60. | 2013 թ., 18 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող-2013» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան: ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի լավագույն ուսանող է ճանաչվում 4-րդ կուրսի ուսանող Աշոտ Նանյանը: |
| 61. | 2014 թ., 20-23 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում անցկացվում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» երիտասարդական միջազգային 2-րդ գիտաժողովը: |
| 62. | 2014 թ., 20 հունիս | ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության 2014թ-ի տարեկան գիտաժողովը: |
| 63. | 2014 թ., 24 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում կազմակերպվում է բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը: |
| 64. | 2014 թ., 11 սեպտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում տեղի է ունենում հուշ-ցերեկույթ՝ նվիրված նույն ֆակուլտետի զոհված ուսանող-ազատամարտիկ Վարդան Հովհաննիսյանի հիշատակին: |
| 65. | 2014 թ., 17 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող-2014» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան: ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի լավագույն ուսանող է ճանաչվում մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ռոզա Ալավերդյանը: |
| 66. | 2014 թ., 10 դեկտեմբեր | Նշվում է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80 և վերաբացման 30-ամյակները: |
| 67. | 2014 թ., 17 դեկտեմբեր | ԵՊՀ-ում ելույթ է ունենում Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թերեզա Սանչեսը: |
| 68. | 2015 թ., 12 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով 3-րդ միջազգային գիտաժողովը: |
| 69. | 2015 թ., 19 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության 5-րդ տարեկան գիտական նստաշրջանը: |
| 70. | 2015 թ., 25 հունիս | Համալսարանական «հնաբնակներից» մեկը՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ Գրիշա Ղարիբյանը, տոնում է ծննդյան 85-ամյակը: |
| 71. | 2015 թ., 16 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դիպլոմներ են հանձնվում բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին: |
| 72. | 2015 թ., 20 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող-2015» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան: ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի լավագույն ուսանող է ճանաչվում 4-րդ կուրսի ուսանող Արման Ասրյանը: |
| 73. | 2015 թ., 2 դեկտեմբեր | ԵՊՀ երախտավորներից մեկը՝ Արամ Առաքելյանը, տոնում է ծննդյան 70-րդ տարեդարձը: |

| | | |
|---|---|---|
| 74. | 2015 թ., 10 դեկտեմբեր | ՀՀ կենտրոնական բանկի ու ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մասնագետները քննարկում են ՀՀ ֆինանսական կայունության խնդիրները: |
| 75. | 2016 թ., 10 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների 4-րդ միջազգային գիտաժողովը: |
| 76. | 2016 թ., 17 հունիս | ԵՊՀ-ում մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության 6-րդ ամենամյա գիտաժողովը: |
| 77. | 2016 թ., 13 հուլիս | ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում տեղի է ունենում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: |
| 78. | 2016 թ., 23 սեպտեմբեր | ԵՊՀ-ում հայ և գերմանացի մասնագետները քննարկում են ՀՀ-ում էներգաարդյունավետության ոլորտում առկա խնդիրները: |
| 79. | 2016 թ., 26 հոկտեմբեր | Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում տեղի է ունենում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր Գրիշա Ղարիբյանի գեղանկարների անհատական ցուցահանդեսը: |
| 80. | 2016 թ., 17 նոյեմբեր | ԵՊՀ-ում անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող-2016» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան: ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի լավագույն ուսանող է ճանաչվում մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Արման Իսաջանյանը: |
| 81. | 2017 թ., 20 մարտ | ԵՊՀ-ից ՀՀ նախագահի շնորհակալագրով է պարգևատրվում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կառլեն Խաչատրյանը, ով Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար մարմնի պատասխանատու քարտուղարն է: |
| 82. | 2017 թ., 31 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Ներքին աուդիտի զարգացման խնդիրները ՀՀ-ում» թեմայով դասախոսությամբ է հանդես գալիս ԿԲ Գործադիր կոմիտեի անդամ, Կորպորատիվ ծառայությունների և զարգացման դեպարտամենտի տնօրեն Արա Ջալաբյանը: |
| 83. | 2017 թ., 14 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է տնտեսագիտության առանձին թեմաներին նվիրված սեմինարների շարքը: Ֆակուլտետի Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված «Սահմանադրականություն. ախտորոշման և կառավարման հիմնախնդիրներ» թեմայով սեմինարը վարում է ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: |
| 84. | 2017 թ., 18 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով միջազգային 5-րդ երիտասարդական գիտաժողովը: |
| 85. | 2017 թ., 23 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության տարեկան եռօրյա գիտաժողովը: |
| 86. | 2017 թ., 14 հուլիս | Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողները հանդիսավոր արարողությամբ դիպլոմներ են ստանում: |

| | | |
|---|---|---|
| 87. | 2017 թ., 10 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանն արժանանում է Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե հուշամեդալի: |
| 88. | 2017 թ., 16 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ մագիստրանտներն այցելում են ՀՀ Ազգային ժողով: |
| 89. | 2017 թ., 5 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի և «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի համագործակցության շրջանակում ԵՊՀ-ի մի խումբ ուսանողներ այցելում են «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կենտրոնական գրասենյակ: |
| 90. | 2017 թ., 8 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները «Մարքեթինգ» առարկայի նյութն առավել լավ յուրացնելու նպատակով այցելում են Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ: |
| 91. | 2017 թ., 13 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում բիզնես խաղ՝ նվիրված գինու շուկային: |
| 92. | 2018 թ., 9 փետրվար | ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կողմից իրականացվող բաց դռների օրերի շրջանակում Մայր բուհ եկած աշակերտներին հյուրընկալում են Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչները: |
| 93. | 2018 թ., 27 փետրվար | ԵՊՀ-ում տեղի է ունենում հանդիպում «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ: |
| 94. | 2018 թ., 5 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի նիստում դեկան է վերընտրվում Հայկ Սարգսյանը: |
| 95. | 2018 թ., 13 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասախոսությամբ է հանդես գալիս Ղազախստանի ֆինանսների նախարարության հաշվապահական մեթոդաբանության վարչության պետ, ԱՊՀ երկրների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության խորհրդատվական խորհրդի նախագահ Արմանաի Բեկտուրովան: |
| 96. | 2018 թ., 2-4 հուլիս | Վրոցլավի (Լեհաստան) Բնական ռեսուրսների և բնագիտական համալսարանում տեղի է ունենում «Էրազմուս+» (ՀԳ2) «Ագրարային ուսուցման տեսական ուղղվածությունից դեպի գործնական կրթության անցումը (TOPAS)» ծրագրի աշխատանքային խմբերի երկրորդ հանդիպումը:<br>Եվրամիության կողմից ֆինանսավորվող «TOPAS» ծրագրի երկրորդ հանդիպմանը ԵՊՀ-ից մասնակցում են Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արամ Առաքելյանը և նույն ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Վեհանուշ Մարուխյանը: |
| 97. | 2018 թ., 20 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի շրջանավարտները հանդիսավոր պայմաններում ստանում են իրենց ավարտական վկայականները:<br>Դիպլոմների հանձնման արարողությանը ներկա էին ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, ԱԺ պատգամավոր, ԵՊՀ պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: |

| | | |
|---|---|---|
| 98. | 2018 թ., 18 սեպտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կաղեն Խաչատրյանի ներկայացրած «Պետության ինստի-տուտների կայացվածությունը՝ որպես տնտեսական աճի ապահովման հիմնական գործոն» գիտական թեման արժանանում է ՀՀ ԿԳՆ գիտու-թյան կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման: |
| 99. | 2018 թ., 23 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավար-ման և գործարարության ամբիոնը նախաձեռնում է արտալսարանային դասեր, որոնք տեսականից բացի նաև պրակտիկ գիտելիքներ են տա-լիս: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները նմանօրինակ դաս են անցկացնում Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատում: |
| 100. | 2018 թ., 6 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Կառա-վարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար «Մարքե-թինգ» առարկայի շրջանակում անցկացվում է վարպետության դաս, որը վարում է «Ռոստելեկոմ» ընկերության մարքեթինգի դեպարտա-մենտի ղեկավար, ֆակուլտետի շրջանավարտ Տիգրան Արզումանյանը: |
| 101. | 2018 թ., 14 նոյեմբեր | ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները հանդիպում են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դասախոսների ու ուսանողների հետ:<br>Հանդիպման ընթացքում ԿԲ ներկայացուցիչները խոսում են դրամա-վարկային քաղաքականության ծրագրերի և ֆինանսական կայունու-թյան մասին: |
| 102. | 2018 թ., 21 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը ներկայացնում է ֆակուլտետի 2017/18 ուստարվա հաշ-վետվությունը, որը գնահատվում է դրական: |
| 103. | 2018 թ., 25 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, ներգրավելով Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերի ներկայացու-ցիչներին, Արդյունաբերողների և գործարարների միության հետ կազ-մակերպվում է խորհրդաժողով՝ նվիրված Հայաստանի տնտեսության զարգացման հիմնախնդիրներին: Խորհրդաժողովին ներկա էր նաև ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը: |
| 104. | 2018 թ., 6 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով մի-ջազգային երիտասարդական 6-րդ գիտաժողովը: |
| 105. | 2018 թ., 6 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները «Ռոստելեկոմ Հայաստան» ընկերությունում բաց դաս են անցկացնում «Բիզնեսի կառավարում» թեմայով: |
| 106. | 2018 թ., 18 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավար-ման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ բակալավրիա-տի ավագ կուրսի ուսանողների համար տեղի է ունենում «Փոքր բյու-ջետային մարքետինգային ռազմավարությունների մշակում» թեմայով վարպետության դաս, որը վարում է «Մորգան Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Դիանա Ավետյանը: |
| 107. | 2019 թ., 13-26 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամ-բիոնի դոցենտ Նաիրուհի Ջրբաշյանը և դոցենտ Արամ Կարապետյանը մասնակցում են «Erasmus+ TOPAS» եվրոպական ծրագրի շրջանակում Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտություն-ների համալսարանում (HSWT) կազմակերպված ինտենսիվ վերա-պատրաստման դասընթացին: |

| | | |
|---|---|---|
| 108. | 2019 թ., 6 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողների համար «Բիզնեսի կազմակերպում և կառավարում» առարկայից կազմակերպվում է «Մարդկային ռեսուրսների կառավարում և առաջնորդություն» թեմայով վարպետության դաս, որը վարում է ‹‹ՎիվաՍել-ՄՏՍ›› կազմակերպության Մարդկային ռեսուրսների պլանավորման և զարգացման բաժնի պետ Մարիանա Էդիլյանը: |
| 109. | 2019 թ., 22 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարները» թեմայով դասախոսություն, որի բանախոսն էր Արցախի Հանրապետության նախկին վարչապետ Արայիկ Հարությունյանը: |
| 110. | 2019 թ., 15 ապրիլ | Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ սահմանադրականության կարևոր նորմ» թեմայով հանդիպում-քննարկում, որը կազմակերպվել էր ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի և ՀՀ կենտրոնական բանկի «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից:<br>Միջոցառմանը ներկա էին ՀՀ գործադիր և օրենսդիր մարմինների անդամներ, բիզնես ոլորտի մասնագետներ, ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը և ԿԲ-ի այլ ներկայացուցիչներ, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն ու ուսանողները: |
| 111. | 2019 թ., 18 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Սինգապուրի զարգացում. հաջողության հիմքերը» թեմայով հանդիպում-դասախոսություն, որը վարում էր Հոնկոնգի չինական (Հան) ակադեմիայի փոխտնօրեն, միջազգայնագետ Վահագն Վարդանյանը: |
| 112. | 2019 թ., 21 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պատվիրակությունը երկշաբաթյա այցով մեկնում է ԱՄՆ-ի Սան Խոսե քաղաք՝ քննարկելու Սան Խոսեի պետական համալսարանի (ՍԽՊՀ) հետ հնարավոր համագործակցության ուղիները:<br>Պատվիրակության կազմում էին «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար, տնտես. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանը, տվյալ ծրագրի հինգ մագիստրանտներ և ֆակուլտետի դեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Կարեն Եղոյանը: |
| 113. | 2019 թ., 22 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ: |
| 114. | 2019 թ., 13 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի և ISTC ինովացիոն կենտրոնի համատեղ ուժերով կյանքի կոչված «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ուսանող Գևորգ Ղալաչյանը ճանաչվում է «IBM Great Minds» փործաշրջանի հաղթող և հնարավորություն ստանում վեց ամսով մեկնելու Շվեյցարիա՝ ընկերությունում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: |
| 115. | 2019 թ., 15 մայիս | Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում հանդիպում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) Ուկրաինայի, Բելառուսի և Անդրկովկասի երկրների գծով տարածաշրջանային ղեկավար Ժաննետա Օնիշչուկի հետ: |

| | | |
|---|---|---|
| 116. | 2019 թ., 21 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կողմից «R ծրագրային փաթեթ սկսնակների համար» դասընթացի ավարտին տեղի է ունենում հավաստագրերի հանձնման արարողությունը: |
| 117. | 2019 թ., 17 հուլիս | Ֆակուլտետի դահլիճում տեղի է ունենում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2018-2019 ուստարվա մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:<br>Բացի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից՝ միջոցառմանը ներկա էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանը: |
| 118. | 2019 թ., 11 սեպտեմբեր | Լույս է տեսնում «Ի՞նչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» գրքի երկրորդ հատորը: |
| 119. | 2019 թ., 14 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները արտալսարանային դաս ունեցան Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատում: |
| 120. | 2019 թ., 6 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար «Մարքեթինգ» առարկայի շրջանակում անցկացվում է վարպետության դաս: «Օպտիկական ցանցերի առանձնահատկությունները» խորագիրով դասը վարում է «Ռոստելեկոմ» ընկերության ցանցի պլանավորման դեպարտամենտի ղեկավար Սամվել Մարտիրոսյանը: |
| 121. | 2019 թ., 12 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Եվրասիական ինտեգրման զարգացումը տնտեսական և ֆինանսական քաղաքականության ոլորտներում» թեմայով դասախոսություն: Դասախոսությամբ հանդես է գալիս Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ԵՏՀ տնտեսության և ֆինանսական քաղաքականության հարցերով կոլեգիայի անդամ Ժակսիլիկով Տիմուր Մեկեշևիչը: |
| 122. | 2019 թ., 25 նոյեմբեր | Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներն այցելում են ‹‹Մեգերյան կարպետ›› ԲԲԸ: |
| 123. | 2019 թ., 2 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողները «Ռոստելեկոմ Հայաստան» ընկերությունում բաց դաս են ունկնդրում «Բիզնեսի կառավարում» թեմայով: |
| 124. | 2019 թ., 16 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողներն այցելում են «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ՓԲԸ: |
| 125. | 2019 թ., 19 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Scopus» գիտական ամսագրերի համակարգում հոդված հրատարակելու վերաբերյալ դասախոսություն, որը վարում է Պաղեստինի Բիրզեյթի համալսարանի պրոֆեսոր Նիդալ Սաբրին: |
| 126. | 2020թ., 16 հունվար | Երևանի և Սան Խոսեի պետական համալսարանների 2019 թվականին ձեռք բերված համագործակցության շնորհիվ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ընտրական փուլը հաղթահարած 2-4 ուսանող 2020թ. սեպտեմբերից հնարավորություն են ստանում ուսումը շարունակել ԱՄՆ-ի Սան Խոսեի պետական համալսարանի «Data Analytics» (MS) մագիստրոսական ծրագրում: |

| | | |
|---|---|---|
| 127. | 2020 թ., 12 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «ՏՕՊԱՍ»-ի (TOPAS- From Theoretical-Oriented to Practical education in Agrarian Studies) «Տեսական ուղղվածությունից գործնական կրթությանը նվիրված Ագրարային կրթության» ծրագրի հերթական խորհրդակցությունը: |
| 128. | 2020 թ., 26 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ու Մոսկվայի Մ. Լոմոնոսովի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի միջև կնքվում է համագործակցության համաձայնագիր: |
| 129. | 2020 թ., 20 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում խորհրդակցություն:<br>Ներկաները քննարկեցին հանրապետությունում արտակարգ դրության հայտարարման պատճառով ֆակուլտետում լսարանային դասերի դադարեցման և ուսուցման առցանց տարբերակին անցնելու վերաբերյալ մի շարք խնդիրներ: |
| 130. | 2020 թ., 26 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում գործող «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի դասախոսներ Գևորգ Ղալաչյանը և Գագիկ Չախոյանը որակավորվում են որպես «NVIDIA» խոր ուսուցման ինստիտուտի (DLI) դեսպաններ: |
| 131. | 2020 թ., 18 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում առցանց հանդիպում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների ու ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ:<br>Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը: |
| 132. | 2021 թ., 9 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողները «ZOOM» հարթակում հանդիպում են «Գրանատուս Վենչուրս» ընկերության համահիմնադիր և տնօրեն, «ԻՎԻ Քոնսալթինգ» ընկերության հիմնադիր և տնօրեն, տնտեսագետ Մանուկ Հերգնյանի հետ: |
| 133. | 2021 թ., 11 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողները «ZOOM» հարթակում «Սոցիալական բիզնեսի առանձնահատկություններն ու ֆինանսավորման հնարավորությունները» թեմայով դասախոսություն են լսում: Բանախոսը կառավարման և զարգացման խորհրդատու, սոցիալական ձեռնարկատիրության փորձագետ, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու Կարեն Սարգսյանն էր: |
| 134. | 2021 թ., 27 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում հանդիպում ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (НИУ ВШЭ) ներկայացուցիչների հետ: |
| 135. | 2021 թ., 26 հուլիս | «PMI Science» գիտահետազոտական կենտրոնում տեղի է ունենում «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի 2021 թվականի շրջանավարտների ավարտական դիպլոմների հանձնման արարողությունը: |
| 136. | 2021 թ., 14 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Մարքեթինգ» առարկայի շրջանակում տեղի է ունենում վարպետության դաս՝ «Թվային մարքեթինգի գործիքների կիրառումը բիզնեսի առաջխաղացման համար» խորագրով:<br>Վարպետության դասը վարում է ‹‹HA Marketing›› ՍՊԸ-ի հիմնադիր, տնօրեն Հայկ Աբաջյանը: |

| | | |
|---|---|---|
| 137. | 2021 թ., 18 հոկտեմբեր | ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանողները հանդիպում են «ՌեԱրմենիա» հարթակի տնօրեն Գևորգ Պողոսյանի հետ և քննարկում ստարտափների ձևավորման ու զարգացման հեռանկարները և համաշխարհային շուկայում ներկայանալու հնարավորությունները: |
| 138. | 2021 թ., 21 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նախաձեռնությամբ համալսարանում տեղի է ունենում ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ արդեն ավանդական դարձած հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Հասմիկ Ղահրամանյանը, Դրամավարկային քաղաքականության վարչության պետ Հայկ Ավետիսյանը, Կենտրոնական բանկի ու ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: |
| 139. | 2021 թ., 7 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը հյուրընկալում է Երևանի թիվ 139 և թիվ 170 դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին: |
| 140. | 2021 թ., 13 դեկտեմբեր | Երևանի թիվ 54 ավագ դպրոցում տեղի է ունենում հանդիպում դպրոցի աշակերտների ու ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ Նոննա Խաչատրյանի հետ: |
| 141. | 2022 թ., 10 հունվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը սկսում է «ՀՀ անվտանգության հիմնախնդիրները» խորագրով գիտական սեմինարների շարք: |
| 142. | 2022 թ., 13 հունվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ Կաղեն Խաչատրյանի «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեման ֆինանսավորման է երաշխավորվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի կողմից: |
| 143. | 2022 թ., 16 փետրվար | Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախաձեռնությամբ, մասնագիտական կողմնորոշման նպատակով, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ են այցելում թիվ 190, 114, 54 և «Հերացի» ավագ դպրոցի աշակերտները: |
| 144. | 2022 թ., 14-16 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՈՒԳԸ տեղեկատվական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվում է «Տնտեսագիտական հայ ասպետ» խորագրով գիտախաղ: |
| 145. | 2022 թ., 15 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Միհրան Սիսակյանը բակալավրի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում ճանաչվում է հասարակագիտության ոլորտի 1-ին տեղի մրցանակակիր: |
| 146. | 2022 թ., 20 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում կազմակերպվում է հանդիպում հայազգի գիտնական, տնտեսագետ, ֆիզիկոս, Ռուսական տնտեսագիտական դպրոցի (РЭШ) ռեկտոր Ռուբեն Սերգեյի Ենիկոլոպովի հետ: |
| 147. | 2022 թ., 13 հուլիս | ԵՊՀ ISTC կենտրոնում տեղի է ունենում «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: |

| | | |
|---|---|---|
| 148. | 2022 թ., 14 սեպտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և «Cbonds» կազմակերպության միջև ստորագրվում է համագործակցության հուշագիր: |
| 149. | 2022 թ., 10 հոկտեմբեր | ՈՒԳԸ 75-ամյակին նվիրված միջազգային 8-րդ գիտաժողովի շրջանակում տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Բանկային ժամանակակից տեխնոլոգիաները Հայաստանում» թեմայով պանելային քննարկում, որին մասնակցում են ՀՀ տարբեր բանկերի ներկայացուցիչներ: |
| 150. | 2022 թ., 12 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Թվայնացումն ու թվային տնտեսության զարգացման հեռանկարները» խորագրով աշխատաժողով, որի շրջանակում քննարկվում են համագործակցության նոր ուղղություններ: |
| 151. | 2022 թ., 22 նոյեմբեր | ԵՊՀ-ում գործող «Տվյալների գիտությունը բիզնեսում» և «Նյութագիտություն» մագիստրոսական ծրագրերի 23 ուսանողներ ստանում են ֆինանսավորում: Տեղի է ունենում հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը: |
| 152. | 2022 թ., 5 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում կառավարման և գործարարության ամբիոնի և «SSB Academy»-ի նախաձեռնությամբ անցկացվում է վարպետության դաս, որի բանախոսը «SSB Academy»-ի հիմնադիր տնօրեն Տարոն Պապիկյանն էր, որը ուսանողներին ներկայացնում է շուկայագիտության համակարգը որպես բիզնեսի արժեքաստեղծ շղթա: |
| 153. | 2023 թ., 31 հունվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, նույն ֆակուլտետի «Հետազոտությունների և գործարարության կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն Մերուժան Գալստյանը և Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյանը ստորագրում են համագործակցության եռակողմ հուշագիր: |
| 154. | 2023 թ., 10 փետրվար | ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ստորագրում են երկու կառույցների միջև համագործակցության հուշագիր՝ համատեղ նպաստելու կրթական համակարգի զարգացմանը: |
| 155. | 2023 թ., 20 մարտ | ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր: |
| 156. | 2023 թ., 19 ապրիլ | ԵՊՀ-ում տեղի է ունենում «EcoServ» նախագծի պաշտոնական բացումը, որն իրականացնում են Երևանի պետական համալսարանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը և Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանը: |
| 157. | 2023 թ., 19 մայիս | ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը և «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր: |
| 158. | 2023 թ., 16 հունիս | ԵՊՀ գիտական խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան է ընտրում Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Կ. Գ. Խաչատրյանին: |

| | | |
|---|---|---|
| 159. | 2023 թ., 10 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրի շրջանավարտ Լուսինե Վարդանյանը ճանաչվում է «The Master 2023» տարեկան մրցանակաբաշխության 2-րդ մրցանակակիր: |
| 160. | 2023 թ., 14 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դահլիճում տեղի է ունենում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2022-2023 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը: |
| 161. | 2023 թ., 13 հոկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողների համար «Ռազմավարական կառավարում» խորագրով վարպետության դաս է անցկացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռազմավարությունների մշակման մասնագետ, տնտեսագիտության դոկտոր Ջոնսոն Աղաբաբյանը: |
| 162. | 2023 թ., 6-7 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ու «Kotler Impact»-ի պաշտոնական ներկայացուցիչ «Greenlight Marketing Agency»-ի համագործակցության շրջանակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն առցանց ձևաչափով մասնակցում են «Շուկայավարման համաշխարհային գագաթնաժողով-2023»-ին (World Marketing Summit 2023): |
| 163. | 2023 թ., 14 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության ավարտական կուրսի մի խումբ ուսանողներ «Բիզնեսի պլանավորում և կազմակերպում» դասընթացի շրջանակում մասնակցում են «Buissup» կոնֆերանսին, որն անցկացվում է «Բացահայտելով բիզնես թրենդները» խորագրով: |
| 164. | 2023 թ., 16-17 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի առաջին կուրսեցիներն այցելում են ՀՀ կենտրոնական բանկ (ԿԲ)՝ ծանոթանալու երկրի գլխավոր դրամատան գործունեությանը: |
| 165. | 2023 թ., 17 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ուսանողների համար «Անձնակազմի հավաքագրում և ընտրություն» թեմայով վարպետության դաս է անցկացնում «ԴատաԱրտ Հայաստան» ընկերության մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ, կորպորատիվ հոգեբան Լիլիթ Պապիկյանը: |
| 166. | 2023 թ., 20 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողները «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ» դասընթացի շրջանակում այցելում են ՀՀ ֆոնդային բորսա (AMX) և կենտրոնական դեպոզիտարիա (CDA): |
| 167. | 2023 թ., 20 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների համար «Ստարտափ. արհեստական բանականության ներկայիս զարգացումները և դրանց հնարավորությունները» թեմայով վարպետության դաս է անցկացնում տնտեսագիտության թեկնածու Դավիթ Աբգարյանը: |
| 168. | 2023 թ., 23 նոյեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Վիվա-ՄՏՍ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արմեն Ավետիսյանը հանդես է գալիս «Բիզնեսի թվայնացումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրային դասախոսությամբ: |

| | | |
|---|---|---|
| 169. | 2023 թ., 30 նոյեմբեր | ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Արսեն Հարությունյանը ստորագրում են համագործակցության եռակողմ համաձայնագիր: |
| 170. | 2023 թ., 1 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության առաջին կուրսեցիներն այցելում են «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ: |
| 171. | 2023 թ., 4 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» և «Կառավարում» կրթական ծրագրերի երրորդ կուրսի ուսանողների համար «Միկրոէկոնոմիկա» դասընթացի շրջանակում անցկացվում է «Անբարեխիղճ մրցակցության և գերիշխող դիրքի չարաշահման խնդիրների շուրջ» թեմայով դասախոսություն, որը վարում են մրցակցության պաշտպանության հանձնաժողովի աշխատակիցները: |
| 172. | 2023 թ., 7 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հյուրընկալվում է «Ամերիա» ՓԲԸ կառավարման խորհրդատվական ծառայության ղեկավար Տիգրան Ջրբաշյանը և «ՀՀ մակրոտնտեսական, ժողովրդագրական և բիզնես հատվածի ցուցանիշների վերլուծություն» թեմայով վարպետաց դաս անցկացնում: |
| 173. | 2023 թ., 8 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս Վարդուհի Գաբրիելյանի ուղեկցությամբ այցելում են ՀՀ կենտրոնական բանկ (ԿԲ): |
| 174. | 2023 թ., 18 դեկտեմբեր | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում «Հայկական դրամի 30-ամյակը. զարգացումներ և հեռանկարներ» խորագրով պանելային քննարկում, որին մասնակցում են ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախկին նախագահ, «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ, գործադիր տնօրեն Բագրատ Ասատրյանը, «Կոնվերս բանկ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանը և «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը: |
| 175. | 2023 թ., 19 դեկտեմբեր | ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչները ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում անցկացնում են «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հիմնական գործառույթները» թեմայով հանդիպում: |
| 176. | 2024 թ., 19 հունվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, դոցենտ Կառլեն Խաչատրյանի նախաձեռնությամբ տեղի է ունենում հանդիպում Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության դպրոցի դոցենտ Ինեսսա Ավանեսովայի հետ՝ միջազգային կապերի զարգացման շրջանակում: |
| 177. | 2024 թ., 19 փետրվար | ՀՀ ֆինանսների նախարարությունում տեղի է ունենում հանդիպում Երևանի պետական համալսարանի և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչների միջև՝ քննարկելու հետագա համագործակցության ուղղությունները: |

| | | |
|---|---|---|
| 178. | 2024 թ., 26 փետրվար | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրի ուսանողների համար կազմակերպվում է վարպետության դաս՝ «Արհեստական բանականությունը վաճառքներում» թեմայով:<br>Բանախոսը «Հայկական սիմֆոնիկ նվագախումբ հիմնադրամ»-ի հաղորդակցության գծով ղեկավար, տնտեսագիտության թեկնածու Հայկանուշ Այվազյանն էր: |
| 179. | 2024 թ., 1 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Տնտեսական լրագրողների ակումբի» նախագահ Աննա Բաղդասարյանը ստորագրում են համագործակցության հուշագիր: |
| 180. | 2024 թ., 5 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ Լ.Կարապետյանը և ավարտական կուրսի մի խումբ ուսանողներ մասնակցում են «Հայաստանի կապիտալի շուկաները. ապագայի հեռանկարներ» ՀՀ առաջին ֆինանսաներդրումային համաժողովին: |
| 181. | 2024 թ., 6 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Բյուջեներ քաղաքացիների համար» (Budgets for citizens) ծրագրի շրջանակում անցկացվում է երիտասարդ մասնագետների բյուջետային կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագրի վերաբերյալ իրազեկման սեմինար: |
| 182. | 2024 թ., 11 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրի ուսանողների համար «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցություններ» դասընթացի շրջանակում կազմակերպվում է վարպետության դաս:<br>Բանախոսը «Դասավանդի՛ր Հայաստան» հիմնադրամի համակարգային նորարարությունների գծով տնօրեն, հաղորդակցությունների ոլորտի փորձագետ Ալեքսանդր Պլատո Հակոբյանն էր: |
| 183. | 2024 թ., 13 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները «Մակրոտնտեսագիտություն» առարկայի շրջանակում, ի լրումն ուսումնական պլանով նախատեսված լսարանային դասաժամերի, դաս են անցկացնում «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գրասենյակում: |
| 184. | 2024 թ., 15 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մեկնարկում է գիտագործնական սեմինարների շարք, որոնց մասնակցելու հնարավորություն ունեն ինչպես ԵՊՀ, այնպես էլ ՀՀ մյուս համալսարանների պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ և ասպիրանտներ: Առաջին սեմինարը վարում է Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Վարդանյանը: |
| 185. | 2024 թ., 22 մարտ | Երևանի պետական համալսարանում անցկացվում է «Մարաքեշ 2022–Երևան 2023/2024. մեծահասակների ուսումնառության և կրթության գլոբալ և լոկալ միտումներ» խորագրով համաժողովը, որի ընթացքում ամփոփվում են 2023 թվականին մեկնարկած հետազոտությունների արդյունքները:<br>Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը ներկայացնում է տ.գ.թ., դոցենտ Վարդուհի Գյոզալյանի ղեկավարած թիմը՝ մագիստրատուրայի ուսանողներ Հասմիկ Նորավյանի և Ալբեր Մակարյանի մասնակցությամբ: |

| | | |
|---|---|---|
| 186. | 2024 թ., 22 մարտ | ԵՊՀ-ում անցկացվում է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը՝ հեռուստատեսային ձևաչափով: ՈՒԽ հիմնադրման 30-ամյակին նվիրված այս խաղի հյուրերը տարբեր ժամանակների ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներն էին:<br>Խաղի լավագույն խաղացող և գիտակ է ճանաչվում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը: |
| 187. | 2024 թ., 22 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Ընկերությունների մատակարարման շղթաները և գիտելիքների ցանցերի դերը Ճապոնիայի տնտեսական աճի և կայունության գործում» թեմայով դասախոսությամբ է հանդես գալիս Վասեդա համալսարանի (Ճապոնիայի երկրորդ ամենամեծ համալսարան) դոկտոր, պրոֆեսոր Յասույուկի Տոդոն: |
| 188. | 2024 թ., 24 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դեկան Կառլեն Խաչատրյանի նախաձեռնությամբ մեկնարկում է «ԵՊՀ Տնտեսագիտական դպրոց» երկօրյա ծրագիրը, որն աննախադեպ է իր բովանդակությամբ և ուղղվածությամբ: Ծրագրին մասնակցում է շուրջ 150 աշակերտ: |
| 189. | 2024 թ., 25 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն» մագիստրոսական ծրագրի «Առաջնորդություն և բանակցություններ» առարկայի շրջանակում «Բանակցային հմտություններ» թեմայով վարպետության դաս է անցկացնում տեքստային բանակցությունների փորձագետ, հանրային կապերի մասնագետ և մարքեթոլոգ Ռուբեն Կարոյանը: |
| 190. | 2024 թ., 25 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողների համար «Գովազդային գաղափարի ստեղծում» թեմայով վարպետության դաս է անցկացնում «EasyPay» ընկերության մարքեթինգի տնօրեն Տիգրան Պարսեղյանը: |
| 191. | 2024 թ., 26 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողներն արտալսարանային դաս են անցկացնում «Brendon» մարքեթինգային կազմակերպությունում: |
| 192. | 2024 թ., 27 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» և «Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագրերի ուսանողները հերթական արտալսարանային դաս են անցկացնում «Evocabank» ՓԲԸ-ում: |
| 193. | 2024 թ., 28 մարտ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում գիտագործնական սեմինարի հերթական նիստը: «Էլեկտրոնային կառավարման համակարգերի արդյունավետությունը» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ռուբեն Գևորգյանը: |
| 194. | 2024 թ., 4 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում գիտագործնական սեմինարի հերթական նիստը: «Տնտեսության պետական կարգավորման գործընթացում հակակշիռների մեխանիզմի ձևավորման հրամայականը» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Միքայել Միքայելյանը: |

| | | |
|---|---|---|
| 195. | 2024 թ., 8 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսում դասախոսություն է կարդում հրավիրյալ բանախոս, «Հյուսիսային փայլ» ՍՊԸ կառուցապատող ընկերության գործադիր տնօրեն Թամարա Մանուկյանը: |
| 196. | 2024 թ., 8 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողների համար կազմակերպվում է վարպետության դաս՝ «Մարքեթինգային արշավների ստեղծում, իրականացում լոկալ և միջազգային շուկաներում» թեմայով:<br>Վարպետության դասի բանախոսն էր «Scorpio Creative» մարքեթինգային կազմակերպության հիմնադիր տնօրեն Հելեն Գեղամյանը: |
| 197. | 2024 թ., 11 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում գիտագործնական սեմինարի հերթական նիստը: «Երկրների անվտանգության մակարդակի գնահատումը և վերլուծությունը» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս տնտեսագիտության դոկտոր, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր Սամսոն Դավոյանը: |
| 198. | 2024 թ., 18 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողներն այցելում են Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ: |
| 199. | 2024 թ., 18 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության երկրորդ կուրսում դասախոսություն է կարդում հրավիրյալ բանախոս, «Ֆրիդոմ Բրոքեր Արմենիա» ընկերության ավագ ներդրումային խորհրդատու Հայկ Մանուկյանը: |
| 200 | 2024 թ., 18 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում գիտագործնական սեմինարի հերթական նիստը: «ՀՀ բյուջետային քաղաքականության արդյունավետությունը» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս տնտեսագիտության դոկտոր, Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը: |
| 201. | 2024 թ., 25 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում գիտագործնական սեմինարի հերթական նիստը: «Բիզնեսի թվային տոկենիզացման հիմնախնդիրը. հայեցակարգը, նպատակը և լուծման ուղիները» թեմայով զեկուցմամբ հանդես է գալիս տնտեսագիտության թեկնածու, Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ Արա Քառյանը: |
| 202. | 2024 թ., 26 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դեկան Կառլեն Խաչատրյանի նախաձեռնությամբ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվում է «Տվյալների վիզուալիզացիա» խորագրով քառօրյա դասընթացը: |
| 203. | 2024 թ., 26 և 29 ապրիլ | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները «Ֆինանսներ 2» դասընթացի շրջանակում այցելում են «Յե-Կվադրատ Ամպեգա» ներդրումային ընկերություն: |
| 204. | 2024 թ., 3 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը և «Տնտեսական քաղաքականության վերլուծական կենտրոն» ՀԿ նախագահ Գարիկ Դինգչյանը ստորագրում են համագործակցության հուշագիր: |

| | | |
|---|---|---|
| 205. | 2024 թ., 6 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողների համար կազմակերպվում է «Ինչպե՞ս գտնել մարքեթինգի բաց կետերը և աշխատել դրանց հետ» թեմայով վարպետության դաս:<br>Բանախոսը Մարքեթինգի և ինովացիաների բիզնես դպրոցի (BSMI) հիմնադիր Աննա Մարի Սարգսյանն էր: |
| 206. | 2024 թ., 7 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հյուրընկալվում է Վիլնյուսի Գեդիմինասի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Դաիվա Մակուտենիենեն և ուսանողներին ներկայացնում է «Բիոէկոնոմիկան ժամանակակից իրականությունում» թեմայով դասախոսություն: |
| 207. | 2024 թ., 8 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողներն այցելում են «Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ: |
| 208. | 2024 թ., 9 մայիս | «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Շրջանաձև տնտեսություն. իրազեկում և սպառողների վարքագիծ» («Circular Economy: Awareness and Consumer Behavior») թեմայով դասախոսություն է կարդում Եվրոպական բիզնես դպրոցի (Պորտուգալիա) պրոֆեսոր Անա Պինտո Բորխեսը (Ana Pinto Borges): |
| 209. | 2024 թ., 10 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նախաձեռնությամբ «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ 3-րդ կուրսերի ուսանողների համար «Ներքին աուդիտի հիմնախնդիրները» թեմայով դասախոսություն են կարդում հրավիրյալ բանախոս, Ներքին աուդիտորների ինստիտուտի նախագահ Արա Չալաբյանը և նույն ինստիտուտի փոխնախագահ, «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին աուդիտի ղեկավար Անգելինա Մնացականյանը: |
| 210. | 2024 թ., 15 մայիս | ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կարեն Խաչատրյանը և ԱՊՀ երկրներում «Kotler Impact» ընկերության բացառիկ ներկայացուցիչ «AWE Consulting» ՍՊԸ-ի տարածաշրջանի տնօրեն Մերի Գրիգորյանը ստորագրում են համագործակցության եռակողմ հուշագիր: |
| 211. | 2024 թ., 16 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողներ Ջինա Ղազարյանը, Ալեն Ղազարյանը, Էվա Միրզոյանը և Աիդա Գյուրջօղլյանը մասնակցում են Թուրքմենստանի տնտեսագիտության և կառավարման պետական ինստիտուտի կազմակերպած միջազգային հեռավար օլիմպիադային: «Համաշխարհային տնտեսություն» խորագրով միջազգային օլիմպիադայի ամփոփիչ արդյունքներով ԵՊՀ ուսանողները զբաղեցրել են առաջին և երկրորդ հորիզոնականները: Թիմին մարզել է Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ Գրիգոր Հայրապետյանը: |
| 212. | 2024 թ., 22 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» և «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական ծրագրերի ուսանողների համար կազմակերպվում է վարպետության դաս՝ «Մարդկային ռեսուրսների կառավարումն արհեստական բանականության ժամանակաշրջանում» թեմայով:<br>Բանախոսը «ACTUAL HR PARTNER» ընկերության հիմնադիր տնօրեն Լաուրա Վիրաբյանն էր: |

| | | |
|---|---|---|
| 213. | 2024 թ., 22 մայիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հյուրընկալվում է Լյուքսեմբուրգի համալսարանի իրավագիտության, տնտեսագիտության և ֆինանսների ֆակուլտետի դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Իրմեն: |
| 214. | 2024 թ., 25 մայիս | 2023-2024 ուստարում Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից կրթաթոշակ և ուսման վարձի փոխհատուցում ստացած ԵՊՀ ուսանողները հանդիպում են բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանի հետ: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը: |
| 215. | 2024 թ., 27 մայիս | Տեղի է ունենում ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, դոցենտ Ալվարդ Խառատյանի և «Պրոսերվիս-Լ» ընկերության հիմնադիր Լիլիթ Հակոբյանի «Մարդկային կապիտալի գնահատումների և աշխատուժի վերլուծության դերը և նշանակությունն արդյունավետ կառավարման գործում» զեկույցի շնորհանդեսը: |
| 216. | 2024 թ., 30-31 մայիս | ՋՊՄԿ-ում կայանում է ՀՀ-ում պղնձի արդյունահանման արդի վիճակի և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրների վերաբերյալ երկօրյա աշխատաժողովը, որին մասնակցում են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոցենտ Վարդան Ալեքսանյանը, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ Գրիգոր Հայրապետյանը: |
| 217. | 2024 թ., 3-8 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանը մասնակցում է Աալենի կիրառական գիտությունների համալսարանում (Գերմանիա) կազմակերպված «Միջազգային շաբաթ» ծրագրին («The first $Q^{n}$ International Week»): |
| 218. | 2024թ., 4 հունիս | Երևանի պետական համալսարանում անցկացվում է «Բուհ-աշխատաշուկա համագործակցության խնդիրները և հեռանկարները» խորագրով ֆոկուսխմբային քննարկում ֆինանսաբանկային և սպասարկման ոլորտների ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով ամրապնդելու գործընկերային կապերը: |
| 219. | 2024 թ., 5 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները «Ֆինանսներ-2» դասընթացի շրջանակում այցելում են «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ և հանդիպում ընկերության գործադիր տնօրենի տեղակալ, ֆոնդերի կառավարիչ Հրայր Ասլանյանի հետ: |
| 220. | 2024 թ., 10 հունիս | Մեկնարկում է CaseKey Academy բիզնես խնդիրների լուծման ոչ ֆորմալ կրթական ծրագիրը:<br>ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը «CaseKey Academy»-ի շրջանակում հանդես է գալիս որպես հյուրընկալող գործընկեր: |
| 221. | 2024 թ., 26 հունիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի է ունենում Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի հերթական գիտագործնական սեմինարը: |

| | | |
|---|---|---|
| 222. | 2024 թ., 2 հուլիս | Ֆակուլտետի դահլիճում տեղի է ունենում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2023-2024 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Շրջանավարտներին ողջունում և բարի երթ են մաղթում ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կարլեն Խաչատրյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը և հրավիրյալ բարձրաստիճան պաշտոնատար անձինք, խոշոր գործարարներ: |
| 223. | 2024 թ., 2-5 հուլիս | Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավար Նարինե Միրզոյանը ԵՊՀ պատվիրակության կազմում մասնակցում է Ստրասբուրգի համալսարանի (Ֆրանսիա) կազմակերպած «Բակալավրի կրթության բարեփոխումը հանուն կանաչ և կայուն զարգացման Հայաստանում և Մոլդովայում» միջազգային աշխատաժողովին: |
| 224. | 2024 թ., 4 հուլիս | Տեղի է ունենում «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի 2023-2024 ուստարվա 10 շրջանավարտների ավարտական վկայագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը: |
| 225. | 2024 թ., 22 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կարլեն Խաչատրյանը և «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ կազմակերպության տնօրեն Հովակ Հովակիմյանը ստորագրում են փոխըմբռնման հուշագիր: |
| 226. | 2024 թ., 25 հուլիս | ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, դոցենտ Կարլեն Խաչատրյանը մասնակցում է «Ֆինանսական գրագիտության բարձրացումը՝ որպես կապիտալի շուկայի զարգացման գործոն» թեմայով կլոր սեղան-քննարկմանը: |
| 227. | 2024 թ., 1 օգոստոս | ԵՊՀ-ում անցկացվում է «ԵՊՀ լավագույն ուսանող-2024» ամենամյա մրցանակաբաշխությունը: ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի լավագույն ուսանող է ճանաչվում 3-րդ կուրսի ուսանող Վահե Ասատրյանը: |

# FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT OF YEREVAN STATE UNIVERSITY IS 90 YEARS OLD

Since the foundation of the university, provision with education in the field of economics has been one of the important directions. However, until 1933, this field of science was taught at different faculties, such as Social Sciences, Law-Economics, Socio-Economics, etc. It became a separate faculty in the 1933-1934 academic year.

Famous intellectuals such as Academician Anushavan Arzumanyan of the Academy of Sciences of the USSR, Hayk Azatyan, correspondent member of the Academy of Sciences of the Armenian SSR, professors Nersik Stepanyan, Zakare Bashinjaghyan, Tadevos Avdalbekyan, Ghevond Shakaryan and others made a great contribution to the establishment and development of the Faculty of Economics.

In 1975-1983, the training of specialists in the field of economics at the university was interrupted due to the creation of the Yerevan National Economy Institute on its basis. After a short break, in 1984, owing to persistent efforts, the faculty was reopened at YSU and was called Economic Cybernetics. The initiative belonged to YSU Vice-Rector for Educational Affairs at the Humanities Faculties, Professor Grisha A. Gharibyan and YSU Rector (1977-1991), Academician of the NAS of the RA, Doctor of Technical Sciences, Professor, Honored Worker of Science of the Armenian SSR Sergey A. Hambardzumyan, as well as Professor Yuri T. Movsisyan, Vice-Rector for Scientific Affairs of Yerevan Institute of National Economy. Then, in 1991, the faculty was again called the Faculty of Economics, and in 2014, it was renamed into the Faculty of Economics and Management.

Today, the Faculty of Economics and Management is one of the largest faculties of the university. It has around 1200 students and more than 155 members of professorial staff. The faculty is constantly working to provide education in accordance with international best practices at Yerevan State University. In order to achieve this goal, educational programs are regularly revised, new master's educational programs are introduced, systematic work is carried out in the direction of strengthening and expanding international cooperation, special attention is paid to the personnel policy to ensure normal generational change and to facilitate the training of tutorial staff, and the general environment and infrastructure are constantly improved alongside educational programs.

Today, three-level education is offered at the 4 chairs of the Faculty of Economics and Management: bachelor's, master's, and PhD studies. Three educational programs, "Economics", "Management" and "Finances" are available in the baccalaureate. As for the master's degree, seven educational programs providing narrow specialization are available: "International Economic Relations", "Data Science in Business", "Economic Policy and Law", "Finances, Money Circulation and Credit", "Accounting and Auditing", "Business Administration (Management)" and "Marketing".

Starting in 2002, candidate and doctoral theses are defended at the Professional Council # 015 on Economics, operating at the RA Higher Education and Science Committee.

Throughout its activity, the faculty has successfully fulfilled its mission by training high-quality specialists in the sector of economy. Thanks to the unceasing dedication and invested efforts of the faculty's high-ranking specialists, students here get the opportunity not only to more comprehensively understand modern economic principles and concepts, to find effective solutions to modern economic problems in practice, but also to develop abilities and skills that are extremely important for future professional activities.



Special attention should be paid to the faculty's active scientific-educational cooperation with various foreign universities, such as CIS Network University, St. Petersburg State University, the School of Economics of M.V. Lomonosov Moscow State Uni-

versity, McGill University (Canada), George Washington University (USA), Weihenstephan-Triesdorf University of Applied Sciences (Germany), the University of Luxembourg, European Business School in Portugal. The tangible achievements of the faculty in the field of science and education are the active involvement of professors and PhD students in local and international grant programs.

In the framework of international cooperation, not only the professorial staff gets the opportunity to improve its level of education abroad, but also, first of all, the students get the opportunity to continue their education in foreign universities, communicate with foreign specialists, attend and discuss their lectures, participate in international conferences and scientific seminars, establish partnership and gradually integrate into the international scientific and educational community.

Emphasizing the importance of expanding university-labor market cooperation, the faculty has signed many memoranda of cooperation and mutual understanding with various state structures and management agencies, leading companies and organizations, as well as other higher education institutions with the goal of increasing the effectiveness of the scientific and educational process of training highly qualified economists.

Student life at the Faculty of Economics and Management of YSU is rich and diverse thanks to the productive and successful activities of two student structures, the student council and the student scientific society.

Graduates of the faculty have a broad worldview, necessary theoretical fundamental knowledge, master various analytical tools and methods, and are able to master the features of any field of professional activity in a short period of time while maintaining the potential of training and requalification. It is owing to these qualities that our graduates work quite efficiently in scientific and educational institutions, as well as in private companies of all sectors of the economy, in the public administration system, in international structures, and elsewhere.

Jubilee events played a unique role in the life of the faculty in terms of the assessment of achievements and successes, outlining future tasks and new perspectives for cooperation and interaction in the scientific and educational sphere.

2004 marked the 70th anniversary of the foundation of YSU Faculty of Economics and the 20th anniversary of its reopening. The events organized in this regard were dedicated to the unique report of the faculty's scientific and educational activities, to high appreciation and gratitude to the representatives of the tutorial staff.

Ten years later, on December 9, 2014, YSU Faculty of Economics and Management celebrated the 80th anniversary of its foundation and 30th anniversary of reopening. RA statesmen, members of parliament, government officials, YSU lecturers and other guests were present at the event organized on that occasion. Distinguished lecturers of the faculty were awarded with the medal of honor of the National Assembly, diplomas and letters of acknowledgement on behalf of the Chairman of the National Assembly of the RA.

In October-November 2024, the Faculty of Economics and Management of Yerevan State University celebrated the 90th anniversary of its foundation and the 40th anniversary of its reopening. Already in the spring of 2024, the jubilee committee developed the list of events for the 90th anniversary of the foundation of the faculty and the schedule of their implementation. It was decided to organize an international conference, a solemn meeting, make a film and publish a book-album.

On October 8-10, 2024, YSU Faculty of Economics and Management hosted an international three-day conference dedicated to the 90th anniversary of the foundation of the faculty under the title “Transforming economy: digital technology, spatial disparities and quality of life”.

About 40 famous scientists from Harvard, Sorbonne, the University of the Azores, Moscow State University named after M. Lomonosov, St. Petersburg University, Harvard Business School and other universities, representing more than 22 countries in the world - USA, Russia, Brazil, Chile, France, Italy, Spain, Portugal, Netherlands, India and other countries - participated in this event.

YSU rector, vice-rectors, deans, heads of chairs, members of the RA Central Bank Council, officials, heads of other universities of Armenia, and guests participated in the opening ceremony of the conference. Scientists and researchers from other Armenian universities, recognized experts in the professional field, representatives of the RA

state administration, as well as representatives of the financial and banking sectors and leading organizations also actively participated in the works of the three-day conference. More than 70 reports were made in seven thematic sectors.

The solemn session of the jubilee events dedicated to the 90th anniversary of the foundation and the 40th anniversary of the reopening of YSU Faculty of Economics and Management was held on October 31, 2024, in the Aram Khachatryan Concert Hall.

YSU rector, vice-rectors, deans, heads of chairs, the Chairman of the RA Central Bank, board members, officials, representatives of organizations from various sectors of the economy, heads of other RA universities and educational institutions, graduates of the faculty, students and guests participated in the ceremonial session.

Rector of YSU Hovhannes Hovhannisyan, Dean of YSU Faculty of Economics and Management Karlen Khachatryan, and Chief Executive Officer of "Byblos Bank Armenia" CJSC Hayk Stepanyan made welcoming remarks.

On the occasion of the 90th anniversary of the foundation of the faculty and the 40th anniversary of its reopening, the lecturers of the faculty were awarded for their great contribution to the development of the faculty, the organization of scientific and educational activities and the training of young personnel. Martin Galstyan, President of the Central Bank of Armenia, Vache Gabrielyan, Dean of the Manoogian Simone College of Business and Economics of the AAU, Chief Executive Officer of "Byblos Bank Armenia" CJSC, Hayk Stepanyan, and the heads and founders of some partner organizations received letters of acknowledgement and symbolic souvenirs for their effective cooperation with the faculty, active support for the initiatives of the faculty and significant contribution.

There is no doubt that the Faculty of Economics and Management has experienced radical changes in recent decades; owing to the implemented reforms, it has received its leading position today. Owing to the initiatives, persistence, and efforts, it is in its most important period of transformation. And the goal of the implemented reforms is to provide a competitive, comfortable educational environment, owing to which highly qualified staff will offer its services in the labor market.

In this book-album, we have tried to summarize the glorious path of the Faculty of Economics and Management of YSU, to give an assessment of the achievements of the years, and to write about the people who have made an exceptional contribution to the establishment and development of the faculty.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Երևանի պետական համալսարան. Տարեգրություն: - Եր., ԵՊՀ հրատ., 2009, 440 էջ:
2. «Երևանի պետական համալսարանի պատմությունից» - Եր., ԵՊՀ հրատ., 2018 թ., 292 էջ:
3. Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում / ԵՊՀ, Հայագիտ. հետազոտ. ինստի-տուտ: Աշխ. խմբի ղեկ., գլխ. խմբ.՝ Ա.Սիմոնյան: Կազմ. և հրատ. պատրաստեց Ժ. Մանուկյանը, - Եր., ԵՊՀ հրատ., 2011. – 256 էջ + 14 էջ ներդիր:
4. Երևանի պետական համալսարան – Եր., ԵՊՀ հրատ., 2009, 196 էջ:
5. ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի պարբերաթերթ, 2015, 2016, 2017, 2018:
6. Համալսարանականները Արցախյան պատերազմում / Երևանի պետ. համալս. պատմ. թանգարան: Աշխ. խմբի ղեկ.՝ Ա. Սիմոնյան: Կազմ.՝ Ժ. Մանուկյան և ուրիշ. – Եր., ԵՊՀ հրատ., 2011.- 20 էջ:
7. Մեր անվանի դասախոսները, երկրորդ մաս, Երևանի պետ. համալս. - Եր., Երևանի համալս. հրատ., 2006, 336 էջ:
8. Կենսագրական հանրագիտարան. - Եր., ԵՊՀ հրատ., 2019, 750 էջ:
9. Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարի-ներին (1941-1945 թթ.)/ Փ. Ենգոյան, Է. Մինասյան.- Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:
10. Արխիվային փաստաթղթեր

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ռեկտորի խոսք ....................5
ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի խոսք....................7
Նախաբանի փոխարեն ....................8
Բաժին 1. Ֆակուլտետի կազմավորումն ու զարգացումը ....................10
Բաժին 2. Ֆակուլտետի դեկանները....................24
Բաժին 3. Ֆակուլտետի կառավարման մարմինները ....................44
Բաժին 4. Ֆակուլտետի ամբիոնները ....................52
Բաժին 5. Ֆակուլտետի կրթական ծրագրերը....................74
Բաժին 6. Ֆակուլտետի գիտական կյանքը ....................84
Բաժին 7. Ֆակուլտետի միջազգային կապերը ....................100
Բաժին 8. Ֆակուլտետի համագործակցությունը բիզնեսի և պետական հատվածի հետ ....................116
Բաժին 9. Ֆակուլտետի մասնակցությունը Արցախյան պատերազմներին ....................124
Բաժին 10. Ֆակուլտետի ուսանողական կյանքը....................138
Բաժին 11. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները ....................152
Բաժին 12. Ֆակուլտետի երախտավորները....................162
Բաժին 13. Ֆակուլտետի հայտնի շրջանավարտները ....................192
Բաժին 14. Ֆակուլտետի առանցքային իրադարձությունները ....................204
FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT OF YEREVAN STATE UNIVERSITY IS 90 YEARS OLD .......... 227
Օգտագործված գրականություն....................230

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ - 90

Պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալաբյան
Կազմի ձևավորող՝ Ա. Պատվականյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան

*Հեղինակները հասփապտում են, որ ծանոթ են «ԵՊՀ գրահրապարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փասփերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:*

Ստորագրված է տպագրության՝ 22.11.2024:
Չափսը՝ 70 x 100 1/8: Տպ. մամուլը՝ 14.5:
Տպաքանակը՝ 700:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am